

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ



Երևան - 1968

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մ. Ե. ԱՍՍՏԻՅԱՆ

ԼՈՌՈՒ
ԽՈՍՎԱԾՔԸ

«ՄԻՏՔ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1968

Ինդիկ
7—1—3

МАНВЕЛ ЕГОРОВИЧ
А С А Т Р Я Н

ЛОРИЙСКИЙ ГОВОР

(На армянском языке)

Ереванский государственный университет
Издательство „Митк“
Ереван—1968

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայիս Լոռու տերիտորիան համապատասխանում է պատմական Հայաստանի Տաշիրք գավառին, որ մտնում էր Հայաստանի հյուսիսային բոլեշխության՝ Գուգարաց աշխարհի մեջ¹։ Գուգարքը լեռնային երկիր է՝ հարուստ թավ անտառներով, արագահոս լեռնային գետերով, սառնորակ աղբյուրներով, ալպիական մարգագետիններով։ Գուգարքը բռնում էր բավական ընդարձակ մի տարածություն։ Հյուսիսից նրա սահմաններն էին գծում Վիրքը, հարավից՝ Այրարատը, արևմուտքից՝ Տալքն ու Եգերքը (Աջարիա), իսկ արևելքից՝ Ուտիքը։

Գուգարաց աշխարհում հնուց անտի բնակվում էին հայեր ու վրացիներ, իսկ արևելյան ծայրագավառներում որոշ թիվ էին կազմում նաև աղվանները։

Գուգարքը հայկական պետությանն է միացվել Արտաշես Ա-ի օրոք (189—160 թթ. մ.թ.ա.) և մինչև Հայաստանի առաջին բաժանումը մտնում էր հայկական պետության կազմի մեջ։ 387 թ. բաժանման ժամանակ Գուգարքը միացվում է Արևելյան Վրաստանին և, նրա հետ միասին կազմելով մի մարզպանություն, անցնում է Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ։ Այդ ժամանակից էլ Գուգարքի վրացաբնակ շրջանները ընդմիշտ մնում են Վրաստանի կազմում, իսկ հայաբնակ շրջանները՝ Տաշիրք գավառն իր շրջակայքով, Բագրատունիների հարստության օրոք կրկին միացվում են հայկական թագավորությանը։

Տաշիրքը Գուգարքի ամենաընդարձակ գավառն էր։ IX դարից սկսած այնտեղ իշխում էր Բագրատունիների մի ճյուղը, որը աստիճանաբար ընդարձակվում է իր իշխանության սահմանները ու հզորանում։ 978 թ. Բագրատունիների այս ճյուղի ներկայացուցիչ Գուրգենը իրեն թագավոր է հռչակում։ Այդ նոր թագավորությունը

¹ Պատմական տեղեկությունները քաղել ենք Թ. Խ. Հակոբյանի «Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության» (Երևան, 1960 թ.) գրքից։

կոչվում էր Տաշիր-Ձորագետի կամ Լոռու թագավորություն: Դրա մայրաքաղաքը Լոռին էր:

Լոռի կամ Լոռե բերդաքաղաքը կառուցվել է X դարի երկրորդ կեսին: Նա լեռնային ճանապարհով կապված էր Անիի և Թիֆլիսի հետ: Լոռին փոքրիկ, բայց ամուր պարիսպներով շրջապատված քաղաք էր: X—XIII դարերում Լոռում մեծ զարկ էին ստացել պղնձի հանույթը, ձուլումն ու մշակումը: Տաշիր-Ձորագետի կամ Լոռու թագավորությունը իր գոյությունը պահպանում է մինչև XIII դարը: XIII դարում Հայաստանը նվաճվում է մոնղոլների կողմից: 1236 թ. մոնղոլները գրավում և ավերում են Լոռի բերդաքաղաքը, որն այդ ժամանակ պատկանում էր Զաքարյան իշխաններից մեկին և հանդիսանում էր նրա աթոռանիստը:

Լոռի բերդաքաղաքի ավերակները գտնվում են Ստեփանավանի շրջանի Լոռի բերդ գյուղի մոտ, Ձորագետի բարձրագիւր ձախ ափին:

Մոնղոլական տիրապետությունը Հայաստանում տևում է մինչև XVI դարի սկիզբները: XVI դարի սկիզբներից սկսվում է թուրք-պարսկական երկարատև պատերազմների առաջին շրջանը, որն ավարտվում է 1555 թ. հաշտության մեջ, ըստ որի Հայաստանի խոշորագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը անցնում է Թուրքիային, իսկ փոքր մասը՝ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանին: Այդ նույն դրույթները վերահաստատվում է Թուրքիայի և Պարսկաստանի միջև երկարատև պատերազմներից հետո 1639 թ. կնքված հաշտության պայմանագրով և շարունակվում է մինչև XIX դարի քսանական թվականները, երբ Արևելյան Հայաստանը (1828 թ.) միացվում է Ռուսաստանին:

Լոռին, Ղարաբաղը, Զանգեզուրը դրանից առաջ էին միացվել ռուսական կայսրությանը: Այս ժամանակից սկսած հայ ժողովրդի բախտը մեկընդմիջտ և վերջնականորեն կապվում է ռուս ժողովրդի բախտի հետ:

Պատմական այս երկար ժամանակաշրջանում, XIII դարի սկիզբներից մինչև XX դարի սկիզբները, Լոռին մտնում է մերթ Հայաստանի, մերթ Վրաստանի կազմի մեջ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Լոռու շրջանը կռվախնձոր է դառնում հայ և վրաց կառավարությունների միջև, որ և առիթ է դառնում եղբայրասպան ամոթալի պատերազմի:

1921 թ. սկսած Լոռին որպէս Հայաստանի անկաւտելի մասը մտնում է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան կազմի մեջ:

* * *

Լոռին Հայաստանի այն հազվագյուտ շրջաններից մեկն է, որ համեմատաբար քիչ է ենթարկվել օտար արշավանքների ու ավերածութիւնների: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ այս շրջանից համարյա թե արտագաղթի չեն եղել: Այդ պատճառով, ահա, Լոռու խոսվածքը տերիտորիալ տեսակետից մի ամբողջութիւն է կազմում՝ բռնելով բավական ընդարձակ տարածութիւն:

Լոռու խոսվածքի տարածման սահմանները հետևյալներն են.

1. Կիրովական քաղաքը և շրջակա գյուղերը (Գուդարքի շրջան):

2. Ալավերդի քաղաքը և Ալավերդու շրջանի գյուղերը:

3. Ստեփանավան քաղաքը և Ստեփանավանի շրջանի գյուղերը¹:

4. Նոյեմբերյանի շրջանը:

5. Սպիտակի շրջանի գյուղերի մի մասը (Սպիտակ, Լեոնանցք, Կաթնաջուր, Մեծ Պարնի, Սարալանջ, Զիգղամալ, Գոգարան, Քարածոր):

Այս ընդարձակ տարածութեան բոլոր գյուղերում չէ, որ ճիշտ և ճիշտ միեւնոյն ձևով են խոսում: Իհարկե, ինչ-ինչ ձևաբանական, առանձնապէս հնչյունական տարբերութիւններ կան: Բայց բացարձակ նույնութիւններն ու ընդհանրութիւնները ակնառու են, և այդ բոլորը լեզվական մի միութիւն են կազմում, որը և հիմք է տալիս խոսելու մի առանձին խոսվածքի՝ Լոռու խոսվածքի մասին:

¹ Արմանիս և Կաթնաղբյուր գյուղերը գաղթել են Արեւմտյան Հայաստանից և խոսում են Մշո բարբառով:

ԼՈՌՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՓՈԽՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեռնարկելով Լոռու խոսվածքի ուսումնասիրությանը՝ ամենից առաջ պետք է պարզենք Լոռու և Արարատյան խոսվածքների փոխհարաբերությունը:

Պրոֆ. Հ. Աճառյանն իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ գծելով Երևանի (Արարատյան) բարբառի տարածման սահմանները՝ գրում է. «Երևանի բարբառը կը խոսվի Երևան քաղաքին և շրջակա գավառներուն մեջ, հատկապես Երևանի, էջմիածնի և Նոր Բայազեդի գավառները: Հարավային կողմեն կտարածվի մինչև Թավրիզ՝ Ատրպատականի մայրաքաղաքը, արևմուտքեն Կաղզվան, հարավ-արևմտյան կողմեն կը մտնե Տաճկաստան և կը հասնի մինչև Պայազիտ, հյուսիսային և հարավային կողմերեն կը շփվի Կարնո և Ղարաբաղի բարբառներուն հետ՝ որոնք իր այս երկու սահմանները կը գծեն: Երևանի բարբառը հյուսիսային կողմերը երկու կղզյակներ ալ կը ձևացնե, մեկը Բորչալուի գավառին մեջ (Շուլավեր, Շամշադին, Լոռի և շրջականները) և երկրորդը Թիֆլիզի Հավլաբար թաղը՝ որ Երևանի գաղթականություն մ'է»¹:

Այս մեջբերումից պարզ է դառնում, որ պրոֆ. Աճառյանը Լոռու խոսվածքը մտցնում է Արարատյան բարբառի մեջ, բայց չի անդրադառնում այն հարցին, թե ինչ առանձնահատկություններ ունի այդ խոսվածքը: Պրոֆ. Աճառյանը Արարատյանի ենթաբարբառներն է համարում Բայազեդի, Աստապատի ու Թավրիզի խոսվածքները և նկարագրում դրանց տարբերիչ լեզվական հատկանիշները²:

Պրոֆ. Ղարիբյանն արդեն Լոռու խոսվածքը համարում է Արարատյանի ենթաբարբառ: Նա գրում է. «Արարատյան բարբառով խոսող քիչ թե շատ մեծ քանակությամբ գյուղեր գտնում ենք Երև-

¹ Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկվա—Նոր-Նախիչևան, 1911, էջ 37:

² Անդ, էջք 44—46:

վանի, Կոտայքի, Վաղարշապատի և Աշտարակի շրջաններում: Արարատյան բարբառով խոսում են լոռեցիները. Լոռին է միակ վայրը, որտեղ Արարատյան բարբառը կազմում է ճնշող մեծամասնություն, սակայն լոռեցիների խոսվածքը, պատկանելով Արարատյան բարբառին, միաժամանակ և ունի իր մեջ թույլ տարրեր Ղարաբաղի և Թիֆլիսի բարբառներից, այնպես որ այն կառելի է համարել Արարատյան ենթաբարբառ»¹ (ընդգծումն իմն է—Մ. Ա.):

Այսպես, ուրեմն՝ հայ բարբառագիտական գրականության մեջ Լոռու խոսվածքը մտցվում է Արարատյան բարբառի մեջ կամ համարվում է նրա ենթաբարբառը: Ցավով պետք է նշել, որ Արարատյան բարբառը, որը մեր ամենատարածված ու զխավոր բարբառներից մեկն է և համարվում է արևելյան գրական լեզվի հիմքը, ցայսօր մնում է չուսումնասիրված: Պրոֆ. Աճառյանը 1911 թ. իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ գրում էր. «Երեւանի բարբառը՝ հակառակ իր կարևորության, ինչպես և իր երեք ենթաբարբառները (Բայազեդ, Աստապատ, Թավրիզ—Մ. Ա.) դեռ ուսումնասիրված չեն»²:

Նույն բանը նա կրկնում է ուղիղ 40 տարի հետո՝ 1951 թ. հրատարակած «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ. «Հակառակ իր մեծ կարևորության այս բարբառը (Երևանի բարբառը—Մ. Ա.) դեռ ուսումնասիրված չէ»³: Մենք էլ պրոֆ. Աճառյանին միանալով՝ մի անգամ ևս կրկնենք, որ տակավին այսօր էլ Արարատյան բարբառը մնում է չուսումնասիրված⁴:

Արարատյան բարբառի մասին թուուցիկ ու համառոտ տեղեկություններ են տալիս ընդհանուր բարբառագիտական աշխատությունները, այն է՝ պրոֆ. Աճառյանի «Հայ բարբառագիտությունը»⁵, պրոֆ. Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտությունը»⁶ և դոց. Ա. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթացը»⁷: Եթե

¹ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 219:

² Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ը, 1911, էջ 46:

³ Զ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 330:

⁴ Վերջին տարիներս ՆՍՍՀ ԳԱ Լեզվի ինստիտուտում Արարատյան բարբառի ուսումնասիրության համար տարվում են նախապատրաստական աշխատանքներ (բառացանկերի կազմում, տեքստերի գրանցում և այլն):

⁵ Զ. Աճառյան, Հայ բարբառագիտություն (էմինյան ազգագրական ժողովածու, հ. Է), 1911, էջք 37—51:

⁶ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջք 218—229:

⁷ Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957, էջք 205—225:

հաշվի առնենք այն հանգամանքը, որ Ա. Ղարիբյանը և Ա. Գրիգորյանը շատ բան չեն ավելացնում Հ. Աճառյանի՝ Արարատյան բարբառի մասին արած գիտողությունների վրա, ապա պարզ կդառնա, որ այդ բարբառի մասին մենք ունենք միայն ամենալնդհանուր տեղեկություններ:

Իսկ ինչ վերաբերում է լոռու խոսվածքին, ապա այն, չնայած իր հետաքրքիր կողմերին ու կարևորությանը, ամենևին չի գրավել լեզվաբանների ուշադրությունը: Այդ խոսվածքի մասին ոչ միայն առանձին ուսումնասիրություն, այլև մի փոքրիկ հոդված իսկ չունենք: Միայն պրոֆ. Ա. Ղարիբյանը իր վերոհիշյալ աշխատության մեջ Արարատյան բարբառին նվիրված հատվածում մի երկու գիտողություն է անում լոռու խոսվածքի լեզվական առանձնահատկությունների մասին:

Ձեռնամուխ լինելով խոսվածքի ուսումնասիրությանը՝ հետադոտողը ամենից առաջ պետք է պատասխանի հետևյալ հարցին՝ լոռու խոսվածքը Արարատյան ենթաբարբառներից մեկն է, թե՞ անկախ ու ինքնուրույն բարբառ:

Հենց սկզբից նկատենք, որ առաջին հայացքից պարզ ու հասարակ թվացող այս հարցին այնքան էլ հեշտ չէ պատասխանել, որովհետև շատ դեպքերում ուղղակի անհնար է սահմանադատել ենթաբարբառն ու բարբառը, ուղղակի անհնար է ճշտորեն որոշել, թե որտեղ է վերջանում ենթաբարբառը, և որտեղ է սկսվում բարբառը: Դեռ ավելին. երբեմն լեզվաբանները զժվարանում են անգամ սահմանադատել բարբառներն ու լեզուները, որովհետև դրանք ևս առանձին դեպքերում հստակորեն չեն սահմանագծվում:

Պրոֆ. Աճառյանը, խոսելով լեզուների, բարբառների և ենթաբարբառների ստորաբաժանման հարցի մասին, «Հայոց լեզվի պատմության» մեջ գրում է. «Զգիտենք և չի էլ կարելի իմանալ, թե ... ուր է սկսում լեզուն, ուր է բարբառը և ուր ենթաբարբառը: Ոչ միայն ամեն ինչ հարաբերական է, այլև պայմանական ու պատահական: Դրա համար է, որ շատ անգամ գիտունները տարբեր-տարբեր բաժանումների են հետևում: ... Ցարական շրջանում ուկրաիններենը ռուսերենի մի բարբառն էր համարվում. միայն սովետական իշխանությունն էր, որ ճանաչեց, թե նա անկախ լեզու է, համաձայն գիտության: Սպաներենը և պորթուգալերենը համարվում են երկու տարբեր լեզուներ, բայց նրանց միջև եղած տարբերությունը ավելի փոքր է, քան հայերենի ու ղրկերենի. և սակայն այս վերջինը համարվում է բարբառ: Այսպիսի օրինակներ բազմաթիվ են: Իսկ բարբառների և ենթաբարբառների տարբերու-

բյունը շատ ավելի անօրոշ է: Ընդհանուր սկզբունքն այն է, որ երբ երկու անհատ իրար չեն հասկանում, այդտեղ բարբառ կա, իսկ երբ հասկանում են իրար առանց դժվարության, այդտեղ ենթաբարբառ կա: Բայց չհասկանալու և հասկանալու միջև կան անհուն աստիճաններ»¹ (Ընդգծումն իմն է—Մ. Ա.):

Նույն աշխատության մեջ հայերենի բարբառներին նվիրված գլխում մեծ լեզվաբանը կրկին անդրադառնալով այն հարցին, թե ի՞նչ է բարբառը, ի՞նչ է ենթաբարբառը կամ խոսվածքը (իր տերմինով՝ գավառականը), որտե՛ղ է սկսվում և վերջանում նրանց սահմանագիծը, ի՛նչն է որոշում և տարբերում նրանք իրարից կամ միացնում ու զուգորդում իրար հետ—գրում է. «Գիտենք, որ լեզվաբանության մեջ այդպիսի ճիշտ, կտրուկ և իրական տարբերություններ չկան: Լեզուն ներկայացնում է անթիվ, անհամար զանազանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հաբեանի հետ, ուրիշ երևույթներ, որոնք նույն կամ նման են այն հաբեանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջությամբ նույնը լինե՞ր մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ, որով կարելի լինե՞ր առանձնացնել նրանք մի անվան տակ: Խիստ կերպով արտահայտվելով, բարբառների ու ենթաբարբառների միջև բացարձակ սահմանագիծ գտնել շատ դժվար է: Շատ բան էլ կապված է ոչ-լեզվաբանական հանգամանքների հետ, ինչպես օր. քաղաքական, կամ ազգային ու ցեղական: Այդ բաժանմունքները գիտունների հնարած միջոցներն են՝ աշխատանքի հեշտության համար»² (Ընդգծումն իմն է—Մ. Ա.):

Այսպես, ուրեմն՝ բարբառների և ենթաբարբառների միջև որոշակի սահմանագիծ անցկացնելը, եթե չասենք անհնարին, ապա չափազանց դժվար է, որովհետև չկա մի վայր, որի խոսվածքը անկախ ու ինքնուրույն լինի, չունենա լեզվական ընդհանրությունների մի ամբողջ խումբ՝ ուրիշ վայրերի խոսվածքների հետ և միեւնույն ժամանակ լեզվական տարբերությունների մի ամբողջ խումբ՝ այլ վայրերի խոսվածքներից:

Որպես օրինակ վերցնենք Երևանի և Թիֆլիսի խոսվածքները: Այդ խոսվածքների լեզվական զգալի տարբերությունները հիմք են տալիս դրանք համարելու տարբեր, անկախ ու ինքնուրույն բարբառներ: Բայց չէ՞ որ Երևանի և Թիֆլիսի խոսվածքներն ունեն

¹ Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 123:

² Անդ, էջ 324—325:

նաև լեզվական զգալի ընդհանրություններ: Ահա այդ ընդհանրություններից ելնելով, շեշտը այդ ընդհանրությունների վրա դնելով և այլ մոտեցում ունենալով բարբառների ստորաբաժանման հարցին՝ դրանք ազատ կերպով կարելի էր համարել միևնույն բարբառի, ասենք, ռւմ բարբառի տարբեր ենթաբարբառներ:

Վերցնենք մի ավելի ցայտուն օրինակ: Որքան էլ այդ տարօրինակ լինի ու անտրամաբանական, Ղարաբաղի և Հաղրութի խոսվածքները ոչ միայն տարբեր բարբառներ են համարվում, այլև մտցվում են տարբեր ճյուղերի մեջ (Ղարաբաղը՝ ռւմ, Հաղրութը՝ լիս): Բայց չէ՞ որ նրանք հիմնականում տարբերվում են միայն ներկա ժամանակի կազմությամբ (Ղաղաբաղ՝ կյիրըմ ըմ, Հաղրութ՝ կյիրիս ըմ) և մյուս գլխավոր հատկանիշներով նույնն են: Ղարաբաղը և Հաղրութը տարբեր ճյուղերի մեջ են դասավորվում միայն այն պատճառով, որ հայ բարբառների դասակարգման համար հիմք է ընդունված ներկա ժամանակի կազմությունը: Եթե հայ բարբառների դասակարգումը հիմնված լիներ ոչ թե ներկա ժամանակի, այլ մի ուրիշ հատկանիշի, ասենք, բացառական հոլովի կազմության վրա (ի դեպ նշենք, որ այսպիսի դասակարգումը գիտականորեն լիովին կարող է արդարացվել), Հաղրութի խոսվածքը ոչ միայն Ղարաբաղից տարբեր ճյուղի մեջ չէր մտնի, այլև ինքնուրույն բարբառ կոչվելու կովան չէր ունենա և սոսկ կհամարվեր Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ:

Նույն երևույթն են ներկայացնում նաև հոյի և Ուրմիայի խոսվածքները, որոնք պրոֆ. Ա. Ղարիբջանը ոչ միայն տարբեր բարբառներ է համարում, այլև դասավորում է տարբեր ճյուղերի՝ լ և ս ճյուղերի մեջ, որովհետև դրանց ներկայի կազմությունը տարբեր է (հոյ՝ կյիրէլ էմ, Ուրմիա՝ կյիրէս էմ): Տարբեր «ճյուղերի» պատկանող այդ «բարբառների» միակ գլխավոր տարբերությունը ներկայի կազմությունն է, մյուս բոլոր հատկանիշներով նրանք համարյա նույնն են:

Բայց հալ լեզվաբանների մեծ մասը առանձին լ և ս ճյուղեր չի ընդունում, այլ ընդունում է մի միասնական լիս ճյուղ: Իսկ այս ինքնին նշանակում է, որ այս տեսակետի վրա կանգնած լեզվաբանների համար հոյը և Ուրմիան ոչ թե տարբեր ճյուղերի պատկանող տարբեր բարբառներ են, այլ միևնույն ճյուղի մի միասնական բարբառի ենթաբարբառներ:

Մյուս կողմից՝ այս կամ այն բարբառի ենթաբարբառ համարվող մի շարք խոսվածքներ այլ չափանիշների, այլ մոտեցման դնպքում կարող են դիտվել որպես ինքնուրույն բարբառներ: Այս-

պես, օրինակ՝ պրոֆ. Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Դիադինի և Ոզմիի խոսվածքները դիտված են որպես Վանի, իսկ Հաճրնի ու Մարաշի խոսվածքները՝ որպես Կիլիկիայի բարբառի ենթաբարբառներ, որովհետև պրոֆ. Հ. Աճառյանը ելակետ է ունեցել ընդհանրությունները, շեշտը դրել է այդ լեզվական միավորները շաղկապող նմանությունների վրա: Իսկ պրոֆ. Ա. Ղարիբջանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Դիադինի, Ոզմիի, Հաճրնի ու Մարաշի խոսվածքները դիտված են որպես ինքնուրույն բարբառներ, որովհետև պրոֆ. Ղարիբջանը ելակետ է ունեցել տարբերությունները, շեշտը դրել է այդ լեզվական միավորները Վանի և Կիլիկիայի բարբառներից անջատող առանձնահատկությունների վրա:

Նույն ձևով նաև՝ պրոֆ. Աճառյանի կողմից Վանի ենթաբարբառ համարված Շատախի խոսվածքը Մ. Մուրադյանի կողմից դիտվում է որպես ինքնուրույն ու անկախ բարբառ¹:

Այսպես, ուրեմն՝ բարբառների ու ենթաբարբառների որոշման սահմանները չափազանց խախուտ են ու անորոշ, պայմանական են ու հարաբերական: Եթե ուսումնասիրողը շեշտը դնում է լեզվական միավորները շաղկապող ընդհանրությունների վրա, կունենա ենթաբարբառներ, իսկ եթե շեշտը դնում է լեզվական միավորները առանձնացնող տարբերությունների վրա, կունենա բարբառներ:

Հայերենի բարբառների և ենթաբարբառների սահմանադժման համար ամենեւին անդործադրելի է այն սկզբունքը, թե «...երբ երկու անհատ իրար չեն հասկանում, այդտեղ բարբառ կա, իսկ երբ հասկանում են իրար առանց դժվարության, այդտեղ ենթաբարբառ կա»²: Եթե բարբառների որոշման համար ելակետ ունենանք հասկանալիությունը և ոչ հասկանալիությունը, ապա սխալված չենք լինի, եթե ասենք, թե հայերենը բարբառներ չունի կամ համարյա չունի, որովհետև, ասենք, երևանցին, թիֆլիսցին, ղարաբաղցին, վանեցին, պոլսեցին, խոյեցին և այլն փոխադարձաբար հասկանում են իրար:

Ընդունելով հանդերձ բարբառների և ենթաբարբառների ստորաբաժանման պայմանականությունն ու հարաբերականությունը, իհարկե, չի կարելի հարցն այնպես պատկերացնել, թե ամեն ինչ կախված է ուսումնասիրողի քմահաճույքից և ցանկացած դեպքում ամեն մի խոսվածք կարելի է համարել բարբառ կամ ենթաբարբառ: Այսպես, օրինակ՝ Փաթպիի, Աշտարակի և էջմիածնի

¹ Տե՛ս Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962:

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 123:

խոսվածքները իրարից ինչ-ինչ տարբերություններ ունեն, բայց սնհնար է այդ տարբերություններից ելնելով՝ դրանք համարել առանձին բարբառներ: Իսկ ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ այդ խոսվածքների մեջ ընդհանրություններն այնքան շատ են ու ակնառու, որ դրանց՝ իրարից ունեցած առանձին տարբերությունները երկրորդական գծի վրա են մղվում (ի դեպ նշենք, որ դրանք առանձին ենթաբարբառներ էլ չի կարելի համարել. դրանց տարբերությունները քիչ են և կարող են համարվել խոսվածքային տարբերություններ):

Որովհետև հայերենի բարբառները հնչյունական, ձևաբանական ու բառապաշարային զգալի տարբերություններ են երևան հանում, ուստի որևէ խոսվածք ինքնուրույն բարբառ համարվելու համար պետք է ունենա լեզվական տարբերիչ գծերի մի ամբողջ խումբ:

Այս առաջնությունը մոտենալով հարցին՝ տեսնենք, թե ի՞նչ խոսվածքը ի՞նչ տարբերակիչ հատկանիշներ ունի Արարատյան բարբառից և դրանք թո՞ւյլ են տալիս այդ խոսվածքը առանձնացնելու որպես անկախ բարբառ, թե ոչ:

Արարատյան և լոռու խոսվածքներն ունեն հնչյունական, ձևաբանական և բառապաշարային զգալի տարբերություններ:

Հնչյունական գլխավոր տարբերությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

Ա. Բուն Երևանի բարբառը բարբառագետների վկայությամբ ու և ե երկբարբառային հնչույթները չունի, միայն ո(ու) ենք հանդիպում Աշտարակի խոսվածքում, իսկ ո (ու) և ե(իէ) միաժամանակ՝ Նոր Բայազետի ենթաբարբառում¹:

Լոռու խոսվածքը, ի տարբերություն Երևանի բարբառի, է և օ ձայնավորներից բացի ունի նաև ե և ո երկբարբառներ: Եթե գրաբարյան ո և ե հնչյունները Երևանում տալիս են պարզ ձայնավորներ՝ օ և է, ապա Լոռում տալիս են երկբարբառներ՝ ո(ու) և ե(իէ), ինչպես.

Երևան

Լոռի

$n > o$

$n > n$

բոց > բօց

բոց > բոց

գող > գօղ

գող > գող

խորթ > խօրթ

խորթ > խոռթ

¹ Տե՛ս Ա. Ղափբյաճ, Հայ բարբառագիտություն, էջեր 110, 116, 220:

թոռն>թոռ
խմոր>խրմօր
հող>ֆող
պոչ>պօչ

թոռն>թոռր
խմոր>խրմոր
հող>ֆող
պոչ>պոչ

ե>է

ե>ե

բեռն>բէռ
դեղ>դէղ
թեւ>թէվ
մեղք>մէխկ
նեղ>նէղ
վեց>վէց

բեռն>բեռը
դեղ>դեղ
թեւ>թեվ
մեղք>մեխկ
նեղ>նեղ
վեց>վեց

Ա և Ն երկբարբառների գոյությունը կոռու խոսվածքի ամենահատկանշական հնչյունական կողմերից մեկն է, և անմիջաբար իր վրա է գրավում ուսումնասիրողի ուշադրությունը:

Բ. Երևանի և կոռու խոսվածքների շեշտը, որպես կանոն, ընկնում է նախավերջին վանկի ձայնավորի վրա (այդպես է ընդհանրապես արևելյան բարբառների շեշտադրությունը՝ ի տարբերություն արևմտյան բարբառների վերջնավանկային շեշտադրության), օրինակ՝ աղալ>ա'ղալ, անե'ր>ա'ներ, ամա'ն>ա'ման, կոճա'կ>կոճակ, ուրա'գ>ո'ւրաք, ուրի'շ>ո'ւրիշ և այլն: Բայց կոռու շեշտը ավելի ուժեղ է Երևանի շեշտից, և շեշտի ուժգնության այդ տարբերությունը հանգեցրել է նախաշեշտ ձայնավորի պահպանման՝ Երևանի խոսվածքում, իսկ հնչյունափոխության՝ կոռու խոսվածքում:

Այսպիսով, Երևանում նախաշեշտ ձայնավորը, որպես կանոն, մնում է անփոփոխ, իսկ կոռում հնչյունափոխվում է ը-ի կամ առանձին դեպքերում սղվում է:

Երևան

կոռի

ա>ա

ա>ը (0)

աղատել>աղաղէլ
ալեոր>հալիվօր
բաժանել>բաժանէլ
բամբասանք>բամբասանք
ծարաիլ>ծարավէլ
հարևան>հարէվան
շատանալ>շադանալ

աղատել>ըղատիլ
ալեոր>հըլիվոր
բաժանել>բըժանիլ
բամբասանք>բըմբասանք
ծարաիլ>ծըրավիլ
հարևան>հըրէվան
շատանալ>շըտանալ

աղաչանք > աղաչանք
արածել > արածէլ,

աղաչանք > ղանչաք
արածել > ըրածիլ || րածիլ

և > է (յէ)

եղունգն > յէղունգ
երեկիլ > էրէվալ
գերեզման > գէրէզման

ո > օ

ոլորել > օլօրել
ողորմի > օղօրմի
բորբոքել > բօրբօքէլ
լողանալ > լօղանալ

և > ը (θ)

եղունգն > ըղունգ || ղունգ
երեկիլ > ըրէվալ || րէվալ
գերեզման > գըրէզման

ո > ը (θ)

ոլորել > ըլօրիլ || լօրիլ
ողորմի > ըղօրմի || ղօրմի
բորբոքել > բըրբօքիլ
լողանալ > լըղանալ

Դրան գումարվում է նաև այն, որ երկու առանցող երկվանկ բառերի ա-ն բառի ածման դեպքում շեշտակորույս լինելով՝ կոռու խոսվածքում սովորաբար վերածվում է ը-ի, իսկ Երևանի խոսվածքում մնում է անփոփոխ:

Երևան

աման—ամանի
անգաճ—անգաճի
ատամ—ատամի
բանջար—բանջարի
դարման—դարմանի
ջաղաց—ջաղացի
քամակ—քամակի

Կոռի

աման—ըմանի
անգաճ—ընգաճի
ատամ—ըտամի
բանջար—բընջարի
դարման—դըրմանի
ջաղաց—ջըղացի
քամակ—քըմակի

Նախաշեշտ ձայնավորների (հատկապես ա ձայնավորի) հընչյունափոխությունը կոռու խոսվածքի ամենացայտուն դրսևորված առանձնահատկություններից մեկն է, դա կոռու խոսվածքին տալիս է մի առանձին երանգ և հեռացնում Արարատյան բարբառից:

Մանթոլյան կարգով նշենք, որ նախաշեշտ ձայնավորների փոփոխություն է նկատված նաև Աստապատի խոսվածքում, որը համարվում է Արարատյանի ենթաբարբառ, օրինակ՝ երեկոյ > րիկուն, գերեզման > գըրէզման, հաւաքուած > վաքված և այլն¹: Սակայն այս երևույթը ամենից ցայտուն կերպով դրսևորվում է Ղարաբաղի բար-

¹ Տե՛ս Հ. Անադյան, Հայ բարբառագիտություն, էջ 45:

բառում, որի հետ և նախաշեշտ ձայնավորների փոփոխությամբ շրփման մեջ է մտնում կոռու խոսվածքը:

Գ. Գրաբարյան և վերջնահնչյունը արևմտահայ ու արևելահայ գրական լեզուներում և հայերենի բարբառների բացարձակ մեծամասնության մեջ ընկել է, ինչպես եզն>եզ, մուկն>մուկ, գառն>գառ և այլն: Գրաբարյան և վերջնահնչյունը ընկել է նաև Երևանի բարբառում և նրա խոսվածքներում: Կոռին այն հազվագյուտ շրջաններից մեկն է, որտեղ գրաբարյան և վերջնահնչյունը հանդես է գալիս, բայց փոփոխված ձևով, այն է՝ ը ձևով (եզն>յէզը, մուկն>մուկը և այլն): Այսպես, ուրեմն՝ գրաբարյան և վերջնահնչյունը Արարատյան բարբառում և նրա խոսվածքներում ընկել է (համեմայն դեպս բարբառագիտական ոչ մի աշխատության մեջ Արարատյան բարբառի համար և՛ի պահպանում չի նշված), իսկ կոռում պահպանվել է (ը ձևով):

Գրաբար	Երևան	Կոռի
բեռն	բէռ	բեռը
բուռն	բուռ	բուռը
գառն	գառ	գառը
դուռն	դուռ	դուռը
թոռն	թօռ	թոռը
կաթն	կաթ	կաթը
հարսն	հարս	հառսը
ձեռն	ձէռ	ձեռը
ձուկն	ձուգ	ձուզը
մատն	մատ	մատը
ոտն	վօտ	վոտը

Այս բառերի նմանակությամբ կոռում մի շարք բառերի վերջում ավելացել է ը հնչյունը, ինչպես՝ աստղ>աստղը, անէծք>անիծկը, աչք>աչկը, թամբ>թամբը, թուխ>թուխը, խօսք>խօսկը, հրաշք>հրաշկը, ճիւղ>ճուխկը, մեղք>մեխկը, շող>շոխկը, միտք>միտկը և այլն:

Գրաբարյան և վերջնահնչյունի այսպիսի դրույթյամբ կոռու խոսվածքը առանձին դիրք է զբաղում հայերենի բարբառների մեջ, առանձնանում է Արարատյան խոսվածքներից և որոշ չափով մոտենալով Ղարաբաղի բարբառին (Ղարաբաղում և՛ն ոչ միայն պահպանվում է, այլև վրան ավելանում է մի ը ևս, օրինակ՝

մուկն>մօկնը, նուռն>նօռնը, ձուկն>ծիւկնը և այլն)՝ շփման մեջ է մտնում գրաբարի հետ:

Գ. Լոռու մի շարք գյուղերում (Ղալաշա, Կոթի, Շնող և այլն) ձայնավորով սկսվող մի շարք բառերի սկզբում ավելանում է ձայնեղ հ(հ') հազագը. ինչպես՝ աջ>հ'աջ, առաջ>հ'առաջ, առաջ-նակ>հ'առչնէկ, արդար>հ'արթար, արթուն>հ'արթուն, արջ>հ'արւ, արջառ>հ'աշառ, ափ>հ'ափուռ, երեք>հ'իրեք, էգ>հ'էք, իմանալ>հ'իմանալ, իմաստուն>հ'իմաստուն, իրեար>հ'իրուր, իւր>հ'իրա:

Ձայնեղ հ'-ի է փոխվում նաև գրաբարյան բառասկզբի յ-ն, ինչպես յիսուն>հ'իցցուն, յիշատակ>հ'իշատակ, յաջողիլ>հ'աջողալ:

Բարբառագիտական ուսումնասիրություններում բուն Երևանի բարբառի համար ձայնեղ հ-ի գոյություն չի արձանագրված, բայց նշված է, որ ձայնեղ հ ունի Արարատյանի ենթաբարբառ համարվող Նոր Բայազետի խոսվածքը¹:

Հրապարակված բարբառային տեքստերից պարզվում է, որ ձայնեղ հ ունի նաև Արարատյան բարբառի Զաֆարաբադ գյուղի (Հոկտեմբերյանի շրջան) խոսվածքը, ինչպես՝ «Մէ դինջ հառավոտ էր». «Գլիբորի հ'էրէսնէրը պաշէցին». «Գլիբորը թէզ-թէզ քամազն էր հ'իշգրմ». «Մէրը միզարով սըրփրմ ա հ'աշկէրը»: «էլի հօր կօղով վազըմ, յա հ'առաշն էր հ'ընզընում»²: Ինչպես օրինակներն են ցույց տալիս, ձայնեղ հ'-ի հավելումը այս խոսվածքի ձայնավորասկիզբ բառում սովորական երևույթ է:

Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտություն» մեջ Աշտարակի խոսվածքով բերված է մի փոքրիկ նմուշ (կես էջից էլ պակաս), որտեղ հանդիպում է հավիումը ձևը՝ «Իքու հափումը կանած ի»³: Ամենայն հավանականությամբ տառադարձությունը ճիշտ չէ, պետք է լինե՞ր հ'ափումը: Դա ափ>հ'ափ բառի ներգոյակա՞ն հոլովածն է: Ա. Գրիգորյանի «Դասընթացում» հանդիպում ենք Հ'աշտարակ ձևվին: Այս օրինակներից ելնելով կարելի է ասել, որ Աշտարակի խոսվածքում ձայնեղ հ կա:

Ուրեմն՝ բուն Երևանի բարբառում ձայնեղ հ չկա կամ, համենայն դեպս, չի արձանագրված, իսկ Լոռու խոսվածքի առանձին հատվածներում ձայնեղ հ-ի ենք հանդիպում:

Մի կողմ թողնելով հնչյունական մասնակի տարբերությունները՝

¹ Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 131:

² Տե՛ս անդ, էջ 229:

³ Անդ, էջ 227:

անցնենք ձևաբանական յուրահատկությունների քննությանը, որոնք ավելի կարևոր են հայերենի բարբառների և ենթաբարբառների սահմանագծման համար:

Երևանի և լոռու խոսվածքների ձևաբանական գլխավոր տարբերությունները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

Ա. Երևանի բարբառում բազմավանկ բառերի հոգնակին, որպես կանոն, կազմվում է նչ բաժնիկով, իսկ լոռու խոսվածքում՝ նի մասնիկով, ինչպես.

Երևան

Լոռի

հալիվօրնէր

հըլիվորնի

բէրանէր

բէրանի

գըլուխնէր

գըլխընի

դըմակնէր

դըմակնի

էրէսնէր

էրէսնի

հօղաղնէր

հօտաղնի

պառավնէր

պառավնի

Ա. Ղարիբյանը, նկարագրելով հայ բարբառների հոգնակերտ մասնիկները, նշում է, որ «նի վերջավորությունը նշանակում է հոգնակի Պոլսի բարբառում (ոտնեհնիս=մեր ոտները, գրեհնիս=մեր գրքերը): Նույն հոգնակին նե ձևով գտնում ենք Ղարաբաղի բարբառում, օրինակ՝ ճըղըցնե=ջաղացներ, տըխտըկնե=տախտակներ»¹: Սակայն, վերապահություն անելով, նկատում է, որ Ղարաբաղի բարբառի նի հոգնակին «կարող էր ստացվել նաև «ներ» հոգնակիից՝ վերջին բաղաձայնի անկումի հետևանքով»²: Իհարկե, ավելի հավանականը առաջին բացատրությունն է, որովհետև ի> է փոփոխությունը Ղարաբաղի բարբառի համար օրինաչափական է, օրինակ՝ բավարացի>բավարացե, շուշվեցի>շուշվեցե, բանին>պեճեճ, քանի>ֆանե, կշտին>ֆըշտեճ, մինչդեռ բառավերջի ր-ի անկում այս բարբառում չի նկատվում:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նի մասնիկը Պոլսի բարբառում բուն հոգնակերտ չէ և գործածվում է սոսկ ստացական հոգի հոգնակիությունը ցույց տալու համար (գրեհնիս=իմ գրեհը, գրեհնիս=մեր գրեհը), ապա պարզ կդառնա, որ լոռին այն

¹ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 137:

² Օրինակները քաղել ենք Ա. Ղարիբյանի վերոհիշյալ գրքում Ղարաբաղի բարբառից բերված նմուշներից (տե՛ս էջ 240):

հազվագյուտ շրջաններից է, որտեղ նի հոգնակերտը այնքան լայն գործածություն ունի¹։

Բազմավանկ գոյականների հոգնակիի կազմության այս առանձնահատկությամբ կոռու խոսվածքը հեռանում է Արարատյան բարբառից և որոշ չափով միանալով Ղարաբաղի բարբառին՝ նրա հետ միասին մի առանձին դիրք է զբաղում հայերենի բարբառների մեջ։

Միավանկ բառերի հոգնակիի կազմությամբ Արարատյան և կոռու խոսվածքները (ինչպես և հայերենի բարբառներն ընդհանրապես) շեշտված տարբերություններ երևան չեն հանում, երկուսն էլ միավանկների հոգնակին կազմում են էր (կոռու որոշ գյուղերում՝ եր) մասնիկով, ինչպես՝ տուն-տընէր, սար-սարէր, քար-քարէր և այլն։ Սակայն կոռում որոշ միավանկ բառեր հոգնակի են կազմում ան մասնիկով, որ բուն երևանի բարբառում չկա։ Այսպիսի բառեր են.

այծ>էծ—իծան

թի>թի—թիան

գայլ>գյէլ—գյիլան

ծի>ծի—ծիան

դէզ>դէզ—դիզան

ծու>ծու—ծըվան

Ան հոգնակերտը գործածական է սակայն Արարատյանի ենթաբարբառ համարվող Նոր Բայազետում (իշան, ձիան)։ Վերևում բերված հոգնակի ձևերի սեռական հոլովն ունենում է ոնց (ուօնց) վերջավորությունը՝ իծան-իծանոնց, գյիլան-գյիլանոց, ձըվան-ձըվանոնց և այլն։

Բ. կոռու խոսվածքի հոլովական գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ որոշ խմբի բառերի բացառական հոլովում ից վերջավորության ց-ն ընկնում է, իսկ այս իր հերթին նշանակում է, որ որոշ բառեր բացառական են կազմում սոսկ ի վերջավորությամբ։

Այս առանձնահատկությունն ունեն.

I. Յ հոլովման բառերը, օրինակ՝ Սըհականցի «Սահականցից», խընամոնցի «խնամիներից», գյէղացոնցի «գյուղացիներից», րէխանցի «երեխաներից», փէսէնոնցի «փեսաներից», ախպօրտանցի «եղբայրներից» և այլն։

II. Վա հոլովման բառերը, օրինակ՝ էն օրվանի «այն օրից», քմառվանի «ամառվանից», ձըմըռվանի «ձմեռվանից», աշունգվանի

¹ Նի հոգնակերտը գործածական է նաև Իջևանի, Շամշադինի ու Գորիսի շրջաններում։

«աշնանից», գառունվանի «գարնանից», էն տարվանի «այն տարուց» և այլն:

III. Անձնական, ցուցական դերանունները, օրինակ՝ ինձանի «ինձանից», քեզանի «քեզանից», նրանի «նրանից», մեզանի «մեզանից», ձեզանի «ձեզանից», նրանցի «նրանցից», սրանի «սրանից», դրանի «դրանից», սրանցի «սրանցից», դրանցի «դրանցից» և այլն:

Բարբառագիտական աշխատություններում նրեանի բարբառի համար այսպիսի երևույթ չի արձանագրված: Պրոֆ. Աճառյանը էստոնի, էտոնի, էնդոնի, դերանունների բացառականը ներկայացնում է էստոնցից||ըստոնցից, էտոնցից||ըստոնցից, էնդոնցից||ընդոնցից ձևերով¹ (մյուս դերանունների հոլովումը չի բերված): Պրոֆ. Ա. Ղարիբջանը յէս, դու, մէնֆ, դուֆ անձնական դերանունների և ըստոնի, ըդոնի, ընդոնի ցուցականների բացառականը ներկայացնում է ինձանից, քեզանից, մէզանից, ձեզանից, ըստոնցից, ըդոնցից, ընդոնցից ձևերով², որոնց մեջ ց-ն պահպանված է: Այս դերանունների բացառականի կազմությունը նույն ձևով է ներկայացված նաև Ա. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթացում»³:

Սակայն հնարավոր է, որ այս երևույթը, այսինքն՝ ց-ի անկումը Արարատյան բարբառում լինի, բայց վրիպած լինի բարբառագետների ուշադրությունից: Այս ստուգելու համար մենք ուշադրությամբ քննեցինք Հ. Աճառյանի, Ա. Ղարիբջանի և Ա. Գրիգորյանի գրքերում Արարատյան բարբառով բերած նմուշները և Ա. Ղարիբջանի մոտ գտանք միակ օրինակը, որտեղ բացառականի ց-ն ընկել է, դա էր՝ Առավօղվանի աշկըս ջուր դառավ⁴ «Առավոտվանից աշքս ջուր դառավ»: Հասկանալի է, որ այդ միակ օրինակով չի կարելի հաստատել բացառականի ց-ի անկումը Արարատյան բարբառում (չի բացառված նաև այն, որ այդ ձևը կարող է վրիպակ լինել):

Բացառականի այսպիսի կազմությամբ ևս կոոռու խոսվածքը շփման մեջ է մտնում Ղարաբաղի բարբառի հետ, որովհետև վերջինումս անձնական և ցուցական դերանունների բացառականը կազմվում է առանց ց-ի, օրինակ՝ ընձանա «ինձանից», քեզանա «քեզանից», մըզանա «մեզանից», ծըզանա «ձեզանից», ըստրա-

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 41:

² Տե՛ս Ա. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, էջք 224—225:

³ Տե՛ս Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, էջք 214—216:

⁴ Տե՛ս Ա. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, էջ 228:

նա «սրանից», քտրանա «դրանից», քնդրանա «նրանից»¹: Ծանոթության կարգով նշենք, որ Ղարաբաղի բարբառում բացառական հոլովը, որպես կանոն, կազմվում է ան վերջավորությամբ, օրինակ՝ ստրան «սարից», քտրան «քարից» և այլն:

Գ. Սա, դա, նա ցուցականները սրանք, դրանք, նրանք հոգնակիներից բացի ունեն զուգահեռ սրհանք, դրհանք, նրհանք հոգնակիները՝ բոլոր հոլովական ձևերով, ինչպես՝ ուղղ.—սրհանք, դրհանք, նրհանք. սեռ. տր. հայց.—սրհանց, դրհանց, նրհանց. բաց.—սրհանցի, դրհանցի, նրհանցի, գործ.—սրհանցով, դրհանցով, նրհանցով. ներգ.—սրհանցըմ, դրհանցըմ, նրհանցըմ: Այս ձևերը, որքան մեզ հայտնի է, բուն Արարատյան բարբառում չկան:

Սրհանք, դրհանք, նրհանք դերանվանական ձևերի գործածությունը ևս կոռու խոսվածքը շփման մեջ է մտնում Ղարաբաղի բարբառի հետ:

Դ. կոռու խոսվածքում ստացական հոգերի հոգնակիությունն արտահայտելու համար բոլոր գոյականները՝ թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ, ստանում են ներու մասնիկը, որի վրա և գրվում են ստացական հոգերը: Այսպես՝ տունըս նշանակում է իմ տունը, տրնէրս՝ իմ տները, իսկ մեր տները իմաստը արտահայտելու համար գործածվում է տուններուս ձևը (օրինակ՝ տուններուս քանդակեց): Նույն ձևով էլ՝ ձեռներուս «մեր ձեռքերը», վոտներուս «մեր ոտքերը» և այլն: Տունըս և տրնէրս ձևերը կան նաև Արարատյան բարբառում, իսկ կոռու՝ տուններուս ձևին համապատասխան գործածվում է տրնէրս ձևը: Այսպես նաև՝ ձեռներէրս, վոտներէրս և այլն:

Սակայն Արարատյան և կոռու խոսվածքների ձևաբանական տարբերություններն ավելի ցայտուն են բայական համակարգում:

Անցնենք դրանց քննությանը:

Ե. Անորոշ դերբայ.—Պրոֆ. Հ. Աճառյանը, խոսելով Արարատյան բարբառի խոնարհման մասին, գրում է. «Բայերը հիմնական փոփոխության ենթարկված են. նախ չորս լծորդություններեն երկուքը ջնջված են՝ իլ, ուլ վերջավորությունները վերածվելով ել և ըստ այդմ խոնարհվելով առաջին լծորդության համաձայն»²: Այս նշանակում է, որ Արարատյան բարբառում անորոշ դերբայը կազմվում է ել և ալ վերջավորություններով՝ արևելահայ գրականի նման:

Պրոֆ. Ա. Ղարիբջանը գրում է. «Արարատյան բարբառն ունի

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 67:

² Անդ, էջ 41—42:

Երեք խոնարհում՝ էլ, իլ, ալ, իլ խոնարհումը լինում է սովորաբար ժեստականի դեպքում»¹:

Գոց. Ա. Գրիգորյանի գրքում կարդում ենք. «Անորոշ դերբայում Արարատյան բարբառն ունի էլ, ալ, իլ վերջավորություններ, օրինակ՝ ասէլ, բարգանալ, ըլիլ»²:

Այսպես, ուրեմն, ըստ Հ. Աճառյանի՝ անորոշ դերբայը Արարատյան բարբառում ունենում է էլ և ալ, իսկ ըստ Ա. Ղարիբյանի և Ա. Գրիգորյանի՝ էլ, իլ ու ալ վերջավորությունները, ըստ տրում, առաջինը գտնում է, որ իլ-ով կազմված անորոշը սովորաբար հանդես է գալիս ժեստականի դեպքում, իսկ երկրորդը բերում է իլ-ով կազմված անորոշի մի կոնկրետ օրինակ՝ ըլիլ, սակայն անհայտ է մնում, թե իլ-ով անորոշ ուրիշ ի՞նչ բայեր ունեն:

Սակայն ինչպես էլ որ ընդունենք անորոշի կազմությունը Արարատյան բարբառում, կոռու խոսվածքը անորոշ դերբայի ձևավորմամբ տարբերվում է նրանից:

Նախ նշենք, որ ալ վերջավորվող բայերը (աղալ, կարդալ և այլն) և՛ Երևանում, և՛ կոռում նույն ձևն ունեն, տարբերություններ հանդես չեն բերում: Անորոշի կազմությամբ տարբերվում են արդի գրականի ել (նեյ, չեյ) վերջավորվող բայերը, ուստի և հետագա շարադրանքի ընթացքում խոսքը գնում է հենց դրանց մասին:

Ըստ անորոշ դերբայի կազմության կոռու խոսվածքները բաժանվում են երկու խմբի:

1. Խոսվածքների առաջին խումբը ել-ով վերջավորվող անորոշ դերբայ չունի:

Գրական հայերենի ել (գրբ. ել, իլ), նեյ (գրբ. անիլ||անել, ուլ||նուլ), չեյ (գրբ. չիլ) վերջավորվող բայերին համապատասխան ունենում ենք իլ, նիլ, չիլ ձևերը, ինչպես՝

գրաբար	գրակ. հայերեն	կոռու խոսվածք
ել	ել	իլ
ազատել	ազատել	ըզատիլ
անիծել	անիծել	անըծիլ
բաժանել	բաժանել	բըժանիլ
խաբել	խաբել	խափիլ
ծալել	ծալել	ծալիլ
սիրել	սիրել	սիրիլ

¹ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 225:

² Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, էջ 216:

իլ	ել	իլ
աճիլ	աճել	աճիլ
աշխատիլ	աշխատել	ըշխատիլ
ապրիլ	ապրել	ապրիլ
ծաղկիլ	ծաղկել	ծաղկիլ
ծիծաղիլ	ծիծաղել	ծիծաղիլ
ուլ նուլ	նել	նիլ
թողուլ	թողնել	թողնիլ
		թողալ
առնուլ	առնել	առնիլ
անիլ անել	նել	նիլ
ագանիլ	հագնել	հաքնիլ
անկանիլ	ընկնել	ընգնիլ
գտանել	գտնել	գըղնիլ
հասանիլ	հասնել	հասնիլ
չիլ	չել	չիլ
թռչիլ	թռչել	թըռչիլ
հանգչիլ	հանգչել	հանգչիլ
ուռչիլ	ուռչել	ուռչիլ
կորչիլ	կորչել	կուռչիլ

Անորոշ կազմության այս ուղղությանն են հետևում Ստեփանավանի շրջանի գյուղերը (Գյառգյառ, Գյուլագարակ, Վարդաբլուր), Գուգարքի շրջանի Դեբեդ գյուղը և այլն: Այս խոսվածքներում նսև և խոնարհման բայերի անորոշ և վաղակատար դերբայները ձևաբանորեն տարբերակված են. անորոշն ունենում է իլ՝ զբրիլ, ըշխատիլ, ըգատիլ և այլն, իսկ վաղակատարը՝ էլ վերջավորությունը՝ զբրիլ, ըշխատել, ըգատել:

Անորոշ դերբայի այսպիսի կազմությամբ խոռու վերոհիշյալ խոսվածքները նմանվում են Թիֆլիսի բարբառին (Թիֆլիսի բարբառում զրականի ել վերջավորվող բայերին համապատասխանում է իլ ձևը, օրինակ, զբրիլ, ֆաղիլ, կըտրիլ և այլն):

2. Խոսվածքների երկրորդ խումբը արդի հայերենի ել (զբբել), նել (զբբ. ուլ||նուլ, անիլ||անել), չել (զբբ. չիլ) վերջավորվող բայերին համապատասխան ունենում է ել (իևլ՝ ե-ի երկբարբառային հնչմամբ), նուլ (ուլ) և չիլ ձևերը: Ըստ այդմ, այս խոս-

վածքներում անորոշ դերբայը կազմվում է ել, ուլ (նուլ), իլ (շիլ), հասկանալի է, նաև ալ (աղալ, կառթալ) վերջավորություններով, իսկ սա իր հերթին նշանակում է, որ լոռու մի շարք խոսվածքներ պահել են զրաբարյան բոլոր լծորդությունները (բացի ո-ից, որ զրաբարում հանդես է գալիս միայն գոլ բայի մեջ):

զրաբար	արդի հայերեն	լոռու խոսվածք
ել	ել	ել (իէլ)
ազատել	ազատել	ըզատել
անիծել	անիծել	անըծել
բաժանել	բաժանել	բըժանել
խաբել	խաբել	խափել
ծալել	ծալել	ծալել
սիրել	սիրել	սիրել
ուլ, նուլ	նեւ	ուլ, նուլ
թողուլ	թողնել	թողուլ թողնուլ
առնուլ	առնել	առնուլ
անիլ անել	նեւ	նուլ
գտանել	գտնել	գըղնուլ
ազանիլ	հագնել	հաքնուլ
հասանիլ	հասնել	հասնուլ
մտանել	մտնել	մըտնուլ
տեսանել	տեսնել	տէնուլ
շիլ	շել	շիլ
թռչիլ	թռչել	թըռչիլ
հանգչիլ	հանգչել	հանգչիլ
ուռչիլ	ուռչել	ուռչիլ
փախչիլ	փախչել	փախչիլ
կորչիլ	կորչել	կորչիլ

Չնայած որ ընդհանրապես զրաբարյան պարզ իլ վերջավոր-
վող բայերը շուտ են եկել ել ձևին, ինչպես՝ աշխատիլ>ըշխատել,
ծաղկիլ>ծախկել, ծիծաղիլ>ծիծաղել և այլն, բայց զրաբարյան
պարզ իլ ձևը պահպանվել է մի քանի բայերի մեջ, դրանք են՝ փտիլ>
փըթիլ, քնիլ>քընիլ, քրտնիլ>քըռընիլ, նաև տանիլ>տանիլ (վեր-
ջինիս մեջ ն-ն ածանց է): Գրաբարյան ել լծորդության իլ փոփոխու-
թյուն ունենք քնել>քընիլ բայի մեջ: Գրաբարյան իլ լծորդությունը

պահպանվել է նաև անկանիլ > քնգնիլ, մեռանիլ > մեռնիլ բայերի մեջ: Ունիմ բայը ևս երևան է հանում գրաբարյան ի լծորդությունը, ինչպես՝ ունիմ, ունիս, ունի, ունիմք, ունիք, ունին:

Անորոշի այսպիսի կազմություն ունեն նոյնմբերյանի շրջանի Ղալաչա, Ալավերդու շրջանի Շնող և այլ գյուղերի խոսվածքների:

Գրաբարյան իլ, մանավանդ ուլ լծորդության պահպանմամբ կոռու խոսվածքը ոչ միայն հիմնավորապես հեռանում է Արարատյան բարբառից, այլև բացառիկ տեղ է գրավում հայերենի բարբառների մեջ, որովհետև ուլ լծորդությունը հայերենի հազվագյուտ բարբառներում է միայն պահպանվել: Պրոֆ. Հ. Աճառյանը այդ հարցի մասին գրում է. «Դ լծորդությունը (ուլ լծորդությունը—Մ. Ա.) առհասարակ ջնջված է մեր բարբառներում»¹: «Դ լծորդության երկրորդ տիպարը (նուլ—Մ. Ա.) առաջին (ուլ—Մ. Ա.) տիպարի նման, ջնջված է նոր բարբառներում»²:

Գրաբարյան ուլ լծորդությունը քիչ թե շատ հարազատ ձևով պահպանված է Համշենի բարբառում և իր գրսևորումներն ունի նոր նախիջևանի, Առտիալի, Սվեդիայի և Զեյթունի բարբառներում³:

Ահա, կոռու խոսվածքը ուլ լծորդության պահպանմամբ շփման մեջ է մտնում ձևաբանական և հնչյունական համակարգով իրենից այնքա՜ն հեռու կը ճյուղի վերահիշյալ բարբառների հետ:

Զ. Անկատար ժամանակ.— կոռու խոսվածքն ունի անկատար ժամանակի երկու ձև՝ բաղադրյալ և պարզ: կոռու խոսվածքի բաղադրյալ անկատարը լրիվ նույնանում է Երևանի անկատարին, ինչպես.

բէրըմ ի	բէրըմ ինք
բէրըմ իր	բէրըմ իք
բէրըմ էր	բէրըմ ին

Բայց կոռու խոսվածքում կա նաև մի երկրորդ անկատար, պարզ անկատար, որ ճիշտ և ճիշտ նույնանում է գրաբարյան անկատարին, այսինքն՝ կազմվում է ոչ թե դերբայով ու օժանդակ բալով, այլ բայահիմքով ու վերջավորություններով, ինչպես.

բէրէի	բէրէինք	բըժանէի	բըժանէինք
բէրէիր	բէրէիք	բըժանէիր	բըժանէիք
բէրէր	բէրէին	բըժանէր	բըժանէին

Անկատարի այսպիսի կազմությամբ կոռու խոսվածքը ոչ միայն հեռանում է Արարատյան բարբառից, այլև յուրահատուկ տեղ գրավելով հայերենի բարբառների մեջ՝ անմիջական շփման մեջ

¹ Հ. Աճառյան, Կիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Ա, Երևան, 1959, էջ 417:

² Անդ, էջ 418:

³ Տե՛ս անդ, էջք 417—418, 441, 452, 463, 466:

է մտնում գրաբարի հետ: Ընդհանրապես գրապահպանումը հայերենի բարբառներում հայ Ուրեմն այս հարցում կոռու խոսվածքը հնո հազվագյուտ ներկայացուցիչներից է հայերեն է. Ե նախահավելված.— Ինչպես հայտնի յալ կատարյալի միավանկ եզակի երրորդ դե վանկ բայաձևերն ընդհանրապես) ստանում վածը, օրինակ՝ գտի, գտեր, եգիտ, տեսի, տ հատեր, ենատ, բերի, բերեր, եբեր և այլն:

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուն րում, որպես կանոն, գրաբարյան Ե նախա կոռու խոսվածքը այս հարցում ևս յուրահա բերում՝ հինգ բայերի անցյալ կատարյալի քում պահպանելով գրաբարյան Ե նախահա:

բէրի	դառա	դըրի	թօղի
բէրիր	դառար	դըրիր	թօղի
եբեր	եդառ	եդեր	եթօղ

Սրանցից էրես ձևը գործածել է հայ մեծ մանյանը «Սասունցի Դավիթ» պոեմում, որի հատվածը.

— Մինչև լուս կըհասցնեմ.
Ու ձին տըվալ փորը գետին:
— Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա էլ երես փորը գետին:
— Հերթը եկավ սկին հասավ.
Գետին շերետ փորը սև ձին³:

Ինչպես տեսնում ենք, այստեղ տըվալ և երես ձևերը գործածվում են որպես նույնանիշներ:

Էբեր, էդառ, էդեր, էթօղ, էրես նախահավելվածով ձևերիև զուգահեռ ավելի հաճախ գործածվում են բերուց, դառավ, դըրուց, քօղուց, տըվուց նույնանիշները:

Ե նախահավելվածի պահպանմամբ կոռու խոսվածքը միջին հայերենի միջնորդությամբ շփման եզրեր է հանդես բերում գրաբարի հետ:

¹ Գտնում են, որ խոտրջուրի բարբառը ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում է գրաբարաձև (տե՛ս Ա. Ջարիրյան, Հայ բարբառագիտություն, էջ 54):

² Այս ձևերը կան, օրինակ, Նոյեմբերյանի շրջանի Ղալաշա գյուղի խոսվածքում:

³ Հ. Թումանյան, Երկեր, երկու հատորով, հ. II, Երևան, 1958, էջ 124:

և անկատարի տ երևույթ է: պահպանման բառների մեջ: բարում անցչպես և միանախահավելետես, հատի, և բարբառնեւածը ջնջվել է: ւն է հանդես երրորդ դեմ, ինչպես.

վի
շվիր
ւետ²
տեղծ Հ. Թումանյանը ենք այս

Ը. Ձևի դերբայ.— Լոռու խոսվածքում կա մի դերբայ, որ կազմվում է էն ածանցով՝ գրվելով անորոշի ձևի վրա, ըստ որում, անորոշի իլ ածանցը այդ դեպքում փոխվում է էլ-ի, օրինակ՝ ըրածիլ—բածելէն, գոռծիլ—գոռծելէն, մէռնիլ—մէռնելէն, զըղզողալ—զըղզողալէն, մըխկըտալ—մըխկըտալէն և այլն։ Այս դերբայը ցույց է տալիս գործողության կատարման ձևը՝ նախադասության մեջ բացառապես գործածվելով ձևի պարագայի պաշտոնով, օրինակ՝ զըղզողալէն գընաց ջըրի «զողզողալով գնաց ջրի»։ մեռնելէն ա գոռծ անըմ «մեռնելով է գործ անում»։

Այս էն վերջավորվող դերբայը առաջին անգամ որպես ինքնուրույն դերբայական ձև է դիտվել պրոֆ. է. Աղայանի կողմից և անվանվել է մակբայական դերբայ¹։ Պրոֆ. Ա. Աբրահամյանը այն անվանում է ընթացակցական դերբայ²։ Կարծում ենք ավելի հարմար է ձևի դերբայ անվանումը, որ համապատասխանում է նրա և՛ իմաստային կողմին, և՛ շարահյուսական կիրառությանը։ Այս դերբայը հայերենում բավական տարածված է, կա միջին հայերենում և արևմտահայ գրականում, Պոլսի և Նոր Զուղայի բարբառներում, Արարառայանի Աստապատի ենթաբարբառում³ և այլն։ Բայց բուն Երևանի բարբառում չկա, համենայն դեպս բարբառագիտական ուսումնասիրություններում այս դերբայի գոյության մասին խոսք չկա։

Թ. Ժամանակի դերբայ (անկատար դերբայի երկրորդ ձև)։— Լոռու մի շարք գյուղերում (օրինակ՝ Ստեփանավանի շրջանի Գյառգյառ, Գյուլագարակ, Վարդարլուր և այլ գյուղերում) ժամանակի դերբայը կազմվում է ուս ածանցով, որ գրվում է անորոշի ձևի վրա, ըստ որում, անորոշի իլ ածանցը այդ դեպքում փոխվում է էլ-ի, օրինակ՝ բէրիլ—բէրէլուս, աղալ—աղալուս, լիսանալ—լիսանալուս և այլն⁴։

Այս դերբայը համապատասխանում է արդի հայերենի անկատարի երկրորդ ձևին՝ իս վերջավորվող դերբային (բերելիս, աղալիս և այլն), ունի այն գործածությունները, ինչ արդի հայերենի անկատար դերբայի երկրորդ ձևը, այն է՝ լինիլ>ըլիլ օժանդակ բայի

¹ Տե՛ս է. Աղայան, Քննություն Մեղրու բարբառի, Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 19, 1941, էջ 424։

² Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 262։

³ Տե՛ս նույն տեղը, էջ 262—263։

⁴ Դսեղ, Արճիս, Վահագնի, Կոթի, Ղաշաղան և այլ գյուղերում այս դերբայն ունի սովորական իս վերջավորությունը՝ բէրէլիս, աղալիս, լիսանալիս և այլն։

հետ բաղադրում է երկրորդական բաղադրյալ ժամանակներ, օրինակ՝ բերելու էմ ըլըմ, բերելու էմ էլէլ, բերելու էլա և այլն, իսկ առանձին գործածվելով դառնում է ժամանակի պարագա՝ ցույց տալով գլխավոր գործողության կատարման ժամանակը, օրինակ՝ Տուն գալուս նրան տէ՛հա «Տուն գալիս նրան տեսա», Հաց ուտելուս խօսալ շէն «Հաց ուտելիս չեն խոսի» և այլն: Ուս-ով կազմվող այս դերբայը ունեն բոլոր բայերը, ներառյալ նաև զալ և տալ բայերը՝ գալուս, տալուս: Այս բայերի անկատար դերբայը կազմվում է իս ածանցով՝ գալիս, տալիս. այս ձևերով կազմվում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները (գալիս էմ, տալիս եմ), իսկ գալուս, տալուս ձևերով՝ երկրորդական բաղադրյալ ժամանակներ (գալուս էմ ըլըմ, տալուս եմ ըլըմ), ինչպես և դրանք ունեն նաև ինքնուրույն գործածություն (գալուս տէ՛հա «գալիս տեսա»):

Ուս-ով կազմվող այս դերբայը կա հայերենի շատ հատվածներում, բայց քանի որ Երևանի բարբառը չի ուսումնասիրված, չգիտենք ուս-ով կազմվող դերբայ այնտեղ կա՞, թե ոչ, իսկ Աշտարակում կա, ինչպես ցույց են տալիս հետևյալ օրինակները. «Շատ անգամ խոսք բացվելուս Սոսը Գարեգինն ասել էր...» «...գողանալուս աստված հասցրեց». «Սոսը տան շեմքիցը ոտը դուռ դնելուս մի խոր հոգվոց քաշեց...»¹:

Մ. Աբեղյանը կանչելուս, մտնելուս, խաղալուս և այլ ձևերի բառակերջի ս-ն համարում է հայերենի սովորական առաջին դեմքի հոդը²: Ա. Աբրահամյանը չի ընդունում այդ բացատրությունը այն պատճառաբանությամբ, որ հայերենի ս հոդը «գիտակցվում է և այժմ էլ մթագնվելու ոչ մի նշույլ չունի, այնինչ հիշյալ կազմության մեջ մենք նկատում ենք ս մասնիկի մթագնում»³: Ա. Աբրահամյանը վերոբերյալ ձևերին տալիս է մի այլ բացատրություն. ըստ նրա՝ կանչելուս, մտնելուս, խաղալուս և այլ ձևերը առաջանում են անորոշի տրական կանչելու, մտնելու, խաղալու հոլովա-ձևերից, որոնք իս վերջավորվող անկատար դերբայի անալոգիայով ստանում են ս բաղաձայնը: Շարունակելով իր դատողությունների ընթացքը, Ա. Աբրահամյանը գտնում է, որ հիշյալ ձևը ժողովրդական ստուգաբանությամբ կապվել է բացառական հոլովի

¹ Պ. Պոռչյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջք 72, 89, 176:

² Տճ՝ս Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 57:

³ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 116:

հետ և ս-ին փոխարինել է ց-ն, օրինակ՝ Այդտեղից նայելուց երև-վում էր... Այսօր կղզին մտնելուց դուք խոսեցիք գյուղացիների տրտունջի մասին:

Մեր կարծիքով այս բացատրությունն անընդունելի է և ահա թե ինչու: Չէ՞ որ նայելուց, մտնելուց, կանչելուց և այլ ձևերը լեզ-վում գոյություն ունեն հենց որպես նայել, մտնել, կանչել դերբայ-ների բացառական հոլովի ձևեր: Գործածվելով հետո և առաջ կա-պերի հետ անորոշի բացառականի ձևերը ցույց են տալիս նախա-դասության բայ-ստորոգյալով դրսևորված գործողությանը նախոր-դող կամ հետնորդող գործողություն, օրինակ՝ Քննելուց հետո բը-ժիշկն զգաց, որ հիվանդի դրությունը լուրջ է. Քննելուց առաջ բը-ժիշկն զգաց, որ հիվանդի դրությունը լուրջ է. նրա վերադառնալուց հետո պարզվեց ամեն ինչ. նրա վերադառնալուց առաջ պարզվեց ամեն ինչ:

Իսկ երբ անորոշի բացառականը գործածվում է առանց հետո և առաջ կապերի, նրան այլ բան չի մնում, եթե ոչ ցույց տալու զխափոր գործողության հետ միաժամանակ կատարվող գործողու-թյուն, ինչպես՝ Քննելուց բժիշկն զգաց, որ հիվանդի դրությունը լուրջ է: Նրա վերադառնալուց պարզվեց ամեն ինչ:

Այսպես, ուրեմն՝ նայելուց, կանչելուց, տեսնելուց և այլ ձև-վերը ոչ թե կազմվել են նայելու, կանչելու, տեսնելու և այլ ձև-վերից ժողովրդական ստուգաբանությամբ, այլ հենց հայերենի սովորական բացառական հոլովի ձևերն են: Իսկ եթե այս ձևերի միջև կա ծագումնաբանական կապ, ապա հենց նայելուց, կան-չելուց, տեսնելուց բացառականի ձևերից՝ ց>ս հնչյունափոխու-թյամբ, որ մեր մի շարք բարբառների համար օրինաչափական է (օրինակ՝ խուրց (<խուրձ), բայց՝ մէ խուրս խոտ, հացահան> խասկան և այլն՝ հոյ), առաջացել են նայելու, կանչելու, տես-նելու ձևերը:

Ի դեպ, կարող էր տրվել նաև այն բացատրությունը, թե վեր-ջին ձևերը առաջանում են հայերենի իս վերջավորվող անկատար դերբայից՝ իս>ուս հնչյունափոխությամբ՝ նայելիս>նայելու, կանչելիս>կանչելու, տեսնելիս>տեսնելու և այլն: Կարծում ենք, որ դա Մ. Աբեղյանի և Ա. Աբրահամյանի ստուգաբանությունից ավելի անհավանական չէ:

Ժ. Պայմանական եղանակ.— Պայմանական եղանակը և՛ երևանում, և՛ լուռում կազմվում է ըղձականից՝ կը եղանակիչի հավելմամբ, ինչպես.

կը գըրէմ

կը գըրէս

կը գըրի

կը գըրէնք

կը գըրէք

կը գըրէն:

Բայց իոռու խոսվածքում (օր. Ստեփանավանի շրջանի Գյառգյառ գյուղում) կա պայմանականի մի երկրորդ ձև, որ կազմվում է կա եղանակիչով, որը հտադաս դիրք ունի, ինչպես.

գըրէմ կա

գըրէս կա

գըրի կա

գըրէնք կա

գըրէք կա

գըրէն կա:

Պայմանականի այսպիսի ձև Արարատյան բարբառում չկա:

ԺԱ. Անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքը.— կատարյալի եզակի երրորդ դեմքի համար բացի սովորական զրո, ավ վերջավորություններից, օրինակ՝ գրէց, բրժանէց, մէռավ, հասավ, իոռու խոսվածքն ունի նաև ուց վերջավորությունը, որն ունենում են պատճառական բայերը, ինչպես՝ բրցրացրուց, ըմանչացրուց, խրմացրուց, կրտաղացրուց, նրստացրուց, ուտացրուց, քրնացրուց և այլն, և մի քանի անկանոն բայեր, ինչպես բէրուց, դրուց, տրվուց:

Անցյալ կատարյալի այս ուց վերջավորությունը կա Գորիսում, Շամշադինում, Իջևանում և այլն: Արարատյան խոսվածքներից կա նաև Աշտարակում, ինչպես «Գարեգնի մերը դռան փակը մի քիչ չխչխկացրուց՝ չէլավ. բանալիքը չի գտավ, մատը կոխեց կոտիտները բարձրացրուց ու դուռը բաց արուց» (էջ 69). «Հիմի քու մերն էլ քեզնից մինը բերուց» (էջ 70). «Ասեց ու ծնկներին տվուց, ականջը դրուց բերնին, տեսավ շունչ կա, ձեռը դրուց սրտին, տեսավ քցում ա» (էջ 86)¹:

Բուն Երևանի բարբառում անցյալ կատարյալի 3-րդ դեմքի ուց վերջավորություն չկա, համեմայն դեպս, բարբառագիտական ուսումնասիրություններում չի արձանագրված:

ԺԲ. Ժխտականի կազմությունը.— իոռու խոսվածքում սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակների ժխտականի կազմության ժամանակ ժխտական ձև է ստանում օժանդակ բայը՝ դըրվելով դերբայից հետո, ինչպես՝ քընըմ եմ—քընըմ չեմ, քընել եմ—քընել չեմ և այլն:

Անցյալ կատարյալի և ըղձականի ժխտականը կազմվում է վոչ մասնիկի միջոցով, որը դրվում է խոնարհված բայաձևերի

¹ Պ. Պոռշյան, երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962:

վրա՝ վերջից, ինչպես՝ քրնէցի—քրնէցի վոչ, քրնեմ—քրնեմ ոչ և այլն:

Պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտականը կազմվում է անորոշ դերբայի և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ժխտական ձևերի միջոցով, որոնք ետադաս դիրք ունեն, ինչպես՝ կըքրնեմ—քրնիլ չեմ, կըքրնէի—քրնիլ չէի և այլն:

Արգելական հրամայականը կազմվում է անորոշ դերբայի և մի, մէք մասնիկների միջոցով, որոնք ետադաս դիրք ունեն, ինչպես՝ քրնի՛, քրնէ՛ցէք—քրնի՛լ մի, քրնի՛լ մէք:

Եթե ամփոփենք այս բոլորը, կհանգենք այն եզրակացության, որ լոռու խոսվածքում, ի տարբերություն հայերենի շատ բարբառների ու զրական հայերենի, ժխտական մասնիկները զրվում են դերբայներից ու խոնարհվող բայաձևերից հետո, այսինքն՝ ետադաս դիրք ունեն: Սա լոռու խոսվածքի ամենաակնառու յուրահատկություններից մեկն է:

Բուն Արարատյան բարբառում ժխտական մասնիկների այսպիսի հետեղական ետադաս գործածություն չկա: Դրա մասին է վկայում թեկուզ և այն փաստը, որ արեւելահայ գրական լեզուն, որ բարձրացել է Արարատյան բարբառի հիմքի վրա, ժխտական մասնիկները դնում է դերբայներից ու խոնարհվող բայաձևերից առաջ, օրինակ՝ գրում եմ—չեմ գրում, գրել եմ—չեմ գրել, գրեցի—չգրեցի, գրեմ—չգրեմ, գրիր—մի՛ գրիր և այլն:

Կարելի էր ցույց տալ նաև ձևաբանական այլ տարբերություններ, բայց բավարարվենք այսքանով:

3. Բառապաշարային տարբերություններ.— Բառապաշարային տարբերություններն ընդհանրապես վճռական դեր չեն կարող խաղալ հայերենի բարբառների ու ենթաբարբառների սահմանադժման համար, բայց և այնպես կարծում ենք, որ դրանց կողքով անցնել և ամենևին չհիշատակել, ճիշտ չէր լինի:

Արարատյան ու լոռու խոսվածքները զգալի բառապաշարային տարբերություններ են երևան հանում: Լոռում կան մի շարք բառեր, որոնք Արարատյան բարբառում չկան:

Այստեղ բերում ենք մի փոքրիկ ցուցակ այդպիսի բառերի ու բառաձևերի, որոնց մի զգալի մասը հայերենի և ոչ մի բառարանում չի արձանագրված:

ալամաթիլ «ապականել, կեղտոտել»

բզդրիլ «բկին շոքել, ստիպել»

բրնուտ «անտառում խիտ թփուտների տեղ»

գեջ «դալար, թաց փայտ»
 գիլահաշ «գալահաշ»
 դափա «դագա»
 դիբ անիլ «բարձրանալ»
 դյերիլ «դեպի վեր գնալ»
 դրվերիլ «դեպի ներքե գնալ»
 երթըմվիլ «երդվել»
 էլ յետ «կրկին, նորից, վերստին»
 բժու «հետո»
 բղու կամ դու ըլիլ «ճանապարհվել»
 թալա «բացատ»
 թոլ անիլ «գլորել»
 թոլ ըլիլ «գլորվել»
 ժեռ «սարյակ»
 լատան «դալար ոստ, ճյուղ»
 լիսածակ «երդիկ»
 խիզան «կին-արմատ»
 խնջիլք «ավելորդ մանր-մունր իրեր»
 խոզապարկուկ ըլիլ «թավալվել, գետին ընկնել»
 ծերա «համար, խաթեր»
 ծիկա տալ «սուր ձայնով ճշալ»
 ծըկրակիլ «թաքուն նայել»
 ծխմոն «ծառի խեժ»
 ծլլաշարուկ «իրար հտեից շարված»
 ծղիկ «զամբյուղ»
 կոծոլ «քիչ, փոքր»
 կոնդ «տան ծածկի գերանները»
 կոպար «շավիղ, արահետ»,
 կոիվսը տալ «շարժարվելով կռվել»
 կտիտ «սպտուր»
 կտրկան «խրտնած»
 կունձիլ «ոգնի»
 համկալ «փոխարինաբար լծկաններով իրար հետ գովթան
 բանեցնողները»
 հետ ածիլ «վռնդել»
 հնկոծակի գալ «հանկարծակիի գալ» (գործածվում է որպես
 անեծք)
 դոդնոշ «դոդնոշ»
 դշրդու «կանչ»

Ճալա «Ճահիճ»

Ճլկուտ «Ճահճուտ»

Ճղատիլ «ոտներից բռնած կես անել»

մադիան «էգ ձի»

մամուխ «վայրի դողնոշ»

մավի «կապույտ»

մատնունք «1. մատանի, 2. մատնոց»

մեղրատանձի «վայրի քաղցր տանձենի»

մերի «անտառ»

մթնագիշեր «մթնագիշեր»

մխելի «մի քիչ»

մխլով «չզանգված, կիսահիվ ձվածեղ»

մոշ «մոշ»

մոշահավ «մոշահավ»

մոշուտ «մոշուտ»

ներքեիլ «ներքե զնալ»

նիստ «անասունների հավաքատեղի»

շղահարիլ «թափ տալ, թափահարել»

չանգ «մառախուղ»

պկու «շվի»

պոստի «նապաստակ»

սկսկալ «մի բանի վրա դողդողալ, ժլատություն անել»

սրտահան անիլ «ջղայնացնել»

սրտահան ըլիլ «ջղայնանալ»

վեռնուցի անիլ «խիստ վախեցնել, սարսափեցնել»

վեռնուցի ըլիլ «խիստ վախենալ, սարսափել»

վեր հատիլ «ծեծել»

վեր քաղիլ «հավաքել, մաքրել»

վեր քաշվիլ «շշմել»

վոռցակ «աբլոր» (նաև Ղարաբաղ, Ղազախ, Մեղրի)

վրա նստիլ «պառկած տեղից նստել»

տաքիլեթ «տաք կերակուր»

ցոփուլ «կողով, դամբյուղ»

փթռակ «մեջը փտած ծառ»

փլեկ «ավերակ»

քոթկաթաղ անիլ «կոճղով ծածկել, թաղել»

օսալ «վատ»

Իհարկե, Արարատյան և Լոռու խոսվածքների բառապաշարային տարբերությունների մասին ավելի վճռական խոսք ասելու

Համար պետք է տրվի այդ երկուսի բառապաշարի մանրամասն համեմատական քննությունը, որ մեր նպատակից դուրս է: Սակայն այդ օրինակներն էլ բավական են համոզվելու, որ Արարատյան և Լոռու խոսվածքները զգալի բառապաշարային տարբերություններ են երևան հանում:

Արարատյան ու Լոռու խոսվածքների հնչյունական համակարգի ու ձևաբանության, մասամբ նաև բառապաշարի, տարբերությունների նկարագրմամբ ուրվագծվեց Լոռու խոսվածքի ընդհանուր պատկերը և այժմ արդեն թվում է, թե հնարավոր է պատասխանել առաջադիր հարցին, այն է՝ Լոռու խոսվածքը անկախ ու ինքնուրույն բարբառ է, թե՞ Արարատյան ենթաբարբառներից մեկը:

Շեշտը դեռևով Արարատյան ու Լոռու խոսվածքների հնչյունական, ձևաբանական, բառապաշարային տարբերությունների վրա, որոնք վերջին հաշվով Լոռու խոսվածքի, որպես ինքնուրույն լեզվական միավորի, գոյությունն են ապացուցում, հաշվի առնելով այդ խոսվածքի տարածման համեմատական ընդարձակությունը, այլև հայերենի բարբառների ու ենթաբարբառների սահմանազատման պայմանականությունն ու հարաբերականությունը՝ կարծում ենք, որ Լոռու խոսվածքը կարելի է ինքնուրույն բարբառ համարել:

Լոռու խոսվածքը միջին դիրք է զբաղում Արարատյան, Ղարաբաղի ու Թիֆլիսի բարբառների միջև: Որոշ կետերում շփման մեջ մտնելով Ղարաբաղի ու Թիֆլիսի բարբառների հետ, Լոռու խոսվածքը ամենից մոտ է կանգնած Արարատյան բարբառին (այդ պատճառով էլ համարվել է նրա ենթաբարբառը)՝ մասնավորապես Աշտարակի խոսվածքին:

Մենք ընդհանուր գծերով բացահայտեցինք Արարատյան ու Լոռու խոսվածքների տարբերակիչ հատկանիշները: Սակայն սխալ ու միակողմանի կլինեն բավարարվել սոսկ դրանով և վերջնական հղրակացության գալուց առաջ շանդրադառնալ նաև այդ խոսվածքների ընդհանրությունների վերլուծությանը:

Արարատյան և Լոռու խոսվածքներն ունեն հնչյունական ու ձևաբանական մի շարք ընդհանուր գծեր:

Հնչյունաբանության մեջ այդ երկու խոսվածքների ակունջայտ նմանությունը հանդես է գալիս պայթական բաղաձայնների համակարգում: Բայց որովհետև Արարատյան բարբառի պայթականների համակարգի հարցը որոշ վիճելի կետեր ունի, ուստի պետք է հարցը քննել ըստ էության ու հանգամանորեն:

Պրոֆ. Ա. Ղարիբջանը և նրան հետևելով դոց. Ա. Գրիգորյանը

պտնում են, որ Արարատյան բարբառն ունի քառաստիճան բաղա-
ձայնական համակարգ հետևյալ ձևով¹.

բ՝	բ	պ	փ
գ՝	գ	կ	ք
դ՝	դ	տ	թ
ձ՝	ձ	ծ	ց
ջ՝	ջ	ճ	չ

Ուղղահայաց առաջին շարքը ներկայացնում է Արարատյան բար-
բառի շնչեղ ձայնեղները, երկրորդը՝ պարզ ձայնեղները, երրորդը՝
խուլերը և չորրորդը՝ շնչեղ խուլերը:

Այս նշանակում է, որ պրոֆ. Ա. Ղարիբջանը և դոց. Ա. Գրի-
գորյանը Արարատյան բարբառի հիմնական հատկանիշներին մե-
կը համարում են շնչեղացած ձայնեղների գոյությունը: Այս լեզ-
վաբանների տեսակետով գրաբարյան բառասկզբի բ, գ, դ, ձ, ջ
պարզ ձայնեղները Արարատյան բարբառում վերածվում են բ', գ',
դ', ձ', ջ' շնչեղացած ձայնեղների, բառասկզբում պ, կ, տ, ց, ճ
խուլերը մնում են անփոփոխ, իսկ բառամիջում և բառավերջում
վերածվում են ձայնեղների (բ, գ, դ, ձ, ջ), իսկ շնչեղ խուլերը բո-
լոր դեպքերում մնում են անփոփոխ, որից ստացվում է քառաս-
տիճան բաղաձայնական համակարգ հետևյալ ձևով:

բերան > բ' էրան	պատ > պադ	փալտ > փէդ
դուռն > դ' ուռ	Պետրոս > Պէդրօս	թուր > թուր
ձու > ձ' ու	ծիծաղել > ծիձաղել	ցորեան > ցօրէն
ջուր > ջ' ուր	պուճուր > պուջուր	չար > չար
գառն > գ' առ	հակառակ > հագառագ	քաղաք > քաղաք ²

Այսինքն՝ բ', բ, պ, փ, գ', գ, կ, ք և այլն:

Պրոֆ. Ա. Ղարիբջանից և դոց. Ա. Գրիգորյանից առաջ Արա-
րատյան բարբառը ուսումնասիրված է վաստակավոր հայագետ
պրոֆ. Հ. Աճառյանի կողմից: Իր «Հայ բարբառագիտություն» հան-
րահայտ աշխատության մեջ նա ներկայացնում է Նրեանի (=Արա-
րատյան) բարբառի համառոտ հնչյունաբանությունն ու ձևաբանու-
թյունը: Այստեղ նա ոչ մի խոսք չի ասում Արարատյան բարբառի
շնչեղացած ձայնեղների մասին, այլ ուղղակի գտնում է, որ գրա-
բարյան պայթականների եռաստիճան համակարգը նույնությամբ

¹ Տե՛ս Ա. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, էջ 221: Ա. Գրիգորյան, Հայ
բարբառագիտության դասընթաց, էջ 206:

² Տե՛ս Ա. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, էջ 221:

պահպանվել է բարբառում: Նա գրում է. «(Երևանի բարբառի) բաղաձայններուն մեջ պատահած փոփոխությունները հետևյալներն են.

Խոսքինք նախ հին հայերենի ք, պ, փ—գ, կ, ֆ են եռաստիճան խումբերուն վրա: Ասոնք նոր հայ բարբառներուն մեջ շատ տեսակ փոփոխությանց ենթարկված են: Եթե ընդունենք, որ հին հայերենի ք, գ, դ, ձ, ջ ձայները կատարյալ թրթռուն ձայներ էին, ճիշտ այսօրվան ֆրանսական (բայց ո՛չ գերմանական) ք, ց, ժ թրթռուն ձայներուն նման, ուրեմն ընդունելու ենք, թե պահված են շատ ֆիշ տեղ: Ասոնցմե մեկն է Երևանի բարբառը (ընդգծումն իմն է—Մ. Ա.):

Պ, կ, տ, ծ, ճ ձայները նույնպես շատ փոփոխությանց ենթարկված են: Մինչդեռ կը ճյուղին պատկանող բարբառներն շատերուն մեջ դարձած են թրթռուն բաղաձայններ, մինչդեռ Տիգրիսի բարբառին մեջ վրացական խուլ բաղաձայններուն նման ընկերացած են կոկորդի սեղմումով, Երևանի բարբառին մեջ չունին այդպիսի սեղմում և կը հնչվին պարզ ու մաքուր, ֆրանսական (բայց ո՛չ գերմանական) ք, կ, տ ձայներուն նման, անոնց հավասար խլությամբ, բայց պակաս ուժգնությամբ:

Փ, ֆ, ք, ց, չ ձայները բոլոր բարբառներուն մեջ միատեսակ հնչում ունին և հետևաբար պետք չունին առանձին նկարագրություն»¹:

Ինչպես տեսնում ենք, պրոֆ. Հ. Աճառյանը բացահայտորեն ասում է, որ գրաբարյան պայթական բաղաձայնների համակարգը Արարատյան բարբառում մնում է անփոփոխ, այսինքն՝ գրաբարյան ձայնեղները մնում են ձայնեղ, ինչպես՝ բ>բ, գ>գ, և այլն, խուլները՝ խուլ, ինչպես՝ պ>պ, կ>կ և այլն, շնչեղ խուլները՝ շնչեղ խուլ, ինչպես փ>փ, ք>ք և այլն: Իսկ այս նշանակում է, որ Արարատյան բարբառն ունի եռաստիճան բաղաձայնական համակարգ:

Ծանոթության կարգով նշենք, որ Հ. Աճառյանը քառաստիճան բաղաձայնական համակարգ է հատկացնում միայն Արարատյան բարբառի նոր Բայազետի ենթաբարբառին:

Հետազայում պրոֆ. Հ. Աճառյանը վերանայում է այդ կարծիքը և իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ ընդունում է ձայնեղ պայթականների գոյությունը Արարատյան բարբառում ընդհանրապես, գրելով. «Բաղաձայններից ք, գ, դ, ձ, ջ պայթականները հնչում են շնչեղ թրթռուն, իսկ ռնգականից հետո, ինչպես նաև օտար բառերի մեջ՝ պարզ թրթռուն: Անփոփոխ է մնում, պ, կ, տ, ծ, ճ և փ, ֆ, ք, ց, չ բաղաձայնների հնչումը»²:

¹ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 39:

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 330:

Այս թուուցիկ քաղվածքները բավական են ցույց տալու, որ բարբառագիտական աշխատություններում իշխող կարծիքն այն է, թե Արարատյան բարբառն ունի քառաստիճան բաղաձայնական համակարգ: Որքան էլ այդ տեսակետը տարածված լինի, այնուամենայնիվ ապացուցված համարել չի կարելի և ահա թե ինչու:

Ամենից առաջ այն պատճառով, որ, ինչպես արդեն նշել ենք, մինչև այսօր էլ չունենք Արարատյան բարբառի, արդի լեզվաբանական գիտության պահանջները բավարարող, ամբողջական ուսումնասիրությունը: Եղած ուսումնասիրությունները (պրոֆ. Աճառյանինը՝ 15 էջ՝ նմուշներով հանդերձ, պրոֆ. Ղարիբջանինը՝ 12 էջ՝ նմուշներով հանդերձ) թուուցիկ են և մեզ հետաքրքրող հարցի լուծումը տալ չեն կարող:

Այս հարցի մասին վերջնական վճիռ հանելուց առաջ պետք է ուսումնասիրվեն Արարատյան բարբառի գոնե զլխավոր ենթաբարբառներն ու խոսվածքները: Միայն այդ դեպքում մենք կունենանք այդ բարբառի պատկերը, միայն այդ դեպքում մենք կարող ենք ձշտորեն որոշել բարբառի յուրահատկությունները, ընդհանուր ու մասնակի, հիմնական ու ածանցյալ լեզվական իրակությունները և այլն:

Սակայն ինչպե՞ս պետք է լեզվաբանը որոշի բ՝—բ, գ՝—գ, դ՝—դ և այլ հնչյունների գոյությունը տվյալ բարբառում կամ ենթաբարբառում: Մի՞թե այդ հնչյունների արտասանական տարբերությունն այնքան մեծ է, որ լեզվաբանը սույկ լսողությամբ, առանց տվյալ բարբառին հիմնովին տիրապետելու, դրանք հեշտորեն տարբերակի իրարից:

Այս տեսակետից ուշադրություն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա. չէ՞ որ օտար լեզուների հնչյունները մենք ընկալում ենք որպես մեր մայրենի լեզվի այս կամ այն հնչյունը, թեև դրանք լրիվ նույնական չեն: Այսպես, օրինակ՝ և՛ ռուսերենի, և՛ գերմաներենի, և՛ ֆրանսերենի, և՛ անգլերենի Ե-ն մենք ընկալում ենք որպես հայերենի Բ հնչյունը: Բայց արդյոք դրանք լրիվ նույն հնչյուններն են և տարբերություններ չունե՞ն: Իհարկե ունեն: Նույն ձևով էլ մենք բարբառների հնչյունները ընկալում ենք որպես մեր մայրենի լեզվի, տվյալ դեպքում գրական լեզվի, այս կամ այն հնչյունի դրսևորում: Այսպես՝ Վանի բարբառի պ և ծ հնչյունները պոմ և ծո՛ բառերում նույնական ենք համարում գրական լեզվի պ և ծ հնչյուններին, բայց առանց որևէ կասկածի կարող ենք ասել, որ դրանք հավասարաթեք ու նույնական չեն և եթե հատուկ գործիքով արձանագրենք կտեսնենք դրանց տարբերությունները: Որքան էլ

այդ տարօրինակ լինի, ասում են, թե Հ. Աճառյանը չէր կարողանում հստակորեն հնչել պ, կ, տ, ծ, և խուլ պայթականները: Հապա մի մտածեցե՛ք, հանձարեղ լեզվաբան, բազմաթիվ լեզուների գիտա՛յ Հ. Աճառյանը, որն այնքան խորահմուտ կերպով ուսումնասիրել էր հայոց լեզուն իր բոլոր դրսևորումների մեջ՝ հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը, դժվարանում էր այնպիսի «հասարակ» մի հարցում, որ մեզ՝ արևելահայերիս համար ուղղակի անըմբռնելի է և մի քիչ էլ զավեշտական: Բայց այստեղ անըմբռնելի, նամանավանդ զավեշտական, ոչինչ չկա: Չէ՞ որ Աճառյանը պոլսեցի էր, իսկ Պոլսի բարբառում բաղաձայնների 3 աստիճանները վերածված են երկուսի՝ բ—փ, գ—ք, դ—թ և այլն. պակասում է խուլերի շարքը:

Արարատյան բարբառի ուսումնասիրությանը զբաղվող լեզվաբաններն ասում են, թե իրենք տարբերություն են զգում մի կողմից բերան, գառ, դուռ, ձու, ջուր բառերի և մյուս կողմից քումբ, զանգ, լինյ, հուճ, կարմուռ (<կամուռ>) բառերի բ, գ, դ, ձ, ջ հնչյունների արտասանության մեջ. առաջին խմբի բառերի մեջ այդ հնչյունները որոշ շնչեղություն ունեն (բ՛երան, գ՛առ և այլն), իսկ վերջին խմբի բառերի մեջ շնչեղություն չունեն (թումբ, զանգ և այլն): Միանալով այդ լեզվաբաններին կրկնենք, որ մենք ևս այդպիսի որոշ տարբերություն զգում ենք, բայց այդ տարբերությունը հիմք տալի՞ս է մեզ Արարատյան բարբառում ընդունելու բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ շնչեղ ձայնեղների, որպես բ, գ, դ, ձ, ջ պարզ ձայնեղներից տարբեր հնչյունների, կարգ—կարծում ենք ոչ:

Որպեսզի Արարատյան բարբառում ապացուցված համարվեր բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ շնչեղ ձայնեղների, որպես առանձին հնչույթների, գոյությունը, նվազագույն միավորների հակադրությանը պետք է բարբառում ունենայինք մի խումբ բառեր, որոնք այլ հնչյունների նույնության պայմաններում, շնչեղ ձայնեղներով (բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛) մի իմաստ արտահայտեին, իսկ պարզ ձայնեղներով (բ, գ, դ, ձ, ջ)՝ մի այլ իմաստ, այսինքն՝ բարբառը պետք է երևան հաներ մի խումբ բառեր, որոնց մեջ շնչեղ ձայնեղները իմաստազատիչ դեր են կատարում:

Արարատյան բարբառում, ասենք, կ-ն և ֆ-ն տարբեր հնչույթներ են, որովհետև ունենք՝ կանի-ֆանի, կամի-ֆամի, կար-ֆար, կաղ-ֆաղ և այլ զույգերը, որոնք այլ հնչյունների նույնության պայմաններում, կ-ով մի իմաստ են արտահայտում, իսկ ֆ-ով՝ մի այլ իմաստ, այսինքն՝ կ-ն և ֆ-ն, որպես տարբեր հնչույթներ, իմաստազատիչ դեր ունեն: Նույն ձևով էլ՝ տ-ն և ք-ն տարբեր հնչույթներ

են՝ այնքանով, որքանով որ ունենք՝ տան-թան, տաս-թաս, տեղ-քեղ և այլ զույգերը, որոնք, մյուս հնչյունների նույնության պայմաններում, տ-ով մի իմաստ են արտահայտում, իսկ ք-ով՝ մի այլ իմաստ: Նվազագույն հակադրությունների մեթոդով վերլուծելով կհամոզվենք, որ տարբեր հնչույթներ են և իմաստազատիչ դեր են կատարում նաև պ-ն և փ-ն, ծ-ն և ց-ն, ճ-ն և չ-ն:

Երբ հարցին մոտենում ենք այս տեսակետից, ապա պարզ է դառնում, որ Արարատյան բարբառում չկան բառեր, համեմատյան դեպս բարբառագիտական աշխատություններում չեն արտացոլված, որոնք այլ հնչյունների նույնության պայմաններում, շնչեղ ձայնեղ արտասանությամբ մի իմաստ արտահայտեին, իսկ պարզ ձայնեղ արտասանությամբ՝ մի այլ իմաստ, այսինքն՝ իրենց իմաստազատիչ դերով հակադրվեին շնչեղ ձայնեղները և պարզ ձայնեղները: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ Արարատյան բարբառում չի կարելի ընդունել շնչեղ ձայնեղ հնչույթների, որպես պարզ ձայնեղներից տարբեր հնչույթների, կարգ:

Արարատյան բարբառի շնչեղ ձայնեղները առանձին հնչույթներ չեն, նրանք իմաստազատիչ դեր չեն կատարում և սոսկ բ, գ, դ, ծ, չ պարզ ձայնեղների բառակազմի դիրքային տարբերակներն են¹:

Մեր ասածը ավելի պարզ դարձնելու համար վերցնենք հետևյալ օրինակը: Հայտնի է, որ արդի հայերենում գ, կ, ֆ հտնալեզվային պայթականների արտասանական բովը ի և ե ձայնավորներից առաջ տեղափոխվում է դեպի առաջ և ունենում ենք գյ, կյ, ֆյ փափուկ կամ քմային բաղաձայնները: Անժխտելի է, որ, ասենք, գ, կ, ք հնչյունները զին, կիր, ֆեն բառերում՝ մի կողմից և զան, կար, ֆան բառերում՝ մյուս կողմից տարբեր արտասանություն ունեն: Բայց ոչ ոքի մտքով չի անցել արդի հայերենում ընդունելու քմային գ', կ', ք', հնչույթների գոյությունը: Իսկ ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ ժամանակակից հայերենում չկան բառեր, որոնք իմաստաբանորեն տարբերվեին գ, կ, ք և գ', կ', ք' հնչյունների նվազադույն հակադրությամբ: Արդի հայերենում [գ', կ', ք'] հնչյունները սոսկ գ, կ, ք հնչույթների դիրքային տարբերակներն են և և ի առաջնալեզվային ձայնավորներից առաջ:

Ուշագրություն պիտի դարձնել նաև հետևյալ հանգամանքի վրա: Եթե որևէ մեկը Արարատյան բարբառով խոսողների մոտ, ասենք, պատ, կաք, տատ, ծակ, ճիտ բառերը արտասանի փաք, ֆաք, քաք,

¹ Հմմտ. Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 297—298:

ցաֆ, չիթ, ապա այս բառերը նրանց համար տարօրինակ, խորթ ու ուհանականալի կլինեն: Իսկ ինչո՞ւ, որովհետև պ-ն, կ-ն, ա-ն, ծ-ն ու ց-ն՝ մի կողմից և փ-ն, ֆ-ն, ք-ն, ց-ն ու շ-ն մյուս կողմից՝ տարբեր հնչույթներ են: Իսկ եթե որևէ մեկը բ՛երան, գ՛առ, դ՛ուռ, ձ՛ու, ջ՛ուր բառերն արտասանի առանց շնչեղացման՝ բերան, գառ, դուռ, ձու, ջուր, ապա այդպիսի արտասանությունը Արարատյան բարբառով խոսողների համար տարօրինակ ու խորթ չի լինի: Իսկ ինչո՞ւ. որովհետև բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ հնչյունները անկախ հնչույթներ չեն, այլ բ, գ, դ, ձ, ջ հնչույթների արտասանական տարբերակները բառակազմի և միայն ու միայն բառակազմի:

Այս հարցը վերջացնելուց առաջ հայագետների ուշադրությունն ենք հրավիրում նաև հետևյալ հանգամանքի վրա:

Եթե Արարատյան բարբառի բաղաձայնական համակարգը իրոք քառաստիճան է, ապա ինչպե՞ս է, որ նրա հիմքի վրա բարձրացած հայերեն գրական լեզուն ոչնի եռաստիճան բաղաձայնական համակարգ:

Այս տեսակետից արժե զուգահեռ անցկացնել արևմտահայ գրական լեզվի հետ: Վերջինս բարձրացել է Պոլսի բարբառի հիմքի վրա: Եվ ահա արևմտահայ գրականի և Պոլսի բարբառի բաղաձայնական համակարգերը միանման են. երկուսն էլ ունեն երկաստիճան խաղաղ բաղաձայնական համակարգ, այսինքն՝ բ-փ, գ-ք, դ-թ, ձ-ց, ջ-չ. պակասում է խուլերի շարքը: Այդ երկուսի տարբերությունն այն է միայն, որ Պոլսի բարբառում խուլերը ձայնեղանում են, իսկ ձայնեղները մնում են անփոփոխ, այսինքն՝ պ>բ, բ>ք, կ>գ, գ>գ և այլն, իսկ գրական լեզվում խուլերը ձայնեղանում են, իսկ ձայնեղները վերածվում են շնչեղ խուլերի¹, այսինքն պ>բ, բ>փ, կ>գ, գ>ք և այլն: Բաց փոփոխությունների այդպիսի տարբերությունը չի հասցնում հնչույթային համակարգի տարբերության, որովհետև երկուսն էլ ունենում են բ-փ, գ-ք և այլն:

Ե՛վ արևմտահայ գրական լեզուն, և՛ Պոլսի բարբառը ունեն պայքականների միևնույն հնչույթային համակարգը: Եթե պայմանականորեն ընդունենք, որ Արարատյան բարբառն ունի ֆառատիման բաղաձայնական համակարգ, ապա դուրս է գալիս, որ արեւելեահայ գրական լեզվի և նրա հիմքի՝ Արարատյան բարբառի պայքական բաղաձայնների հնչույթային համակարգերը տարբեր են (գրականինը՝ եռաստիճան, բարբառինը՝ ֆառատիման), մի բան,

¹ Ի դեպ նշենք, որ Պոլսի բարբառում ևս առանձին դեպքերում ձայնեղները կարող են վերածվել շնչեղ խուլերի, որ համարում են գրական լեզվի ազդեցության արդյունք:

որ քիչ հավանական, իսկ եթե կտրուկ ասենք՝ ուղղակի անհավանա-
կան է թվում:

Ահա հարցեր, որոնց վրա հրավիրում ենք ավելի հմուտ ուսում-
նասիրողների ուշադրությունը:

Այսպես, ուրեմն՝ շնայած որ բառասկզբի պարզ խուլերը Արա-
րատյան բարբառում որոշ չափով շնչեղացած են արտասանվում,
բայց և այնպես այդ բարբառում չի կարելի ընդունել շնչեղ ձայնեղ
հնչույթների, որպես պարզ ձայնեղ հնչույթներից տարբեր կարգի,
գոյությունը: Նույնն է նաև Լոռու խոսվածքում: Գրաբարյան բառա-
սկզբի ք, գ, դ, ձ, ջ ձայնեղները այս կամ այն չափով շնչեղ ար-
տասանություն ունեն, բայց քանի որ այս խոսվածքում, ինչպես և
Արարատյանում, հանդես չի գալիս շնչեղ ձայնեղ—պարզ ձայնեղ
հակադրության իմաստազատիչ դերը, ուրեմն և առանձին շնչեղ
ձայնեղ հնչույթներ գոյություն չունեն: Այսպես կոչված շնչեղ ձայ-
նեղները Լոռու խոսվածքում ևս պարզ ձայնեղների դիրքային տար-
բերակներն են բառասկզբում: Ահա այս պատճառով էլ մենք Լոռու
խոսվածքի շնչեղ ձայնեղ արտասանությունը գրության մեջ չենք
տարբերակել, միայն ք, գ, դ, ձ, ջ հնչյուններին նվիրված հատվա-
ծում նշվում է, որ դրանք բառասկզբում այս կամ այն չափով շնչ-
եղացած արտասանություն ունեն:

Խոսելով Արարատյան և Լոռու խոսվածքների պայթական բա-
ղաձայնների փոփոխությունների նմանության կամ նույնության մա-
սին՝ պետք է նկատի ունենալ, որ տվյալ դեպքում խոսքը գնում է
միայն բառասկզբի մասին: Բառամիջում և բառավերջում այդ եր-
կու խոսվածքները խուլ պայթականների փոփոխության ինչ-ինչ
տարբերություններ են երևան հանում:

Ըստ բարբառագետների վկայության՝ բառամիջի և բառավեր-
ջի խուլերը Արարատյան բարբառում վերածվում են ձայնեղների,
այսինքն պ>բ, կ>գ, տ>դ, ծ>ձ, ճ>ջ, օրինակ՝ պապ>պաբ, ճա-
կատ>ճագադ, կատու>կադու, ծիծաղել>ծիձաղել, կարճ>կարջ և
այլն: Սակայն Լոռու խոսվածքում բառամիջի և բառավերջի խուլերի
այսպիսի հետևողական ձայնեղացում չի նկատվում, խուլերը ձայնե-
ղանում են միայն առանձին դեպքերում: Վերևում բերված բառերի
մեջ, օրինակ, խուլերը մնում են անփոփոխ, չեն ձայնեղանում, և Լոռու
խոսվածքում ունենում ենք պապ, ճակատ, կատու, ծիծաղիլ, կարճ
(այս մասին մանրամասն տե՛ս հետագա շարադրանքում):

Բացի պայթական բաղաձայնների համակարգից, Արարատյան
և Լոռու խոսվածքներն ունեն հնչյունական այլ ընդհանրություններ,
այն է՝ գրաբարյան երկբարբառները երկու խոսվածքներում էլ

կրում են նույն փոփոխությունները (այ>է—այծ>էծ, իւ>ի—ալիւր
>ալիր, ոյ>ի—թոյլ>թիւ և այլն), և հնչյունը ուից առաջ դառնում է
ֆ (հոգի>ֆոքի, հող>ֆող, հոտ>ֆոտ և այլն), տն կապակցու-
թյունը վերածվում է նն-ի (գետնին>գէննին, ոտնէր>վոննէր և
այլն), ղ հնչյունը խուլերից առաջ արտասանվում է խ (կեղտ>
կչէխտ, մեղք>մէխկ, քաղցր>քախցր և այլն), ր-ն որոշ բաղաձայն-
ներից առաջ դառնում է ռ (արջ>առչ, արտ>առտ, բերդ>բեռթ)
և այլն:

Արարատյան և Լոռու խոսվածքների ձևաբանական բնդհանրու-
թյունները երևան են գալիս հոլովման ու խոնարհման միշարք իրո-
ղությունների նմանության կամ նույնության մեջ: Դրանք են՝ հո-
լովների ու հոլովումների նույն համակարգը, բայի եղանակների
նույնատիպ կաղմությունն ու զրսեորումները և այլն: Այս բնդհան-
րությունների մասին մանրամասն գաղափար կարող է տալ սույն
աշխատության «Ձևաբանություն» բաժինը, ուստի և այստեղ դրանց
բնությունը չենք զբաղվում:

Շեշտը դնելով այդ բնդհանրությունների ու նույնությունների
վրա՝ Լոռու խոսվածքը կարելի է համարել Արարատյանի ենթաբար-
բառներից մեկը:

Ընդհանուր եզրակացությունը կլինի հետևյալը.

Լոռու խոսվածքը Արարատյան խոսվածքի հետ գտնվում է այնպի-
սի հարաբերության մեջ, որ դա կարելի է համարել և՛ Արարատյանից
տարբեր, ինքնուրույն բարբառ, և՛ Արարատյանի ենթաբարբառնե-
րից մեկը: Դա կախված է նրանից, թե ուսումնասիրողը շեշտը
դնում է այդ լեզվական սիավորները իրարից անջատող տարբերու-
թյունների՞, թե՞ դրանք իրար մոտեցնող բնդհանրությունների վրա:
Առաջին դեպքում կարելի է խոսել Լոռու բարբառի, իսկ երկրորդ
դեպքում՝ Լոռու ենթաբարբառի մասին:

Մոտեցման այսպիսի երկվությունն է պատճառը, որ սույն աշ-
խատության մեջ մենք խուսափել ենք և՛ «Լոռու բարբառ», և՛ «Լոռու
ենթաբարբառ» տերմիններից և զործածում ենք «Լոռու խոսվածք»
տերմինը, որ չեզոք է և կարող է վերաբերել ինչպես բարբառին,
այնպես էլ ենթաբարբառին:

Ա Ռ Ա Զ Ի Ն Մ Ա Ս

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 1. Լոռու խոսվածքը ունի ընդամենը 41 հնչյուն, դրանցից ձայնավորներ են 6-ը. ա, օ, ու, է, ի, ը. հրկբարբառներ՝ 2-ը՝ ուօ, որն արտահայտել ենք ո տառով, և իէ, որն արտահայտել ենք ե տառով:

Բաղաձայններ են 33-ը.

Եռաշարք

բ	պ	փ
դ	կ	ք
գլ	կլ	քլ
դ	տ	թ
ձ	ծ	ց
շ	ճ	չ

Երկշարք

ղ	լւ
զ	ւ
ժ	շ
վ	ֆ

Միաշարք

մ, չ, ն, բ, ա, լ, հ

Որոշ գյուղերում (Նոյեմբերյանի Ղալաշա ու Կոթի, Ալավերդու Շնող և այլն) կա նաև ձայնեղ հ՝ հնչյունը:

§ 2. Լոռու խոսվածքն ունի գրական հայերենի բոլոր հնչյունները, բացի դրանցից նաև ո, ե հրկբարբառները, գյ, կյ, քյ քմային

պայթականները և ձայնեղ Կ'-ն, որ կա մի քանի գյուղերում: Այդ հնչյունների արտասանության համար պետք է նկատի ունենալ հետևյալը:

Ո երկբարբառը արտասանվում է ինչպես ուօ և բացի լոռուց կա նաև Վանի, Մարաղայի, Ուրմիայի (Խոյի) և այլ բարբառներում:

Ե հնչյունը արտասանվում է ինչպես Իէ՝ Ի-ի շատ թոռուցիկ մասնակցությամբ, այնպես որ այդ հնչյունը ոչ թե իսկական երկբարբառ է, այլ ունի երկբարբառային երանգ և կարող է կոչվել երկբարբառակերպ¹: Լոռու խոսվածքի Ե հնչյունը իր արտասանությամբ տարբերվում է Վանի բարբառի Ե հնչյունից. Վանում այդ հնչյունը իրոք երկբարբառ է, իսկ Լոռում, ինչպես նշեցինք, ունի սոսկ երկբարբառային երանգ:

Պյ, կյ, ֆյ հնչյունները գ, կ, ֆ հնչույթների քմայնացած տարբերակներն են և վերջիններից տարբերվում են նրանով, որ գյ, կյ, ֆյ հնչյունների արտասանության ժամանակ լեզուն մղվում է դեպի առաջ:

Հ հնչյունը հ-ի ձայնեղ տարբերակն է, արտասանվում է ձայնալարերի մասնակցությամբ և կա նաև Կարնո ու Մշո բարբառներում, նոր Բայազետի ու Մարտունու ենթաբարբառներում:

§ 3. Լոռու խոսվածքի պայթական բաղաձայնների համակարգը եռաստիճան անտեղաշարժ է², այսինքն՝

բ>բ	բերան>բէրան	պ>պ	պատ>պատ	փ>փ	փոր>փոր
գ>գ	գառն>գառը	կ>կ	կատու>կատու	ք>ք	քամի>քամի
դ>դ	դաշտ>դաշտ	տ>տ	տեղ>տեղ	թ>թ	թոռն>թոռը
ձ>ձ	ձու>ձու	ծ>ծ	ծառ>ծառ	ց>ց	ցորեան>ցորէն
ջ>ջ	ջուր>ջուր	ճ>ճ	ճրագ>ճրաք	չ>չ	չիր>չիր

Տվյալ դեպքում նկատի չենք ունենում այն, որ գ, կ, ֆ ետնալեզվային պայթականները որոշ դեպքերում (Ի, Ե առաջնալեզվային ձայնավորներից առաջ) քմայնանում են՝ վերածվելով գյ, կյ, ֆյ միջնալեզվային պայթականների:

Բառասկզբի պայթական ձայնեղների շնչեղ ձայնեղ արտասանության մասին արդեն խոսվել է (էջք 33—40):

¹ Այս տերմինը գործածում ենք հետևելով պրոֆ. Աղայանին, տե՛ս է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, Երևան, 1964:

² Նկատի են ունենում բառասկզբը:

1. ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա.

§ 4. Հին հայերենի ա ձայնավորը լոռու խոսվածքում սովորաբար ամեն դիրքի մեջ էլ կարող է մնալ անփոփոխ, ինչպես՝ բառակերպում—ազատ>ազատ, ազգ>ասկ, աղանջ>անգան, աղալ>առալ, աղջիկ>ախջիկ և այլն. բառամիջում—գառն>գառը, գարի>գարի, դաշտ>դաշտ, երկանք>էրկանք, իմանալ>իմանալ և այլն. բառավերջում—տղայ>տըղա, փեսայ>փէսա, ծառայ>ծառա և այլն:

§ 5. Ա ձայնավորի ամենակարեւոր և ակնառու փոփոխությունն այն է, որ որոշ պայմաններում վերածվում է Ը-ի: Լոռու խոսվածքի ա>ը փոփոխությունը ամենասերտ կերպով կապված է շեշտի հետ: Լոռու խոսվածքի, ինչպես և արեւելյան բարբառների շեշտը, ընդհանրապես, ընկնում է վերջընթեր (նախավերջին) վանկի ձայնավորի վրա (ի տարբերություն արեւմտյան բարբառների, որոնց շեշտն ընկնում է վերջին վանկի ձայնավորի վրա), օրինակ՝ աղա՛նք>ա՛նքաճ, ամա՛ն>ա՛ման, աշխա՛րհ>ա՛շխարք, աշխատե՛լ>աշխա՛տիլ, թագաւո՛ր>թըքա՛վոր և այլն: Գրաբարում և արդի հայերենում ա-ն ուժեղ ձայնավոր է և սովորաբար հնչյունափոխության չի ենթարկվում, իսկ լոռու խոսվածքում, ընդհանրապես, ա-ն թույլ ձայնավոր է հնչյունափոխության է ենթարկվում:

Կարելի է սահմանել հետևյալ ընդհանուր կանոնը. Լոռու խոսվածքում նախաշեշտ ա հնչյունափոխները, թույլ արտասանվելով, սովորաբար վերածվում են Ը-ի:

Միավանկ և երկվանկ բառերի ա-ն չի հնչյունափոխվում, որովհետև առաջին դեպքում, հասկանալի է, գտնվում է շեշտի տակ, իսկ երկրորդ դեպքում կամ գտնվում է շեշտի տակ կամ շեշտից հետո (օրինակ՝ ա՛ման), իսկ շեշտակիր և շեշտին հաջորդող ա-ն չի հնչյունափոխվում:

Այսպիսով, ավելի մասնավորելով՝ վերեի կանոնը կարող ենք ձևակերպել այսպես. Լոռու խոսվածքում եռավանկ բառերի նախաշեշտ ա ձայնավորը վերածվում է Ը-ի: Ըստ այդմ, ա>ը փոփոխությունն ունենք բազմաթիվ բառերում¹.

¹ Ամբողջական օրինակները տե՛ս բառացանկում:

ազատել > ըզատիլ
 ալեւոր > հըլիվոր
 ամաչել > ըմանչիլ
 անալի > ըլանի
 աշխատանք > ըշխատանք
 ապառաժ > ըպառաժ
 առաւօտ > ըռավոդ
 արածիլ > ըրածիլ
 բաժանել > բըժանիլ
 բամբասանք > բըմբասանք
 բանալի > բընալիք
 բարձրանալ > բըցրանալ
 դատարկել > դըռդակիլ
 դատաւոր > դըդավոր
 զարդարել > զըռթարիլ
 թագաւոր > թըքավոր
 թաթախել > թըթախիլ
 խաչերկաթ > խըճէրկաթ
 ծանրանալ > ծընդրանալ
 ծառղարդար > ծըռղարթար
 ծարաւիլ > ծըրավիլ
 կանաչել > կընանչիլ

կարկատան > կըրկատան
 կարկատել > կըրկատիլ
 համարանք > հըմբարք
 հասկանալ > հըսկանալ,
 ըսկանալ
 հարեան > հըրէվան
 հարսանիք > հըռսանիք
 հաւանիլ > հըվանիլ
 հաւատալ > հըվատալ
 հաւաքել > հըվաքիլ
 ճանաչել > ճընանչիլ
 մատանի > մըտանիք
 շալթակէլ > շըլթակիլ
 շաղախել > շըղաղիլ
 շարշարանք > շըրշարանք
 պարտակիլ > պըռտակիլ
 ջախջախել > ջընջխիլ
 տաքանալ > տըքանալ
 ցամաքիլ > ցըմաքիլ
 փաթաթել > փըթաթիլ
 քաղհանել > քըխհանիլ

§ 6. Կան մի շարք բառեր, որոնց մեջ, ի հակադրություն նախորդ կանոնի, եռավանկ բառերի նախաշեշտ ա ձայնավորը չի հընչյունափոխվում: Այսպիսի բառերն են. աղգական > ասկական, աղօթել > աղօթիլ, անամօթ > անամօթ, անառակ > անառակ, անասուն > անասուն, անդադար > անդաքար, աներես > անէրէս, անլեզու > անլիզու, անլուայ > անլըվա, արգելել > առֆյէլիլ, բարեկամ > բարէգամ, գաղթական > գախտական, ժանգոտել > ժանգոտիլ, հաղորդուել > հաղօռքվիլ, համբերել > համփէրիլ, համբուրել > համփուրիլ, համոզել > համօզիլ, հանելուկ > հանէլուկ, հարկաւոր > հարգավոր, կարօտիլ > կարօտիլ, շարական > շարական, տարեկան > տարէկան, քարանալ > քարանալ:

§ 7. Ընդհանուր օրինաչափություն սահմանել, թե ինչո՞ւ եռավանկ բառերի մի մասում ա > ը հնչյունափոխությունը տեղի ունի, իսկ մի մասում՝ ոչ, հնարավոր չէ: Կարող ենք անել հետեւյալ դիտողությունները.

ա) նախ և առաջ պետք է նշել, որ ան ժխտական նախածանցի ա-ն չի հնչյունափոխվում. համենայն դեպս, բառացանկում ան նախածանցի ա-ի հնչյունափոխության օրինակ չունենք: Վերևում տրված ցուցակում այդպիսի բառեր են. անամօր, անառակ, անասուն, անդաքար, անիզու, անլրվա, անէրէս:

Ա ձայնավորի պահպանումը այս բառերում բացատրվում է նրանով, որ նախածանցի ա-ն մի թույլ շեշտ է կրում:

բ) Երբ ուղադրությամբ քննում ենք ա>ը հնչյունափոխությունը կրող բոլոր բառերը, նկատում ենք, որ բացի ալեոր>հրիվոր և հարևան>հրէվան բառերից, մյուս բոլոր բառերում շեշտված ձայնավորը ա-ն է, օրինակ՝ կարկատել—կըրկատիլ, շարշարել>չըրշարիլ, մատանի>մըտանիք, բամբասանք>բըմբասանք և այլն: Ուրեմն, եթե բացառություն համարենք հրիվոր և հրէվան բառերը, կարող ենք ասել, որ հնչյունափոխության է ենթարկվում ոչ թե նախաշեշտ ա ձայնավորն ընդհանրապես, այլ շեշտակի ա ձայնավորին նախորդող ա-ն:

Այսպիսով կբացատրվեր, թե ինչու աղօթել>աղօթիլ, արգելել>առջնելիլ, բարեկամ>բարէգամ, ժանգոտել>ժանգոտիլ, հաղորդուել>հաղօրքիլ, համբերել>համփէրիլ, համբուրել>համփուրիլ, համողել>համօգիլ, հանելուկ>հանէլուկ, կարօտիլ>կարօտիլ, տարեկան>տարէկան բառերում նախաշեշտ ա-ն մնում է անփոփոխ:

Բայց այս կանոնին հակասում են ազդական>ասկ(զ)ական, զաղթական>գախտական, հարկաւոր>հարգավոր, շարական>շարական, պատարագ>պատարաֆ, քարանալ>քարանալ բառերը, որոնց մեջ շեշտակիր ա-ից առաջ ա ձայնավորը մնում է անփոփոխ: Եթե պատարաֆ, շարական, հարգավոր բառերի նախաշեշտ ա-ի պահպանումը բացատրվի նրանով, որ դրանք գրական փոխառություններ են, ապա գախտական, ասկական, նամանվանդ քարանալ բառերի ա-ի պահպանումը ուղղակի անբացատրելի է:

Որ նախաշեշտ ա-ի փոփոխությունը կամ պահպանումը կախված է այն բանից, թե այդ ա-ին հաջորդող շեշտակիր ձայնավորը ա է, թե՛ ոչ, ապացուցվում է նաև հետևյալ փաստերով:

Երկու ա ունեցող երկվանկ բառերի առաջին վանկի ա-ն բառի սեման դեպքում շեշտակորույս լինելով սովորաբար վերածվում է ր-ի, ինչպես. ականջ>անգան-ընգանի, աման>աման-ըմանիֆ, առաջ>առաչ||աղաֆ-ըռաչից||ըղաֆից, աւաղ>ավազ-ըվազի, բաղարջ>բաղան-բըղանի, բանջար>բանջար-բընջարի, գոքանչ>գանֆաչ-գընֆաչի, կանաչ>կանանչ-կընանչի, ճակատ>նակատ-նըկատի, շալակ>շալակ-շըլակի, պառաւ>պառավ-պըռավի, ջրա-

ղաց>ջաղաց—ջրղացի, տախտակ>տախտակի—տըխտակի, քամակ
> քամակ—քրմակի և այլն: Կան բառեր, որոնք այս կանոնին չեն են-
թարկվում, ինչպես՝ կարագ>կարաֆ-կարաֆի, նամակ>նամակ-
նամակի և այլն, բայց դրանք քիչ են և կարող են դիտվել որպես բա-
ղառություններ:

Եթե երկվանկ բառի առաջին ձայնավորը ա է, իսկ մյուսը ի, ու,
է, ո, օ ձայնավորներից մեկը, ապա բառի ածման դեպքում ա-ն հըն-
չյունափոխության չի ենթարկվում. բազմաթիվ օրինակներից նշենք
միայն հետևյալները (ա-ից հետո եկող ձայնավորը կարող է մնալ
անփոփոխ, հնչյունափոխվել ը-ի կամ սղվել. օրինակների մեջ ընդ-
գրկում ենք այդ երեք դեպքերն էլ). աշուն>աշունֆ-աշունֆվա, արև
> արևվ-արևվի, արօտ>արոտ-արոտի, գարուն>գարունֆ-գարունֆ-
վա, լակոտ>լակոտ-լակոտի, խաղող>հաղող-հաղողի, կանեփի
> կանէփ-կանէփի, աղչիկ>ախչիկ-ախչրկա, արմուկն>արմունգ-ար-
մընգի, դարբին>դարփին-դարփրին, ծաղիկ>ծաղիկ-ծախկընի,
կապիկ>կապիկ-կապկընի, աղիք>աղիֆ-ախկի, ամիս>ամիս-ամ-
սի, սահղն>ասէղ-ասղի, արին>արին-առնի, բաժին>բաժին-
բաժնի:

✓ § 8. Նոսվանկ բառերի փոփոխություններից մեկն էլ այն է, որ որոշ
դեպքերում միջնավանկի ա ձայնավորը սղվում է: Միջնավանկի ա-ի
անկում ունենք հետևյալ բառերում. ագանիլ>հաֆնիլ, աշակերտ>
աշկյէտք, անկանիլ>ընգնիլ, բուսանիլ>բըսնիլ, բաղանիք>բաղ-
նիֆ(ս), գտանիլ>գըքնիլ, իջանիլ>իչնիլ, ծնանիլ>ծընիլ, հա-
սանիլ>հասնիլ, հատանիլ>հատնիլ, պակասել>պակսիլ, պատա-
ռել>պատռիլ (նաև՝ պրտառիլ), ջախջախել>ջընջխիլ, սատակել>
սատկյիլ (նաև՝ սըտակիլ), քառասուն>քառսուն:

Հաֆնիլ, պատռիլ, բաղնիֆ և մյուս բարբառային ձևերը ոչ թե
գրաբարյան ագանիլ, պատառել, բաղանիֆ և այլ ձևերի անմիջա-
կան շարունակությունն են, այլ առաջանում են աշխարհաբարյան
հագնել, պատռել, բաղնիֆ և այլ ձևերից:

§ 9. Նախաշեշտ ա ձայնավորն ընկել է հետևյալ բառերում.
ապսպարել>բըսպարիլ, աղաչանք>ղանչաֆ (նախ դարձել է*ղա-
չանք և ապա չ և ն հնչյունների ետևառաջությամբ՝ ղանչաֆ), ա-
մաչել>մանչիլ (նաև՝ ըմսնչիլ), արածել>րածիլ (ավելի սովո-
րական է ըրածիլ ձևը):

§ 10. Ասել ենք, որ երկվանկ բառերի առաջին վանկի ա ձայ-
նավորը մնում է անփոփոխ, ինչպես՝ ախօս>ալոս, բաժին>բա-
ժին, բարի>բարի, գարուն>գարունք, դատել>դադիլ, աման>

աման¹ և ալլն: Բացառություն են կազմում միայն համար>հրմար|| հրմա և հազար>հրգար (նաև՝ հազար) բառերը:

§ 11. Երկվանկ բառերի երկրորդ վանկի ա ձայնավորը մնում է անփոփոխ, ինչպես՝ ականջ>անգան, աման>աման, բերան>բէրան, գերան>գլէրան, դադար>դաթար, երազ>էրազ, ժառանգ>ժառանգ, խրատ>խրրատ, կոճակ>կոճակ, շիտակ>շիդակ, ոչխար>վոխար և ալլն: Բառի ածման դեպքում ևս երկրորդ վանկի ս ձայնավորը մնում է անփոփոխ, օրինակ՝ անգաճ>անգաճի||ընդաճի, աման>ամանի||ըմանի, գլէրան—գլէրանի, էրազ—էրազի, ժառանգ—ժառանգի և ալլն: Բացառություն են կազմում միայն բաղաբ—քախի, բէրան—բէռնի և շափաթ—շապատի բառերը, որոնց մեջ բառի ածման դեպքում երկրորդ վանկի ա ձայնավորը սղվում է:

§ 12. Քառավանկ բառերի նախաշեշտ ա ձայնավորը անփոփոխ է մնացել հպարտանալ>հրմբարտանալ, ապաշխարանք>աբաշխարանք, ապաշխարել>աբաշխարիլ բառերում: Այս բառերը ամենայն հավանականությամբ գրական փոխառություններ են: Նաւակատիք>նրվակատիկ և հիվանդանալ>հիվընդանալ քառավանկ բառերում շեշտից առաջ ա-ն դարձել է ր:

§ 13. Աշակերտ բառը խոսվածքում դառնում է աշկյէոք կամ աշակյէոք: Դրանք ունեն իմաստային տարբերություն: Աշկյէոք բառը գործածվում է գործակատարի, վարպետի և ալլնի աշակերտ իմաստով, իսկ աշակյէոք բառը՝ «դպրոցականի» իմաստով:

§ 14. Ա>է հնչյունափոխություն է նկատվում աւելանալ>էվէլանալ||էվէլնալ (նաև՝ ավէլնալ), աւելորդ>էվէլնորք (նաև ավէլնօրք), արժան>էժան, արժաթ>էրժաթ, միջնակ>միչնէկ բառերում:

§ 15. Աղաջուր բառը աղաջուր||ըղաջուր ձևից բացի, ունի նաև աղուջուր ձևը:

Ե

§ 16. Միավանկ բառերի բառասկզբի ե-ն դառնում է յէ, ինչպես՝ եղն>յէղը՝ ես>յէս, երբ>յէփ, երգ>յէրք:

§ 17. Բազմավանկ բառերի բառասկզբի ե-ն սովորաբար դառնում է է: Այս փոփոխությունն ունենք հետևյալ բառերում. եկի>էկա, երազ>էրազ, Վերակ>էրակ, երանի>էռնակ, երեկ>էրէգ,

¹ Երկվանկ բառերի առաջին վանկի ա ձայնավորը բառի ածման դեպքում կարող է հնչյունափոխվել ր-ի (տե՛ս § 7):

երես>էրէս, երինչ>էրինչ, երկաթ>երկաթ, երկայն>երգար||
էրգյէն (նաև յէրգար||յէրգյէն), երկանք>երկանք, երկու>երկու:
Ինչպէս տեսնում ենք, ե-ն բացի եկի>էկա բառից, մյուս դեպքե-
րում գտնվում է ր ձայնորդից առաջ:

§ 18. Բազմավանկ բառերի բառասկզբի ե-ն մի քանի բառերի
մեջ դառնում է յէ: Այդ բառերն են. երեսուն>յէնէսուն, երկար>
յէրգար||յէրգյէն (նաև՝ էրգար||էրգյէն), երկինք>յէրգյինք, երկիր>
յէրգյիր:

§ 19. Բազմավանկների բառասկզբի ե ձայնավորը հնչյունա-
փոխվել է ր-ի կամ ընկել է հետևյալ բառերում. եղունգ>ըղունգ||
ղունգ, երեկոյ>ըրիգու||րիգու, երեկլ>ըրէվալ||րէվալ (Ուռուտում՝
հրէվալ):

§ 20. Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում և բար-
բառների մեծ մասում ե և է հնչույթները խառնված են իրար՝ երկուսն
էլ դարձել են սովորական է: Լոռու խոսվածքում կա 2 է, մեկը սո-
վորական՝ գրական հայերենի է-ն, իսկ մյուսը երկբարբառակերպ է:

Այստեղ թվում ենք այն բառերը, որոնց մեջ գրաբարյան ե-ին
համապատասխան ունենք ե երկբարբառակերպը. անխելք>անխէլք,
անձրեւ>անձրէվ, անմեղ>ամմէղ, արև>արէվ, բեմ>բեմ, բեռն>
բեռ, բերդ>բէրք, բերք>բեքք, գեղ>ղէղ, գեղել>ղեղիլ, գեղին>ղե-
ղին, գեղնել>ղեղնիլ, գեղնուց>ղեղնուց, գել>ղէվ, երեք>իւրէք,
թեթև>թեթէվ, թել>թել, թեղ>թեղ, թել>թել, թեփ>թեփ, թեփոս
>թեփոս, լեռան>լեռ, լեռնոք>լեռք, խելք>խէլք, խեղճ>խէլճն,
ծեփ>ծեփ, կեղծացք>կյեխծավոր, կոտեմ>կոտեմ, կորեակ>կո-
րեկ, ձեռք>ձէրք, մեծ>մէնծ, մեծանալ>մենծանալ, մեղաւոր>մե-
ղավոր, մեղր>մէղր, մեղք>մէխկ, մեք>մէնք, մեղ>մըմեղ, յետ
>յեղ, նեղ>նէղ, նեղանալ>նեղանալ, նեղել>նեղիլ, նեղութիւն
>նեղութին, նետ>նետ, ներկ>ներկ, շեղ>շեխն, շերեփ>շերեփ,
շերտ>շեռտ, շեք>շեք, սեամ>շեմք, սեալ>սէվ, սեր>սեր
(բաժան), սեանալ>սեվանալ, վերք>վէռք, վերջանալ>վեռչա-
նալ, վեց>վէց, տեղ>տէղ, ցեց>ցեց, քերթել>քյեռթիլ:

Օրինակներից ելնելով կարող ենք ասել, որ գրաբարյան բա-
ռամիջի ե պարզ ձայնավորը Լոռու խոսվածքում դառնում է երկ-
բարբառակերպ ե(իէ):

Սակայն ե ձայնավորի երկբարբառայնացումը ոչ բոլոր գյու-
ղերում է հանդես գալիս նույն ձևով: Ե>իէ փոփոխությունը ամե-
նից ցայտուն և ակնհայտորեն դրսևորվում է Ալավերդում և նրա
գյուղերում (Դսեղ, Շնող, Ղաչաղան և այլն), Նոյեմբերյանում

(Ղալաշա, Արճիս և այլն), Ստեփանավանի շրջանի Սվերդլով, Վարդաբլուր, Հոբարձի, Լոռի բերդ գյուղերում և ընդգրկում է վերևում տրված բառացանկի բոլոր բառերը, իսկ ամենաթույլ ձևով դրսևորվում է Ստեփանավանի Գյառգյառ, Գյուլագարակ և Ուռուտ գյուղերում ու ընդգրկում է բերված բառերի մի մասը միայն:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ գյ, կյ, փյ քմային բաղաձայններից հետո ունենում ենք ոչ թե պարզ է ձայնավոր, այլ այս կամ այն չափով երկբարբառային արտասանություն ունեցող ե: Որովհետև է-ն գյ, կյ, փյ հնչյուններից հետո երկբարբառային արտասանություն ունի ըստ դիրքի, մենք նպատակահարմար ենք համարել դա տառադարձել է-ով: Այսպես, ուրեմն՝ կյէսուր, կյէրա, աշկյէռք, բարիկյէնթան, գյէղին, գյէրան, գյէրանդու, հնգյէր, փյէնի, փյէռի, պաակյէրֆ և այլ բառերում այս կամ այն չափով զըր-սևորվում է երկբարբառային արտասանություն ունեցող ե հնչյութը: Նույն դիրքային երկբարբառայնացումը հանդես է գալիս նաև յ-ից հետո, ինչպես յէզը (յիէզը), յէս, յէփ, յէրֆ և այլն:

§ 21. Կան մի շարք բառեր, որոնց մեջ գրաբարյան բառամիջի ե ձայնավորը չի երկբարբառայնանում, այլ մնում է որպես է ձայնավոր, ինչպես՝ ամեն>ամէն-ամէք, աներ>անէր, բարեկամ>բարէգամ, բերան>բէրան (սեռ. հոլ. բէռնի, իսկ Կուրթանում՝ բեռնի), բերել>բէրիլ, գերեզման>գըրէզման, երեկ>էրէգ, երես>էրէս, երեսուն>յէռէսուն, կշեռք>քշէռֆ, հարևան>հըրէվան, հեշտ>հէշտ, հերու>հէրու, համբերել>համփէրիլ, ձմեռն>ձըմէռ, մեռանիլ>մէռնիլ, պճեղն>պճէղ, սերմն>սէրմ, վեր (ունիլ)>վեր (ունիլ), տարեկան>տարէկան, տեսիլք>տէսիլք, ցերեկ>ցէրէգ, փեթակ>փէթակ, փեսայ>փէսա, փետել>փէտիլ և այլն¹:

Սահմանել մի ընդհանուր կանոն, թե որ դեպքում գրաբարյան ե-ն մնում է որպես պարզ է ձայնավոր և որ դեպքերում երկբարբառային հնչում է ստանում, հնարավոր չէ: Սակայն մի բան հաստատ կարող ենք ասել, որ գրական փոխառություններում ունենում ենք է և ոչ թե ե: Այն էլ պիտի նկատի ունենալ, որ գրական լեզվի ազդեցությամբ ե երկբարբառակերպը աստիճանաբար իր տեղը դիջում է է պարզ ձայնավորին:

§ 22. Բացի նշվածներից, բառամիջի ե-ն կրում է նաև հետևյալ փոփոխությունները.

ե>ը—ածելի>ածըլի, գերեզման>գըրէզման, դեպի>դըբա, լեղի>լըղի, ճեղքել>ճըղիլ, վերայ>վըրա:

¹ Ամբողջական օրինակները տե՛ս բառացանկում:

Ե>Ի—կերակուր>կյիրակուր, երեկոյ>ըրիգու, լեզու>լիգու, խեժ>խիժ, այստեղ, այդտեղ, այնտեղ, որտեղ>ըստի, բաի, բնդի, վորդի (նաև՝ ըստէղ, ընդեղ, ըտէղ, վորդէղ), մինչև>մինչի||մընչի (նաև՝ մընչէլ):

Ե>Ի—փոփոխութիւնն ունենք նաև բառասկզբում երեք>իրեք բառում:

Ե>ու—միայն ուղեղ>ըղուղ բառում:

Ե>թ—միայն հայելի>հայլի բառում:

§ 23. Բառասկզբում Ե>օ փոփոխութիւնն ունենք երդումն>օրքւմ բառում:

Բարբառային ախպէր ձևը առաջանում է ոչ թե գրաբարյան եղբայր, այլ դրան զուգահեռ աղբայր ձևից: Հօրեղբայր ձևին զուգահեռ ունենք բարբառային հրօխպէր ձևը:

Է

§ 24. Գրաբարյան բառասկզբի Է-ն պարզ է ձայնավոր է դառնում Էգ>էփ, էշ>էշ բառերում (ուրիշ օրինակներ չունենք):

§ 25. Գրաբարյան վերջին փակ վանկի Է-ն ևս սովորաբար է պարզ ձայնավոր է դառնում, ինչպես՝ աղուէս>աղվէս, անգէտ>անգյէտ, գէշ>գյէշ, դէզ>դէզ, դէմ>դէմ, կէս>կյէս, ձէթ>ծէթ, մէշ>մէշ, մէշք>մէշկ, շեկ>շէզ, շէն>շէն, պէտք>պէտկ||պէտկը, տէր>տէր, օրէնք>օրէնփ:

Վերջին փակ վանկի Է-ն ի է դարձել անէծք>անիծկ, նարգէս >նարգյիզ բառերում:

✓§ 26. Բառավերջի Է-ն պարզ է ձայնավոր Է դառնում թէ>թէ բառում, ի է դառնում կիւրակէ>գյիրագի բառում: Չէ բառը դառնում է չէ կամ չի: Դրանք ունեն բառիմաստային տարբերութիւն: Չէ-ն պատասխանական բառ է, իսկ չի-ն օժանդակ բայի ժխտական ներկայի երրորդ դեմքի ձևն է:

§ 27. Ինչպես արդի հայերենում է, գրաբարյան Է-ից առաջացած է-ն բառի աճման դեպքում կարող է հնչյունափոխվել Ի-ի, օրինակ՝ էշ-իշի-իշան, դէզ-դիզի-դիզան, կէս-կյիսու (=կիսարար), մէշ-միշի, մէշկ-միշկի, շէն-շիւնի, սէր-սիրիլ, տէր-տիրոնջ:

Ունենք նաև աղվէս-աղվըսի-աղվըսնի (նաև՝ աղվէսի-աղվէսնի), գօմէշ-գօմշընի ձևերը, որոնց մեջ գրաբարյան Է-ից առաջացած է-ն բառի աճման դեպքում հնչյունափոխվում է Ը-ի (վերջին դեպքում Ը-ն ընկնում է ոչ թե Է-ի տեղում, այլ մի բաղաձայն հետո):

Ի

§ 28. Ի ձայնավորը, որպես կանոն, բոլոր դիրքերում էլ մնում է անփոփոխ, ինչպես՝

բառասկզբում իլիկ>իլիկ, ինն>իննը, ինչ>ի՞նչ, իշխան>իշխան.

բառամիջում՝ ամիս>ամիս, բաժին>բաժին, բոկիկ>բոբիկ, գեղին>դեղին, երինջ>էրինջ, իլիկ>իլիկ և այլն.

բառավերջում՝ բարի>բարի, հոգի>ֆոֆի, գարի>գարի, գին>գյինի, ոսկի>վոսկյի, տարի>տարի, ձի>ձի, քաղաքացի>ֆախկըցի և այլն:

✓ § 29. Մի քանի բառերի մեջ ի-ն դառնում է ը. այդ բառերն են՝ անիծել>անըծիլ, գիշեր>գըշէր, իննսուն>ըննսուն (կան նաև իննսուն, իննանասուն, իննասուն ձևերը), ծիծեռնակ>ծըծէռնակ, մինչև>մընչէվ||մընչի (նաև՝ մինչի):

§ 30. Ի ձայնավորի մասնակի հնչյունափոխության դեպքերն են.

ի>ու—գերանդի>գյէրանդու, վիշապ>ուշաք (բառասկզբի վ-ն ընկել է):

ի>օ—թոնիր>թօրօն

ի>է—ծիրտ>ծէտ:

§ 31. Ինչպես գրաբարում և ժամանակակից հայերենում է, լոռու խոսվածքում վերջնավանկի ի ձայնավորը բառի աճման դեպքում հնչյունափոխվում է ը-ի կամ սղվում է, օրինակ՝ ածիկ-ածկի, ախչիկ-ախչըկա, ամիս-ամսի-ամսընի, բաժին-բաժնի-բաժընի, բոբիկ-բոբըկվիլ, լինդ-լընդի, ծաղիկ-ծախկի-ծախկընի, կրոկ-կըռվի, միս-մըսի-մըսէր, վոչիլ-վոչլի, ուրիշ-ուռշի, չիր-չըրի և այլն:

ՈԻ

§ 32. Ու ձայնավորը, որպես կանոն, բոլոր դիրքերում մնում է անփոփոխ, ինչպես.

բառասկզբում՝ ութ>ութ||ութը, ուլ>ուլ, ուռչիլ>ուռչիլ, ուտել>ուտիլ, ուրագ>ուրաֆ և այլն.

բառամիջում՝ աշուն>աշունֆ, արթուն>առթուն, արմուկն>աւմունգ, բազուկ>բազուկ, բրուտ>բրբուտ, գարուն>գաւունֆ և այլն.

բառավերջում՝ երկու>էրկու, կատու>կատու, կծու>կըծու, լու>լու, լեզու>լիզու, ձու>ձու:

Ղ բաղաձայնից առաջ բառասկզբի ու-ն ընկնում կամ հնչյուն-նափոխվում է ր-ի: Եղած օրինակներն են՝ ուղարկել>ղարգիլ||ղր-գիլ, ուղեղ>ըղուղ||ղուղ, ուղղորդ>ղորք: Բառասկզբում ու>ը փո-փոխություն ունենք նաև ուխտավոր>ըխտավոր||ըխավոր բառում:

§ 33. Մի քանի բառերում բառամիջի ու-ն հնչյունափոխվում է ր-ի. այդ բառերն են՝ անուն>անրմ, բունկալ>բընակալ, բուսա-նիլ>բըսնիլ, գոում>գըթըմ, երգումն>օրթըմ, յաջօղումն>(բար) աշօղըմ, պուտուկ>պտուկ:

§ 34. Ու>ո հնչյունափոխություն ունենք մածուն>մածոն, ջրտուն>ցըրթոն և կակուղ>կակող (նաև՝ կակուղ) բառերում:

Ո

§ 35. Միավանկ բառերի սկզբում ո-ն դառնում է վո (վուօ), ինչպես՝ ոչ>վոչ||վոնչ, ոտն>վոտը, որ>վոր, որբ>վորփ, որդն>վոռք, որձ>վոռց:

Բացառություն է կազմում միայն ով>օվ բառը:

§ 36. Բազմավանկ բառերի սկզբում՝ ևս ո-ն սովորաբար դառ-նում է վն (վուօ), ինչպես՝ ոչխար>վոխար, ոսկի>վոսկյի, որդի>վոռքի:

§ 37. Բազմավանկների սկզբի ո-ն հնչյունափոխվել է ր-ի կամ ընկել է ո-ով երկու հաջորդական վանկ ունեցող բառերում. ոլորել>ըլօրիլ||լօրիլ (Կուրթանում նաև՝ հըլօրիլ, Սվերդլովում՝ միայն՝ լօ-րիլ), ողողել>ըղօղիլ||ղօղիլ (Ս. միայն՝ ղօղիլ), ողորմի>ըղօրմի||ղօրմի (Ս. ղօրմի), ողորմածիկ>ըղօրմածիկ||ղօրմածիկ (Ս. ղօր-մածիկ):

§ 38. Բազմավանկների սկզբի ո-ն օ է դարձել (անփոփոխ է մնացել) հետևյալ բառերում. ոլոր>օլօր (նաև՝ վօլօր), ոռնալ>օռնալ, ոսկր>օսկօռ||օցկօռ, ոսկրոտ||օցկօռոտ:

§ 39. Գրաբարյան բառամիջի ո-ն՝ շեշտված թե անշեշտ՝ դառնում է ո=ուօ երկբարբառ: Բառամիջի ո>ո փոփոխությունն ունենք հետևյալ բառերում. բախտաւոր>բախտավոր||բըխտավոր, բարդոց>բարդոց, բժոտ>բըժոտ, բոկիկ>բոբիկ, բողկ>բոխկ, բոց>բոց, բրդոտ>բըրթոտ¹, գլխաւոր>գըլխավոր, գող>գոզ, գողանալ>գողանալ, գոռալ>գոռալ, գործ>գոռծ, գորտ>գոռզ, դատա-ւոր>դադավոր||դըդավոր², դժոխք>դըժոխք, դոխն>դոխ, դող>դոզ, դողալ>դոզալ, թոռն>թոռը, լակոտ>լակոտ, լոր>լուր, խար-

¹ Ոտ ածանցն ունեցող բոլոր բառերում ո-ն դարձել է ուօ, ուստի և ոտ ածանցով կազմված մյուս բառերը չենք բերում:

² Վոր ածանցն ունեցող բոլոր բառերում ո-ն դարձել է ուօ ուստի և վոր ածանցով կազմված մյուս բառերը չենք բերում:

տոց>խառտոց, խմոր>խրմոր, խնծոր>խրնծոր, խոզ>խոզ, խոտ>խոտ, խոր>խոռը||խոռ, խորան>խոռան, խորթ>խոռթ, խորթանալ>խոռթանալ, խորիսխ>խորիզ, խոց>խոց, խստոր>սրխտոր, ծոր>ծոր (տալ), ծոց>ծոց, կոկիկ>կոկիկ, կողք>կոխկ, կոճ>կոճ, կոճակ>կոճակ, կոշտ>կոշտ, կոշտանալ>կոշտանալ, կոպ>կոպ (ավելի տարածված է կօպ ձևը), կոտեմ>կոտեմ, կոտորել>կըտորիլ, կորեակ>կորէկ, կործել>կոռծիլ||կոռծ անիլ, կորչել>կոռչիլ, կտոր>կըտոր, հոգի>ֆոֆի, հող>ֆոդ, հողել>ֆոդիլ, հոտ>ֆոտ, հոտել>ֆոտիլ, ձոր>ձոր, ճիպոտ>նիպոտ, ճոթ>նոթ, մատնոց>մատնոց, միւռոն>մէռոն, մոմ>մոմ, մորթել>մոռթիլ, մոտ>մոդ(իկ), մոտենալ>մոդկանալ, նոր>նոր, շնորհք>շընորֆ, շող>շոխկ, շողալ>շոդալ, շոր>շոր, ուղղորդ>ղորթ, շոր>շոր, շորք>շոռս, պղտոր>պըխտոր, պղտորել>պըխտորիլ, պոկել>պոկչիլ, պոչ>պոչ, «պորտ>պոռտ, քոկ>քոգ, քոկել>քոգիլ, քորի>քորի, սապոն>սապոն, սողոց>սըղոց, սոխ>սոխ, տրորել>տըրորիլ, ցորեան>ցորէն, փիլոն>փիլոն, փոթ>փոթ, փոխել>փոխիլ, փոխինդ>փոխիճճ||փոդիճճ, փող>փոդ, փոս>փոս, փոր>փոր, փորել>փորիլ, փործ>փոռծ, փորձանք>փոռցանք, փորձել>փոռցիլ, քավոր>ֆավոր, քոր>ֆոր, քորել>ֆորիլ, Քրիստոս>Քրիստոս:

§ 40. Բառամիջի ո-ն (շեշտված թե անշեշտ) որոշ բառերում մնում է պարզ ձայնավոր օ՝ պահպանելով իր հին հնչումը: Այդ բառերն են. առողջ>առօխշ (ամենայն հավանականությամբ գրական փոխառություն), բոժոժ>բօժօժ, բորբոսիլ>բըբօրցնիլ||բըբօսնիլ||բըբօսնիլ, բորբոքել>բօրբօֆիլ||բըբրօֆիլ, գոմէշ>գօմէշ, գովէլ>գովիլ||գովալ, թողուլ>թօղալ, թոնիր>թօրօն, թոք>թոֆ, ժողով>ժօղօվ, խոնարհ>խօնար (գր. փոխ.), խոնջան>խօնջան, խոպան>խօփան||խօպան (գր. փոխ.), խոստանալ>խօստանալ, խոստովանիլ>խօստօվանիլ, խոփ>խօփ, ծով>ծօվ, կով>կօվ, կորկոտ>կօրկօթ, հով>հօվ, հովանալ>հօվանալ, հոտաղ>հօտաղ, մորմոքիլ>մըրմօֆիլ, յաջող>հաչօղ||աչօղ, որոճ(ալ)>աօրօն (անիլ), չորեքշաբթի||չօրէշապտի, պողովատ>պօղվատ (որոշ գյուղերում՝ պօխպատ), սաղմոս>սաղմօս, սող(ալ)>(փոր)սօղ, սով>սօվ, բոպե>հրօրօպէ||րօպպէ, քարոզ>ֆարօզ, քարոզել>ֆարօզիլ:

Գրաբարյան ո ձայնավորի երկբարբառայնացման կամ պարզ ձայնավոր մնալու մասին մի ընդհանուր կանոն սահմանել անհնար է: Միայն հաստատ կարող ենք ասել հետևյալը. գրաբարյան բառամիջի ո ձայնավորի դիմաց կոռու խոսվածքում օ պարզ ձայնավոր ենք ունենում՝

ա) վ բաղաձայնից առաջ, օրինակ՝ ծով>ծով, կով>կով, հով>հով և այլն.

բ) գրական փոխառություններում, ինչպես՝ խոնարհ>խօնար, խոպան>խօպան, սաղմոս>սաղմօս.

գ) ենթակայական դերբայներում, օրինակ՝ բըցրանօղ, մենձանօղ, ասօղ, խօսօղ, ուզօղ, ջըրօղ և այլն:

Պիտի նկատի ունենալ նաև այն, որ Ստեփանավանի Ուռուտ գյուղում երկբարբառային ու գոյություն չունի, և այդ երկբարբառին միշտ համապատասխանում է պարզ օ ձայնավորը, ինչպես՝ դող>դօղ, լոր>լօր, ծոց>ծօց, չոր>չօր, փող>փօղ և այլն:

Իսկ Ստեփանավանի Ագարակ գյուղում ու առասանությունը կա, բայց ընդգրկում է քիչ թվով բառեր: Մյուս գյուղերում ու երկբարբառային առասանությունը պարզ ու ակնհայտ է:

§ 41. Բառամիջի նախաշեշտ ո-ն ր-ի է հնչյունափոխվում բորբոսիլ>բըբօրցնիլ||բըբօսնիլ||բըբօսնիլ, դողդողալ>դըղղոդալ, սովորել>սըվօրիլ, սովորոյթ(ք)>սըվօրույթ(կ), լողանալ>լըղանալ, հոտոտել>ֆըթֆոտալ (նաև՝ ֆոտֆոթալ), կոտորել>կըտօրիլ, մորմոքիլ>մըմօֆվիլ բառերում:

Ինչպես նկատում ենք, ո>ը հնչյունափոխության ենթարկվող բառերը իրենց մեջ երկու ո ունեն: Բացառություն է կազմում միայն լողանալ>լըղանալ բառը (ունենք նաև լեղանալ ձևը):

§ 42. Ո ձայնավորի հնչյունափոխության մասնակի դեպքեր են. ո>ա—զոքանչ>զանֆաչ, որոճ>առօճ:

ու>օ (անկում)—պողովատ>պօղվատ (Ստեփանավանի Ագարակ, Ուռուտ և այլ գյուղերում ունենք նաև պօխպատ ձևը), կաթողիկոս>կաթղիկոս (Ագարակ և Ուռուտ գյուղերում ունենք կաթէղիկօս ձևը):

ո>ու—ծոպ>ծուպկ:

Խիստ ձևափոխվել է ոգնի բառը՝ դառնալով կունձլի, կունձինա, կունձրճա:

Ը

§ 43. Բարբառում միայն երկու բառ կա, որոնց համապատասխան ձևերը զրաբարում ունեն նախահնչյուն ր: Դրանք են ընկիր>հընգյէր և ընտրիլ>հընդրիլ: Ինչպես տեսնում ենք, երկու օրինակում էլ ր-ն մնում է անփոփոխ, բայց դրանից առաջ ավելանում է ֆ հազազը: Ունենք նաև ընտրիլ ձևը, որնոր գրական փոխառություն է: Հընդրիլ և ընտրիլ ձևերի միջև կա իմաստաբանական տարբե-

բություն: Հրեղբիլ նշանակում է «մաքրել, ջուկել» օրինակ՝ բրբինձը հրեղբիլ, իսկ ընտրիլ նշանակում է «քվեարկությամբ ընտրել», օրինակ՝ նախագահ ընտրիլ:

§ 44. Ինչպես հայտնի է, հայերենում բառերը և վանկերը չեն կարող սկսվել երկու և ավելի բաղաձայններով: Բառերի ու վանկերի սկզբի կից բաղաձայնների միջև կամ նրանցից առաջ լսվում է ր հնչյունը, որը սովորաբար գրության մեջ չի նշվում: Այդ չորվող ր-երը խոռու խոսվածքում որպես կանոն դասավորվում են այնպես, ինչպես արդի հայերենում (և գրաբարում). օրինակներ՝ բրինձ>բրբինձ, գրել>գրբիլ, դժոխք>դրժոխկ, դմակ>դրմակ, Մկրտիչ>Մրգրդիչ, սկսել>ըսկըսիլ, մղկտալ>մըխկըտալ, կրակել>կըրակիլ, բժիշկ>բըժիշկ, քրքրել>քըրքրբիլ և այլն:

Որպես առանձնահատկություն պիտի նշել հետևյալը: Գիտենք, որ հայերենում, երբ բառը վերջանում է ղ, ր-ով և նախորդ բաղաձայնով, ղ, ր-ի և նախորդ բաղաձայնի միջև լսվում է ր ձայնավորը (որ գրության մեջ չի նշվում), օրինակ՝ աստղ (աստըղ), քաղցր (քախցըր) և այլն:

Խոռու խոսվածքում ևս ղ, ր-ի և նախորդ բաղաձայնի միջև լրսվում է ր ձայնավորը, բայց այդ ր-ն կարող է ընկնել նաև բառավերջում և այդ դեպքում բաղաձայն + ղ կամ ր հնչյունախմբերը հնչում են առանց ր-ի, ինչպես՝ աստղ>աստըղ||աստղը, բարձր>բառցըր||բացրը (նաև՝ բացըր), ծանր>ծանդր||ծանդրը, ծունր>ծունդըր||ծունդըր, մանր>մանդր||մանդրը, մեղր>մեղըր||մեղրը, ցած>ցած||ցածըր||ցածըր, քաղցր>քախցըր||քախցըր:

Սպանանել>սպանել բառը հնչում է սրպանիլ:

§ 45. Խոռու խոսվածքում ր ձայնավորը լայն տարածում ունի, որովհետև համարյա բոլոր նախաշեշտ ձայնավորները կարող են վերածվել ր-ի, օրինակ՝ ազատել>ըզատիլ, բաժանել>բըժանիլ, բամբասել>բըմբասիլ, գերեզման>գըրէզման, ծիծեռնակ>ծըծէռնակ, բորբոքել>բըրբօփիլ, սովորել>սըվօրիլ, կոտորել>կըտօրիլ և այլն: Բացի այդ, բառի աճման դեպքում ր-ի կարող են հնչյունափոխվել ա, ու, ի ձայնավորները, օրինակ՝ անգաճ-ընգանի, ատամ-ըտամի, ախլիկ-ախըրկա, միս-մըսի, ջուր-ջըրի, մուր-մըրի և այլն: Միայն պետք է նկատի ունենալ, որ ր-ն հաճախ դրվում է ոչ թե սղված ձայնավորի տեղում, այլ մի հնչյուն հետո, օրինակ՝ աղիք>աղիք-աղըքնի||սկընի, ամիս>ամիս-ամըսնի||ամսընի, ասեղն>ասեղ-ասըղնի||ասխընի, գլուխ>գըլուխ-գըլխընի, գոմէշ>գօմէշ-գօմշընի, իլիկ>իլիկ-իլկընի||իլիկնի, ծաղիկ>ծաղիկ-ծախկընի, կապիկ

>կապիկ-կապկընի, ճիպոտ>ճիպոտ-նիպտընի, շապիկ>շաբիբ-շապկընի, ուրիշ>ուրիշ-ուռշի-ուռշընի, պճեղն>պըճէղ-պընզընի, պոտոսկ>պըտոսկ-պըտկի-պըտկընի, քուռակ>քուռակ-քուռակնի|| ֆուկընի:

§ 46. Բառավերջում ը է ավելացել մի շարք բառերում, օրինակ՝ խոր>խորը (նաև՝ խոր), ծուռ>ծուրը (նաև՝ ծուռ), ինն>իններ, ութ>ութը (նաև՝ ութ) և այլն: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս § 167:

Ը-ն դարձել է ի բլիթ>բլիթթ և քսակ>քիսա բառերում:

II. ԵՐԿՐԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՅ

§ 47. Բառասկզբում բաղաձայնից առաջ այ երկբարբառը դառնում է է, ինչպես՝ այս>էս, այդ>էտ||էդ, այն>էն, այլ>էլ. այծ>էծ:

Երբ էս, էտ||էդ, էն դերանունները բաղադրվում են այլ բառերի հետ, դրանց այ երկբարբառից առաջացած է ձայնավորը հնչյունափոխվում է ր-ի կամ ընկնում է, ինչպես՝ այստեղ>էստէղ>ըստէղ||ըստի, այդտեղ>էդտէղ>ըտէղ||ըտի, այնտեղ>էնտէղ>ընդէղ||ընդի, այսքան>էսքան>ըսքան(մ), այդքան>էդքան>ըդքան(մ), այնքան>էնքան>ընքան(մ), այսօր>էսօր>ըսօր||սօր:

Նույն ձևով էլ այսպէս, այդպէս, այնպէս բառերի բարբառային զուգահեռներն են՝ րսէնց||ըսէ||սէնց||սէ, րթէնց||ըթէ, րէնց||թէ, ընէնց||ըրնէնց||ըրնէ:

§ 48. Բառամիջում ևս այ երկբարբառը բաղաձայնից առաջ դառնում է է կամ ե, ինչպես՝ գայլ>գյլ (գյիլի, գյիլան), եղբայր>ախպէր, լայն>լէն, լեառն>լէո||լեո, լեարդ>լէոթ||լեոթ, խայթել>խէթիլ, ծայր>ծէր, հայր>հէր, ձայն>ձէն, մայր>մէր, սայլ>սէլ, վայր(գալ)>վէր(գալ), տայր>տէր, փայծաղն>փէցախ (նաև՝ փիցախ||փիցէխ), փայտ>փէտ, փայտանալ>փէտանալ:

§ 49. Ձայնավորից առաջ եղած այ-ը պահպանվում է, ինչպե՛ս նախկին պես ցույց են տալիս հետևյալ օրինակները. հայելի>հայլի, հրամայել>հրամայիլ, վայելել>վայէլիլ: Որպես բացառություն այ-ը ահ է դարձել խնայել>խընահիլ բառում:

Այ-ը պահպանվում է նաև բաղաձայնից առաջ, եթե բառը գրական փոխառություն է, ինչպես՝ խայտառակ>խայտառակ, խայտառակել>խայտառակիլ, պայման>պայման:

§ 50. Բազմավանկ բառերի վերջում այ-ը, կորցնելով յ բազմապատկեր, դառնում է ա, ինչպես՝ գուլպայ>գյուլբա, սատանայ>սրտանա, վերայ>վրա, վկայ>վրգա, տղայ>տրղա, փեսայ>փէսա, ծառայ>ծառա, քուրայ>քյուրա: Երբ այդպիսի բառերի վրա գրվում է բաղաձայնով սկսվող որևէ վերջավորություն, գրաբարյան ընկած յ վերջնահնչյունը վերականգնվում է և խոսվածքում բաղաձայնից առաջ նորից հանդես է գալիս այ>է հնչյունափոխությունը, օրինակ՝ գուլպայ>գյուլբա, գյուլպայք>գյուլբէք, սատանայ>սրտանա, սատանայք>սրտանեք, փեսայ>փէսա, փեսայն>փէսէն, տղայ>տրղա, տրղայք>տրղէք և այլն: Իսկ երբ այսպիսի բառերի վրա գրվում է ձայնավորով սկսվող որևէ վերջավորություն, բառավերջի ա ձայնավորն ընկնում է, օրինակ՝ գյուլբա-գյուլբի-գյուլբով, սրտանա-սրտանի-սրտանից-սրտանով, փէսա-փէսի-փէսից-փէսով և այլն:

§ 51. Միավանկ բառերի վերջում այ-ը մնում է անփոփոխ, ինչպես՝ հայ>հայ (հայի, հայից և այլն), վայ>վայ:

Ա.Ի

✓ § 52. Բառասկզբում բաղաձայնից առաջ աւ երկբարբառը դառնում է օ, ինչպես՝ օգուտ>օֆուտ, օգնել>օֆիլ||օֆնիլ, օծել>օծիլ, օձ>օց, օղ>օղ, օր>օր, օրէնք>օրէնք, օրինակ>օրինակ, օրհնել>օխնիլ||օրչնիլ, օրհնէք>օխնանք||օրչնանք:

§ 53. Եռավանկների բառասկզբի աւ-ը դառնում է ը կամ ընկնում է: Եղած օրինակներն են՝ օրօրել>ըրօրիլ||րօրիլ, օրօրօց>ըրօրօց||րօրօց:

✓ § 54. Բառամիջում ևս բաղաձայնից առաջ աւ-ը դառնում է օ, ինչպես՝ աջօթել>աղօթիլ, աղօթք>աղօտկ, ամօթ>ամօթ, խօսիլ>խօսալ, խօսք>խօսկ, ծանօթ>ծանօթ, կարօտ>կարօտ, զօրք>զօրք, օրօրոց>ըրօրոց:

Այս կանոնից բացառություն են կազմում. ա) առաւօտ>ըռավոդ, արօտ>արոտ, կրօն>կրրոն, մօտ>մոդիկ (նաև բայական ձևերը՝ մոդկանալ||մոդրկանալ||մոդանալ), ուր նկատվում է աւ>ռ հնչյունափոխությունը, բ) նաւթ>նաֆթ և զաւթել>զաֆիլ բառերը, ուր նկատվում է աւ>աֆ (<ավ) հնչյունափոխությունը:

§ 55. Բառասկզբում և բառամիջում աւ-ը ձայնավորից առաջ (այդ դիրքում աւ-ը երկբարբառ չի եղել) դառնում է ավ, ինչպես՝ աւազ>ավազ, աւել>ավել, աւերել>ավէրիլ, զաւակ>զավակ, խաւար>խավար, հաւան>հավան, հաւատ>հավատ, ձաւար>ձավար, տաւար>տավար և այլն:

§ 56. Բառավերջում ևս աւ-ը վերածվում է ավ-ի, ինչպես՝ ծարաւ>ծարավ, կաւ>կավ, կաքաւ>կաքավ, ցաւ>ցավ, պառաւ>պառավ, հաւ>հավ, նաւ>նավ և այլն:

§ 57. Աւ երկբարբառի հնչյունափոխության մասնակի դեպքերն են.

աւ>ու—աղանի>աղունիկ, յօնք>ունք.

աւ>ի—մօրուք>միրուք:

ԵԱ

§ 58. Եա երկբարբառը գրաբարում մեծ մասամբ գործածվում է բառամիջում: Դրա դիմաց խոռու խոսվածքն ունի է կամ ե, օրինակ՝ լեառն>լէռ||լեռ, լեարդ>լէռթ||լեռթ, կորեակ||կորէկ||կորեկ, սեամ (ք)>շէմֆ||շեմֆ, սեաւ>սեվ, ցորեան>ցորէն:

§ 59. Եա-ն մի քանի բառի մեջ դառնում է ա, օրինակ՝ երանեակ>էռնակ, իրեար>իւրար:

✓§ 60. Կեանք>կյանք կամ գյանք գրական փոխառություն է: Անկեալ բառը դառնում է անգյալ, իսկ վառեակ բառը՝ վառիկ (եա>ի):

§ 61. Գրաբարյան անցյալ դերբայի եալ վերջավորությունը դարձել է էլ, կամ ել, օրինակ՝ գրեալ>գրէլ||գրեել, բերեալ||բէրէլ||բէրել և այլն:

ԵԱՅ

§ 62. Եայ եռաբարբառը, որ գրաբարում գործածվում է բառավերջում, խոռու խոսվածքում դառնում է ի, օրինակ՝ մազեայ>մուզի, բրդեայ>բրդթի, փայտեայ>փէտի, երկաթեայ>էրկաթի, արծաթեայ>էրծաթի և այլն:

ԵԱԻ

§ 63. Գրաբարի բառավերջի եաւ երկբարբառի դիմաց խոռու խոսվածքն ունի եվ՝ սեալ>սեվ բառում և էվ||օվ՝ բարեաւ>բարէվ||բարօվ բառում: Ուրիշ օրինակներ չկան:

Եւրթն բառը դարձել է օխտ և դրան համապատասխան՝ եւթա-
նասուն>օխտանասուն:

ԵԻ

ԻՎ

✓ § 64. Բառամիջում և բառավերջում եւ-ը դառնում է էվ կամ
Եվ, ինչպես՝ անձրեւ>անձրէվ||անձրեվ, արեւ>արէվ||արեվ, դեւ
>դէվ||դեվ, հարեւան>հրրէվան, յետեիլ>յէդէվալ, ձեւել>ձէվիլ:
Ալեւոր>հրլիվոր բառի մեջ ե-ն դարձել է ի:

Որբեալորի բառի համար ունենք վորֆերի, վօրֆերի, վօրֆերի,
վորփերի, վրոֆերի, վորփրվերի ձևերը:

ԻԻ

§ 65. Իւ երկբարբառով բառասկզբին ունենք միայն 2 բառ՝
իւղ>յէղ և իւր>իւրա: Առաջին բառը ենթարկվում է իւ<յէ, իսկ
երկրորդը՝ իւ>ի հնչյունափոխությանը:

✓ § 66. Բառամիջում իւ երկբարբառը դառնում է ի, ինչպես՝
ալիւր>ալիւր, արիւն>արիւն, դիւր գալ>դիւր գալ, հարիւր>հարիւր,(
ձիւն>ձիւն, սիւն>սիւն: Դրան համապատասխան -ուրիւն ածանցը
դարձել է -ուրիւն, օրինակ՝ բարութիւն>բարուրիւն, գողութիւն>գո-
ղուրիւն, լրբութիւն>լրբուրիւն, հարստութիւն>հարստուրիւն, լաւու-
թիւն>լավուրիւն և այլն:

✓ § 67. Բառամիջի իւ-ը ու է դառնում ձիւթ>ձութ, ձիւղ>
նուխկ (նաև՝ ճուխկը), աղբիւր>ախպուր բառերում, է է դառնում
գիւղ>գյեղ (գուցե գեղ ձևից), միւռոն>մէռոն (նաև՝ մեռոն)
բառերում:

§ 68. Առիւծ>առյուծ, հիւր>հյուր բառերը փոխառյալ են գրա-
կանից:

✓ § 69. Բառավերջի իւ-ը դառնում է իվ, ինչպես՝ արծիւ>առ-
ծիվ, թիւ>թիվ, շիւ>շիվ (կա նաև շէվ||շեվ ձևը), պատիւ>պա-
տիվ:

Մրջին (մրջիմն) բառը դարձել է մօրմօնջ:

ՈՅ

✓ § 70. Բառամիջի ոյ երկբարբառը (բաղաձայնից առաջ) սո-
վորաբաւ. դառնում է ի, ինչպես՝ բոյթ>բիթ, զրոյց>զրբից, թոյլ>
բիլ, լոյս>լիս, ճկոյթ>ճրկիթ, պատրոյգ>պատրիֆ, պատրոյս>
պատրիս, պտոյտ>պըտիտ, կապոյտ>կապիտ, քոյր>ֆիւր:

✓ § 71. Ոյ>ու փոփոխությունն ունենք արտոյտ>անտուտ (գր.

փոխ.), անոյշ>անուշ (նաև՝ անոշ), բոյն>բուն, սովորոյթք>սով-
օրութ(ակ). ոյժ>ուժ, երեկոյ>ըրիգու||րիգու բառերում:

ՈՒԱ

✓ § 72. Ուա երկբարբառը դառնում է վա, օրինակ՝ լուանալ>լը-
վանալ, նուալ>նըվալ, նուաղել>նըվաղիլ, ձուածեղ>ձըվածէղ և
այլն:

✓ Աստուած>աստոձ բառում նկատում ենք ուա>ո, իսկ դը-
ժուար>դըժար բառում՝ ուա>ա հնչյունափոխությունը:

✓ § 73. Ուէ, ուե, ուի երկբարբառների առաջին բաղադրիչը
դառնում է վ, օրինակ՝ աղուէս>աղվէս, ցրուել>ցըրվել, ցցուիլ>
ցըցվիլ, զզուիլ>զըզվիլ:

III. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Զայնեղ պայթականներ

Բ

§ 74. Բառասկզբում բ-ն մնում է անփոփոխ, ինչպես՝ բահ>
բահ, բամբակ>բամբակ, բան>բան, բարակ>բարակ, բարի>
բարի, բարձ>բառց, բերան>բէրան, բողկ>բոխկ, բուրդ>բուրթ,
բռնել>բըռնիլ, բրինձ>բըրինձ և այլն:

Բացառություն է կազմում միայն բրդել>փրոթիլ բառը: Բայց
մի շարք տեղերում ունենք նաև բրոթիլ ձևը:

§ 75. Բառամիջի կամ բառավերջի բ-ն դառնում է փ կամ պ:

Բ>փ փոփոխությունն ենք ունենում բ-ից հետո և միջձայնա-
վորային դիրքում, ինչպես արբենալ>հարփիլ, դարբին>դարփին,
երբ>յէփ, լիրբ>լիրփ||լիռփ, խաբել>խափիլ, շաբաթ>շափաթ
(բայց՝ շօրէքշապտի), որբ>վորփ, ուրբաթ>ուրփաթ, սուրբ>
սուրփ, սրբել>սըրփիլ:

Բ>պ փոփոխությունն ունենք աղբիւր>ախպուր, եղբայր>
ախպէր բառերում: Ելնելով այդ բառերից կարելի է ասել, որ ձայ-
նավորների միջև դը հնչյունակապակցությունը դառնում է խպ:

§ 76. Մ ձայնորդից հետո բառամիջի և բառավերջի բ-ն սո-
վորաբար մնում է անփոփոխ, ինչպես՝ ամբար>ամբար, բամբակ
>բամբակ, բամբասել>բըմբասիլ, թումբ>թումբ, խումբ>խումբ,
սեպտեմբեր>սէկտէմբէր:

Հակառակ այս կանոնի՝ մ-ից հետո բ>փ փոփոխությունն ու-

նենք համբերիլ>համփէրիլ, համբուրել>համփուրիլ (միայն խա-
չը) բառերում:

§ 77. Բորբոսիլ>բրբօցնիլ, բորբոքել>բրբօփիլ բառերում
ևս Բ-ն մնացել է անփոփոխ, որը հավանաբար բացատրվում է
կրկնավոր արմատներով:

Թամբք>թամփ բառի մեջ Բ-ն ընկել է:

Գ

§ 78. Բառասկզբի Գ-ն սովորաբար մնում է անփոփոխ, ինչ-
պես՝ գալ>գալ, գանգատ>գանգատ, գարի>գարի, գզել>գրզիլ,
գլուխ>գրլուխ, գող>գող, գոմէշ>գօմէշ, գոռալ>գոռալ, գործ>
չոռծ, գունդ>գունդ և այլն:

§ 79. Բառասկզբի Գ-ն Բ է դարձել գիշեր>ֆըշէր և գտանիլ>
ֆըքնիլ բառերում: Բայց Ալավերդում և այլուր կա նաև գրդնել ձևը:

Գրաբարյան տարգալ ձևին համապատասխան ունենք ֆըքալ և
գրդալ ձևերը:

Գրաբարյան ձգել ձևից հնչյունների ետևառաջությամբ ունենք
ֆըցիլ (օրինակ՝ Ստեփանավան) և գըծել (օրինակ՝ Ալավերդի):

§ 80. Բառամիջի և բառավերջի Գ-ն սովորաբար դառնում է Բ:

Գ>Բ փոփոխությունն ունենք հետևյալ բառերում. ագանիլ>
նաֆնիլ, արգելել>առֆյէլիլ, երգ>յէրֆ, զուգել>զուֆիլ, էգ>էֆ,
թագաւոր>թըֆավոր, ծագ>ծէֆ, կարագ>կարաֆ, հոգի>ֆոֆյի,
ձագ>ձաֆ, ձգել>ձըֆիլ (այլ իմաստ ունեն ֆըցիլ||գըծիլ ձևերը),
ճգնիլ>նըֆնիլ, ճրագ>նըրաֆ, մարագ>մարաֆ, մարգարիտ>մըր-
ֆարիտ, ուրագ>ուրաֆ, պատարագ>պատարաֆ||պըտարաֆ, սուգ
>սուֆ, տայգր>տէֆըր, օգուտ>օֆուտ, օգնել>օֆտիլ||օֆնիլ:

Գ>Լ փոփոխությունն ունենք ազգ>ասկ (նաև՝ ազգ), ազգա-
կան>ասկական (նաև՝ ազգական) բառերում:

§ 81. Ն ձայնորդից հետո բառամիջի և բառավերջի Գ-ն մնում
է անփոփոխ (իսկ եթե ն-ից հետո Գ-ին հաջորդում է ի, է ձայնա-
վորներից մեկը՝ Գ-ն քմայնանում է՝ վերածվելով գյ-ի), ինչպես՝
անգէտ>անգյէտ, գանգատ>գանգատ, եղունգ>ղունգ, զանգ>
զանգ, ժանգ>ժանգ, ժառանգ>ժառանգ, հանգչիլ>հանգչիլ, հինգ
>հինգ, նարգէս>նարգյիգ:

§ 82. Գ-ի ամենակարևոր փոփոխություններից մեկն այն է,
որ ի և է առաջնալեզվային ձայնավորներից հետո քմայնանում է՝
վերածվելով գյ-ի, օրինակ՝ գետին>գյէդին, գերան>գյէրան, գե-
րանդի>գյէրանդու, գինի>գյիճի, գիւղ>գյէղ, ժառանգել>ժալ-

ռանգյիլ, անգէտ>անգլէտ և այլն: Մյուս ձայնավորներից առաջ գ-ն սովորաբար չի քմայնանում, ինչպես՝ դանդատ>գանգատ, գարի>գարի, գզել>գըզիլ, գլուխ>գըլուխ, գող>գող, գորտ>գող, դունդ>գունդ և այլն: Ա ձայնավորից առաջ գ-ի քմայնացում ունենք միայն խանգարել>խանգյառիլ, գազ>գյազ, դազար>գյազար, իսկ ու ձայնավորից առաջ՝ միայն գուլպա>գյուլբա բառերում: Բայց դրանք բոլորն էլ, բացի խանգյառիլ բառից, ունեն մաքուր գ-ով ձևեր՝ գազ, գազար, գուլբա:

Դ

§ 83. Բառասկզբի դ-ն մնում է անփոփոխ՝ դ, ինչպես դադձե>դախցը, դաշտ>դաշտ, դաս>դաս, դատ>դադ, դարբին>դարփին, դեղին>դեղին, դեւ>դեվ, դժոխք>դըժոխկ, դմակ>դըմակ, դնել>դընիլ, դող>դող և այլն: Բացառություներ չկան:

§ 84. Բառամիջի կամ բառավերջի դ-ն սովորաբար դառնում է ք, ինչպես՝ դադար>դաքար, արդար>առքար, աւելորդ>էվէլնօրք, բարիկենդան>բարիկյէնթան, բերդ>բեռք, բուրդ>բուռք, բրդել>փռքիլ (հանդիպում է նաև բռքիլ ձևը), դղում>դըրքմ, երդումն>օրքմ, զարդարել>զըռքարիլ, լեարդ>լէռք, ծննդան>ծընըթկան (հանդիպում է նաև ծըմըթկան ձևը), կարդալ>կառքալ, հաղորդուիլ>հաղօռքվիլ, մարդ>մառք, որդի>վոռքի, որդ>վոռք, ջարդել>ջառքիլ, վարդ>վառք, վարդապետ>վառքապէտ, վարդաւառ>վառքէվօր: Ինչպես նկատում ենք, բառերի զգալի մասում դ>ք փոփոխությունն ունենք ր-ից (ռ-ից) հետո:

§ 85. Ն ձայնորդից հետո բառամիջի և բառավերջի դ-ն մնում է անփոփոխ, ինչպես՝ գերանդի>գյէրանդու, գունդ>գունդ, թունդ>թունդ, լինդ>լինդ, ծնունդ>ծընունդ, հիւանդ>հիվանդ, հնազանդ>հընազանդ, մարմանդ>մաւմանդ, սննդ>սանդ, ցնդիլ>ցընդիլ, քանդել>քանդիլ:

Ն-ից հետո դ>ք փոփոխությունն ունենք միայն խնդրել>խընթրիլ բառում:

§ 86. Խեղդել>խէխտիլ բառի դդ հնչյունախումբը դարձել է խա:

§ 87. Այդ դերանունը դառնում է էտ կամ էդ (բաղադրությունների մեջ նաև՝ րտ կամ րդ, օրինակ՝ ըտէդ||ըտի, ըդքամ):

Բայց այս դերանվան բաղադրված ձևերում նկատվում է նաև դ>ք փոփոխությունը, ինչպես՝ ըթէնց||թէնց||ըթէ||թէ «այդպես»: Ուրիշ օրինակներ չկան:

§ 88. Փոխինդ>փոխինձ բառում նկատվում է դ>ձ փոփոխությունը:

9

§ 89. Բառասկզբի ձ-ն մնում է անփոփոխ՝ ձ, ինչպես՝ ձագ>ձաֆ, ձախ>ձախ, ձայն>ձէն, ձաւար>ձավար, ձեռ(ք)>ձեռ, ձէթ>ձէթ, ձիւն>ձին, ձմեռն>ձմեռ, ձոր>ձոր, ձու>ձու, ձուկն>ձուրը: Բացառություններ չկան:

§ 90. Բառամիջի և բառավերջի ձ-ն ր-ից հետո դառնում է ց, իսկ ն-ից հետո մնում է անփոփոխ: Զ>ց փոփոխությունն ունենք հետևյալ բառերում՝ բարձ>բառց, բարձր>բարցրը||բացրը, բարձրանալ>բըցրանալ, խորձ>խուոց, վորձկալ>վոոցկալ, որձ>վոոց, վարձք>վարցկ, փորձ>փոոց, փորձանք>փոոցանք, փորձել>փոոցիլ, օձ>օց, դաղձ>դախց: Բացի դաղձ>դախց, օձ>օց բառերից, մյուս բոլոր օրինակներում ձ-ն գտնվում է ր-ից հետո:

§ 91. Ն ձայնորդից հետո ձ-ն մնում է անփոփոխ, ինչպես անձ-յեւլ>անձուրէվ, բրինձ>բըրինձ, խանձել>խանձիլ, խնձոր>խընձոր, հունձ>հուինձ, նախանձ>նախանձ, պապանձիլ>պըպանձվիլ, տանձ>տանձ: Բացառություններ չկան:

Ձ

§ 92. Բառասկզբի ջ-ն մնում է անփոփոխ՝ ջ, ինչպես՝ ջախ-ջախել>ջընջխիլ, ջարդել>ջառթիլ, ջնջել>ջընջիլ, ջոկել>ջոգյիլ, ջորի>ջորի, ջուր>ջուր:

Բացառություն է կազմում միայն ջրտուն>ցրոթոն բառը, որտեղ բառասկզբի ջ-ն դարձել է ց:

§ 93. Բառամիջի և բառավերջի ջ-ն սովորաբար դառնում է շ (եթե չի գտնվում ն-ից հետո): Զ>շ փոփոխությունն ունենք հետևյալ բառերում. աղջիկ>ախշիկ, աջ>աշ, առաջ>առաշ, առաջին>առաշի||րոաշի, առաջնակ>առշընէկ, առողջ>առօխշ (նաև՝ առվօխշ), արջ>առշ, արջառ>աշառ, թրջել>թըռշիլ (հանդիպում է նաև դրձիլ ձևը), մեջ>մէշ, մէջք>մէշկ, միջնակ>միշնէկ, աջող>աշօղ||հաշօղ, ոջիլ>վոշիլ, վերջ>վեռշ, ջոջ>ջոշ (նաև՝ ջոջ):

§ 94. Ն ձայնորդից հետո ջ-ն մնում է ջ, ինչպես բանջար>բանջար, երինջ>էրինջ, խոնջան>խօնջան, կամուրջ>կարմունջ, մունջ>մունջ, ջախջախել>ջընջխիլ, ջնջել>ջընջիլ: Բացառություն է կազմում միայն խնջել>խընջիլ բառը:

§ 95. Մի քանի բառերի մեջ ջ-ն խլանալով դառնում է ճ. այդ բառերն են. ականջ>անգան (ունենք նաև անջակ ձևը), բաղարջ>բաղան, շեղջ>շեխն:

§ 96. Շրջել>շրջիլ, բաղրջան>բաղրջան բառերը փոխառ-
յալ են գրականից (հակառակ դեպքում *բ-ից* հետո պիտի ունենա-
լինք չ):

§ 97. Առաջ բառը դառնում է առաջ: Բայց ունենք նաև դրան
հոմանիշ աղափ ձևը, որը շատ լայն գործածություն ունի:

Ծ ա ն թ. ա) բ, գ, դ, ձ, ջ պայթականները, ինչպես նշված է
արդեն, բառակզբում որոշ չափով շնչեղ արտասանություն ունեն,
բայց դա չի հանգեցնում առանձին շնչեղ ձայնեղների գոյության
այդ խոսվածքում:

բ) Մեղորոտ, Ժդանով, Փամբակ, Քարաբելդ գյուղերում (Գու-
գարբի շրջան), նաև Սպիտակում ձայնեղ պայթականները վերած-
վում են խուլների, օրինակ՝ բարի>պարի, բարձ>պառց, գլուխ>
կըլուխ, գործ>կոռձ, դեղին>տեղին, դմակ>տըմակ, ձախ>ծախ,
ձայն>ծէն, ջուր>նուր, ջորի>նորի և այլն: Այս երևույթը ամե-
նայն հավանականությամբ բացատրվում է Ղարաբաղի բարբառի
ազդեցությամբ: Ըստ տեղեկությունների այստեղ հաստատվել է
մի գաղթականություն Ղարաբաղից:

§ 98. Ձայնեղ պայթականների մասին ասվածները կարող ենք
ամփոփել հետևյալ ձևով: Լոռու խոսվածքում բ, գ, դ, ձ, ջ ձայնեղ
պայթականները բառակզբում սովորաբար մնում են անփոփոխ,
անփոփոխ են մնում նաև բառամիջում և բառավերջում՝ մ, և որև-
զային ձայնորդներից հետո: Բառամիջի և բառավերջի պայթական
ձայնեղները, եթե չեն գտնվում ռեզայիկներից հետո, սովորաբար
վերածվում են շնչեղ խուլերի (առանձին դեպքերում պարզ խուլե-
րի): Գ ձայնեղ պայթականը է և ի առաջնալեզվային ձայնավոր-
ներից առաջ փայնանում է:

2. Խուլ պայթականներ

Պ

§ 99. Բառակզբի պ-ն մնում է անփոփոխ՝ խուլ պ, ինչպես՝
պանիր>պանիր, պապ>պապ, պառա>պառավ, պատ>պատ,
պատիժ>պատիժ, պատմել>պատմիլ, պարապ>պարապ, պարզ
>պարզ, պղտոր>պըխտոր, պճեղն>պընէղ, պոշ>պոշ և այլն:
Բացառություններ չկան:

§ 100. Բառամիջում և բառավերջում ևս պ-ն սովորաբար
մնում է անփոփոխ՝ պ, օրինակ ապրանք>ապրանք, ապրիլ>ապ-
րիլ, ծոպ>ծուպկ, կապ>կապ, կապել>կապիլ, կապիկ>կապիկ,

կոպ>կօպ||կոպ, ճիպոտ>ճիպոտ, ոսպ>վոսպ, պապ>պապ, պա-
րապ>պարապ, տապակել>տըպակիլ և այլն:

§ 101. Բառամիջում և բառավերջում մի քանի բառերի մեջ
պ-ն ձայնեղանալով դառնում է բ: Այդ բառերը մոտավորապես հե-
տևյալներն են. ամպ>ամբ, ապաշխարանք>աբաշխարանք,
ապսպարել>բըսպարիլ, ապրշում>աբրշում, գուլպա>գյուլբա,
դեպ ի>դըբա, հպարտ>հըմբարտ, շապիկ>շաբիք, վիշապ>ու-
շաբ:

Սահմանել օրինաչափություն այն մասին, թե բառամիջում և
բառավերջում պ-ն երբ է մնում անփոփոխ և երբ է վերածվում բ-ի,
հնարավոր չէ, որովհետև լրիվ միանման հնչյունական դիրքերում
այդ երկու դեպքերն էլ հանդիպում են: Այս տեսակետից ցայտուն
օրինակներ են կապիկ և շապիկ բառերը: Երկու բառերի մեջ էլ պ-ն
գտնվում է ձայնավորների միջև, ըստ որում, նույն ա և ի ձայնա-
վորների միջև, բայց կապիկ բառի պ-ն մնում է անփոփոխ՝ կապիկ.
իսկ շապիկ բառի պ-ն ձայնեղանալով՝ վերածվում է բ-ի՝ շաբիք
(առանձին թեման ձևերում բ-ն նորից կարող է վերածվել պ-ի,
ինչպես՝ շապիկ, շապկից և այլն. դա բացատրվում է հաջորդ խուլ
բաղաձայնի ազդեցությամբ):

Միայն մի բան հաստատ կարելի է ասել, որ մ, և ռնգային-
ներից հետո խուլ պայթականները (պ, կ, տ, ծ, ճ) վերածվում են
ձայնեղ պայթականների (բ, գ, դ, ձ, ջ):

Կ

§ 102. Բառասկզբում կ-ն մնում է անփոփոխ՝ խուլ կ, ինչ-
պես՝ կալ>կալ, կամուրջ>կարմունջ, կաշի>կաշի, կապոյտ>
կապիտ, կարիճ>կարիճ, կաքալ>կաքալ, կոճակ>կոճակ, կոշտ
>կոշտ, կով>կով, կորեակ>կորեկ և այլն: Բացառություն են
կազմում միայն կիրակէ>գլիրագի, կեանք>գյանք և կշեռք>
քշէնք բառերը, ուր բառասկզբին նկատում ենք կ>գ և կ>ք հըն-
չյունափոխությունը: Կեանք>գյանք բառը իր եա>յա հնչյունա-
փոխությամբ ցույց է տալիս, որ փոխառյալ է ընդհանուր խոսակ-
ցական լեզվից (հակառակ դեպքում եա-ն ըստ բարբառի հնչյունա-
կան օրենքների պետք է տար է, ինչպես ունենք բազմաթիվ դեպ-
քերում, օրինակ՝ կորեակ>կորէկ, ցորեան>ցորէն և այլն): Կշեռք
>քշէնք բառի բառասկզբի կ>ք փոփոխությունը կարելի է բա-
ցատրել բառավերջի ք-ի ազդեցությամբ (առնմանում): Անբացա-
տրելի է մնում կիրակէ>գլիրագի բառի բառասկզբի կ>գ փոփո-
խությունը:

§ 103. Բառամիջի և բառավերջի կ-ն ևս մի շարք բառերի մեջ անփոփոխ է մնում, ինչպես ակն>ակը, ալօս>ակոս, աւազակ>ավազակ, բազուկ>բազուկ, բարակ>բարակ, երկու>էրկու, իրիկ>իրիկ, լակել>լակիլ, կարկատան>կրկատան, կոճակ>կոճակ, հասկանալ>հրսկանալ, ճակատ>ճակատ, կրակ>կրակ, կորեակ>կորէկ և այլն:

§ 104. Բառամիջի և բառավերջի կ-ն մի շարք բառերի մեջ ձայնեղանալով՝ դառնում է գ (է, ի ձայնավորներից առաջ՝ գջ), ինչպես՝ ականջ>անգան, անկանիլ>ընգնիլ, արմուկն>արմունգ, բարեկամ>բարէգամ, երեկ>էրէգ, երեկոյ>րիգու, երկիր>յէրգյիր, զատիկ>զադիգ, ընկեր>ընգյէր, թակ>թագ, թանկ>թանգ, խունկ>խունգ, կրուկն>կրունգ, ձուկն>ձուգը, ուղարկել>ղարգիլ, ջոկել>ջոգյիլ, տնկել>տընգյիլ, ցերեկ>ցէրէգ, կոունկ>կըռլունգ և այլն: Դատարկ և զավակ բառերը կարող են հնչել կ-ով և գ-ով՝ դառդակ(գ), զավակ(գ):

§ 105. Կ-ի փոփոխություններից մեկն էլ այն է, որ է և ի առաջնալեզվային ձայնավորներից առաջ քմայնանալով՝ վերածվում է կյ-ի, ինչպես՝ կիր>կյիր, բարեկենդան>բարիկյէնքան, ներկել>նէրկյիլ, ոսկի>վոսկյի, պոկել>պոկյիլ և այլն:

§ 106. Քսակ>քյիսա բառի կ վերջնահնչյունն ընկել է:

Տ

§ 107. Բառասկզբի տ-ն մնում է անփոփոխ՝ խուլ տ, ինչպես՝ տախտակ>տախտակ, տանձ>տանձ, տաշել>տաշիլ, տասն>տասը, տարի>տարի, տաք>տաֆ, տեղ>տեղ, տիկ>տիկ, տղա>տըղա, տուն>տուն, տորեկ>տըրորիլ և այլն:

§ 108. Բառամիջի և բառավերջի տ-ն ևս մի շարք բառերի մեջ մնում է անփոփոխ, ինչպես աղատ>ազատ, աշխատանք>ըշխատանք, աստղ>աստըղ, ատամն>ատամ, արտ>առտ, արօտ>արոտ, բախտ>բախտ, բըրդոտ>բըռթոտ, դաշտ>զաշտ, իմաստուն>իմաստուն, խոտ>խոտ, խրատ>խըրատ, կատու>կատու, կարկուտ>կարկուտ, կոշտ>կոշտ, կոտրել>կոտրիլ, կտոր>կըտոր, հաստ>հաստ, հատ>իատ, հաւատ>հավատ, հոտ>ֆոտ, մատանի>մըտանիֆ, ոտն>վոտը, պատ>պատ, պատիժ>պատիժ և այլն, և այլն:

§ 109. Բառամիջի և բառավերջի տ-ն որոշ բառերի մեջ ձայնեղանալով՝ վերածվում է դ-ի: Այդ բառերը մոտավորապես հետևյալներն են, անտէր>անդէր, առատոտ>ըռավոդ, գետին>

գլէդիւն, գորտ>գոռդ, դատ>դադ (նույն արմատից ունենք նաև դադավոր, դադիլ, դադաստան և այլն), դատարկ>դառդակ (գ), դատարկել>դռոդակիլ, գատիկ>գադիգ, ընտրել>հրնդրիլ, մոտ>մոդիկ, յետ>յեդ, յետևիլ>յէդէվալ, շիտակ>շիդակ, քրտինք>քրոդիւնք, քրտնիլ>քրոդնիլ:

§ 110. Սակավաթիվ բառերում բառավերջի և բառամիջի տ-ն շնչեղանալով դարձեւ: է ք: Այդ բառերն են՝ ականատ>քկանաթ (որոշ տեղերում՝ կանաթ), անարատ>ընարաթ, կորկոտ>կորկոթ, պողովատ>պօղվաթ (որոշ տեղերում՝ պօխպատ), գտանել>քթ-նիլ (որոշ տեղերում՝ գրգնիլ), հոտոտել>ֆրթֆոտալ և ջրտուն>ջրոթուն:

Ծ

§ 111. Բառասկզբում ծ-ն մնում է անփոփոխ՝ խուլ ծ, ինչպես ծալել>ծալիլ, ծակել>ծակիլ, ծակ>ծակ, ծաղիկ>ծաղիկ, ծայր>ծէր, ծառ>ծառ, ծեփ>ծեփ, ծիլ>ծիլ, ծով>ծօվ և այլն: Բացառություններ չկան:

§ 112. Բառամիջում և բառավերջում ևս ծ-ն սովորաբար մնում է ծ, ինչպես՝ ածել>ածիլ, այծ>էծ, անէծք>անիծկ, անիծ>աւիծ, արծիւ>առծիվ, ծիծ>ծիծ, ծիծաղել>ծիծաղիլ, կծել>կըծիլ, կծիկ>կըծիկ, կծու>կծու, կրծել>կըռծիլ, օծել>օծիլ և այլն:

§ 113. Բառամիջի և բառավերջի ծ-ն որոշ բառերի մեջ ձայնեղանալով՝ վերածվում է ձ-ի: Այդ բառերը մոտավորապես հետևյալներն են. աստուած>աստոձ, գործ>գոռձ, գործել>գոռձիլ, լծել>լըծիլ, լուծ>լուձ, քած>քաձ:

§ 114. Փայծաղն բառը բարձել է փէցախ||փիցախ||փիցէխ. այստեղ նկատվում է ծ>ց հնչյունափոխությունը:

§ 115. Ինչպես գիտենք, կսկիծ բառը կրկնավոր բարդություն է: Կիծկիծ>կծկիծ ձևից ծ>ս հնչյունափոխությամբ առաջացել է կսկիծ ձևը: Լոռու խոսվածքում այդ հնչյունափոխությունը տեղի չի ունենում և բառը հնչում է կծկիծ. դրանից կազմված ունենք նաև կծկծալ, կծկծու բառերը: Այս բառաձևերը հնության պատվական նմուշներ են և պերճախոս կերպով խոսում են այն մասին, որ բարբառները հաճախ պարունակում են թանկարժեք լեզվական գանձեր, որոնք մեծ նշանակութուն ունեն գրական լեզվի հնչյունական կամ քերականական այս կամ այն երևութի պարզաբանման տեսակետից:

Ճ

§ 116. Բառասկզբում *ն-ն* մնում է անփոփոխ՝ *խուլ ն, ինչպես՝ ճակատ>ճակատ, ճանաչել>ճանաչիլ, ճանապարհ>ճամփա, ճանկ>ճանգ, ճարտար>ճառար, ճեղքել>ճրղիլ, ճիպոտ>ճիպոտ, ճիւղ>ճուխկ, ճկոյթ>ճրկիթ և այլն:*

§ 117. Բառամիջում և բառավերջում *ևս ն-ն* սովորաբար մնում է անփոփոխ, օրինակ՝ *աճիլ>աճիլ, արճիճ>առճին, խեղճ>խեխն, խիղճ>խիխն, կարճ>կառն, կոճակ>կոճակ, որոճ>առօն, պճեղ>պրնեղ, Վիճակ>Վիճակ:*

§ 118. *Ն-ից հետո ն-ն չ է դարձել ճենճ>նէնչ բառում (ոնգալիններից հետո եկող ն-ի ուրիշ օրինակ չունենք):*

* * *

§ 119. *Խուլ պայթականների մասին ասվածները ամփոփելով՝ կունենանք հետևյալ պատկերը. Լոռու խոսվածքում պ, կ, տ, ծ, և խուլ պայթականներ բառասկզբում մնում են անփոփոխ, անփոփոխ կարող են մնալ նաև բառամիջում և բառավերջում, բայց միաժամանակ այդ դիրքում (ոնգայիններից հետո անպայման) կարող են վերածվել ձայնեղների:*

Յ. Շնչեղ խուլ պայթականներ

Փ

§ 120. Փ-ն բոլոր դիրքերում մնում է անփոփոխ, *ինչպես՝ բառասկզբում՝ փախչիլ>փախչիլ, փակել>փագիլ, փայտ>փէտ, փարատել>փրատիլ, փեսայ>փէսա, փոթ>փոթ, փոխել>փոխիլ և այլն.*

բառամիջում՝ ափսոս>ափսուս, լափել>լափիլ, հփել>էփիլ, շափար>շափար, շափել>շափիլ և այլն.

բառավերջում՝ թեփ>թեփ, թուփ>թուփ, ծափ>ծափ, ծեփ>ծեփ, մրափ>մրափ և այլն:

§ 121. Փետրել բառը փէտոիլ ձևին զուգահեռ ունի նաև քէր-ոիլ ձևը. *այստեղ նկատվում է փ և տ հնչյունների ետևառաջություն (փէտոիլ>տէփոիլ) և ապա տ>ք, փ>ք հնչյունափոխություն (խուլի շնչեղ խլացում, շնչեղ խուլի ձայնեղացում):*

§ 122. Ք-ն սովորաբար բոլոր դիրքերում էլ մնում է անփոփոխ, ինչպես՝

բառասկզբում՝ քաղ>ֆաղ, քաղաք>ֆաղաֆ, քաղել>ֆաղիլ, քաղցր>ֆախցր||ֆախցր, քամել>ֆամիլ, քամի>ֆամի, քնել>ֆրնիլ, քուն>ֆուն, քսան>ֆրսան, քրտնիլ>ֆրողրնիլ և այլն.

բառամիջում՝ արքայութիւն>արքաութին, զոքանչ>զանֆաչ, տաքանալ>տրֆանալ, այսքան, այդքան, այնքան>ըսֆամ, ըդֆամ, ընֆամ և այլն.

բառավերջում՝ բերք>բերֆ, բուք>բուֆ, երեք>իրէֆ, զօրք>զօրֆ, թուք>թուֆ, խելք>խելֆ, մեք>մենֆ, մօրուք>միւրուֆ, տաք>տաֆ, քաղաք>ֆաղաֆ և այլն:

§ 123. Ք-ի ակնառու փոփոխություններից մեկն այն է, որ բառավերջում և բառամիջում խուլ կամ շնչեղ խուլ բաղաձայններից հետո փորցնձով՝ իր շնչեղությունը զերթաժնում է պարզ խուլ կ-ի, ինչպես՝ աչք>աչկ, դժոխք>դրժոխկ, լուացք>լըվածկ, խաղք>խախկ, խօսք>խօսկ, հրաշք>հրաշկ, մեղք>մեխկ, մէջք>մէշկ, միտք>միտկ, պէտք>պէտկ||պէտկը, սովորոյթք>սըվորուտկ, վարձք>վարցկ:

Հետաքրքրական են հետևյալ օրինակները. աղիֆ բառի ֆ-ն մնում է անփոփոխ, որովհետև գտնվում է ձայնավորից հետո, բայց բառի ածման դեպքում ի-ն սղվում է և իրար են հանդիպադրվում դ, ֆ բաղաձայնները: Ա-ն խլանալով դառնում է խ, իսկ խուլից հետո ֆ-ն շնչեղազրկվելով դառնում է կ. այսպիսով ունենում ենք ախկի, ախկընի (բայց՝ աղըքնի) և այլ ձևերը: Նույնն է նաև ֆաղաֆ բառը, որ խոսվածքում մնում է անփոփոխ՝ ֆաղաֆ, բայց թեք ձևվերում վերջին ա-ն սղվում է, իրար են հանդիպադրվում դ, ֆ բաղաձայնները, որոնք դառնում են խ, կ և այսպիսով ունենում ենք ֆաղկի, ֆախկից, ֆախկըցի և այլ ձևերը:

§ 124. Ք-ն բառասկզբում և բառամիջում, է, ի առաջնալեզվային ձայնավորներից առաջ, քմայնանալով վերածվում է ֆյ-ի, ինչպես՝ քենի>ֆյէնի, քեռի>ֆյէռի, քերել>ֆյէրիլ, քերթել>ֆյէրթիլ, քիթ>ֆյիթ, քիչ>ֆյիչ, թքել>թրֆյիլ, հօրաքոյր>հօֆյիր և այլն:

§ 125. Անեղական բառերի ֆ-ի տեղ մի քանի բառերում հանդիպում է հայցականի ս-ն, ինչպես բաղանիք>բաղնիս, չորք>չոոս, պահք>պաս:

§ 126. Ճեղքել>ճրղիլ բառի f հնչյունն ընկել է:

թ

§ 127. Թ-ն սովորաբար բոլոր դիրքերում էլ մնում է անփոփոխ, ինչպես՝

բառասկզբում՝ թագաւոր>թրփաւոր, թաթախել>թըթախիլ, թան>թան, թանկ>թանգ, թել>թել, թել>թեվ, թխել>թըխիլ, թոռն>թոռ, թութ>թութ, թումբ>թումբ, թուի>թուփ, թռչիլ>թըռչիլ և այլն, և այլն: Բացառութիւն են կազմում միայն թմրիլ>դըմբիլ||դըմբըրիլ և թրջել>դըռչիլ (ավելի տարածված է թըռչիլ ձևը) բառերը, որոնք բառասկզբում երևան են հանում ք>դ հնչյունափոխութիւնը: Թրջել>դըռչիլ փոփոխութիւնը կարելի է բացատրել նույնաձև թռչիլ>թըռչիլ բայից ձևական տարբերակման պահանջով (և՛ թրջել, և՛ թռչիլ բայերի համար ունենում ենք թըռչիլ ձևը):

Բառամիջում՝ աղօթել>աղօթիլ, արթուն>զառթուն, գութան>գութան, թաթախել>թըթախիլ, մորթել>մոռթիլ, փաթաթել>փըթաթիլ և այլն:

Բառավերջում՝ ամօթ>ամօթ, արծաթ>էրծաթ, բլիթ>բիլիթ, երկաթ>էրկաթ, թաթ>թաթ, թութ>թութ, խորթ>խոռթ, Կոթ>կսթ, ձէթ>ձէթ, ձիւթ>ձութ, ձկոյթ>ճըկիթ, մութ>մութ, հորթ>ֆոռթ, փոթ>փոթ, փութ>փութ և այլն:

§ 128. Բառամիջում և բառավերջում խուլ բաղաձայններից հետո ք-ն շնչեղազրկվելով՝ վերածվում է տ-ի, ինչպես՝ գաղթական>գախտական, գաղթել>գախտիլ||գախտվիլ, եօթն>օխտ, թուղթ>թուխտ, յաղթել>ախտիլ (կա նաև հախթիլ ձևը. հավանաբար սա փոխառութիւն է գրականից): Բայց նաւթ>նաֆթ բառում ֆ խուլից հետո ք-ն մնում է անփոփոխ:

§ 129. Վաթսուն>վացցուն բառում քս-ն միասին արտասանվելով՝ տվել է ց, իսկ այս վերջինի կրկնությամբ բառն ստացել է վացցուն ձևը:

Յ

§ 130. Յ-ն սովորաբար բոլոր դիրքերի մեջ էլ մնում է անփոփոխ, ինչպես՝

բառասկզբում՝ ցանել>ցանիլ, ցաւ>ցավ, ցից>ցից, ցորեան>ցորէն, ցուրտ>ցուտ, ցցուիլ>ցըցվիլ և այլն. բացառութիւն է կազմում միայն ցախ բառը, որ լոռու խոռվածքում դառնում է ջախ.

բառամիջում՝ կացին>կացին, ցցուիլ>ցցվիլ, խարտոցել>խառտոցիլ, հարցանել>հառցրնիլ.

բառավերջում՝ բաց>բաց, բոց>բոց, թաց>թաց լաց>լաց, խոց>խոց, կտուց>կրտուց, հարց>հառց, հաց>հաց և այլն:

9

§ 131. Զ-ն բոլոր դեպքերում մնում է անփոփոխ, ինչպես՝ բառասկզբում՝ չամիչ>չամիչ, չար>չար, չափ>չափ, չափար>չափար, չիր>չիր, չոր>չոր, չորք>չորս և այլն.

բառամիջում՝ աղաչանք>ղանչափ, ամաչել>ըմանչիլ, թռչիլ>թրռչիլ, խաչել>խաչիլ, կանաչել>կընանչիլ, կորչել>կոռչիլ, հանգչիլ>հանգչիլ և այլն: Բացառությոն է կազմում միայն խաչերկաթ>խրենչկաթ բառը, որի մեջ նկատվում է չ>ն հնչյունափոխությունը:

Բառավերջում՝ խաչ>խաչ, կանաչ>կանանչ:

* * *

§ 132. Շնչեղ խուլ պայթականների մասին ասվածները կարող ենք ամփոփել հետևյալ ձևով. Լոռու խոսվածքում փ, ֆ, թ, ց, չ շնչեղ պայթականներ սովորաբար բոլոր դիրքերում մնում են անփոփոխ, միայն ֆ-ն և թ-ն բառամիջում և բառավերջում խուլ բաղաձայններից հետո կորցնելով շնչեղությունը՝ վերածվում են կ, տ պարզ խուլերի: Բացի այդ, ֆ-ն բառասկզբում և բառամիջում է, ի առաջնալեզվային ձայնավորներից առաջ ֆմայնանալով վերածվում է ֆյ-ի:

4. Զայնեղ շփականներ

9

§ 133. Զ-ն բոլոր դիրքերում մնում է անփոփոխ, ինչպես՝ բառասկզբում՝ զանգ>զանգ, զարդարել>զրոքարիլ, զգուիլ>զրզվիլ, զոքանչ>զանճաչ, զրկել>զրզիլ, զրոյց>զրբից և այլն.

բառամիջում՝ ազատ>ազատ, գզել>զրզիլ, դիզել>դիզիլ, լեզու>լիզու, խուզել>խուզիլ, հազար>հազար, համոզել>համօզիլ և այլն.

բառավերջում՝ աւազ>ավազ, դէզ>դէզ, երազ>էրազ, թիզ>թիզ, խոզ>խոզ, հազ>հազ, մազ>մազ և այլն:

§ 134. Զ-ի փոփոխութիւնն նկատվում է միայն հետեւյալ բառերում. ազգ>ասկ (կա նաեւ ազգ ձեւ) և դրան համապատասխան՝ ազգական>ասկական (նաեւ՝ ազգական). այստեղ զ-ն խլանալով դառնում է ս.

քան զ...>քանց, այստեղ զ-ն դառնում է ց.
վազել>վազելի, այստեղ զ-ն կրկնվում է:

Ժ

§ 135. Բոլոր դիրքերում էլ մնում է ժ, ինչպես՝

բառասկզբում՝ ժանգ>ժանգ, ժառանգ>ժառանգ, ժողով>ժողով, ժամ>ժամ, ժայռ>ժէռ.

բառամիջում՝ արժանի>առժանի, բաժանել>բրժանիլ, բաժին>բաժին, դժոխք>դրժոխկ, դժուար>դրժար, վարժապետ>վառժապետ.

բառավերջում՝ ապառաժ>բպառաժ, բոժոժ>բոժոժ, խեժ>խիժ, ոյժ>ուժ, պատիժ>պատիժ:

Շարժ բառը անցնելով շարժք ձեւից դարձել է ժաշկ: Այս բառի մեջ նկատվում է շժ>ժշ հնչյունների հտեառաջութիւն, ր-ի անկում և ֆ-ի շնչեղազրկում:

Ղ

§ 136. Ղ-ն բառասկզբում և բառավերջում մնում է անփոփոխ, ինչպես՝

բառասկզբում՝ Ղազար>Ղազար, Ղենդ>Ղէվօնդ, Ղուկաս>Ղուկաս, այլև Ղ-ից առաջ գտնվող ձայնավորը կորցրած բառերում, ինչպես՝ եղունգն>ղունգ||ըղունգ, ուղարկել>ղարգիլ||ըրգիլ, ուղեղ>ղուղ||ըղուղ, ուղղորդ>ղորթ, ողողել>ղողիլ||ըղօղիլ, աղաչանք>ղանչաք.

բառավերջում՝ աղ>աղ, անթեղ>անթէղ, թեղ>թեղ, իւղ>յէղ, պճեղն>պրնէղ, տեղ>տեղ, դեղ>դեղ, հող>ֆող, ճաղ>ճաղ, մաղ>մաղ, մատաղ>մատաղ, նեղ>նեղ և այլն:

§ 137. Բառամիջի ղ-ն անփոփոխ է մնում՝

ա) երկու ձայնավորների միջև, օրինակ՝ աղալ>աղալ, աղօթել>աղօթիլ, բաղարջ>բաղան, դեղին>դեղին, թողուլ>թօղալ, լողանալ>լրղանալ, ծիծաղիլ>ծիծաղիլ, կատաղիլ>կրատղիլ, դողալ>դողալ, ջրաղաց>ջաղաց, սղոց>սըղոց, քաղել>քաղիլ և այլն:

բ) Մի ձայնավորի և հաջորդ ձայնեղ բաղաձայնի միջև, օրինակ՝

նակ՝ աղուէս>աղվէս, բաղանիք>բաղնիք, դեղնեւ>դեղնիւ, դեղ-
նուց>դեղնուց:

§ 138. Բառամիջում դ-ն խ-ի է փոխվում, երբ նրանից հետո
գալիս է պայթական խուլ կամ շնչեղ խուլ, օրինակ՝ բողկ>բոխկ,
գաղթական>գախտական, գաղթիւ>գախտիւ, եղբայր>ախպէր,
թաղկիւ>թախկիւ, թուղթ>թուխտ, խեղճ>խեխճ, խիղճ>խիխճ,
խղճալ>խրխճալ, կողք>կոխկ, կեղտ>կչէխտ, ճիւղ>ճուխկ, մեղք
>մեխկ, մղկտալ>մըխկըտալ, յաղթեւ>ախտիւ, պղպջալ>պըխպը-
ջալ, պղտոր>պըխտոր, պղտորեւ>պըխտորիւ, քաղցր>քախցըր՝
քախցըր:

Ընդհանուր խոսվածքում ասհնար են: ղ պայթական խուլ կամ շնչեղ
խուլ կապակցութիւնները (ղպ, ղց և այլն): Հնչյունական շղթայի
մեջ հանդիպադրվելով պայթական խուլի կամ շնչեղ խուլի՝ դ-ն
ձայնեղազրկվելով վերածվում է խուլ խ-ի: Այս կանոնը հաստատող
ամենաականառու օրինակները քաղաք, ծաղիկ, աղիք բառերն են,
որոնց մեջ դ-ն գտնվելով ձայնավորների միջև մնում է անփոփոխ:
Բայց թեք ձևերում վերջնականի ա և ի ձայնավորները սղվում
են և դ-ն հանդիպադրվելով ք-ին կամ կ-ին՝ վերածվում է խ-ի, ինչ-
պես՝ քաղաք-քախկի-քախկըցի, ծաղիկ-ծախկի-ծախկընի, աղիք-
ախկի-ախկընի: Ունենք նաև ծաղրկնի, աղբքնի հոգնակիի ձևերը,
որոնց մեջ դ-ն մնում է անփոփոխ, որովհետև նրանից հետո գալիս
է ձայնավոր հնչյուն:

§ 139. Զիղ>ջիւ, տիղմ>տիւ բառերը երեւի պահում են գրա-
բարյան ղ=լ արտասանութիւնը:

վ

§ 140. Բոլոր դիրքերում մնում է անփոփոխ, ինչպես՝
բառասկզբում՝ վանք>վանք, վառեակ>վառիկ, վար>վար,
վարդ>վարք, վերջ>վեռչ, վեց>վեց, վառեւ>վառիւ, վերայ
>վրայ և այլն:

բառամիջում՝ գովել>գովիլ՝գովալ, սովորել>սըվորիւ, սովո-
րոյթք>սըվորուտիւ:

բառավերջում՝ ժողով>ժոզով, ծով>ծով, սով>սով, կով>
կով, քարով>քարով, սարով>սարով, ուժով>ուժով, համով>հա-
մով և այլն:

§ 141. Մի քանի բառի մեջ վ-ն հնչում է որպես խուլ ֆ. այդ
բառերն են՝ նաւթ>նաֆթ, զաւթեւ>զաֆթիւ, հարաւ>հարաֆ (այս
երևույթը քննարկել ենք աւ երկրարբանի կապակցությամբ, տե՛ս
§ 52):

§ 142. Ձայնեղ շփականների մասին ասվածները կարող ենք ամփոփել հետևյալ ձևով. Լոռու խոսվածքում գ, ժ, դ, վ ձայնեղ շփականները սովորաբար բոլոր դիրքերում մնում են անփոփոխ: Միայն դ-ն խուլ և շնչեղ խուլ պաթականներից առաջ վերածվում է խ-ի: Զ, ժ, վ ձայնեղները ակնառու փոփոխություններ չեն կրում:

5. Խուլ շփականներ

Ս

§ 143. Բոլոր դիրքերում մնում է ս, ինչպես՝

բառասկզբում՝ սամի>սամի, սայլ>սէլ, սանդ>սանդ, սար>սար, սերմն>սէրմ, սեալ>սեվ, սիրել>սիրիլ, սոխ>սոխ, սուր սուր, սուրբ>սուրփ և այլն.

բառամիջում՝ ասել>ասիլ, ասեղն>ասէլ, աստառ>աստառ, լսել>լրսիլ, հասկ>հասկ, հաստ>հաստ, փեսայ>փէսա, քսան>քրսան, քսել>քրսիլ և այլն.

բառավերջում՝ ամիս>ամիս, այս>էս, ափսոս>ափսոս, դաս>դաս, երես>էրես, հարսն>հառսր, միս>միս, պակաս>պակաս, պէս>պէս, վնաս>վրնաս և այլն:

§ 144. Ս-ի փոփոխություն ունենք միայն հետևյալ բառերում. բառասկզբում ս-ն ընկել է սկեսուր>կյէսուր բառում: Սկեսուր բառը փոխարինվել է պատրոն բառով:

Ս-ն գ է դարձել խորիսխ>խորիգ, նարգէս>նարգյիգ բառերում:

Ս>ց (կրկնություն՝ ցց) փոփոխությունն ունենք յիսուն>հիցցուն||իցցուն բառում:

Ս-ի կրկնություն ունենք տասն>տասսր բառում:

Ս-ի անկում է նկատվում զմուռ>զրմուռ և տեսանել>տէնալ բառերում:

Բարբառային կրծկիծ և կրծկրծալ ձևերը ավելի հին երևույթ են ներկայացնում, քան գրաբարյան կսկիծ, կսկծալ ձևերը, որովհետև բարբառում կրկնավոր արմատը մնում է անփոփոխ, իսկ գրաբարը երևան է հանում ծ>ս հնչյունափոխությունը:

Շ

§ 145. Բոլոր դիրքերում մնում է շ.

բառասկզբում՝ շաբաթ>շափաթ, շապիկ>շափիֆ, շատ>շատ,

շարեւ>շարիւ, շարք>շարք, շերեփ>շէրէփ, շեկ>շեգ, շինեւ>շի-
նիւ, շնորհք>շնորք, շոր>շոր, շուն>շուն, շուրթն>շուոթ (թոնրի)
և այլն.

բառամիջում՝ աշխատանք>ըշխատանք, աշուն>աշունք, գի-
շեր>քըշէր, դաշտ>դաշտ, խարշեւ>խաշիւ, կաշի>կաշի, կոշտ
>կոշտ, մաշեւ>մաշիւ, պաշար>պաշար, պաշտեւ>պաշտիւ, տա-
շեւ>տաշիւ, փշերեւ>փքշերիւ և այլն.

բառավերջում՝ անոյշ>անոշ, էշ>էշ, թուշ>թուշ, ճաշ>ճաշ,
ուրիշ>ուրիշ, փուշ>փուշ:

Խ

§ 146. Բառասկզբի խ-ն սովորաբար մնում է անփոփոխ՝
ինչպես խաբեւ>խափիւ, խալ>խալ, խանձեւ>խանձիւ, խաշ>
խաշ, խառն>խառը, խարտոց>խառտոց, խեղդեւ>խէխտիւ, խմեւ
>խըմիւ, խնձոր>խընձոր, խոտ>խոտ, խորթ>խոռթ, խունկ
>խունգ և այլն, և այլն:

§ 147. Բառասկզբի խ-ն հ-ի է փոխվում խաղ>հաղ, խաղալ
>հաղալ՝հաղ աճիւ, խաղող>հաղող բառերում:

Լոռու խոսվածքում բառասկզբի խ-ն հ-ի է փոխվում միայն
բառասկզբի խաղ հնչյունակապակցության մեջ, իսկ Արարատյան
բարբառում բառասկզբի խ-ն ընդհանրապես հ է դառնում, եթե
հաջորդող բաղաձայնը ղ է, օրինակ՝ խաղ>հաղ, խեղդեւ>հէխտեւ,
խեղձ>հէխն, խեղճանալ>հեղճանալ: Լոռու խոսվածքում խեղդեւ,
խեղճ և այլ բառերի խ-ն մնում է անփոփոխ:

§ 148. Խ-ն բառամիջում և բառավերջում մնում է անփոփոխ,
ինչպես՝ ա) բախտ>բախտ, թաթախեւ>թըթախիւ, թխեւ>թըխիւ,
ծախեւ>ծախիւ, նեխեւ>նէխիւ, սխալ>սըխալ, տախտակ>տախ-
տակ, փախչիւ>փախչիւ և այլն.

բ) դոխն>դոխ, թարախ>թարախ, թուխ>թուխ, ուրախ>
ուրախ, վախ>վախ, ցախ>ջախ, քացախ>քացախ:

§ 149. Խ-ի ձայնեղացում է նկատվում միայն շաղախեւ>
շըղաղիւ բառում: Շաղախ>շաղախ ձևը մնում է անփոփոխ:

Ջախջախեւ>ջընջխիւ բառում խ-ն դարձեւ է ն:

Խորիսխ>խորիզ բառի վերջնաձայն խ-ն ընկեւ է:

Հ

§ 150. Բառասկզբում հ-ն մնում է անփոփոխ կամ դառ-
նում է ֆ:

Բառասկզբում հ-ն անփոփոխ է մնում, եթե նրան չի հաջորդում ու ձայնավորը: Ըստ այդմ՝ բառասկզբի հ-ն անփոփոխ է մնում բազմաթիվ բառերում, ինչպես՝ հազ>հազ, հալել>հալիլ, համ>համ, հայ>հայ, հայր>հէր, հանել>հանիլ, հասանիլ>հասնիլ, հաստ>հաստ, հարց>հառց, հաւ>հավ, հեշտ>հէշտ, հին>հին, հոնն>հունն, հրեշտակ>հրէշտակ, հրամայել>հրամայիլ և այլն, և այլն:

Բառասկզբի հ-ն ֆ-ի է փոխվում, եթե նրան հաջորդում է ո (բարբառային հնչմամբ ու): Ըստ այդմ՝ հ>ֆ փոփոխությունն ունենք հետևյալ բառերում. հոգի>ֆոֆի, հող>ֆող, հողել>ֆողիլ, հոտ>ֆոտ, հոտել>ֆոտիլ, հոտոտել>ֆոթֆոթալ, հոր>ֆոր, հորել>ֆորիլ, հորթ>ֆոթթ: Երբ գրաբարյան ո-ին հաջորդում է վ բաղաձայնը, ո-ն հնչում է որպես պարզ ձայնավոր օ (տե՛ս § 40) և հ>խ փոփոխությունը տեղի չի ունենում: Այդ կանոնին են ենթարկվում հով>հօվ և հովանալ>հօվանալ բառերը:

§ 151. Բառասկզբում նկատվում է նաև հ-ի անկում: Այսպես՝ հասկանալ>հրսկանալ, նաև՝ րսկանալ, հաւատալ>հրվատալ, հաւաքել>հրվաքիլ, բայց Սվերդլով (Ստեփանավան) գյուղում ունենք նաև վատալ, վաքիլ ձևերը (ընկել է բառասկզբի հը հնչյունախումբը), հաժար>հրմար||հրմա, բայց ունենք նաև մա ձևը (այստեղ ևս բառասկզբի հը հնչյունախումբը ընկել է), հիշատակ>հիշատակ, բայց նաև իշատակ (և այս ձևը ավելի գործածական է):

Սրանց հակառակ՝ բառասկզբում հը հնչյունախումբն է ավելացել ընդհանրապես բառում, հ է ավելացել եզրի>հէզի, ալևոր>հրլիվոր, ազանիլ>հաֆնիլ, ընկեր>հրնգէր, ընտրել>հրնդրիլ, արբենալ>հարփիլ բառերում:

Վերևում բերված բառերում հ-ի հափելումը ընդհանուր երեւյալութ է կոռու բոլոր գյուղերի համար:

§ 152. Կոռու մի շարք գյուղերում (Նոյեմբերյանի Ղալաշա, Կոթի, Ալավերդու Շնող և այլն) ձայնավորով սկսվող մի շարք բառերի սկզբում ավելանում է ձայնեղ հ(հ') հազագր, ինչպես՝ աջ>հ'աջ, առաջ>հ'առաջ, արդար>հ'արքար, արթուն>հ'արքուն, արջ>հ'առջ, արջառ>հ'աշառ, ափ>հ'ափոտ, երեք>հ'իրեք, էգ>հ'էք, իմանալ>հ'իմանալ, իմաստուն>հ'իմաստուն, իրեար>հ'իրար, իւր>հ'իւր և այլն:

§ 153. Բառամիջի և բառավերջի հ-ն կարող է մնալ անփոփոխ, օրինակ՝ պահել>պրհիլ, ահ>ահ, բահ>բահ, շահ>շահ, տահան>(ը)ռէհան:

§ 154. Ր-ից հետո հ-ն սովորաբար ընկնում է, ինչպես՝ խո-
նարհ>խօնար, աշխարհ>աշխարհ(f), շնորհք>շնորհ: Հ-ի անկում
ունենք նաև պահք>պաս, քաղհան>ֆախան բառերում:

§ 155. Հ>խ փոփոխությունն է նկատվում օրհնել>օխնիլ,
օրհնանք>օխնանք բառերում (գործածական են նաև օրշնիլ, օրշ-
նանք ձևերը):

6. Ձայնորդներ

Լ

§ 156. Բոլոր դիրքերում լ-ն մնում է անփոփոխ, ինչպես՝
բառասկզբում՝ լակել>լրկիլ||լակիլ, լայն>լէն, լար>լար, լեա-
որն>լէո, լեզու>լիզու, լինդ>լինդ, լծել>լծիլ, լոյս>լիս, լոր
>լուր, լուծ>լուծ և այլն.

բառամիջում՝ բլիթ>բլիթթ, գլուխ>գրլուխ, դալար>դալար,
իլիկ>իլիկ, խելք>խելք, խել>խրիլ, ծիլ>ծրիլ, ալևոր>հրլի-
վոր և այլն.

բառավերջում՝ գայլ>գյէլ, սայլ>սէլ, այլ>էլ, թել>թել, ուլ
>ուլ, տալ>տալ, ինչպես և բոլոր անորոշ ու վաղակատար դերբայ-
ները, օրինակ՝ աղալ>աղալ, ազատել>ըգատիլ, բերել>բէրիլ, գո-
ղանալ>գողանալ, զրկել>զրգիլ, սիրեալ>սիրէլ, աղացեալ>աղա-
ցէլ, գրեալ>գրէլ, ազատեալ>ազատէլ և այլն:

§ 157. Կոռնկ>կրոնուց բառի մեջ ո-ից հետո ավելացել է լ
հնչյունը:

Մ

§ 158. Բոլոր դիրքերում էլ մ-ն մնում է անփոփոխ, ինչպես՝
բառասկզբում՝ մազ>մազ, մաղ>մաղ, մաշել>մաշիլ, մարագ
>մարաք, մեծ>մեծն, մեք>մեքն, մնալ>մընալ, մոմ>մոմ, մուկն
>մուկը, մորուք>միւրուք և այլն.

բառամիջում՝ աման>աման, ամանչել>ըմանչիլ, ամիս>ա-
միս, ամպ>ամբ, բամբակ>բամբակ, գոմեշ>գօմէշ, թմրիլ>դրմ-
բրիլ, մարմանդ>մարմանդ, պատմել>պատմիլ և այլն.

բառավերջում՝ դէմ>դէմ, ժամ>ժամ, ծամ>ծամ, հում>հում,
իմ>իմ, համ>համ, ապրշում>աբրշում, բարեկամ>բարեկամ,
ղղում>ղրթըմ և այլն:

§ 159. Մի շարք տեղերում մ-ն վ է դարձել մեծ>վեծն բառի
մեջ:

§ 160. Բառասկզբի յ-ն ընկնում է կամ վերածվում է հ-ի, ինչպես՝ յաղթել>ախտիլ, յաջող>աչող||հաչող, աջողիլ>աչողիլ (ալ)||հաչողիլ(ալ), յաջողումն>(բար)աչողըմ, յիշատակ>իշատակ||հիշատակ, յիսուն>իցցուն||հիցցուն, յօնք>ունք: Յօժար>հօժար, յամար>համար, յոյս>հույս բառերը գրական փոխառություններ են:

Բառամիջում յ-ն հ է դարձել խնայել>խրնահիլ բառում:

§ 161. Յետ>յեդ և յետևիլ>յեդեվալ բառերի մեջ նախահընչյուն յ-ն մնացել է անփոփոխ:

§ 162. Ա և ռ ձայնավորների հետ յ-ն գրաբարում կազմում էր այ, ոյ իջնող երկբարբառները, որոնց փոփոխությունների մասին տե՛ս § 47—51, 70—71:

§ 163. Ինչպես հայտնի է, արդի հայերենում կից ձայնավորների միջև սովորաբար լսվում է յ կիսաձայնը, որը գրվում է, սակայն, միայն ա և ռ ձայնավորներից հետո: Գրական լեզվում, օրինակ, արտասանում ենք՝ բաժանեյի, բաժանեյիւ, բաժանեյիւք, բաժանեյիք, բաժանեյին:

Եի>եյի արտասանությունը գրական հայերենի համար օրինաչափական է: Լոռու խոսվածքի արտասանությունն այս դեպքում տարբեր է: Եի հնչյունախումբը արտասանվում է հենց էի (և ոչ թե՛ էյի), օրինակ՝ բրժանէի, բրժանէիւ, բրժանէիւք, բրժանէիք, գոռձէի, գոռձէիւ, գոռձէիւք, գոռձէիք և այլն:

Ն

§ 164. Ն-ն սովորաբար բոլոր դիրքերում մնում է անփոփոխ, ինչպես՝

բառասկզբում՝ նամակ>նամակ, նաւ>նավ, նեղ>նեղ, ներել>նէրիլ, ներկ>նէրկ, նկար>նրկար, նշան>նրշան, նոր>նուր, նրստել>նրստիլ և այլն.

բառամիջում՝ անէծք>անիծկ, բանալի>բըլանիք, գանգատ>գանգատ, գողանալ>գողանալ, գունդ>գունդ, ընկեր>ընրկէր, խառնել>խառնիլ, հանգչիլ>հանգչիլ, շինել>շինիլ և այլն.

բառավերջում՝ աման>աման, այն>էն, քուն>քուն, արին>արին, բան>բան, բերան>բերան, գութան>գութան, կացին>կացին, հին>հին, շուն>շուն, տուն>տուն և այլն:

§ 165. Ինչպես հայտնի է, գրաբարյան ն վերջահնչյունը գրական լեզուներում և հայերենի բարբառների բացարձակ մեծամասնության մեջ ընկել է (եզն>եզ, մուկն>մուկ, գառն>գառ և այլն):

լոռին այն հազվագյուտ շրջաններից մեկն է, որտեղ գրաբարյան և վերջնահնչյունը հանդես է գալիս, բայց փոփոխված՝ և ձևով:

Ն>ը փոփոխությունը երևան հանող բառերը մոտավորապես հետևյալներն են. ակն>ակը (աղբյուրի), բեռն>բեռը, բուռն>բուռը, գառն>գառը, դաղձն>դախցը, դուռն>դուռը, եզն>յէզը, եղունգն>ըղունգը||դունգը (Դեբեդ), եօթն>օխտը, թոռն>թոռը, խառըն>խառը, խուսին>խուսիք, կաթն>կաթը, կամն>կամը, հախսն>հառսը, հիմն>հիմք, ձեռն>ձեռք, ձուկն>ձուկը, մատն>մատը, մուկն>մուկը, նուռն>նուռը, շուրթն>շուրթը (թոնրի), ոսպն>վոսպը, ոտն>վոտը, սերմն>սերմը, փուռն>փուռը, տասն>տասը, խուրձն>խուռցը, մութն>մութը:

§ 166. Սակավաթիվ դեպքերում գրաբարյան և վերջնահնչյունը ուղղակի ընկնում է: Ն վերջնահնչյունի անկում է նկատվում հետևյալ բառերում. ամառն>ամառ, ասեղն>ասէլ, առամն>առամ, ձմեռն>ձրմէլ, մասն>մաս (սա երևի գրական փոխառություն է), որդն>վոռք:

Ումն ածանցի ն-ն կա ընկնում, ինչպես ցույց են տալիս երդումն>օրթըմ, յաջողումն>աչօղըմ բառերը:

§ 167. Չափազանց հետաքրքրական է, որ գառն>գառը, դուռն>դուռը, եզն>յէզը, թոռն>թոռը և այլ բառերի նմանակությունամբ մի շարք բառերի վերջում ավելացել է և հնչյունը: Այսպեսի բառեր են՝ աստղ>աստղը, անէծք>անիծկը, անպէտք>անպէտկը, աչք>անկը||աշկը, բողկ>բոխկը, թամբ||թամբք>թամբը, թուխ>բուրք, թուղս>թուխսը, խօսք>խօսկը, ծառ>ծառը, ծերտ>ծէտը, ծոպ>ծուպկը||ծուպը, կազմ>կազմը, հրաշք>հրաշկը, միղք>նուխկը, մեղք>մէխկը, շարժք>ժաշկը, շող(ք)>շոխկը, միտք>միտկը, ուրց>ուրցը, պէտք>պէտկը, վարձք>վարցկը, սինձ>սինձը:

Ընդհանրապես նկատելի է, որ գրաբարյան ք-ով վերջավորվող համարյա բոլոր անեզականները՝ անէծք, աչք, խօսք, հրաշք, մեղք և այլն, վերջում և են ստանում, ինչպես՝ անիծկը, անկը||աշկը, խօսկը, հրաշկը, մեխկը և այլն: Հավանաբար գրական լեզվի ազդեցությամբ գործածվում են նաև առանց ք-ի ձևերը:

§ 168. Ն ձայնորդի մյուս փոփոխությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերում:

ա) Բ, մ շրթնային բաղաձայններից առաջ ն-ն սովորաբար դառնում է մ, օրինակ՝ անմեղ>ամմեղ, անմայր>ամմէր, ան-

բախտ>ամբախտ և այլն: Ն>մ փոփոխություն ունենք նաև ա-
նուն>անքմ բառում (տարնմանում):

բ) Ն հնչյունն ավելացել է մեք>մեեմ, ոչ>վոնչ (կա նաև վոչ
ձևը), աեւորդ>ավէլնորք||էվէլնորք բառերում: Այսքան>լսման,
այգքան>ըգման, այնքան>ընման բառերը հնչում են նաև՝ լսմամ,
լգմամ, քնմամ (ունենք նաև՝ ընչքան||ընչքամ):

գ) Ն հնչյունի տեղափոխություն ունենք աղանջ>անգան||ան-
չակ, արմուկն>արմունգ, կրուկն>կրունգ, թիկն տալ>թիւնգը
տալ, նիգ>լիւնգ բառերում (լ-ն ավելացել է):

ե) Նապաստակ բառն ունի ալապրստրակ (Գյառգյառ, Գյու-
լադարակ և այլն), պօստի (Ագարակ, Լեջան), պօգտրակ (Կոթի),
լլալրստրակ||ալապօստի (Գեղեղ) և այլ ձևերը: Բոլոր դեպքերում
էլ նախաձայն ճ-ն ընկած է:

Ռ

§ 169. Ռ-ն բոլոր դիրքերում սովորաբար մնում է անփոփոխ,
ինչպես՝

բառասկզբում՝ ռեհան>(ր)ռէհան, ռոճիկ>(ր)ռոճիկ, ռուս>
(ր)ռուս.

բառամիջում՝ առակ>առակ, առաւոտ>ըռավող, առնուլ>առ-
նիլ, բռնել>բըռնիլ, գռռալ>գըռալ, խառնել>խառնիլ, կռիւ>
կըռիվ, կռունկ>կըռունգ, մեռանիլ>մեռնիլ, ուռչիլ>ուռչիլ, քե-
ռի>քչէռի և այլն.

բառավերջում՝ աստառ>աստառ, եռ>յէռ, թառ>թառ, լեռն>
լէռ, վառ>վառ, ծուռ>ծուռ, ամառն>ամառ, ձմեռն>ձրմէռ և
այլն:

§ 170. Առնել>անիլ բառի ո-ն ընկել է (հակառակ դեպքում
այդ բայը կնույնանար առնուլ>առնիլ բայի հետ), իսկ վարդաառ
բառը դարձել է վառքէվոր:

Ր

§ 171. Գրաբարյան բառասկզբի ր-ով սկսվող բառերից պահ-
պանվել է միայն ռապէ բառը, որ խոսվածքում ունի հրօսպպէ ձևը:
Գրականի ազդեցությամբ գործածվում է նաև րօպպէ ձևը: Բառա-
սկզբի հնչյունների անկմամբ խոսվածքում առաջացել են ր-ով
սկսվող բառեր, ինչպես՝ արածել>ըրածիլ||րածիլ, երեկոյ>ըրիգու
րիգու, երևիլ>ըրէվալ||րէվալ, օրօրել>ըրօրիլ||րօրիլ, օրօրօց>
ըրօրօց||րօրօց:

§ 172. Բառամիջում ր-ն մնում է անփոփոխ կամ դառնում է ո:

§ 173. Բառամիջի ր-ն անփոփոխ է մնում խոսվածքի բառերի մեծամասնությունում. ինչպես՝ աղբիւր>ախալուր, այրել>էրիլ, աշխարհ>աշխարհ, արիւն>արին, արծաթ>էրծաթ, արօտ>աւոտ, աւերել>ավէրիլ, բարի>բարի, բերան>բէրան, բերել>բէրիլ, գարի>գարի, գարուն>գարունի, դարբին>դարփին, երազ>էրազ, երդումն>օրթում, երես>էրէս, երեք>իրեք, երինջ>էրինջ, երկաթ>էրկաթ, երկանք>էրկանք, երկու>էրկու, զրոյց>զրից, ընտրել>ընդորիլ, թոնիր>թօրօն, խրատ>խրատ, ծարաւ>ծաւալ, կարագ>կարաք, կարկատան>կրկատան, կոտրել>կատրիլ, կորեակ>կօրէկ, կտրել>կրտրիլ, կրակ>կրակ, հարիւր>հարիր, հերու>հէրու, համբերել>համփէրիլ, ճրագ>ճրաք, մօրուք>միրում, շերեփ>շէրէփ, որք>վօրփ, ուրագ>ուրաք, ուրբաթ>ուրփաթ, ուրիշ>ուրիշ, սերմն>սէրմք, սիրել>սիրիլ, սրբել>սրբփիլ, սրել>սրիլ, վարել>վարիլ, վարձք>վարցկը, տարի>տարի, տորրել>տըրորիլ, ցորեան>ցօրէն, փրփուր>փրփուր, բերել>բյէրիլ, օրօրոց>ըրօրօց և այլն:

§ 174. Բառամիջի ր-ն մի շարք բառերի մեջ դառնում է ո:

Բառամիջի ր>ո փոփոխությունն ունենք մոտավորապես հետևյալ բառերում. աշակերտ>աշկյէտք||աշակյէտք, արդար>առքար, արթուն>գառթուն, արժանի>առժանի, արծիւ>առծիվ, արձակ>առցակ, արճիճ>առնիճ, արշ>առշ, արտ>առտ, արտասուք>առտասունք, բարձ>բառց, բերդ>բէռք, բրդել>փռոթիլ||բռոթիլ, բրդոտ>բրոթոտ, գարշելի>գառշէլի, գործ>գոռձ, գործել>գոռձիլ, գորտ>գոռդ, դատարկ>դառդակ, դատարկել>դրոդակիլ, երանի>էռնակ, երեսուն>յէռէսուն, զարդարել>զրոթարիլ, թրթուր>թրոթուտ, թրչել>թռչիլ, լեարդ>լէռք, կարճ>կառն, կործել>կոռձ անիլ, կորչիլ>կոռչիլ, կրծել>կրոծիլ, հարսանիք>հրոսանիք, հարսն>հառսք, հարց>հառց, հարցնել>հառցընիլ, ճարտար>ճառտար, մարդ>մառք, մարմար>մառմառ, մկրտել>մըկրտաիլ, մորթել>մոռթիլ, մրսիլ>մըռսիլ, ներս>նէռս, շերտ>շէռտ, շուրթն>շուտք, որդի>վոռքի, որդն>վոռք, որդնել>վոռքնիլ, հորթ>ֆոռք, որձկալ>վոռցկալ, որձ>վոռց, ուրց>ուռց, չորք>չոռս, պարտք>պառտք, պարտական>պառտական, ջարդել>ջառթիլ, ջրտուն>ցրոթուն, սարսուռ>սըռսըռալ, սիրտ>սիրտ, վարդ>վառք, վարդապետ>վառքապէտ, վարդաւառ>վառքէվօռ, վարձակտ>վառձապէտ, վերջ>վէռշ, ցուրտ>ցուտ, ցրտել>ցուտիլ.

փորձ>փողց, փորձել>փողցիլ, քարճիկ>ֆառչիֆ, քերթել>ֆյէնթիլ, քրտինք>ֆրոդիմֆ, քրտնել>ֆրոդընիլ:

§ 175. Քննելով այն բոլոր բառերը, որոնց մեջ *ր*-ն վերածվում է *ռ*-ի կամ մնում է անփոփոխ՝ կարելի է սահմանել հետևյալ ընդհանուր կանոնը. Լոռու խոսվածքում *թ*, *ծ*, *ց*, *չ*, *շ*, *ժ*, *տ*, *դ*, *ն*, *ս*, *ն* բաղաձայններից առաջ *ր*-ն դառնում է *ռ*, իսկ մյուս բաղաձայններից առաջ մնում է անփոփոխ:

Այս կանոնից բացառություն են կազմում միայն մարմար>մաւմառ, երեսուն>յէնէսուն և խանգարել>խանգյառիլ բառերը, որոնց մեջ *մ*, է և ի հնչյուններից առաջ *ր*-ն դառնում է *ռ*: Առաջին բառը կրկնավոր բարդություն է, իսկ կրկնավոր բարդություններում միշտ ունենում ենք *ռ* և ոչ թե *ր*: Այնպես որ բուն բացառություններ են միայն *յէնէսուն* և *խանգյառիլ* բառերը:

Այսպես, ուրեմն՝ վերևում նշված բաղաձայններից առաջ, որպես կանոն, ունենում ենք ոչ թե *ր*, այլ *ռ*: Այս տեսակետից հետաքրքրական են հետևյալ օրինակները. արիւն, ուրիշ, բերան, ցորեան, թոնիր բառերին համապատասխան բարբառային ձևերն են՝ արիւն, ուրիշ, բէրան, ցորէն, թօրօն, որոնց մեջ *ր*-ն անփոփոխ է մնում, որովհետև գտնվում է ձայնավորներից առաջ:

Բայց այս բառերի աճման դեպքում վերջնական կի ձայնավորները սղվում են, և *ր*-ն հանդիպադրվելով ն-ին կամ շ-ին՝ վերածվում է *ռ*-ի ինչպես՝ արին—առնի—առնաթաթախ—առնալրվա (բայց՝ արինթաթախ, արինլրվա), ուրիշ—ուշի, բէրան—բէռնի (բայց՝ բէրաննի), ցորէն—ցռոնի, թօրօն—թոռնի (բայց՝ թօրօննի):

§ 176. Կան մի քանի բառեր, որոնք կրկնակ արտասանություն ունեն՝ *ռ*-ով և *ր*-ով: Այդ բառերն են՝ ապրշում>աբրշում||աբրշում, լիրբ>լիոփ||լիրփ, լրբանալ>լրոփանալ||լրփանալ:

§ 177. Բառավերջի *ր*-ն սովորաբար մնում է անփոփոխ, ինչպես՝ ամբար>ամբար, այսօր>բսօր, աներ>անէր, արդար>առթար, բուսնջար>բանջար, դավար>գյազար, գզիր>գրգիր, գիշեր>քշէր, դիր>գիր, դադար>դաթար, դժուար>դրժար, դիր>դիր (գալ), եղբայր>ախպէր, ընկեր>ընգյէր, թուր>թուր, լար>լար, լոր>լոր, խմոր>խրմոր, խնձոր>խնձոր և այլն:

§ 178. Սակավաթիվ դեպքերում բառավերջի *ր*-ն դառնում է *ռ*: Բառավերջում *ր*>*ռ* փոփոխությունն ունենք միայն հետևյալ բառերում. թըրթուր>թըռթուռ, մարմար>մառմառ (կրկնավոր բարդություններ), խոր>խոռ||խոռ, ոսկր>օսկոռ||օցկոռ: Դրանցից

բուն բացառություն կարելի է համարել միայն վերջին երկու բաները:

§ 179. Մի քանի բառերում *ր* հնչյունն ընկել է. այդ բառերն են. արջառ>աչառ, արժեկ>աժէկ, բարձր>բացր||բացր (նաև՝ բառցր), բարձրանալ>բըցրանալ, դուրս>դուս (բայց այս բառը ալիկի գործածական է դուռը ձևով, օրինակ՝ դուռը գնաց), խարշել>խաշիլ, կերթամ>կյէթամ, համար>հըմա||մա (նաև՝ հըմար), հօրաբոյր>հօֆյիւր, ճանապարհ>ճամփա, ներս>նի (նաև՝ նէոս), ջրաղաց>ջաղաց, օրհնել>օխնիլ, օրհնանք>օխնանք (թիւ գործածություն ունեն օրհնիլ, օրհնանք ձևերը), փութար>փութա, քարշել>ֆաշիլ, երբ>յէփ, շարժք>ժաշկ: Բ-ի անկում ունենք նաև հրամայականի ձևերում, օրինակ՝ բեր>բիր||բի, տուր>տուր||տու, կեր>կյիր||կյի:

Այս բառերին հակառակ՝ հրեշտակ>հըրէշտակ||հըրիշտակ, ցած>ցածր||ցածր բառերում *ր* է ալիւացել:

§ 180. Բլուր>բըլու բառը երևան է հանում *ր*>լ փոփոխությունը (առնմանում):

7. Անկում

§ 181. Անկում ասելով հասկանում ենք բաղաձայնների անկանոն կորստի երևույթները, որոնց մասին խոսվել է «Բաղաձայնների փոփոխությունները» գլխում: Ի մի բերելով դրանք և ալիւացնելով շնչված օրինակները, ստանում ենք հետևյալ պատկերը: Դեպքերը դասավորում ենք ըստ ընկած բաղաձայնի:

Բ—արժան>էժան, արջառ>աչառ, բաղաղ>բաղան, բարձր>բացր||բացր, բարձրանալ>բըցրանալ, դուրս>դուս, երբ>յէփ, կերթամ>կյէթամ, խարշել>խաշիլ, համար>հըմա||մա, հօրաբոյր>հօֆյիւր, ճանապարհ>ճամփա, ներս>նէոս, բայց նաև նի, շարժք>ժաշկ, տարգալ>գըղալ||ֆըթալ, փութար>փութա, ջրաղաց>ջաղաց, օրհնել>օխնիլ, օրհնանք>օխնանք. հրամայականի ձևեր՝ բեր>բի||բիւր, տուր>տու||տուր, կեր>կյի||կյիր:

Յ—յաղթել>ախտիլ, յաջող>աչօղ, յաջողիլ>աչօղալ, յիշատակ>իշատակ, յիսուն>իցցուն, յօնք>ոնք:

Հ—խոնարհ>խօնար, աշխարհ>աշխար(ֆ), շնորհք>շնօրք, պահք>պաս, քաղհան>ֆախան, հասկանալ>հըսկանալ, նաև՝ ըսկանալ, հաւատալ>հըվատալ, նաև՝ վատալ, հաւաքել>հըվաֆիլ, նաև վաֆիլ (վատալ, վաֆիլ ձևերի հանդիպում ենք Ստեփանավանի շրջանի Սվերդլով գյուղում), համար>հըմա, բայց նաև՝ մա:

Ղ—այստեղ>ըստի, այդտեղ>ըտի, այնտեղ>ընդի:
 Խ—խորիսխ>խորիզ:
 Ռ—առնել>անիլ:
 Վ—վիշապ>ուշաք:
 Ս—տեսանել>տեսալ:
 Ք—ճեղքել>ճրղիլ:
 Ք—թամբք>թամբ:
 Կն—կնքաւոր>քավոր:

8. Հավելում

§ 182. Մի շարք բառերի վերջում անեզական բառերի նմանակությամբ ավելացել է ք (հնչյունափոխությամբ՝ կ) հնչյունը, ինչպես՝ աշխարհ>աշխարհ, աշուն>աշունք, բանալի>բրլանիք, գարուն>գարունք, թամբ>թամք, ծոպ>ծուպկ, կշիռ>քշէոք, կող>կողք, ճիւղ>ճուխկը, մատանի>մըտանիք, նշխար>նըշխարք, շող>շոխկ, պատկեր>պատկէրք, տեսիլ>տեսիլք:

§ 183. Մի քանի բառերի մեջ ավելացել է ն հնչյունը, ինչպես՝ արտասուք>առտասունք, աւելորդ>ավէլնորք, դու>դու, նաև՝ դուն, կամուրջ>կարմունք, կանաչ>կանանք, մեծ>մենծ, մեք>մենք, ոչ>վոնչ, տիրոջ>տիրոնչ, քիթ>քյինք:

§ 184. Մի քանի բառերի վերջում ավելացել է (ի)կ մասնիկը, ինչպես՝ աղանի>աղունիկ, լեզուանի>լեզվանիկ, կին>կրնիկ, կոկ>կոկիլիկ, մոտ>մողիկ, սան>սանիկ:

§ 185. Նշելի են նաև հետևյալ հնչյունների հավելման դեպքերը:

Դ—մանր>մանդրր||մանդրը, սանր>սանդրր||սանդրը, ծունր>ծունդրր||ծունդը, ծանր>ծանդրր||ծանդը:

Բ—թմրիլ>դըմբրիլ, համարք>համբարք, համարել>հըմբարիլ:

Հ—ալևոր>հըրիվոր, արբենալ>հարփիլ, եղի>հէղի, ըոպէ>քըրօպէ, ագանիլ>հաֆնիլ, ընկեր>հընգյէր, ընտրել>հընդրիլ:

Շ—աչ>հ'աչ, արդար>հ'արթար, երեք>հ'իրէֆ, իմանալ>հ'իմանալ և այլն:

Ր—ցած>ցածր||ցածը, հրեշտակ>հըրէշտակ||հըրիշտակ:

Լ—կոունկ>կըպունգ, նիգ>լինգ:

Մ—հպարտ>հըմբարտ, հպարտանալ>հըմբարտանալ:

Զ—արթուն>գառուն:

9. Դրափոխություն

§ 186. Ն բաղաձայնը տեղափոխվել է հետևյալ բառերում.
ականջ>անգան||անջակ (վերջին ձևում տեղափոխվել է նաև
ջ-ն), արմուկն>արմունգ, զոքանչ>զանգաչ, թիկունք>թինգուֆ,
թիկն տալ>թինգը տալ, թոնիր>թօրօն, կրուկն>կրրունգ, աղա-
լանք>ղանջաֆ:

§ 187. Ր բաղաձայնը տեղափոխվել է հետևյալ բառերում.
դատարկ>դառղակ(գ), դատարկել>ղըռղագիլ, կամուրջ>կար-
մունջ, կապերտ>կարպէտ:

§ 188. Մյուս բաղաձայնների տեղափոխության համար ու-
նենք հետևյալ օրինակները.

խ/ս—խստոր>սըխտոր.

ձ/գ—ձգել>գըձիլ||ֆըցիլ.

վ/ղ—նուաղիլ>նըղավիլ.

չ/խ—ոչխար>վոխշար.

տ/գ—տարգալ>գըղալ||ֆըթալ.

փ/տ—փետրել>թէթոիլ(փէտոիլ):

10. Կրկնություն

§ 189. Ընդհանրապես բաղաձայնների կրկնության երևույթը
լոռու խոսվածքին հատուկ չէ: Բացառություն են կազմում միայն
մի քանի բառեր, որոնց մեջ որոշ բաղաձայններ կրկնվում են, ինչ-
պես՝ տասն>տասսը, յիսուն>իցցուն, վաթսուն>վացցուն, վա-
զել>վազգիլ, ըոպէ>նըրօպպէ:

11. Խիստ ձևափոխված բառեր

§ 190. Լոռու խոսվածքում կան որոշ բառեր, որոնց մեջ միա-
ժամանակ գործել են հնչյունափոխական տարբեր օրինաչափու-
թյուններ (անկում, հավելում, դրափոխություն, առնմանում,
տարնմանում և այլն), և այսպիսով բառերը դարձել են համարյա
անճանաչելի: Այսպիսի խիստ ձևափոխության ենթարկված բա-
ռերից են.

ոզնի>կունձի, կունձինա, կունձընա, կունձնէն.

որբևայրի>վորֆէրի, վորփէրի, վրոֆէրի.

բորբոսիլ>բըբօրցնիլ (ունենք նաև բօբօրցնիլ).

նապաստակ>պօստի (ունենք նաև ալապրստրակ) .

յօրանջել>արբշտոտալ (ունենք նաև արբշկոտալ) .

մրջին (մրջիմն)>մօրմօնջ .

փետրել>թէրոիլ (կա նաև փէտոիլ ձևը) :

Մինչև բառի համար ունենք մինչի, մրնչեվ, մրնչի, շրվէլ, շր-
Վէլ, բշկէլ, բշկէլ, մրնչվանց ձևերը :

12. Եզրակացություն

§ 191. Լոռու խոսվածքի հնչյունների կրած ամենաէական
փոփոխությունները կարելի է ամփոփել հետևյալ ձևով :

Լոռու խոսվածքում եռավանկ բառերի նախաշեշտ ա ձայնա-
վորը հնչյունափոխվում է ւ-ի (օրինակ՝ բաժանել>բրժանել) :

Բառասկզբի ե-ն միավանկ բառերում դառնում է յէ (օրինակ՝
եզն>յէզը), իսկ բազմավանկ բառերում՝ է (օրինակ՝ երազ>
էրազ) :

Լոռու խոսվածքում կա երկու է, մեկը սովորական՝ գրական
հայերենի պարզ է ձայնավորը, իսկ մյուսը երկբարբառակերպ ե
(իէ) : Գրաբարյան բառամիջի ե ձայնավորը սովորաբար դառնում
է երկբարբառակերպ ե (օրինակ՝ մեծ>մեհն), բայց մի շարք բա-
ռերի մեջ չի երկբարբառայնանում, այլ մնում է պարզ է ձայնավոր
(օրինակ՝ աներ>անէր) :

է ձայնավորը սովորաբար մնում է անփոփոխ :

Ի ձայնավորը որպես կանոն մնում է անփոփոխ :

Ու ձայնավորը սովորաբար մնում է անփոփոխ :

Ո ձայնավորը բառասկզբում սովորաբար դառնում է վո (վոս),
օրինակ՝ որը>վորփ, որդի>վոռքի : Բառամիջի ո-ն սովորաբար
դառնում է ո (ոս), օրինակ՝ բոց>բոց, դողալ>դոդալ, սակայն
որոշ բառերում մնում է պարզ ձայնավոր օ (օրինակ՝ թողուլ>
թօղալ, թոնիր>թօրօն) :

Ը ձայնավորը որպես կանոն մնում է անփոփոխ :

Գրաբարյան երկբարբառները վերածվում են պարզ ձայնավոր-
ների կամ ձայնավոր+բաղաձայն խմբերի :

Այ երկբարբառը բաղաձայնից առաջ դառնում է է (օրինակ՝
այծ>էծ, լայն >լէն), իսկ ձայնավորից առաջ՝ ալ (օր. հայելի>հալյ-
լի) : Բազմավանկ բառերի վերջում ալ-ը, կորցնելով յ բաղադրի-
չը, դառնում է ա (օրինակ՝ սատանայ>սրտանա) : Միավանկ բա-
ռերի վերջում յ-ն պահպանվում է (հայ>հայ) :

Աւ երկբարբառը բաղաձայնից առաջ դառնում է օ (օրինակ՝

աւձ>օց, ամաւթ>ամօթ), իսկ ձայնավորից առաջ և բառավերջում՝
աւլ (օրինակ՝ աւազ>աւլազ, ձաւար>ձաւար, կաքաւ>կաքաւլ):

Եւ երկբարբառը սովորաբար դառնում է է կամ ե (օրինակ՝
լեարդ>լէռք կամ լեռք):

Եւ երկբարբառը դառնում է էվ կամ եվ (դեւ>դէվ կամ դեվ):

Իւ երկբարբառը բառամիջում սովորաբար դառնում է ի (օրինակ՝
ալիւր>ալիր), իսկ բառավերջում՝ իվ (օրինակ՝ արծիւ>արծիվ):

Ոյ երկբարբառը դառնում է ի (օրինակ՝ լոյս>լիս):

Ուա երկբարբառը դառնում է վա (օրինակ՝ լուանալ>լրվա-
նալ):

Լոռու խոսվածքի պայթական բաղաձայնների համակարգը
եռաստիճան անտեղաշարժ է, այսինքն՝ բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները
պ, կ, տ, ծ, ճ խուլերը (նաև փ, ք, թ, ց, չ շնչեղ խուլերը) բառ-
սկզբին մնում են անփոփոխ (օրինակ՝ բան>բան, գող>գող,
դադն>դախցը, ձոր>ձոր, ջուր>ջուր, պատ>պատ, կով>կով,
տախտակ>տախտակ, ծառ>ծառ, ճիպոտ>ճիպոտ, փայտ>փետ,
քամի>քամի, թել>թել, ցուրտ>ցուտ, չոր>չոր):

Բառամիջի և բառավերջի պայթական ձայնեղները ն և մ որն-
գային ձայնորդներից հետո մնում են անփոփոխ (բամբակ>բամ-
բակ, եղունգ>ղունգ, գունդ>գունդ, անձրեւ>անձրեւ, երինջ>
էրինջ), այլ դիրքերում սովորաբար վերածվում են շնչեղ խուլերի,
իսկ առանձին դեպքերում՝ պարզ խուլերի (օրինակ՝ սուրբ>սուրփ,
աղբիւր>ախպուր, էգ>էփ, բուրդ>բուոթ, բարձ>բառց, աղջիկ>
ախշիկ, արջ>առչ):

Բառամիջի և բառավերջի պայթական խուլերը (պ, կ, տ, ծ, ճ)
սովորաբար մնում են անփոփոխ (օրինակ՝ կապիկ>կապիկ, կապ
>կապ, ալօս>ալոս, բարակ>բարակ, ատամն>ատամ, արտ
>առտ, ածել>ածիլ, այծ>էծ, կոճակ>կոճակ, կարճ>կառն),
բայց առանձին դեպքերում (ոնգայիններից հետո անպայման) կա-
րող են վերածվել ձայնեղների (օրինակ՝ ամպ>ամփ, շապիկ>շա-
փիփ, երեկոյ>րիգու, երեկ>էրէգ, գետին>գլէդին, գորտ>գոռդ,
գործել>գոռծիլ, լուծ>լուծ, ճենճ>ճէնջ):

Շնչեղ խուլ պայթականները (փ, ք, թ, ց, չ) սովորաբար բո-
լոր դիրքերում մնում են անփոփոխ: Առանձին դեպքերում դրանք,
կորցնելով շնչեղութունը, կարող են վերածվել պարզ խուլերի
(օրինակ՝ թուղթ>թուխտ, խօսք>խօսկ):

Փ, կ, ֆ ետնալեզվային պայթականները է և ի առաջնալեզ-
վային ձայնավորներից առաջ քմայնանալով՝ վերածվում են գյ, կյ,

բյ միջնալեզվայինների (օրինակ՝ գինի>գլինի, կիր>կյիր, քենի>ֆյէնի):

Ձայնեղ շփականները (զ, ժ, ղ, վ) սովորաբար բոլոր դիրքերում էլ մնում են անփոփոխ. միայն ղ-ն խուլ և շնչեղ խուլ պայթականներից առաջ դառնում է խ (օրինակ՝ բողկ>բոխկ):

Խուլ շփականները (ս, շ, խ, ֆ, հ) սովորաբար բոլոր դիրքերում էլ մնում են անփոփոխ. միայն բառասկզբի հ-ն ո-ից առաջ դառնում է ֆ (օրինակ՝ հոտ>ֆոտ). նկատվում է նաև հ-ի անկում (օրինակ՝ հասկանալ>հրսկանալ, նաև՝ րսկանալ, շնորհ>շնորֆ, խոնարհ>խօնար):

Լ, մ, ռ ձայնորդները էական փոփոխություններ չեն կրում:

Յ, ն, ր ձայնորդները որոշ փոփոխություններ են ենթարկվում:

Բառասկզբի յ-ն սովորաբար ընկնում է կամ վերածվում է հ-ի (օրինակ՝ յաջող>աչող||հաչող):

Գրաբարյան և վերջնահնչույնը դառնում է ը (օրինակ՝ եղն>յէղր):

Բ-ն ք, ծ, ց, չ, շ, ժ, դ, ն, ս, և, բաղաձայններից առաջ դառնում է ո, իսկ մյուս բաղաձայններից կամ ձայնավորներից առաջ մնում է անփոփոխ (օրինակ՝ արջ>առչ, արտ>առտ, բայց՝ դարման>դարման, երես>էրէս):

Չ Ե Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ՀՈԳՆԱԿԻԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 192. Լոռու խոսվածքում գոյականների հոգնակի թիվը կազմավորում է էր||եր, նի, ան, ֆ, էնի, ֆյէր մասնիկներով:

§ 193. Միավանկ բառերի հոգնակին, որպես կանոն, կազմավորում է էր||եր մասնիկով, ինչպես.

արջ> առչ—առչէր եր	խոտ>խոտ—խոտէր եր
արտ> առտ—առտէր եր	ծեփ>ծեփ—ծէփէր եր
բահ>բահ—բահէր եր	ծով>ծով—ծովէր եր
բերդ>բերթ—բերթէր եր	կար>կար—կարէր եր
գիւղ>գյէղ—գյէղէր եր	կով>կով—կովէր եր

§ 194. Մի շարք բառերում հին հայերենի (գրաբարի) և վերջնահնչյունը հնչյունափոխվել է ր-ի, բայց հոգնակիի կազմության մեջ կարող է վերականգնվել, ինչպես.

ակն (չրի)>ակը—ակնէր	թոռն>թոռը—թոռնէր
բեռն>բեռը—բեռնէր	ծուկն>ծուգը—ծըգնէր
գառն>գառը—գառնէր	մուկն>մուկը—մըկնէր
դուռն>դուռը—դըռնէր	ձեռն>ձեռը—ձեռնէր
հարսն>հառսը—հառսնէր	ոտն>վոտը—վոտնէր

Մառ>ծառ, լուծ>լուծ, թումբ>թումբ բառերը գրաբարում և վերջահնչյունը չեն ունեցել, բայց հոգնակի են կազմում վերոհիշյալ ձևով՝ ծառնէր, լրծնէր, թւմբնէր (կա նաև թւմբէր ձևը):

Եզն>յէզը բառի հոգնակին լինում է յէզնիք, իսկ մարդ>մառք բառի հոգնակին՝ մառքըկէք (գրաբարյան մառդիկ հոգնակիի ձևից):

§ 195. Կան մի քանի միավանկ բառեր, որոնց հոգնակին կազմվում է ան մասնիկով: Այդ բառերն են.

այծ>էծ—իծան
գայլ>գյէլ—գյիւան
դէզ>դէզ—դիզան

էշ>էշ—իշան
թի>թի—թիան
ծի>ծի—ծիան
ծու>ծու—ծըվան

§ 196. Բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին, որպես կանոն, կազմվում է նի մասնիկով, ինչպես.

աւեր>հրիվոր—հրիվորնի	թագաւոր>թըքավոր—թըքավորնի
անուն>անում—անումնի	թոնիր>թօրօն—թօրօննի
արմուկն>արմուկ—արմընգնի	լակոտ>լակոտ—լակոտնի
բանալի>բըլանիք—բըլանըքնի	հոտաղ>հօտաղ—հօտաղնի
բերան>բէրան—բէրաննի	ճիպոտ>ճիպոտ—ճիպոտնի
գերան>գյէրան—գյէրաննի	մըշին>մօրմօնջ—մօրմօնջնի

§ 197. Լոռու խոսվածքում կան ու ձայնավորով վերջացող բազմավանկ բառեր: Սրանց հոգնակին ևս կազմվում է նի մասնիկով, ըստ որում, այդ դեպքում բառավերջի ու-ն հնչյունափոխվում է վ-ի (վերածվում է բաղաձայնի), որը նի մասնիկի հետ կապվում է ը-ով, ինչպիս՝ լիզու>լիզու—լիզվընի, կատու>կատու—կատվընի: Բայց գերանդի>գյէրանդու, տիրացու>տիրացու բառերի հոգնակին կազմվում է էֆ կամ ֆյէր մասնիկներով՝ գյէրանդվէք՝ գյէրանդվըքյէր, տիրացվէք՝ տիրացվըքյէր:

§ 198. Ա ձայնավորով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է ֆ մասնիկով, ըստ որում, այդ դեպքում բառավերջի ա ձայնավորը վերածվում է է-ի՝ երևան հանելով նաև ուրիշ բարբառներին հատուկ այք>էք հնչյունափոխությունը, ինչպես.

բակլայ>բագլա—*բակլայք>բագլէք

գուլպայ>գյուլբա—գյուլպայք>գյուլբէք (նաև՝ գյուլբէնի)

ճամփայ>ճամփա—*ճամփայք>ճամփէք (նաև՝ ճամփէնի)

սատանայ>սըտանա-սըտանայք>սըտանէք (նաև՝ սըտանըր-յէր)

վկայ>վըգա—վկայք>վըգէք

տղայ>տըղա—տղայք>տըղէք՝տըղէրք

փեսայ>փէսա—փէսայք>փէսէք (նաև՝ փէսէնի)

§ 199. Յի ածանցով վերջացող բառերի հոգնակին ևս կազմվում է ֆ մասնիկով, ինչպես՝ քախկըցի-քախկըցիք, գյեղացի-գյեղացիք, կուրթանէցի-կուրթանէցիք, լէջանէցի-լէջանէցիք, գյուլաբարակցի-գյուլաբարակցիք, լօռէցի-լօռէցիք, ըէվանցի-ըէվանցիք, թիֆլիզէցի-թիֆլիզէցիք, աշտարակցի-աշտարակցիք, կյիրօվականցի-կյիրօվականցիք և այլն:

§ 200. Ք մասնիկով է կազմվում նաև ի ձայնավորով վերջացող բաղմավանկ բառերի հոգնակին, ինչպես՝ ածելի>ածելի-ածելիք, ոսկի>վոսկյի-վոսկյիք և այլն: Ունենք նաև՝ խնամի>խընամի-խընամիք, որդի>վոռթի-վոռթիք, քենի>քյէնի-քյէնիք, քեռի>քյէ-ռի-քյէռիք, բայց այս բառերի ավելի գործածական հոգնակներն են՝ խընամբքյէր, վոռթրկյէք, քյէնէնի, քյէռէնի:

§ 201. Ինչպես ցույց են տալիս վերևի օրինակները, լոռու խոսվածքում գոյականների հոգնակին կարող է կազմվել նաև էնի մասնիկով: Այս մասնիկը սահմանափակ գործածություն ունի, և գրանով հոգնակի կազմող բառերը մոտավորապես հետևյալներն են. գուլպայ>գյուլբա-գյուլբէնի (նաև՝ գյուլբէք), ճամփայ>ճամփա-ճամփէնի (նաև՝ ճամփէք), սռնակ>սրոնի-սրոնէնի, տարի>տարի-տարէնի, փեսայ>փէսա-փէսէնի (նաև՝ փէսէք), քենի>քյէնի-քյէնէնի (նաև՝ քյէնիք), քեռի>քյէռի-քյէռնի (նաև՝ քյէռիք): Ի-ով վերջավորվող բառերի վրա հիմնվելով՝ կարելի է վերականգնել անի հոգնակերտը (տարի-՝*տարիանի>տարէնի):

§ 202. Աղջիկ>ախչիկ բառի հոգնակին լինում է ախչրկէք: Հավանաբար այս, գուցե նաև մարդ>մառթ բառի մառթրկէք հոգնակի ձևի նմանակությամբ որդի>վոռթի բառի հոգնակին լինում է վոռթրկէք (նաև՝ վոռթիք):

§ 203. Լոռու խոսվածքում մասնակի գործածություն ունեն հետևյալ հոգնակերտ մասնիկները.

Տրեմ — աներ>անէր-անէրտինք, ընկեր>հընգյէր-հընգյէրտինք, հորեղբայր>հըրօխպէր-հըրօխպէրտինք, տալքը>տէքըր-տէքյէրտինք, քոյր>քյիր (սեռ. քըվոր)-քըվորտինք, եղբայր>ախպէրախպէրտինք:

Այս մասնիկով հոգնակի են կազմում աղգակցություն ցույց տվող բառերը:

Քյէր — աման>աման-ամանըքյէր (ամաննի||ամանիք), խնամի>խընամի-խընամըքյէր (խնամիք), տիրացու>տիրացու-տիրացվըքյէր (տիրացվէք), գերանդի>գյէրանդու-գյէրանդվըքյէր (գյէրանդվէք):

Օրանգ — այստեղ>ըստեղ||ըստի-ըստեղօրանք||ըստիօրանք, այդտեղ>ըտեղ||ըտի-ըտեղօրանք||ըտիօրանք, այնտեղ>ընդէղ||ընդի-ընդէղօրանք||ընդիօրանք:

Ունի — մանր>մանդըր-մանդրունք, փշուր>փըշուր-փըշրունք.

Իֆ — կին>կընիկ-կընանիք, աման>աման-ամանիք:

Պետք է նկատի ունենալ, որ վերոհիշյալ ձևերը ավելի հավաքական իմաստ են արտահայտում:

§ 204. Խոսվածքում որպես հոգնակերտ են հանդես գալիս նաև անձ և օճձ մասնիկները: Դրանք կազմում են անեզական բառեր: Ավելի գործածականը անձ մասնիկն է:

Անձ մասնիկով անեզական գոյականներ են կազմվում անձերի հատուկ և հասարակ անուններից, ինչպես.

ա) Ավանդան, Սրեական, Մուրադան, Դերցկան, Մրկարան, Զօրանան, Սօղօման, Վերանան, Ունանան, Նալբանդան, Քենօան, Սուֆօան, Պարսաման, Ալեֆան, Սաֆանան, Մանուկան, Մարկօսան, Մուխլան, Զիլավանք և այլն: Դրանք ցույց են տալիս գերդաստան.

բ) հերանձ||հօրան, փյէռան (նաև փյէռօն), մօֆրան, փավորան, հրօխպէրան, հրէվանան, անէրան||անօրան, տէֆօրան, հօֆրան:

Օճձ մասնիկով անեզական գոյականներ են կազմվում անձերի հատուկ ու հասարակ անուններից, ինչպես նաև դերապնունների սեռական հոլովաձևերից: Օրինակներ.

ա) Խամցօնք, Զալօնք, Սէվհալօնք.

բ) խնամօնք, քյէռօնք (նաև՝ քյէռանք), տատօնք, պապօնք.

գ) իմօնք, քունօնք, մերօնք, ձերօնք:

§ 205. Երբ բառը վերջավորվում է գ, կ, ֆ հտնալեզվային պայթականներով և հոգնակիի կազմության ժամանակ ստանում է Էր||եօ մասնիկը, ապա է||ե ձայնավորներից առաջ այդ հնչյունները ըստ բարբառի արտասանական օրենքների քմայնանում են՝ վերածվելով գյ, կյ, ֆյ միջնալեզվային պայթականների (տե՛ս § 82, 105, 124), ինչպես՝ աչկ-աչկէր, զօրք-զօրքյէր, շէգ-շէգյէր և այլն:

§ 206. Հոգնակիի կազմության ժամանակ միավանկ բառերի հնչյունափոխությունը կատարվում է մոտավորապես գրականի նման, այսինքն՝ փակ վանկի ի և ու ձայնավորները սովորաբար վերածվում են ը-ի, ինչպես. բուրդ>բուռթ-բոթէր, գին>գին-գընէր, գիր>գիր-գըրէր, գունդ>գունդ-գընդէր, դուռն>դուռը-դըռնէր, թիզ>թիզ-թըզէր և այլն:

§ 207. Հոգնակիի կազմության (ինչպես նաև այլ ձևափոխությունների) դեպքում է ձայնավորը հնչյունափոխվում է ի-ի հետևյալ բառերի մեջ. այծ>էծ-իծան, գայլ>գչէլ-գչիլան, էշ>էշ-իշան, դէզ>դէզ-դիզան:

§ 208. Միավանկ բառերի հոգնակի կազմելիս մյուս ձայնա-

ձորները չեն հնչյունափոխվում, օրինակ՝ բան>բան-բանէր, բերդ >բեռթ-բեռթէր, գող>գող-գողէր, զօրք>զօրք-զօրքէր և այլն:

§ 209. Գրականի հետ համեմատած՝ այլ է հնչյունափոխության դրությունը բազմավանկ բառերի դեպքում: Ինչպես հայտնի է, հոգնակի կազմելիս բազմավանկ բառերը արդի հայերենում, որպես կանոն, չեն հնչյունափոխվում: Լոռու խոսվածքում (ինչպես նաև այլ բարբառներում) կարող են հնչյունափոխվել նաև բազմավանկ բառերը: Դա կատարվում է երկու ձևով. սղված ձայնավորի փոխարեն ը ձայնավորը կարող է մտնել բառի վերջին բաղաձայնից (բաղաձայններից) թե՛ առաջ, օրինակ՝ աղբիւր>ախպուր-ախպըրնի, արմուկն>արմունգ-արմընգնի, թե՛ հետո, օրինակ՝ գլուխ>գըլուխ-գըլխընի, գոմէշ>գօմէշ-գոմշընի և այլն:

§ 210. Բազմավանկ բառերի վերջին վանկի ու ձայնավորը հոգնակիի կազմության ժամանակ կարող է հնչյունափոխվել, ինչպես. գլուխ>գըլուխ-գըլխընի, եղունգն>ըղունգ-ըղընգնի, կամուրջ>կարմունջ-կարմընջի, կոունկ>կըուլունգ-կըուընգնի, կրուկն>կըրունգ-կըրընգնի, մասուր>մասուր-մասըրնի, պուտուկ>պըտուկ-պըտկընի, սապոն>սապուն-սապընի, տզրուկ>տըզրուկ-տըզըրկնի, բմբուլ>բըմբուլ-բըմբըլնի, օգուտ>օքուտ-օքըտնի:

§ 211. Բազմավանկ բառերի վերջին վանկի ի ձայնավորը հոգնակիի կազմության ժամանակ կարող է հնչյունափոխվել, ինչպես. ալիւ>ալիւր-ալըրնի, բանալի>բըլանիք-բըլանըքնի, երինջ>էրինջ-էրընջնի, իլիկ>իլիկ-իլկընի (նաև՝ իլիկնի), կացին>կացին-կացընի, կծիկ>կըծիկ-կըծկընի, մատանի>մըտանիք-մըտանըքնի, շապիկ>շաբիք-շապկընի, պատիւ>պատիվ-պատըվնի, վառնակ>վառիկ-վառկընի:

§ 212. Է ձայնավորը ևս կարող է հնչյունափոխվել, ինչպես. աղուէս>աղվէս-աղվըսնի (աղվէսնի), ասեղ>ասէղ-ասիւրնի\ասընի, գոմէշ>գօմէշ-գօմշընի, պճեղ>պըճէղ-պըճըղնի\պըճըղնի:

§ 213. Վերջնավանկի մյուս ձայնավորները, որպես կանոն, չեն հնչյունափոխվում, օրինակ՝ բերան>բէրան-բէրաննի, դմակ>դըմակ-դըմակնի, խրատ>խըրատ-խըրատնի, մրջիւն>մօրմօնջ-մօրմօնջնի, կտոր>կըտոր-կըտորնի, խնձոր>խընձոր-խընձորնի և այլն:

§ 214. Սակայն շեշտակիր և ձայնավորը հոգնակիի կազմության (ինչպես և այլ ձևափոխությունների դեպքում) կարող է հնչյունափոխվել ը-ի, ինչպես՝ ականջ>անջակ-ընջակնի, աման>աման-ըմանիք, ատամ>ատամ-ըտամնի, ճակատ>ճակատ-

ճրկա՛տնի, շալակ>շա՛լակ-շըլա՛կնի, պառաւ>պա՛ռավ-պըռավնի
և այլն:

ՀՈԼՈՎՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 215. Լոռու խովածքում ևս, ժամանակակից գրական հայե-
րենի նման, ձևաբանական մակարդակում հայցականը չի տարբեր-
վում ուղղականից և տրականից, իսկ սեռականը՝ տրականից: Այս-
պիսով՝ փաստորեն խոսվածքն ունի 5 հոլով՝ ուղղական, տրական,
բացառական, գործիական և ներգոյական՝ ֆառ-ֆառի-ֆառից-ֆա-
ռով-ֆառում բնորոշ հոլովական հարացույցով:

§ 216. Մի քանի դերանուններ սեռական և տրական հոլովնե-
րի համար ունեն առանձին ձևեր (տե՛ս § 256, 257):

§ 217. Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է՝ հոլովական գրո-
վերջավորությամբ, ինչպես՝ Մի մառթ էկավ, Մի ռէխա զընաց և
այլն:

Ուղղականը գործ է ածվում նաև իբրև նախդիրվ հայցական՝
շարժման ուղղութիւնը ցույց տալու համար, օրինակ՝ Կարոն զը-
նաց սառ, Գասպարը՝ ջաղաց:

Տեղի հատուկ ու հասարակ անունների ուղղականը գործած-
վում է նաև իբրև ներգոյական՝ ցույց տալով այն տեղը, որտեղ
կատարվում է գործողութունը, օրինակ՝ Գլէղացի Համբոյի տունը
կըռիվ էր ընգլէլ. Ռէվան շատ տուն կա. ԸՍտեփանավան միսն էժան
ա և այլն:

§ 218. Տրական հոլովը կազմվում է ի, ու, վան և այլ թեքույթ-
ներով, ինչպես՝ ֆառի, ֆամու, օրվան և այլն: Որպես վերադիր
(հատկացուցիչ)՝ տրականը, ինչպես ժամանակակից հայերենում է,
միշտ գործածվում է առանց որոշիչ հոդի, օրինակ՝ ռէխու վոտը,
ֆամու ուժը և այլն:

§ 219. Լոռու խոսվածքում դրսևորվում է իրի և անձի առում:
Իրի առման դեպքում ուղիղ խնդիրը դրվում է ուղղականով,
օրինակ՝ էն գառը մորթիլ տէմ. Կովը ծախէցի. Շունը կապէցի և
այլն:

Անձի առման դեպքում ուղիղ խնդիրը դրվում է տրականով,
օրինակ՝ էն գառին մորթիլ տէմ. Կովին ծախէցի. Շանը կապէցի և
այլն:

§ 220. Բացառական հոլովը կազմվում է ից||ուց վերջավորու-
թյուններով, ինչպես՝ սառից, ֆառից, վոսկուց, գառուց և այլն:

Որոշ դեպքերում բացառականի ից վերջավորության ց-ն կարող է ընկնել, ինչպես՝ Գրքիօրանցից՝ Կրքիօրանցի, Սրհականցից՝ Սրհականցի, Մուրադանցից՝ Մուրադանցի, ինձանից՝ ինձանի, մեքօնցից՝ մեքօնցի և այլն։ Այս զույգ ձևերից գործածականները երկրորդ՝ այսինքն առանց ց-ի ձևերն են։ Բացառականի ց-ի անկում է նկատվում ց, վան հոլովման պատկանող բառերի և դերանունների մեջ։

Բացի բոլոր բառերի համար սովորական այդ ձևից, կա նաև բացառականի մի ուրիշ ձև, որը կազմվում է ա վերջավորությամբ։ Այսպիսի բացառական ունեն տեղանունները, օրինակ՝ ըրէվանա «Երևանից», Թիֆլիզա «Թիֆլիսից», Լէջանա «Լեջանից», Կիրովականա «Կիրովականից», ըՍտէփանավանա «Ստեփանավանից», Հօփանոցվա «Հոբարձուց» և այլն։

Այս ձևերը գործածվում են նաև որպես անվան վերագիր (սեռական), ինչպես՝ Րէվանա ջուր «Երևանի ջուր», Րէվանա բէրինք «Երևանից բերեցինք», Թիֆլիզա ախչիկ «Թիֆլիսի աղջիկ», Թիֆլիզա հառս բէրինք «Թիֆլիսից հարս բերեցինք» և այլն։

Տեղանունների տրականն ու բացառականը կազմվում են նաև սովորական ի, ից վերջավորություններով, օրինակ Րէվանի ջուր «Երևանի ջուր», Րէվանից էմ գալի «Երևանից եմ գալիս» և այլն։ Այս ձևերը գործածվում են գրականի ազդեցությամբ։

§ 221. Գործիական հոլովը կազմվում է օվ վերջավորությամբ, օրինակ՝ սարօվ, ֆարօվ։

§ 222. Ներգոյական հոլովը կազմվում է ըմ (<ում) վերջավորությամբ, օրինակ՝ սարըմ, ֆարըմ։

Ինչպես հայտնի է, արդի գրական լեզվում մի շարք բառերից (հատկապես անձերի հասուն ու հասարակ անուններից) ներգոյական հոլով չի կազմվում։ Լոռու խոսվածքում այսպիսի սահմանափակում չկա, և ներգոյական հոլով կարող են ունենալ բոլոր գոյականները։

§ 223. Լոռու խոսվածքում որոշյալ առման դեպքում որոշիչ հոդ են ստանում բոլոր հոլովները, օրինակ՝ սարը, սարին, սարիցը, սարօվը, սարըմը. ֆարը, ֆարին, ֆարիցը, ֆարօվը, ֆարըմը և այլն։

Տրականը (ինչպես և մյուս հոլովները) վերագրի պաշտոնում որոշիչ հոդ չի ստանում։

§ 224. Ուղղական հոլովը գործածվում է նաև որպես կոչական։ Սակավաթիվ բառերի համար կոչականն ունի առանձին ձև, ինչպես՝ քյիրա «քույր», հէրա «հայր», մէրա «մայր», ախչի «աղջիկ», ապէրօ «ապէր» (մեծ եղբայր), հընգչէրօ «ընկեր»։

Մի շարք հատուկ անուններ ունենում են օ վերջավորությունը, օրինակ՝ Համբո, Համօ, Անդրօ, Արմօ, Նէսօ, Սուքօ, Բենօ, Կարօ, Գաբօ, Գիքօ, Ալէկօ, Վանօ, Վաչօ, Վասօ, Հայկօ, Սուրօ, Սաքօ, Պէտօ, Սաթօ, Շօղօ, Անօ, Լուսօ, Նունօ, Նազօ, Վարթօ, Մարօ, Մարգօ և այլն:

Հատուկ անունների այս սղված ձևերը գործածվում են առտնին, սովորական խոսակցության ժամանակ:

ՀՈՒՈՎՈՒՄ

§ 225. Հոլովումները որոշվում են տրական հոլովի ձևերով: Լոռու խոսվածքն ունի յոթ հոլովում:

1. Առաջին հոլովում

§ 226. Այս հոլովման վերջավորություններն են՝ տրական—ի, բացառական—ից, գործիական—օվ, ներգոյական—ըմ, օրինակ.

եզակի

Ուղղ. սար(ը)	վառժապէտ(ը)
Տր. սարի(ն)	վառժապէտի(ն)
Բաց. սարից(ը)	վառժապէտից(ը)
Գործ. սարով(ը)	վառժապէտով(ը)
Ներգ. սարըմ(ը)	վառժապէտըմ(ը)

հոգնակի

Ուղղ. սարէր(ը)	վառժապէտնի(ն)
Տր. սարէրի(ն)	վառժապէտնէրի(ն)
Բաց. սարէրից(ը)	վառժապէտնէրից(ը)
Գործ. սարէրով(ը)	վառժապէտնէրով(ը)
Ներգ. սարէրըմ(ը)	վառժապէտնէրըմ(ը)

§ 227. Այսպես է հոլովվում խոսվածքի գոյականների մեծ մասը:

Հոգնակի թվում ի հոլովումը սովորաբար տարածվում է միայն էր, քչէր, նի մասնիկով կազմվող բառերի վրա, ըստ որում, թեք հոլովներում հանգես է գալիս ոչ թե նի, այլ նէր հոգնակերտ մասնիկը, օրինակ՝ հըլիվորնի-հըլիվորնէրի-հըլիվորնէրից, բըլանըքնի-բըլանըքնէրի-բըլանըքնէրից, գութաննի-գութաննէրի-գութաննէրից, վառկընի-վառկընէրի-վառկընէրից և այլն:

Սակայն Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի գյուղերում հոգնակի թիվը նի մասնիկով կազմող գոյականները, որպես Ի-ով վերջավորվող բառեր, ենթարկվում են ու հոլովման (հրիվորնի-հրիվորնու-հրիվորնուց-հրիվորնով-հրիվորնում. տե՛ս § 231, բ)։

Ք, ան, աինք մասնիկներով կազմվող հոգնակիները սովորաբար ենթարկվում են ց հոլովման, ինչպես՝ վկայ>վրգա-վրգէք-վրգէնոնց, քաղաքացի>քախկըցի-քախկըցիք-քախկըցոնց, աներ>անէր-անէրտիք-անորտանց, դէզ>դէզ-դիզան-դիզանոնց և այլն (տե՛ս § 239), բայց առանձին դեպքերում կարող են ենթարկվել նաև Ի հոլովման, ինչպես՝ վրգէք-վրգէքի։

§ 228. Բառավերջի ա ձայնավորը թեք հոլովներում ընկնում է, ինչպես՝ գուլայ>գյուլբա-գյուլբի-գյուլբից, ճամփայ>ճամփա-ճամփի-ճամփից, սատանայ>սըտանա-սըտանի-սըտանից և այլն։

§ 229. Ի հոլովման համեմատ են հոլովվում նաև ութին>ութին վերջավորվող բառերը՝ լավութին, բարութին, մենծութին, բարեկամութին, շարութին և այլն, օրինակ՝

Ուղղ. լավութին(ը)

Տր. լավութինի(ն)

Բաց. լավութից(ը)

Գործ. լավութինով(ը)

Ներգ. լավութինում(ը)

Գրական լեզվի ազդեցությամբ ութին>ութին վերջավորվող բառերը այժմ հոլովվում են նաև յան ձևով՝ լավութին-լավության, բարութին-բարության և այլն։

§ 230. Ի հոլովման են ենթարկվում նաև ու-ով վերջավորվող բառերը, որոնց պատկերը հետևյալն է.

եզակի

հոգնակի

Ուղղ. լիզու(ն)

լիզվընի(ն)

Տր. լիզվի(ն)

լիզվընէրի(ն)

Բաց. լիզվից(ը)

լիզվընէրից(ը)

Գործ. լիզվով(ը)

լիզվընէրով(ը)

Ներգ. լիզվում(ը)

լիզվընէրում(ը)

2. Երկրորդ հոլովում

§ 231. Այս հոլովման վերջավորություններն են՝ տրական—ու, բացառական—ուց, գործիական—ով, ներգոյական—ում. օրինակ.

Ուղղ.	ծի(ն)	Ֆոքի(ն)	քախկըցի(ն)	հըլիվորնի(ն)
Տր.	ծիու(ն)	Ֆոքու(ն)	քախկըցու(ն)	հըլիվորնու(ն)
Բաց.	ծիուց(ը)	Ֆոքուց(ը)	քախկըցուց(ը)	հըլիվորնուց(ը)
Գործ.	ծիով(ը)	Ֆոքով(ը)	քախկըցով(ը)	հըլիվորնով(ը)
Ներգ.	ծիրմ(ը)	Ֆոքըմ(ը)	քախկըցմ(ը)	հըլիվորնմ(ը)

Այսպես հոլովվում են.

ա) ի ձայնավորով վերջացող բոլոր բառերը, ինչպես՝ գարի> գարի-գարու, գինի>գինի-գինու, խնամի>խընամի-խընամու, ջորի>ջորի-ջորու, սամի>սամի-սամու, քամի>քամի-քամու, քենի>քյէնի-քյէնու, քեռի>քյէռի-քյէռու, գիւղացի>գյէղացի-գյէղացու, քաղաքացի>քախկըցի-քախկըցու և այլն:

Ի-ով վերջացող բառերի հոգնակին, ինչպես նշել ենք, կազմվում է ք մասնիկով և սովորաբար հոլովվում է ց հոլովմամբ, թեև առանձին բառեր հոլովվում են նաև ի-ով:

բ) Հոգնակի թիվը նի մասնիկով կազմող բառերը Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի գյուղերում, ինչպես՝ հըլիվորնի-հըլիվորնու, բընալըքնի-բընալըքնու, պըռալինի-պըռալինու, հօտաղնի-հօտաղնու, գութաննի-գութաննու և այլն:

գ) Բոլոր անորոշ դերբայները, ըստ որում իլ ձևը թեք հոլով-ներում փոխվում է էլ-ի.

Ուղղ. ուտիլ

աղալ

Տր. ուտէլու

աղալու

Բաց. ուտէլուց

աղալուց

Գործ. ուտէլով

աղալով

Ներգ. ուտէլմ

աղալմ

դ) Ու հոլովման ենթարկվում են նաև հետևյալ բառերը. երեխայ>րէխա-րէխու (րէխի), փեսայ>փէսա-փէսու (փէսի):

3. Երրորդ հոլովում

§ 232. Այս հոլովման վերջավորութուններն են՝ տրական—վան, բացառական—(վան)ի(ց), գործիական—ով, ներգոյական—ըմ:

Հոլովման պատկերը հետևյալն է.

Ուղղ.	օր(ը)	օրէր(ը)	ամառ(ը)	ամառնի(ն)
Տր.	օրվան	օրէրի(ն)	ամառվան	ամառնէրի(ն)
Բաց.	օրից օրվանի(ց)	օրէրից(ը)	ամառվանի(ց)	ամառնէրից(ը)
Գործ.	օրով(ը)	օրերով(ը)	ամառով(ը)	ամառներով(ը)
Ներգ.	օրըմ(ը)	օրէրըմ(ը)	ամառըմ(ը)	ամառնէրըմ(ը)

Այս հոլովումը, ինչպես արդի հայերենում, ժամանակ ցույց տվող բառերի հոլովումն է. դրան են ենթարկվում հետևյալ բառերը.

ամիս > ամիս — ամսվան (ամսի)
 աշուն > աշունք — աշունքվան
 գարուն > գարունք — գարունքվան
 երեկոյ > ըրեգու — ըրեգվան
 երեկ > էրէգ — էրէգվան || ըէգվան
 հերու > հէրու — հէրվան
 ձմեռ > ձրմէռ — ձրմըռվան
 շաբաթ > շափաթ — շապտվան
 տարի > տարի — տարվան
 ցերեկ > ցէրէգ — ցէրէգվան
 այգուց > էքուց — էքուցվան
 վաղ > վաղ — վաղվան.

Ունենք նաև մահ > մահ — մահման («մահման դող») ձևը, հավանաբար գրաբարյան մահռաւ սեռականից:

Այս հոլովման առանձնահատկություններից մեկն այն է, որ բացառականը կարող է կազմվել առանց ց-ի, ինչպես՝ էն օրվանի, էն տարվանի, աշունքվանի, ձրմըռվանի և այլն:

4. Չորրորդ հոլովում

§ 233. Այս հոլովման վերջավորություններն են՝ տրական — ան, բացառական — ից, գործիական — օվ, ներգոյական — ըմ: Հոլովման պատկերը հետևյալն է.

Ուղղ. դուռ	դըռնէր
Տր. դըռան	դըռնէրի
Բաց. դըռնից	դըռնէրից
Գործ. դըռնօվ	դըռնէրօվ
Ներգ. դըռնըմ	դըռնէրըմ

Այսպես հոլովվում են հետևյալ բառերը. բէռ-բէռան (ավելի հաճախ՝ բէռի), գառ-գառան (նաև՝ գառի), դուռ-դըռան, յէզը-յէզան (ավելի հաճախ՝ յէզի), թոռը-թոռան (նաև՝ թոռի), ձուգը-ձըգան, մուկը-մըկան (ավելի հաճախ՝ մըկի), նուռը-նըռան (նաև՝ նըռի), տուն-տան, շուն-շան: Ունենք նաև լուծը-լըծան, խուռցը-խըրցան, խուփը-խըփան, թութը-թըթան ձևերը: Պետք է նշել, որ այս հոլովումը բարբառում ընդհանրապես գործուն չէ և հաճախ, ինչպես օրինականներն են ցույց տալիս, կարող է փոխարինվել ի հոլովմամբ:

Դրան պիտի ավելացնել նաև այն, որ ռւմ (<ումն) ածանցը, որը ան հոլովման պահպանման հիմնական հենարանն է, խոսվածքում կենսունակ չէ, ուստի և ան հոլովման պատկանող բառերի թիվը սահմանափակ է:

5. Հիմնգերոդ հոլովում

§ 234. Հիմնգերոդ հոլովման մեջ տրականի ձևը կազմվում է ներքին թեքմամբ՝ ուղղականի վերջին ձայնավորը օ-ի փոխելով: Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են սովորական ից, օվ, ըմ վերջավորութուններով, ինչպես.

Ուղղ.	հէրը	ախպէրը	մէրը	հընգէրը
Տր.	հօրը	ախպօրը	մօրը	հընգօրը
Բաց.	հօրիցը	ախպօրիցը	մօրիցը	հընգօրիցը
Գործ.	հօրովը	ախպօրովը	մօրովը	հընգօրովը
Ներգ.	հօրըմը	ախպօրըմը	մօրըմը	հնգօրըմը

Ուղղ.	անէրը	կլէստը	տէքըրը
Տր.	անօրը	կլէսօրը	տէքօրը
Բաց.	անօրիցը	կլէսօրիցը	տէքօրիցը
Գործ.	անօրովը	կլէսօրովը	տէքօրովը
Ներգ.	անօրըմը	կլէսօրըմը	տէքօրըմը

§ 235. Քոյր>քյիւ բառը հոլովվում է հետևյալ կերպ.

Ուղղ.	քյիրը
Տր.	քըվորը
Բաց.	քըվորիցը
Գործ.	քըվորովը
Ներգ.	քըվորըմը

§ 236. Օ հոլովումը, ինչպես գրականում, սակավ գործածութուն ունի: Այսպես են հոլովվում բերված բառերը, այլև այն բարդութունները, որոնց վերջին բաղադրիչները այդ բառերն են, ինչպես՝ հօրեղբայր>հրօխպէր-հրօխպօր, սանամայր>սանամէր-սանամօր, սանահայր>սանհէր-սանհօր և այլն: Բայց ունենք՝ հօրաքոյր>հօքյիր||հօքօր—հօքրի||հօքօրի, մօրաքոյր>մօքյիր||մօքօր—մօքրի||մօքօրի (ի հոլովման համեմատ):

§ 237 Օ հոլովման պատկանող բառերի մի մասի հոգնակին կազմվում է տիւն մասնիկով, ինչպես՝ ախպէր-ախպէրտինք, հընգէր-հընգէրտինք, տէքըր-տէքյէրտինք, անէր-անէրտինք, հրօխպէր-հրօխպէրտինք, քյիր-քըվորտինք: Այս հոգնակի ձևերը հո-

չովվում են ց հոլովման համեմատ (տե՛ս § 239): Հայր>հէր, մայր >մէր բառերի հոգնակին կազմվում է էր մասնիկով՝ հէրէր, մէրէր, իսկ սկեսուր>կէսուր բառի հոգնակին՝ նի մասնիկով՝ կէսուրնի:

6. Վեցերորդ հոլովում

§ 238. Այս հոլովման վերջավորություններն են՝ տրական—ոնչ (<ոչ), բացառական—ից, գործիական—ով, ներգոյական—ըմ, ինչպես.

Ուղղ. տէր(ը)	տէրէր(ը)
Տր. տիրոնչ(ը)	տէրէրի(ն)
Բաց. տիրոնչից(ը)	տէրէրից(ը)
Գործ. տիրոնչով(ը)	տէրէրով(ը)
Ներգ. տիրոնչըմ(ը)	տէրէրըմ(ը)

Գործածվում են նաև տիրոչ, տիրոչից և այլ ձևերը:

Այսպես հոլովվում է միայն տէր բառը (այլև այն բարդությունները, որոնց վերջին բաղադրիչը տէր բառն է, օրինակ՝ տանտեր>տանտէր-տանտիրոնչ):

7. Յոթերորդ հոլովում

§ 239. Այս հոլովումը միայն հոգնակի հոլովում է: Ուղղական հոլովն ունենում է անֆ||օնֆ (Մուրադանք, Ձալօնք), ֆ (գլէղացիք), էնի (փէսէնի), ան (դիզան), տինֆ (ախպէրտինք), տրականը—ց, անց կամ ցոնց, բացառականը—ի, գործիական—ով, ներգոյականը—ըմ վերջավորությունները, որոնք դրվում են տրականի ձևի վրա, ինչպես.

Ուղղ. Սըհականք	Խամցօնք	գլէղացիք	րէխեք
Տր. Սըհականց	Խամցօնց	գլիղացոնց	րէխանց
Բաց. Սըհականցի	Խամցօնցի	գլէղացոնցի	րէխանցի
Գործ. Սըհականցով	Խամցօնցով	գլէղացոնցով	րէխանցով
Ներգ. Սըհականցըմ	Խամցօնցըմ	գլէղացոնցըմ	րէխանցըմ

Ուղղ. փէսէնի	դիզան	ախպէրտինք
Տր. փէսէնոնց	դիզանոնց	ախպօրտանց
Բաց. փէսէնոնցի	դիզանոնցի	ախպօրտանցի
Գործ. փէսէնոնցով	դիզանոնցով	ախպօրտանցով
Ներգ. փէսէնոնցըմ	դիզանոնցըմ	ախպօրտանցըմ

Այսպես են հոլովվում անբաժանելի ածանցով կազմված անեղական բառերը (Մուրադանք, Ալեքանք, Խամցօնք, Խընամօնք և այլն) և ք, էնի, ան, տին և հոգնակիակերտ մասնիկներով կազմված բառերը (Քախկըցիք, գյէղացիք, փէսէնի, քէնէնի, ախպէրտինք, հընգյէրտինք և այլն):

Այս հոլովման առանձնահատկություններից մեկն այն է, որ բացառական հոլովը կազմվում է ի վերջավորությամբ՝ Գըրիքօրանցի, Սըհականցի, րէխանցի և այլն:

IV. ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԼՈՎՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

§ 240. Հոլովման ժամանակ հնչյունափոխությունը կատարվում է մոտավորապես այն կանոններով, ինչ հոգնակիի կազմության ժամանակ, այսինքն.

ա) Միավանկ բառերի փակ վանկի ի և ու ձայնավորները սովորաբար վերածվում են ր-ի, 'օրինակ՝ գիր>գիր-գրրի, սիրտ>սիրտ-սըրտի, լոյս>լիս-լըսի, միս>միս-մըսի, չիւր>չիւր-չըրի, լուծ>լուծ-լըծի, թուղթ>թուխտ-թըխտի, ջուր>ջուր-ջըրի, սուտ>սուտ-սըտի և այլն:

Մյուս ձայնավորները չեն հնչյունափոխվում, օրինակ՝ բան>բան-բանի, բերդ>բեռթ-բեռթի, գիւղ>գյէղ-գյէղի, գող>գող-գողի, դաս>դաս-դասի, զօրք>զօրք-զօրքի, թոռն>թոռը-թոռան:

Է ձայնավորի հնչյունափոխություն ունենք մի քանի բառերում. էշ>էշ-իշի, այծ>էծ-իծի, գայլ>գյէլ-գյիլի, դէզ>դէզ-դիզի, մէջ>մէլ-միլի, մէջք>մէլկ-միլկի, տէր>տէր-տիրոնչ:

բ) Բազմավանկ բառերի փակ վերջնավանկի ի և ու ձայնավորները սովորաբար վերածվում են ր-ի կամ սղվում են, ինչպես՝ ալիւր>ալիր-ալրի, աղբիւր>ախպուր-ախպըրի, բանալի>բըլանիք-բըլանըքի, եղունգն>ըղունգ-ըղընգի, կամուրջ>կարմունջ-կարմընջի, կրունկ>կըրունգ-կըրընգի, գլուխ>գըլուխ-գըլխի և այլն:

Բառավերջի փակ վանկի մյուս ձայնավորները, որպես կանոն, չեն հնչյունափոխվում, օրինակ՝ դմակ>դըմակ-դըմակի, կաքալ>կաքավ-կաքավի, թոնիր>թօրօն-թօրօնի, խաղող>հաղող-հաղողի, խնձոր>խընձոր-խընձորի, մրջիւն>մօրմօնք-մօրմօնջի և այլն:

§ 241. Ինչպես հոգնակիի կազմության ժամանակ է, երկվանկ բառերի առաջին վանկի ա ձայնավորը հոլովման ժամանակ ևս զրկվելով շեշտից՝ կարող է վերածվել ր-ի, օրինակ՝ ճակատ>ճակատ-ճըկատի, շալակ>շալակ-շըլակի, ջրաղաց>ջաղաց-ջըղացի:

§ 242. Լոռու խոսվածքում անորոշ հոդն է մի, որն իր գործածությամբ չի տարբերվում արդի հայերենի մի անորոշ հոդից, օրինակ՝ Մի մառթ մի օր մի լոր բըռնէց: Որպես առանձնահատկություն պետք է նշել, որ Լոռու խոսվածքում մի անորոշ հոդը և մեկ թվականը ձևով ևս տարբերված են: Անորոշ հոդն ունի մի, իսկ թվականը՝ միև ձևը:

§ 243. Որոշյալ հոդերն են ր և ն: Որոշյալ առման դեպքում ր հոդն են ստանում բաղաձայնով վերջացող բառերը, օրինակ՝ ալիւր>ալիւր-ալիւրը, բերան>բէրան-բէրանը, թոնիր>թօրօն-թօրօնը, հարեան>հըրէվան-հըրէվանը, պանիր>պանիր-պանիրը և այլն, իսկ ն հոդը՝ ձայնավորով վերջացող բառերը՝ ձի>ձի-ձին, ձու>ձու-ձուն, ոսկի>վոսկյի-վոսկյին, գինի>գյինի-գյինին, որդի>վոռթի-վոռթին և այլն: Ն հոդից առաջ ա ձայնավորը դառնում է է՝ հանդես բերելով այ>է հնչյունափոխությունը (փեսայն>փէսէն), օրինակ՝ տղայ>տըղա-տըղէն, փեսայ>փէսա-փէսէն, վկայ>վըգա-վըգէմ, գուլպայ>գյուլբա-գյուլբէն, սատանայ>սըտանա-սըտանէն և այլն:

Ինչպես նշված է արդեն, Լոռու խոսվածքում բոլոր հոլովները կարող են հոդ ստանալ:

II. ԱՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 244. Ածական անունը իր գրականորումներով համարյա թե չի տարբերվում գրական հայերենից:

§ 245. Սաստկական կամ բազմակիության իմաստ արտահայտելու համար ածականները կարող են կրկնվել, ինչպես՝ բարակ-բարակ, բացըր-բացրը, դէղին-դէղին, յէրգար-յէրգար՝ էրգյէն-էրգյէն, թէթէվ-թէթէվ, թիւ-թիւ, լէն-լէն, թուխ-թուխ, խէխճ-խէխճ, ծանդըր-ծանդըր, մանդըր-մանդըր, կառճ-կառճ, կարմիր-կարմիր, հէշտ-հէշտ, հին-հին, հում-հում, շատ-շատ, շէգ-շէգ, շոր-շոր, ջոգ-ջոգ, սեվ-սեվ, տաք-տաք, մենձ-մենձ:

§ 246. Ածականի բաղդատական աստիճանը կազմելու համար համեմատելի առարկան գրվում է բացառական հոլովով, իսկ ածականը մնում է անփոփոխ, օրինակ՝ էս տունը էն տանիցը մենձ ա. էս ախշիկը էն ախշկանիցը սիրուն ա:

Համեմատությունը ուժեղացնելու համար ածականի վրա դրվում են դրճա կամ ջիլիս՝գիլիս բառերը, օրինակ՝ էս տունը մենձ

ա. էն տունը դրհա (շիլիս||գիլիս) մենձ ա. էս ախշիկը սիրուն ա. էն ախշիկը դրհա (շիլիս||գիլիս) սիրուն ա:

§ 247. Գերադրական աստիճանը կազմելու համար ածականի վրա ավելանում է շիմնու «բոլորից» դերանունը կամ ամենա գերադրական նախածանցը, օրինակ. էս տունը ամենամենձն ա. էս ախշիկը ամենասիրունն ա. րէխանց միշին շիմնու լավը տըղէս ա:

Ամենա նախածանցով կազմված ածականները որպես որոշիչ գործածվում են և՛ անձերի, և՛ իրերի անունների հետ, իսկ շիմնու դերանվամբ կազմված գերադրականները՝ միայն անձերի անունների հետ:

§ 248. Գոյականաբար գործածվելիս ածականը հոդ է ստանում և հոլովվում առաջին (ի) հոլովմամբ, օրինակ.

Ուղղ.	մենձը	մենձէրը	սեվը	սեվէրը
Տր.	մենձին	մէնձէրին	սեվին	սեվէրին
Բաց.	մենձիցը	մենձէրիցը	սեվիցը	սեվէրիցը
Գործ.	մենձօվը	մենձէրօվը	սեվօվը	սեվէրօվը
Ներգ.	մենձըմը	մենձէրմը	սեվըմը	սեվէրըմը

III. ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 249. Լոռու խոսվածքում գործածվող քանակական թվականները հետևյալներն են.

1 մին	10 տասը	100 հարիր
2 էրկու	20 քրսան	1000 հազար հըզար
3 իրեք	30 յէռէսուն	1000000 միլյօն
4 չորս	40 քառսուն	
5 հինգ	50 հիցցուն իցցուն	
6 վեց	60 վացցուն	
7 օխտը	70 օխտանասուն	
8 ութը	80 ութանասուն	
9 իննը	90 ըննըսուն	

§ 250. Բաղաձայնով սկսվող միավորները տասնավորների հետ կապակցվում են ը հոդակապով, իսկ ձայնավորով, սկսվող միավորները կապակցվում են առանց հոդակապի: Ըստ այսմ, տասնավորներից և միավորներից կազմված քանակականներն ունեն հետևյալ ձևերը.

11 տասներմին
12 տասնէրկու
13 տասնիրեք
14 տասնըշորս
15 տասնըհինգ
16 տասնըվեց
17 տասնօխտը
18 տասնութը
19 տասնիններ

21 քրսանըմին
37 յէռէսնօխտը
44 քառանըշորս
59 հիցցընիններ
64 վացցընըշորս
78 օխտանասնութը
82 ութանասնէրկու
99 ըններսիններ

Երեսուն > յէռէսուն և քառասուն > քառսուն թվականները բաղադրությունների մեջ ունենում են նաև յէռ, քառ ձևերը, օրինակ՝ յէռմին, յէռէրկու..., քառմին, քառշորս... և այլն:

§ 251 Հարյուրավորները և հազարավորները կցվում են առանց որևէ միացման կապի, օրինակ՝ 3412—իրեք հըզար շոռս հարիւր տասներկու, 6829—վեց հըզար ութը հարիւր քրսանիններ և այլն:

§ 252. Գոյականաբար գործածվելիս քանակական թվականները հոդ են ստանում և հոլովվում առաջին (ի) հոլովման համեմատ, օրինակ՝ մինը-մընի-մընիցը, էրկուսը-էրկրսի-էրկրսիցը, իրեքը-իրեքի-իրեքիցը, շոռսը-շոռսի-շոռսիցը և այլն: Գոյականաբար գործածվելիս էրկու բառը ունենում է էրկուսը ձևը՝ վերականգնելով գրաբարյան հայցականի ու վերջավորությունը:

§ 253. Դասական թվականները բարբառի մեջ են մտել գրական լեզվի ազդեցությամբ և գործածվում են միայն «դասարան», «խումբ» նշանակելու համար: Դրանք են՝ առաչի||ըռաչի, յէրկրօթ, յէրօթ, շօրօթ, հինգյէրօթ, վեցյէրօթ, օխտյէրօթ, ությէրօթ, իննրյէրօթ, տասյէրօթ, տասներմինյէրօթ: Դասական թվականները գոյականաբար գործածվելիս հոդ են ստանում և հոլովվում առաջին (ի) հոլովման համեմատ, օրինակ՝ յէրկրօթը-յէրկրօթի-յէրկրօթիցը, շօրօթը-շօրօթի-շօրօթիցը, ությէրօթը-ությէրօթի-ությէրօթիցը և այլն: Առաջին > առաչի||ըռաչի դասականը գոյականաբար գործածվելիս վերականգնում է բառավերջի կորած և բաղաձայնը, օրինակ՝ առաչինը||ըռաչինը-առաչինի||ըռաչինի-առաչինից||ըռաչինիցը և այլն:

§ 254. Բաշխական թվականները կազմվում են կրկնությամբ, ինչպես՝ մին-մին, էրկու-էրկու, իրեք-իրեք, շոռս-շոռս, հինգ-հինգ, վեց-վեց, օխտը-օխտ, ութը-ութ, տասը-տասը և այլն:

§ 255. Չափական թվականները կազմվում են քանակական-

ներից՝ անոց ածանցում, օրինակ՝ էրկրսանոց, իրեֆանոց, շոսանոց, հրեգանոց, վեցանոց, օխտանոց, ութանոց, ընճանոց տասնանոց, յնչսունանոց, հիցցունանոց, հարրւանոց և այլն:

IV. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 256. Լոռու խոսվածքի անձնական դերանուններն են՝ յէս, դու||դուն, նա, ինքը, մենք, դուք, նըրանք||նըհանք, իրանք: Բացի վերջին երկուսից, մյուս անձնական դերանունները սեռականի և տրականի համար առանձին ձևեր ունեն:

Անձնական դերանունները հոլովվում են այսպես.

եզակի

Ուղղ.	յէս	դու դուն	նա	ինքը
Սեռ.	իմ	քու	նըրա	իրա
Տր.	ինձ	քեզ	նըրան	իրան
Բաց.	ինձանի	քեզանի	նըրանի	իրանի
Գործ.	ինձանով	քեզանով	նըրանով	իրանով
Ներգ.	ինձանըմ	քեզանըմ	նըրանըմ	իրանըմ

հոգնակի

Ուղղ.	մենք	դուք	նըրանք նըհանք	իրանք
Սեռ.	մեր	ձեր	նըրանց նըհանց	իրանց
Տր.	մեզ	ձեզ	նըրանց նըհանց	իրանց
Բաց.	մեզանի	ձեզանի	նըրանցի նըհանցի	իրանցի
Գործ.	մեզանով	ձեզանով	նըրանցով նըհանցով	իրանցով
Ներգ.	մեզանըմ	ձեզանըմ	նըրանցըմ նըհանցըմ	իրանցըմ

§ 257. Լոռու խոսվածքի գոյականներին հարաբերակից ցուցական դերանուններն են՝ սա, դա, նա, սըրանք||սըհանք, դըրանք||դըհանք, նըրանք||նըհանք, էս, էդ, էն, ըստոնք, ըտոնք, ընդոնք: Սա դա, նա ցուցականները սեռական և տրական հոլովների համար առանձին ձևեր ունեն:

Ցուցական դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

եզակի

Ուղղ.	սա	դա	նա
Սեռ.	սըրա	դըրա	նըրա
Տր.	սըրան	դըրան	նըրան

Քաջ.	սըրանի	դըրանի	նըրանի
Գործ.	սըրանօվ	դըրանօվ	նըրանօվ
Ներգ.	սըրանըմ	դըրանըմ	նըրանըմ

Հոգնակի

Ուղղ.	սըրանք	սըհանք	դըրանք	դըհանք	նըրանք	նըհանք
Սեռ.	սըրանց	սըհանց	դըրանց	դըհանց	նըրանց	նըհանց
Տր.	սըրանց	սըհանց	դըրանց	դըհանց	նըրանց	նըհանց
Բաց.	սըրանցի	սըհանցի	դըրանցի	դըհանցի	նըրանցի	նըհանցի
Գործ.	սըրանցօվ	սըհանցօվ	դըրանցօվ	դըհանցօվ	նըրանցօվ	նըհանցօվ
Ներգ.	սըրանցըմ	սըհանցըմ	դըրանցըմ	դըհանցըմ	նըրանցըմ	նըհանցըմ

Եղակի

Ուղղ.	էս	էտ	էն
Սեռ.	ըստուր	ըտուր	ընդուր
Տր.	ըստուր	ըտուր	ընդուր
Բաց.	սըրանի	դըրանի	նըրանի
Գործ.	սըրանօվ	դըրանօվ	նըրանօվ
Ներգ.	սըրանըմ	դըրանըմ	նըրանըմ

Հոգնակի

Ուղղ.	ըստոնք	ըտոնք	ընդոնք
Սեռ.	ըստոնց	ըտոնց	ընդոնց
Տր.	ըստոնց	ըտոնց	ընդոնց
Բաց.	ըստոնցի	ըտոնցի	ընդոնցի
Գործ.	ըստոնցօվ	ըտոնցօվ	ընդոնցօվ
Ներգ.	ըստոնցըմ	ըտոնցըմ	ընդոնցըմ

Ինչպես նկատում ենք, էս, էտ, էն դերանունները բացառականի, գործիականի և ներգոյականի ըստրանի, ըստրանօվ, ըստրանըմ և այլ սպասելի ձևերը չունեն։ Դրանք լրացվում են սա, դա, նա դերանունների հոլովական ձևերով։

§ 258. Վերոհիշյալ ցուցական դերանունների գործածության համար պետք է նկատի ունենալ հետևյալը. ա) սա, դա, նա դերանուններն ունեն բացառապես գոյականական գործածություն և նախադասության մեջ հանդես են գալիս ենթակայի և խնդրի պաշտոնով. էս, էտ, էն դերանունները ունեն նաև ածականական գործածություն և նախադասության մեջ կարող են հանդես գալ ոչ միայն ենթակայի ու խնդրի, այլև որոշի պաշտոնով, օրինակ՝ էս տաւ, էն

բի «այս տար, այն բեր» (գոյականական գործածութիւն), էս մառ-
քը գնաց, էն կնիկն էկավ «այս մարդը գնաց, այն կինը եկավ»
(ածականական գործածութիւն): Բ) Սա, դա, նա դերանունները
առավելապէս գործածվում են անձեր մատնացոյց անելու համար,
իսկ էս, էտ, էն դերանունները՝ իրեր մատնացոյց անելու համար,
այնպէս որ սա, դա, նա դերանունները կարելի է կոչել անձնական-
ցուցականներ, իսկ էս, էդ, էն դերանունները՝ իրային-ցուցական-
ներ:

§ 259. Ածականներին հարաբերակից ցուցական դերանուն-
ներն են՝ ըսթավուր «այսպիսի», ըթավուր «այդպիսի», ընթավուր
«այնպիսի» (էսպիսի, էտպիսի, էնպիսի Կները գործածվում են
գրականի ազդեցությամբ):

§ 260. Թվականներին համապատասխան ցուցական դերա-
նուններն են՝ ըսքան(մ), «այսքան», ըտքան(մ), «այդքան», ըն-
քան(մ), «այնքան» (էսքան, էտքան, էնքան ձևերը գործածվում են
գրականի ազդեցությամբ):

§ 261. Մակբայներին հարաբերակից ցուցական դերանուն-
ներն են. ա) ձևի. ըսէնց||սէնց||ըսէ||սէ «այսպէս», ըթէնց||թէնց
||ըթէ||թէ «այդպէս», հընէնց||հընէ «այնպէս»: Այս դերանունները
գործածվում են բայերի, բայց ոչ երբեք գոյականների հետ, օրի-
նակ՝ սէնց մի անիլ, հընէնց արա «այսպէս մի արա, այնպէս արա».
Ըթէնց չէն գոռծիլ, ըսէնց կըգոռծէն «այդպէս չեն գործի, այսպէս
կգործեն»:

բ) Տեղի. ըստէղ||ըստի «այստեղ», ըտէղ||ըտի «այդտեղ», ընդէղ
||ընդի «այնտեղ»: Կարճ ձևերը ունեն ան-ով կազմվող միակ հոլո-
վական ձև, որն ունի սեռականի և բացառականի իմաստ, օրինակ՝
ըստիան խրճճորը լավլն ա «այստեղի խնճորը լավն է», ըտիան
ծառնէրը մեճն էն «այդտեղի ծառերը մեծ են», ընդիան հաղողը հա-
մօլ ա «այնտեղի խաղողը համով է». ըստիան վէ կալավ «այստե-
ղից վերցրեց», ըտիան ուզըմ չի գնա «այդտեղից չի ուզում գնալ»,
ընդիան մի բան էլ ա բէրէլ չի հէտը «այնտեղից ոչ մի բան չի բե-
րել հետը»:

§ 262. Իբրև ստացական դերանուններ գործածվում են անձ-
նական և ցուցական դերանունների սեռական հոլովաձևերը՝ իմ, քու,
նրա, իրա, մեր, ձեր, նրանց, իրանց, սրա, դրա, սրանց, դը-
րանց, որոնք միշտ դրվում են գոյականից առաջ և հանդիսանում են
նրա հատկացուցիչը, օրինակ՝ իմ տունը, քու ծառը, նրա ախիկը,
իրա կրնիկը, մեր հէրէրը, ձեր մէրէրը, նրանց ձիանը, իրանց իծա-

նը և այլն: Բոլոր դեպքերում գոյականն ունենում է ք կամ ֆ որոշ-
յալ հոգը: Այս դերանունների հետ սովորաբար չեն կարող գործած-
վել 1-ին և 2-րդ դեմքերի ստացական հոգեր (ս, դ): Լոռու խոսված-
քում չի ասվում իմ տունըս, քու տունըդ, այլ՝ իմ տունը, քու տունը:
Միայն հատուկ շեշտելու դեպքում կարելի է գործածել և՛ դերանու-
նը, և՛ ստացական հոգը, օրինակ՝ իմ աշկովըս տէ՛հա, իմ անշկովըս
լըսէ՛ցի և այլն:

Ստացական անձնական դերանունները կարող են փոխարինվել
հոգերով. 1-ին դեմքի համար ս, 2-րդ դեմքի համար տ, 3-րդ դեմքի
համար ր կամ ն:

1-ին դեմք—տունըս «իմ տունը», հացըս «իմ հացը», ձիս «իմ
ձին», ձեռըս «իմ ձեռքը»:

2-րդ դեմք—տունըտ «քո տունը», հացըտ «քո հացը», ձիտ «քո
ձին», ձեռըտ «քո ձեռքը»:

3-րդ դեմք—տունը «նրա տունը», հացը «նրա հացը», ձին «նր-
ա ձին», ձեռը «նրա ձեռքը»: Երրորդ դեմքում, ինչպես արդի հայե-
րենում է, ստացականությունը թույլ է գրսևորվում:

Ստացական հոգերը դրվում են նաև գոյականի հոգնակի ձևի
վրա, ինչպես՝ տընէրս «իմ տները», հացէրս «իմ հացերը», տընէ-
րըտ «քո տները», հացէրտ «քո հացերը» և այլն:

Ստացական հոգերի հոգնակիություն արտահայտելու համար
բոլոր գոյականները՝ թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ, ստանում են
ներու մասնիկը, որի վրա և դրվում են ստացական հոգերը:

Այսպես՝ տունըս նշանակում է իմ տունը, տընէրս՝ իմ տները,
իսկ մեր տները իմաստը արտահայտելու համար գործածվում է
տուննէրուս ձևը (օրինակ՝ տուննէրուս քանդվեց): Նույն ձևով էլ՝
ձեռնէրուս «մեր ձեռքերը», վոտնէրուս «մեր ոտքերը» հացնէրուս
«մեր հացերը», ծառնէրուս «մեր ծառերը», խընձորնէրուս «մեր խըն-
ձորները», ձէռնէրուս «ձեր ձեռքերը», վոտնէրուս «ձեր ոտքերը»,
հացնէրուս «ձեր հացերը», ծառնէրուս «ձեր ծառերը», խընձորնէ-
րուս «ձեր խնձորները» և այլն:

Քերում ենք այսպիսի ձևերի գործածությունը նախադասության
մեջ:

Ձեռնէրուս ջառթվեց ընթան ջուր կըրէցինք (ձեռքներս).

Վոտնէրուս իրանց տանիցը կըտրէցինք (ոտքներս).

Հացնէրուս ըստարի պակաս ա (հացներս).

Ծառնէրուս շորացել ա (ծառներս).

Սիռնէրուս կոտրիլ մէք, գոռձը կըհաշօղվի (սրտներդ).

Մէշկնէրուս կըկոտրէր, վոր էս գոռձն անէիք (մեջքներդ):

§ 263. Ստացական դերանունները գոյականաբար գործածվելիս հոդ են ստանում և հոլովվում ի հոլովմամբ, օրինակ.

Ուղղ.	Իմը	Իմինը
Տր.	Իմին	Իմինին
Բաց.	Իմիցը	Իմինիցը
Գործ.	Իմովը	Իմինովը
Ներգ.	—	—

§ 264. Իմը, քունը, իրանը, մերը, ձերը, իրանցը ստացականները գործածվում են այն դեպքում, երբ դրանց տակ հասկացվող գոյականը եզակի է (օր. Իմը քունիցը լավն ա=իմ կովը քո կովից լավն է. Մերը ձերիցը սիրուն ա=մեր աղջիկը ձեր աղջկանից սիրուն է), իսկ երբ հոգնակի է, գործածվում են դրանց հոգնակիի ձևերը՝ իմօնք, քունօնք, մերօնք, ձերօնք (երրորդ դեմքի համար հոգնակիի ձև չկա), որոնք հոլովվում են հետևյալ ձևով.

Ուղղ.	Իմօնք	քունօնք
Տր.	Իմոնցի Իմոնցինի	քունոնցի քունոնցինի
Բաց.	Իմնոցի Իմնոցինի	քունոնցի քունոնցինի
Գործ.	Իմոնցովը Իմոնցինովը	քունոնցովը քունոնցինովը
Ներգ.	Իմոնցըմը Իմոնցինըմը	քունոնցըմը քունոնցինըմը

Մերօնք և ձերօնք դերանունները նույնպես հոլովվում են այսպես:

§ 265. Ինչպես ասել ենք, ստացական հոդերի հետ գոյականը սովորաբար գործածվում է առանց ստացական դերանունների:

Ստացական հոդերով գոյականը հոլովվում է այսպես.

Ուղղ.	Վոտըս	Վոտնէրըս	Վոտնէրուս
Տր.	Վոտիս	Վոտնէրիս	Վոտնէրուս
Բաց.	Վոտիցըս	Վոտնէրիցըս	Վոտնէրուցըս
Գործ.	Վոտովըս	Վոտնեբովըս	—
Ներգ.	Վոտըմըս	Վոտնեբըմս	—

Վոտնէրուս, աչիէրուս և այլ ձևերը գործածվում են ուղղական, սեռական, տրական և հայցական հոլովների իմաստով, բացառականի ձևն է վոտնէրուցըս, իսկ գործիականի և ներգոյականի ձևերը բացակայում են (այդ իմաստները կարելի է արտահայտել հոգնակերտ մասնիկի կրկնությամբ՝ վոտնէրնէրօվըս, վոտնէրնէրմըս, որոնք քիչ գործածական ձևեր են):

Արդեն ասվել է, որ վոտըս=իմ ոտքը, վոտնէրըս=իմ ոտքերը, վոտնէրուս=մեր ոտքերը:

§ 266. Լոռու խոսվածքի որոշյալ դերանուններն են՝ ամէն, ամէք, ամէն մինը, չիմ, բիրադի, սադ: Սրանք հոլովվում են հետևյալ ձևով.

Ուղղ.	ամէքը	ամէն մինը	չիմ	բիրադի	սադ
Տր.	ամէքին	ամէն մընին	չիմուն	բիրադնուն	սադին
Բաց.	ամէքուցը	ամէն մընիցը	չիմուցը	բիրադնուցը	սադիցը
Գործ.	ամէքովը	ամէն մընովը	չիմնովը	բիրադնովը	սադովը
Ներգ.	ամէքմը	ամէն մընմը	չիմնմը	բիրադնմը	սադմը

§ 267. Խոսվածքիս անորոշ դերանուններն են՝ մինը, օմմին, ուրիշ, էսինչ, էնինչ, մի քանի, մի քանիսը: Սրանք հոլովվում են հետևյալ ձևով.

Ուղղ.	մինը	օքմին	ուրիշը	էսինչը	մի քանիսը
Տր.	մընին	օքմընու	ուրիշին	էսընչին	մի քանըսին
Բաց.	մընիցը	օքմընուցը	ուրշիցը	էսընչիցը	մի քանըսիցը
Գործ.	մընովը	օքմընովը	ուրշովը	էսընչովը	մի քանըսովը
Ներգ.	մընմը	օքմընմը	ուրշմը	էսընչմը	մի քանըսմը

§ 268. Խոսվածքիս հարցական-հարաբերական դերանուններն են. օ՛վ, ի՛նչ, վո՛ւր, ի՛նչքան(մ), քա՛նի, ի՛շխովուր, վո՛ւրդի, ո՛ւր յէ՛փ, դըվո՛ւր (դէպի ո՛ւր (կողմը)), վո՛նց, խի՛, «ինչո՛ւ» ի՛նչդպա «ի՛նչքան»:

Օ՛վ, ի՛նչ, վո՛ւր դերանունները հոլովվում են հետևյալ ձևով.

Ուղղ.	օ՛վ	ի՛նչը	վո՛ւրը
Տր.	ո՛ւմ	ընչի՛ն	վո՛ւրին
Բաց.	ո՛ւմնի	ընչի՛ցը	վո՛ւրիցը
Գործ.	ո՛ւմնով	ընչօ՛վը	վո՛ւրովը
Ներգ.	—	ընչը՛մը	վո՛ւրմը

Օ՛վ և վո՛ւր դերանունները հոգնակիի ձևեր չունեն:

Ի՛նչ դերանվան հոգնակիի հոլովական ձևերն են.

Ուղղ.	ընչէ՛ր(ը)
Տր.	ընչէ՛րի (ն)
Բաց.	ընչէ՛րից(ը)
Գործ.	ընչէ՛րով(ը)
Ներգ.	ընչէ՛րմ(ը)

Վո՛ւրդի բառն ունի միակ հոլովական ձևը՝ վո՛ւրդիան, որն արտահայտում է սեռական և բացառական հոլովների իմաստ:

Յե՛փ բառն ունի սեռական՝ յէփվա և բացառական՝ էփվանի հոլովաձևերը:

§ 269. Փաստորեն խոսվածքը ժխտական դերանուններ չունի:

Գրականի ժխտական դերանուններին խոսվածքում համապատասխանում է հատուկ շարահյուսական կառուցվածք: Ոչ ոք և ոչ մեկը դերանունների իմաստով գործածվում է մինն էլա, իսկ ոչ մի և ոչինչ դերանունների փոխարեն՝ մի... էլա, մի բան էլա կապակցությունները, օրինակ՝ Ոչ ոք չեկավ «Մինն էլա էկավ ոչ», Ոչ մեկը տանը չէր «Մինն էլա տանը չէր», Ոչ մի շնորհք չունի «Մի շնորք էլա ունի վոչ», Ոչինչ չէր բերել հետը «Մի բան էլա բերել չէր հետը»: Գրականի երկու ժխտման փոխարեն, ինչպես տեսնում ենք, խոսվածքում առկա է միայն մեկը:

§ 270. Խոսվածքի փոխադարձ դերանուններն են իրար||իրու, մինը մընու: Սրանք հոլովվում են հետևյալ կերպ.

Ուղղ. — — — —

Տրակ. իրար իրուր	մինը մընու(ն)
Բաց. իրարի իրուրի	մինը մընուց (ը)
Գործ. իրարով (իրուրով)	մինը մընով(ը)
Ներգ. իրարում (իրուրում)	մինը մընում(ը)

V. ԲԱՅ

§ 271. Ըստ անորոշ դերբայի կազմության կոռու խոսվածքները բաժանվում են երկու խմբի:

Խոսվածքների մի մասում անորոշ դերբայն ունենում է ի և ա լծորդությունները, օրինակ՝ բրժանիլ, փախչիլ, հաքնիլ, աղալ, բըցրանալ: Այդ ուղղությանն են հետևում Ստեփանավանի և Կիրովականի (Գուգարքի) գյուղերը:

Խոսվածքների մյուս խմբում անորոշ դերբայն ունենում է ե(իե), ա, ի և ու լծորդությունները, օրինակ բրժանել, աղալ, փախչիլ, հաքնու: Այս ուղղությանն են հետևում Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի գյուղերը: Այս խմբում պահպանվել են գրաբարի բոլոր լծորդությունները, բացի ա-ից, որը հանդես էր գալիս միայն գոլ բայի մեջ:

1. Դերբայներն ու նրանց կազմությունը

§ 272. Կոռու խոսվածքն ունի հետևյալ դերբայները. անորոշ, անկատար, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժամանակի և ձևի:

§ 273. Ապառնի դերբայը բացակայում է: Սահմանականի ա-

սլաոնի ժամանակների իմաստը արտահայտվում է հարկադրականի ձևերի միջոցով: գրականի գնալու եմ, գնալու էի ձևերին խոսվածքում համապատասխանում են գնալ տեմ, գնալ տէի ձևերը:

Ճիշտ է, խոսվածքում կան այսպիսի ձևեր: էս խալին բա դէն քրցէ՛լու ա, էս ապրանքը պրհէ՛լու ա, էս ջուրը խրմէ՛լու ա և այլն: Բայց քրցէլու, պրհէլու, խրմէլու բառաձևերը ոչ թե ապառնի դերբայներ են, այլ անորոշի տրական հոլովաձևեր: Այդպիսի ձևերի գործածությունը բացատրվում է նրանով, որ անորոշի տրականը հանդես է գալիս որպես որոշիչ, օրինակ՝ դէն քրցէլու խալի, պրհէլու ապրանք, խրմէլու ջուր և այլն: Ուրեմն և վերևում բերված նախադասությունների մեջ ընդգծված բառաձևերը ոչ թե պարզ ստորոգյալներ են՝ կազմված ապառնի դերբայից և օժանդակ բայից, այլ անորոշի տրական հոլովով ու հանգույցով կազմված բաղադրյալ ստորոգյալներ են և բայի խոնարհման համակարգի հետ կապ չունեն:

§ 274. Անորոշ դերբայը կազմվում է իլ||ել, ալ, նիլ||նուլ, շիլ, անալ, նալ, էնալ ածանցներով:

Իլ||ել վերջավորվող բայերը մեծ թիվ են կազմում և մատավորապես համապատասխանում են գրաբարի և արդի հայերենի ել վերջավորվող բայերին, ինչպես. ազատել>ըզատիլ, իսկ խոսվածքների երկրորդ խմբում՝ ըզատել, ածել>ածիլ||ածել, աղօթել>աղօթիլ||աղօթել¹, ամանել>ըմանչիլ||մանչիլ, այրել>էրիլ, անիծել>անըծիլ, ապսպարել>բըսպարիլ, առնել>անիլ, ասել>ասիլ, արածել>ըրածիլ, աւերել>աւէրիլ, բաժանել>բըժանիլ, բամբասել>բըմբասիլ, բաշխել>բախշիլ, բարակել>բըրակիլ, բերել>բէրիլ, բռնել>բըռնիլ, զգել>զըզիլ, գովել>գօվիլ||գօվալ, գործել>գոռծիլ, գրել>զըրիլ, դալարել>զըլարիլ, դատարկել>զըռզակիլ, դեղել>դէղիլ, դեղնել>զևղնիլ, դիզել>զիզիլ, երգել>յէրքյիլ, եփել>էփիլ, զարդարել>զըռթարիլ, զրկել>զըրզիլ, ընտրել>հընդրիլ, թաթախել>թըթախիլ, թափել>թափիլ, թխել>թըխիլ, թրջել>թըռչիլ, թքել>թըքյիլ և այլն, և այլն (այս բայերի ամբողջական ցուցակը տե՛ս բառացանկում):

Խոսվածքների առաջին խմբում գրաբարի իլ կազմության բայերին մեծ մասամբ համապատասխանում է իլ ձևը, իսկ մյուս խմբում՝ ել ձևը, ինչպես՝ աճիլ>աճիլ||ել, աշխատիլ>ըշխատիլ||ել, ապրիլ>ապրիլ||ել, դադարիլ>դըթարիլ||ել, զգուիլ>զըզվիլ||ել, թաղկիլ>թախկիլ||ել, թթուիլ>թըթվիլ||ել, թմրիլ>զըմբրիլ||ել, լինել>ըլիլ||

¹ Համառոտության համար խոսվածքների երկրորդ խմբի համապատասխան անորոշ դերբայները, որոնք կազմվում են ել-ով, չենք բերում:

եւ, խոստովանիլ>խօստովանիլ||եւ, ծաղկիլ>ծախկիլ||եւ, ծարաւիլ>ծըրավիլ||եւ, ծիծաղիլ>ծիծաղիլ||եւ, ծլիլ>ծըլիլ||եւ, ծնանիլ>ծընիլ||եւ, կատաղիլ>կըտաղիլ||եւ, կարօտիլ>կարօտիլ||եւ, հակառակիլ>հըկառակիլ||եւ, հաւասարիլ>հըվասարիլ||եւ, մգլիլ>մըքլիլ||եւ, մոլորիլ>մըլօրիլ||մըլօրիլ||եւ, մորմոքիլ>մըրմօքիլ||եւ, մրսիլ>մըղսիլ||եւ, նեխիլ>նէխիլ||նէխիլ||եւ, նուաղիլ>նըղավիլ||եւ, շուարիլ>շըվարիլ, պապանծիլ>պապանծիլ||պըպանծիլ||եւ, պարտակիլ>պըռտակիլ||եւ, սարսափիլ>սառսափիլ||եւ, վաստակիլ>վաստակիլ||վըստակիլ||եւ, ցամաքիլ>ցըմաքիլ||եւ, ցնդիլ>ցընդիլ||եւ, բայց խոսվածքների երկրորդ խմբում (Նոյնմբերյան և Ալավերդի) գրաբարյան պարզ իլ ձևը պահպանվել է մի քանի բայերի մեջ, որոնք են՝ փտիլ>փըթիլ, քնիլ>քընիլ, քրտնիլ>քըռգընիլ, նաև տանիլ>տանիլ (ն-ն ածանց է): Պարզ ի լծորդությունը հանդես է գալիս նաև ունիմ բայի մեջ:

Ալ կազմության բայերը մոտավորապես համապատասխանում են գրաբարի և արդի հայերենի ալ վերջավորվող բայերին. ինչպես. աղալ>աղալ, գոռալ>գոռալ, դողալ>դողալ, եռալ>յէռալ, խաղալ>հաղալ, խղճալ>խըխճալ, կարդալ>կառթալ, հազալ>հազալ, հատալ>հըվատալ, մնալ>մընալ, շողալ>շողալ և այլն: Շատ են ալ վերջավորվող բնաձայնություն արտահայտող բայերը, օր. գըռգըռալ, գըռգըռալ, սըվսըվալ, ճըռճըռալ, քըչքըչալ, ճըղճըղալ, մըշմըշալ, փըսփըսալ, խըշխըշալ, խըռթխըռթալ, խըռխըռալ, թըխխթըխկալ, կըռկըռալ, ծըվծըվալ և այլն:

Նիլ կազմության բայերը փոքր թիվ են կազմում և համապատասխանում են գրաբարի անիլ||անել, արդի հայերենի նել վերջավորվող բայերին, ինչպես՝ ազանիլ>հաքնիլ, անկանիլ>ընգնիլ, գտանել>քըթնիլ||գըղնիլ, հասանիլ>հասնիլ, հատանիլ>հատնիլ, մեռանիլ>մեռնիլ, պրծանիլ>պըռծնիլ, մտանիլ>մըտնիլ: Գրաբարյան առնուլ բայը դարձել է առնիլ:

Երկրորդ խմբի խոսվածքներում այս ձևերին համապատասխան ունենում ենք նույլ, ինչպես՝ ազանիլ>հաքնուլ, գտանել>գըղնուլ, հասանիլ>հասնուլ, հատանիլ>հատնուլ, մտանիլ>մտնուլ, առնուլ>առնուլ կամ նիլ, ինչպես՝ անկանիլ>ընգնիլ, մեռանիլ>մեռնիլ. պրծանիլ>պըռծնիլ:

Գրաբարյան ու լծորդությունը երևան է գալիս նաև թողուլ>թօղուլ||թօղնուլ բայի մեջ:

Չիլ կազմության բայերը փոքր թիվ են կազմում և խոսվածքների երկու խմբում էլ համապատասխանում են գրաբարի չիլ, արդի հայերենի չել վերջավորվող բայերին, ինչպես. թռչիլ>թըռ-

չիլ, հանգչիլ>հանգչիլ, ուռչիլ>ուռչիլ, փախչիլ>փախչիլ, կորչիլ
>կորչիլ:

Անալ կազմության բայերը մեծ թիվ են կազմում և համապատասխանում են գրաբարի և արդի հայերենի աճալ վերջավորվող բայերին, ինչպես. բարձրանալ>բըցրանալ, գողանալ>գողանալ, դիմանալ>դիմանալ, թանկանալ>թանգանալ, թեթևանալ>թեթևանալ, թուլանալ>թիլանալ, իմանալ>իմանալ, լողանալ>լղանալ, լուանալ>լըվանալ, լուսանալ>լիսանալ, լրբանալ>լըբփանալ, խեղճանալ>խէխճանալ, խոստանալ>խօստանալ, խորթանալ>խոռթանալ, ծանրանալ>ծընդրանալ, ծանօթանալ>ծանօթանալ, կշտանալ>կըշտանալ և այլն (ամբողջական օրինակները տե՛ս բառացանկում):

Նալ կազմություն ունեն մի քանի բայեր՝ դառնալ>գառնալ, տեսանել>տէնալ և աւելանալ>էվէլնալ, բայց կա նաև էվէլանալ ձևը:

Էճալ ձևով ունենք 2 բայ՝ գիտենալ>գյիղէնալ և անցանել>անց կյէնայ: Արքեճալ և վայխեճալ բայերը վերածվել են սոսկ իյլել ձևի՝ հարփիլլել, վախիլլել, իսկ մոռեճալ բայը՝ աճալ ձևի՝ մողկաճալ: Թորդության (կազմության) փոփոխության են ենթարկվել նաև մի քանի ուրիշ բայեր, օրինակ՝ երկիլ>ըրէվալ, թողուլ>թօղալ (I խումբ), լալ>լաց ըլիլլել, ընուլ>ըբցընիլլել, խօսիլ>խօսալ, յետելիլ>յէղէվալ և այլն: Նկատի պետք է ունենալ նաև այն, որ որոշ համադրական կազմություններ վերածվել են հարադրությունների, օրինակ՝ կախել>կախ անիլ, անցանել>անց կյէնալ, բանալ>բաց անիլ, երզնուլ>օրթըմ ուտիլ, թիկնել>թինլը տալ, լալ>լաց ըլիլ, վերցնել>վէր ունիլ, իջանել>վէր գալ և այլն:

Անորոշի մասնիկներից խոսվածքում կենդանի և գործուն են միայն իլլել, աճալ և ալ ձևերը: Մյուս մասնիկները՝ ճիլլնուլ, չիլ, ճալ, էճալ քարացած են, գործածվում են միայն մի քանի բայերի մեջ, և դրանցով նոր բայեր չեն կազմվում:

Լոռու խոսվածքում անորոշ դերբայն ունի անվանական և բայական գործածություն:

Գոյականաբար գործածվելիս անորոշ դերբայը հոգ է ստանում ու հոլովվում ու հոլովմամբ՝ նախադասության մեջ հանդես գալով ենթակայի, խնդրի և այլ պաշտոններով, օրինակ՝ Ուտիլ-խըմիլը լավ բան ա «ուտել-խմելը լավ բան է»: Կարճ գարի հընձիլը դըժար ա «կարճ գարի հընձելը դժվար է»: Տանիլը սիրըմ էս,

համա յէդ տալը՝ չէ «տանելը սիրում ես, բայց ետ տալը՝ ոչ» և այլն:

Բայական գործածությամբ անորոշ դերբայը մասնակցում է ժամանակների կազմությանը, բաղադրելով հարկադրական եղանակի ապառնի՝ ուտիլ տէմ «պիտի ուտեմ» և անցյալի ապառնի՝ ուտիլ տէի «պիտի ուտեի», պայմանական եղանակի ժխտական ապառնի՝ ուտիլ չեմ «չեմ ուտի», ժխտական անցյալի ապառնի՝ ուտիլ չէի «չէի ուտի» ժամանակները և արգելական հրամայականի եզակին՝ ուտիլ մի «մի կեր» ու հոգնակին՝ ուտիլ մէք «մի կերեք» (տե՛ս § 289, 290, 291):

§ 275. Անկատար դերբայը կազմվում է քմ (<ում) վերջավորությամբ, որ դրվում է անորոշի վերջավորությունների տեղում, ինչպես՝ խափիլ-խափում, խաշիլ-խաշում, խընահիլ-խընահում, գոռալ-գոռում, յեռալ-յէռում, հաքնիլ||ուլ-հաքնում, թըռչիլ-թըռչում, լըվանալ-լըվանում, շըտանալ-շըտանում և այլն: Միայն 2 բայ՝ գալ և տալ անկատար դերբայը կազմում են իս վերջավորությամբ, որ դրվում է անորոշի ձևի վրա՝ գալիս, տալիս:

Անկատար դերբայն ունի միայն բայական գործածություն, նա բաղադրում է սահմանական եղանակի ներկա՝ գրքում էմ, գալիս էմ, տալիս էմ և անցյալի անկատար՝ գրքում ի, գալիս ի, տալիս ի ժամանակները: Շրջոն շարադասության ժամանակ իս վերջավորվող դերբայների ս վերջավորությունն ընկնում է, օրինակ՝ գալիս չէմ, տալիս չէմ, բայց՝ չէմ գալի, չէմ տալի:

§ 276. Վաղակատար դերբայը կազմվում է էլ||ել ածանցի միջոցով, որ դրվում է իլ||ել վերջավորվող բայերի անորոշի, իսկ նիլ, նուլ, չիլ, ալ, անալ վերջավորվող բայերի անցյալի հիմքի վրա, ինչպես՝ ա) ըզատիլ||ըզատել-ըզատել||ել, բըրակիլ||բըրակել-բրակել||ել, դիզիլ||դիզել-դիզել||ել, թըխիլ||թըխել-թըխել||ել, լիզիլ||լիզել-լիզել||ել. բ) հաքնիլ||հաքնուլ-հաքնել||ել, մըտնիլ||մըտնուլ-մըտնել||ել, թըռչիլ-թըռչել||ել, փախշիլ||փախշել||ել, աղալ-աղացել||ել, յէռալ-յէռացել||ել, լըվանալ-լըվացել||ել, շըտանալ-շըտացել||ել և այլն:

Այսպիսով, կոռու որոշ խոսվածքներում բոլոր բայերի անորոշ և վաղակատար դերբայները որոշակիորեն տարբերակված են, քանի որ գրականին համապատասխան ել վերջավորվող բայերը անորոշում ունենում են իլ, իսկ վաղակատարում՝ էլ կամ ել վերջավորությունը:

Վաղակատար դերբայն ունի միայն բայական գործածություն,

այն է՝ բաղադրում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները, օրինակ՝ ըզատել եմ «ազատել եմ», ըզատել ի «ազատել էի»:

§ 277. Հարակատար դերբայը կազմվում է ածածանցով, որը բայահիմքերի վրա է դրվում վաղակատարի կանոններով, այսինքն՝ ածածանցն ավելանում է ի վերջավորվող բայերի անորոշի, իսկ նիլ, նուլ, չիլ, ալ, անալ վերջավորվող բայերի անցյալի հիմքի վրա, ինչպես՝ ա) ըզատիլ՝ ել-ըզատած, բերակիլ՝ ել-բերակած, դիզիլ՝ ել-դիզած, թըխիլ՝ ել-թըխած, լիզիլ՝ ել-լիզած. բ) հաքնիլ՝ նուլ-հաքած, մըտնիլ՝ նուլ-մըտած, թըռչիլ՝ թըռած, փախչիլ՝ փախած, աղալ-աղացած, յէռալ-յէռացած, լըվանալ-լըվացած, շըտանալ-շըտացած և այլն:

Հարակատար դերբայը բաղադրում է սահմանական եղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակները, օրինակ՝ ֆընած եմ «քնած եմ», ֆընած ի «քնած էի»¹:

Ինչպես ժամանակակից հայերենում է, կոռու խոսվածքում մի շարք բայերի հարակատար ժամանակները գործածական չեն: Հարակատար ժամանակներ չեն կազմում ներգործական սեռի բայերը, այլև այն չեզոք սեռի բայերը, որոնց ցույց տված գործողությունը չի հատկանշվում հետևանքային կողմով: Այսպես, օրինակ՝ գրելի, ջառքիլ, բերիլ, խափիլ, վազդիլ, պատմիլ, պաշտիլ, վառիլ, վարիլ բայերի հարակատար ժամանակները գործածական չեն:

Հարակատար ժամանակներ են կազմում բոլոր կրավորական բայերը, այլև այն չեզոք բայերը, որոնք դրություն են ցույց տալիս կամ որոնց ցույց տված գործողությունը հատկանշվում է հետևանքային կողմով, օրինակ՝ էրված ա, բըծանված ա, գըրված ա, ծալված ա, նըկարած ա, պոկված ա, վառված ա, ֆընած ա, նըստած ա, ջըգըրված ա «ջղայնացած է», նըլօրած ա «թառամած է», նէղացած ա, խըմած ա և այլն:

Ինչպես արդի հայերենում է, հարակատար դերբայը կոռու խոսվածքում ունի նաև անվանական գործածություն: Նախադասության մեջ նա կարող է գործածվել որպես որոշիչ, ենթակա, խնդիր և այլն, օրինակ՝ գրած նամակ, գրածը ջընջվիլ չի, հարվածիցը ի՞նչ էս ուզըմ և այլն:

§ 278. Ենթակայական դերբայը կազմվում է օղ ածանցով, որը դրվում է բոլոր բայերի անորոշի հիմքի վրա, անորոշ դերբայի

¹ Որոշ քերականներ հարակատար դերբայով և օժանդակ բայով կազմված ձևերը բայի խոնարհման համակարգի մեջ չեն մտնում, ուրիշները դիտում են որպես վիճակային ժամանակներ:

իլ||ել, ալ և ուլ ածանցների փոխարեն, օրինակ՝ ըզատիլ||ըզատող, գըրիլ||ել-գըրող, դիզիլ||ել-դիզող, հաքնիլ||ուլ-հաքնող, մըտնիլ||ուլ-մըտնող, թըռչիլ-թըռչող, աղալ-աղող, հաղալ-հաղող, լըվանալ-լըվանող, բըցրանալ-բըցրանող, մենձանալ-մենձանող և այլն:

Ենթակայական դերբայը ժամանակների կազմությանը չի մասնակցում և ունի միայն անվանական գործածություն. նախադասության մեջ դառնում է որոշիչ, ենթակա, խնդիր և այլն, օրինակ՝ մեննող ըէխա, խօսողին լըսող պըտի, անձրեկից փախչողը կարկուտի տակ ընգավ և այլն:

§ 279. Ժամանակի դերբայը (անկատար դերբայի երկրորդ ձևը) չոռու գյուղերի մի մասում կազմվում է ուս, իսկ մյուս մասում՝ իս ածանցներով, որոնք դրվում են անորոշի վրա, ինչպես՝ բէրիլ-բէրէլուս կամ բէրէլիս, գըրիլ-գըրէլուս||իս, կանչիլ-կանչէլուս||իս, դողալ-դողալուս||դողալիս, թըռչիլ-թըռչէլուս||իս, կոռչիլ-կոռչէլուս||իս և այլն:

Ժամանակի դերբայը ուս ձևով են կազմում Ստեփանավանի շրջանի գյուղերը (Գյառ-գյառ, Վարդաբուր, Գյուլագարակ, Հոբարձի և այլն), Կիրովականի շրջանի Մեղրուտ, Համզաչիման, Ալավերդու շրջանի Այգեհատ, Արզվի և այլ գյուղերը:

Ժամանակի դերբայը իս ձևով են կազմում Նոյեմբերյանի շրջանի գյուղերը (Արճիս, Ղալաչա, Կոթի և այլն), Գուգարքի Վահագնի, Ալավերդու Ղաչաղան, Աքորի, Դսեղ գյուղերը և այլն:

Չոռու խոսվածքի ժամանակի դերբայը համապատասխանում է արդի հայերենի անկատարի 2-րդ ձևին՝ իս վերջավորվող դերբային: Ունի այն գործածությունները, ինչ արդի հայերենի իս վերջավորվող անկատար դերբայը, այն է՝ լինել>ըլիլ օժանդակ բայի հետ բաղադրում է երկրորդական ժամանակներ, օրինակ՝ գընալուս||իս էմ ըլըմ, գընալուս||իս եմ էլէլ, գընալուս||իս էլա և այլն, իսկ առանձին գործածվելով ցույց է տալիս գլխավոր գործողության կատարման ժամանակը, օրինակ՝ Տուն գալուս||իս նրան տէ՛նա «տուն գալիս նրան տեսա», Հաց ուտէլուս||իս խօսալ շէն «հաց ուտելիս շեն խոսի», Վագեւուս||իս վեր ընգավ «վագելիս վեր ընկավ» և այլն:

§ 280. Ձևի դերբայը կազմվում է էն ածանցով, որ դրվում է անորոշի վրա, ըստ որում, անորոշի իլ ածանցը այդ դեպքում փոխվում է էլ-ի, օրինակներ. ըրածիլ-ըրածէլէն, գոռձիլ-գոռձէլէն, յէր-քիլ-յէրքէլէն, թափիլ-թափէլէն, թըռչիլ-թըռչէլէն, դողալ-դողալէն,

մըխկըտալ-մըխկըտալէն, սըռսըռալ-սըռսըռալէն, թիւանալ-թիւանալէն¹ և այլն:

Էն վերջավորվող դերբայները ցույց են տալիս գործողության կատարման ձևը, օրինակ՝ Յէրֆյէլէն ա ման գալի «երգելով է ման գալիս»։ Ուտէլէն ա գոռձ աճըմ «ուտելով է գործ անում»։ Դըղդղալէն տուն մըտալ «դողդողալով տուն մտավ»։ Սըռսըռալէն գընաց ջրի «սրթսրթալով գնացի ջրի» և այլն:

2. Խոնարհում

§ 281. Լոռու խոսվածքում բայն ունի 5 եղանակ՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական և հրամայական։ Սահմանական եղանակն ունի 7 ժամանակ՝ ներկա, անցյալ անկատար, վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար և անցյալ կատարյալ։ Սրանք բոլորը, բացի անցյալ կատարյալից, բաղադրյալ ժամանակներ են և կազմվում են դերբայներով ու օժանդակ բայով:

Օժանդակ բայի ներկայի ձևերն են էմ, էս, ա, էնֆ, էֆ, էն կամ Լ, ձայնավորի երկբարբառացմամբ՝ եմ, ես, ա, ենֆ, եֆ, են (այս վերջին ձևերն ունեն, օրինակ, նոյեմբերյանի շրջանի գյուղերը, Ալավերդու շրջանի որոշ գյուղեր և այլն):

Օժանդակ բայի անցյալի ձևերում, բացի եզակի երրորդ դեմքից, է ձայնավորն ընկնում է: Ըստ այդմ, օժանդակ բայի անցյալի ձևերն են՝ ի, իր, եր, ինֆ, իֆ, ին:

Ստեփանավանի Վվերդլով գյուղում օժանդակ բայի անցյալի ձևերն են՝ էյ (<էի), էյր(<էիր), էր, էյնֆ(<էինֆ), էյֆ (<էիֆ), էյն(<էին):

Ըղձական եղանակը իր դրսևորումներով բավականին մոտ է դրական հայերենի ըղձական եղանակին:

Պայմանական եղանակը կազմվում է ըղձականից՝ կը եղանակիչով:

Հարկադրական եղանակը կազմվում է անորոշ դերբայից և ա կամ պըտ եղանակիչներից, որոնց վրա դրվում են դիմային վերջավորությունները:

Հրամայականի եզակին կազմվում է ի, ա, իսկ հոգնակին՝ էֆ վերջավորություններով:

¹ Որոշ լեզվաբաններ այս դերբայը կոչում են ընթացակցական (տե՛ս Ա. Արարահմյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1954):

3. Առաջին խոնարհում

§ 282. Առաջին խոնարհման բայերը անորոշում խոսվածք-
ների մի մասում ունենում են իլ, իսկ մյուս մասում ել ածանցը,
օրինակ՝ էրիլ||ել, բրժանիլ||ել, բէրիլ||ել, գըզիլ||ել, դիզիլ||ել, լա-
փիլ||ել և այլն:

Այս խոնարհման պատկերը հետևյալն է.

Դ ե Ր Բ ա յ ն ե ր

Անորոշ	բրժանիլ բրժանել	գոռձիլ գոռձել
Անկատար	բրժանում	գոռձում
Վաղակատար	բրժանել բրժանել	գոռձել գոռձել
Հարակատար	բրժանած	գոռձած
Ծնթակայական	բրժանող	գոռձող
Ժամանակի	բրժանելուս իս	գոռձելուս իս
Չևի	բրժանելէն	գոռձելէն

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն ե ր կ ա

Սահմանականի ներկան կազմվում է անկատար դերբայի և օ-
ւսանդակ բայի ներկայի ձևերի միջոցով, ինչպես.

բրժանում էմ (եմ)	բրժանում էնք (ենք)
բրժանում էս (ես)	բրժանում էք (եք)
բրժանում ա	բրժանում էն (են)

գոռձում էմ (եմ)	գոռձում էնք (ենք)
գոռձում էս (ես)	գոռձում էք (եք)
գոռձում ա	գոռձում էն (են)

Ա ն ց յ ա լ ա ն կ ա տ ա ր

Անցյալ անկատարը կազմվում է անկատար դերբայի և օժան-
դակ բայի անցյալի ձևերի միջոցով, ինչպես.

բրժանում ի	բրժանում ինք	գոռձում ի	գոռձում ինք
բրժանում իր	բրժանում իք	գոռձում իր	գոռձում իք
բրժանում էր	բրժանում ին	գոռձում էր	գոռձում ին

Լուռու խոսվածքում կա նաև մի երկրորդ անկատար, որ նույ-
նանում է գրաբարյան անկատարին, այսինքն՝ ոչ թե կազմվում է

դերբայով և օժանդակ բայով, այլ՝ բայահիմքով և վերջավորութ-
 թյուններով, ինչպես.

բրժանէի	բրժանէինք	գոռձէի	գոռէինք
բրժանէիր	բրժանէիք	գոռձէիր	գոռձէիք
բրժանէր	բրժանէին	գոռձէր	գոռձէին

Անկատարի այս ձևը կարող են ունենալ նաև իլլեյ խոնարհման
 ուրիշ բայեր, օրինակ՝ ածէի (ածում էի), աղօթէի (աղօթում էի),
 քմանչէի (ամաչում էի), ածէի (ածում էի), աղօթէի (աղօթում էի),
 գըզէի (գզում էի), դըռդակէի (դատարկում էի), դիզէի (դիզում էի),
 զըռճարէի (զարգարու՞ էի), էփէի (եփում էի), թըխէի (թխում էի),
 խըմէի (խմում էի) և այլն:

Անկատարի այս ձևը կարող են ունենալ նալ, ալլանալ վերջա-
 վորվող բայերը, ըստ որում, նրանք այս դեպքում փոխվում են I խո-
 նարհման, ինչպես գընալ՝ գընէի, գընէիր, գընէր, գընէինք, գընէիք,
 գընէին. բըցրանալ՝ բըցրանէի, բըցրանէիր, բըցրանէր, բըցրանէինք,
 բըցրանէիք, բըցրանէինք. գալ՝ գյէի, գյէիր, գյէր, գյէինք, գյէիք,
 գյէին: Օրինակ. Ամեն օր գընէի տէնէի՝ դուռը բաց ա «Ամեն օր
 գնում-տեսնում էի՝ դուռը բաց է»:

Պարզ կազմության այս անկատարը՝ լինի գրաբարյան անկա-
 տարի անմիջական շարունակությունը, թե բարբառային հիմքի
 վրա բարձրացած նոր քերականական ձև, կոռու խոսվածքի ամե-
 նահետաքրքրական երևույթներից մեկն է:

Վ ա դ ա կ ա տ ա ր

Վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբա-
 յով և օժանդակ բայի ներկայի ձևերով.

բրժանէլ (ել) էմ (եմ)	գոռձէլ (ել) էմ (եմ)
բրժանէլ (ել) էս (ես)	գոռձէլ (ել) էս(ես)
բրժանէլ (ել) ա	գոռձէլ (ել) ա
բրժանէլ (ել) էնք (ենք)	գոռձէլ (ել) էնք (ենք)
բրժանէլ (ել) էք (եք)	գոռձէլ (ել) էք (եք)
բրժանէլ (ել) էն (են)	գոռձէլ (ել) էն (են)

Ա ն ց յ ա լ ի վ ա դ ա կ ա տ ա ր

Անցյալի վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար
 դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով.

բրժանէլ (ել) ի բրժանէլ (ել) ինք գոռձել (ել) ի գոռձել (ել) ինք

» իր » իք » իր » իք
» էր » ին » էր » ին

Հ ա ր ա կ ա տ ա ր

Հարակատար ժամանակը կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով: Ինչպես ասել ենք, սովորաբար հարակատար ժամանակներ ունեն կրավորական բայերը և չեղոք սեռի բայերի մի մասը:

բրժանված էմ (եմ)	բրժանված էնք (ենք)
բրժանված էս (ես)	բրժանված էք (եք)
բրժանված ա	բրժանված էն (են)
նրստած էմ (եմ)	նրստած էնք (ենք)
նրստած էս (ես)	նրստած էք (եք)
նրստած ա	նրստած էն (են)

Ա ն ց յ ա ի հ ա ր ա կ ա տ ա ր

Անցյալի հարակատար ժամանակը կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով.

բրժանված ի	բրժանված ինք
բրժանված իր	բրժանված իք
բրժանված էր	բրժանված ին
նրստած ի	նրստած ինք
նրստած իր	նրստած իք
նրստած էր	նրստած ին

Ա ն ց յ ա լ կ ա տ ա ր յ ա լ

Իլ||ել վերջավորվող բայերի անցյալ կատարյալը ցոյական է՝ էց բաղադրիչով և ունի ներգործածելի, իր, —, ինք, իք, ին վերջավորությունները.

բրժանէցի	բրժանէցինք	գոռձէցի	գոռձէցինք
բրժանէցիր	բրժանէցիք	գոռձէցիր	գոռձէցիք
բրժանէց	բրժանէցին	գոռձէց	գոռձէցին

ԲՂՁԵԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա. պ ա ո ն ի

Ըղձական եղանակի ապառնին կազմվում է բայահիմքով և էմ, էս, ի, էնք, էք, էն վերջավորություններով.

բրժանէմ (եմ) բրժանէնք (ենք) գոռձէմ (եմ) գոռձէնք (ենք)
 բրժանէս (ես) բրժանէք (եք) գոռձես (ես) գոռձէք (եք)
 բրժանի (ի) բրժանէն (են) գոռձի (ի) գոռձէն (են)

Անորոշ դերբայը ել-ով կազմող խոսվածքները եղակի եր-
 րորդ դեմքում ունենում են ե վերջավորութիւնը, ինչպես՝ բրժանե,
 գոռձե:

Բրժանէի, բրժանէիր, բրժանէր, բրժանէինք, բրժանէիք, բր-
 ժանէին ձեները (այսինքն՝ գրաբարյան անկատարի կամ արդի հա-
 չերենի ըղձական եղանակի անցյալի ձեները), ինչպես նշել ենք,
 խոսվածքում արտահայտում են անկատարի իմաստ: Այս նշանա-
 կում է, որ լոռու խոսվածքում ըղձական եղանակն ունի միայն ա-
 պառնի ժամանակ և բացակայում է անցյալի ապառնի ժամա-
 նակը: Ըղձականի անցյալի ապառնիի իմաստը կարող է արտա-
 հայտվել անցյալի վաղակատարի միջոցով, ինչպես.

Ինչ կըլէր Բէխուն հէտը ա բէրէլ իր «ինչ կլիներ երեխային հե-
 տըդ բերեիր». Էռնակ ինձ էլ իր ասէլ, յէս էլ կըգէի «երանի ինձ էլ
 ասէիր, ես էլ կգայի»:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա պ ա ո ն ի

Պայմանական եղանակի ապառնի ժամանակը կազմվում է
 ըղձականի ապառնուց՝ կը եղանակիչով.

կըբրժանէմ (եմ) կըբրժանէնք (ենք) կըգոռձէմ (եմ) կըգոռձէնք (ենք)
 կըբրժանէս (ես) կըբրժանէք (եք) կըգոռձես (ես) կըգոռձէք (եք)
 կըբրժանի (ի) կըբրժանէն (են) կըգոռձի (ի) կըգոռձէն (են)

Ստեփանավանի Գյառզյառ գյուղում կա նաև պայմանա-
 կանի մի երկրորդ ձև՝ կա եղանակիչով, որ գրվում է խոնարհվող
 բայից հետո, ինչպես.

բրժանէմ կա բրժանէնք կա գոռձէմ կա գոռձէնք կա
 բրժանէս կա բրժանէք կա գոռձես կա գոռձէք կա
 բրժանի կա բրժանէն կա գոռձի կա գոռձէն կա

Այս ձեները, ինչպես արդի հայերենում, ավելի շուտ ստույգ,
 քան պայմանական գործողութիւն են ցույց տալիս:

Ա ն ց յ ա ի ա պ ա ո ն ի

Պայմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակը կազ-
 մվում է պարզ անկատարից (ըղձականի անցյալի ապառնուց)՝ կը
 եղանակիչով.

կըբըժանէի կըբըժանէինք կըգոռձէի կըգոռձէինք
 կըբըժանէիր կըբըժանէիք կըգոռձէիր կըգոռձէիք
 կըբըժանէր կըբըժանէին կըգոռձէր կըգոռձէին

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա պ ա ո ն ի

Հարկադրական եղանակի ապառնին կազմվում է անորոշ դեր-
 բայից և տ կամ պըտ եղանակիչներից, որոնք ստանում են ներ-
 կայի դիմային վերջավորությունները (էմ, էս, ի և այլն)։

բըժանիլ տէմ(տեմ) կամ պըտէմ(եմ) բըժանիլ տէնք(տենք) կամ
 պըտէնք(ենք)

բըժանիլ տէս(տես) կամ պըտէս(ես) բըժանիլ տէք (տեք) կամ
 պըտէք(տեք)

բըժանիլ տի կամ պըտի բըժանիլ տէն(տեն) կամ
 պըտէն(են)

գոռձիլ տէմ(տեմ) կամ պըտէմ(եմ) գոռձիլ տէնք(տենք) կամ
 պըտէնք(ենք)

գոռձիլ տէս(տես) կամ պըտէս(ես) գոռձիլ տէք(տեք) կամ պըտեք
 (եք)

գոռձիլ տի կամ պըտի գոռձիլ տէն(են) կամ պըտէն
 (են)

Խոսվածքների երկրորդ խմբում ունենում ենք բըժանել տեմ,
 տես, գոռձել տեմ, տես և այլ ձևերը։

Ստեփանավանի Սվերդլով գյուղում հարկադրական եղանակը
 կարող է կազմվել նաև տի եղանակիչով, որը դրվում է խոնարհվող
 բայից առաջ, ինչպես.

տի բըժանեմ	տի բըժանենք
տի բըժանես	տի բըժանեք
տի բըժանի	տի բըժանեն

Նույն տեղում գործածական են նաև պըտի բըժանեմ, պըտի բը-
 ժանես, պըտի բըժանի և այլ ձևերը։

Հարկադրականի տի եղանակիչի գործածության հանդիպում
 ենք Հ. Թումանյանի մոտ, ինչպես.

է՛յ անխելք մարդ, հ՛րբ տի թողնես ապրողն ապրի սրտալի,
 Ե՛րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի¹։

¹ Հ. Թումանյան, Երկեր, հ. 1, Երևան, 1958, էջ 153։

Ա ն ց յ ա լ ի ա պ ա ո ն ի

Հարկադրական եղանակի անցյալի ապառնին կազմվում է անորոշ դերբայից և տ կամ պրտ եղանակիչներից, որոնք ստանում են անցյալի դիմային վերջավորությունները (էի, էիր, էր և այլն)։

բրժանիլ տէի կամ պրտէի	բրժանիլ տէինք կամ պրտէինք
բրժանիլ տէիր կամ պրտէիր	բրժանիլ տէիք կամ պրտէիք
բրժանիլ տէր կամ պրտէր	բրժանիլ տէին կամ պրտէին

գոռձիլ տէի կամ պրտէի	գոռձիլ տէինք կամ պրտէինք
----------------------	--------------------------

» տէիր » պրտէիր	» տէիք » պրտէիք
-----------------	-----------------

» տէր » պրտէր	» տէին » պրտէին
---------------	-----------------

Հարկադրականի ձևերը հավասարապես գործածվում են նաև սահմանականի ապառնիի և անցյալի ապառնիի իմաստով։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եղակի հրամայականը խոսվածքների առաջին խմբում կազմվում է անորոշի հիմքից՝ ի, երկրորդ խմբում է, իսկ հոգնակի հրամայականը երկու խմբում էլ անցյալ կատարյալի հիմքից՝ էֆ վերջավորություններով (գրական հայերենի նման)։

բրժանի,	բրժանէ՛ցէք,	գո՛ռձի,	գոռձէ՛ցէք
---------	-------------	---------	-----------

բրժանէ	»	գո՛ռձէ	»
--------	---	--------	---

Բրժանէֆ, գոռձէֆ ձևերը խոսվածքում ունեն ոչ թե հրամայականի, այլ ըղձականի իմաստ։

4. Երկրորդ խոնարհում

§ 283. Երկրորդ խոնարհման են պատկանում այն բայերը, որոնք անորոշ դերբայում ունեն ավածանցը, օրինակ՝ աղալ, գոռալ, չեռալ, կառթալ, հազալ, շողալ, մընալ և այլն։ Դրանք առաջին խոնարհման պարզ բայիցից տարբերվում են նրանով, որ վաղակատար և հարակատար դերբայները կազմում են անցյալ կատարյալի հիմքից։ Ա խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը ցոյական է՝ աց բաղադրիչով և ունի ներգործաձև ի, իք,—, ինֆ, իֆ ին վերջավորությունները։ Հրամայական եղանակի եղակին կազմվում է ներկայի հիմքից՝ ա վերջավորությամբ, իսկ հոգնակին անցյալ կատարյալի հիմքից՝ էֆ վերջավորությամբ։ Ա խոնարհման պարզ բայերի խոնարհման առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ անկատարի երկրորդ ձևում նրանք վերածվում են I խոնարհման՝

ստանալով էի, էիւ, էր և այլ վերջավորութիւնները: Երկրորդ խոնարհման բայերի մյուս ձևերը կազմությամբ չեն տարբերվում առաջին խոնարհման բայերի ձևերից:

Այստեղ բերում ենք զրնալ և մընալ բայերի խոնարհումը:

Դ ե ր բ ա յ ն ե ր

Անորոշ	զընալ	մընալ
Անկատար	զընըմ	մընըմ
Վաղակատար	զընացէլ ել	մընացէլ ել
Հարակատար	զընացած	մընացած
Ենթակայական	զընօղ	մընօղ
Ժամանակի	զընալուս իս	մընալուս իս
Զեի	զընալէն	մընալէն

(Ա խոնարհման պարզ բայերի ենթակայական դերբայը, ի տարբերութիւն գրական հայերէնի, կազմվում է ոչ թե անցյալի, այլ ծմբկայի հիմքից՝ զընալ-զընօղ, մընալ-մընօղ, աղալ-աղօղ և այլն):

ՍՍՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն ե ր կ ա

զընըմ էմ(եմ)	զընըմ էնք(ենք)	մընըմ էմ(եմ)	մընըմ էնք(ենք)
» էս(ես)	» էք(եք)	» էս(ես)	» էք(եք)
» ա	» էն(են)	» ա	» էն(են)

Ա ն ց յ ա լ ա ն կ ա տ ա ր

առաջին ձև

զընըմ ի	զընըմ ինք	մընըմ ի	մընըմ ինք
զընըմ իր	զընըմ իք	մընըմ իր	մընըմ իք
զընըմ էր	զընըմ ին	մընըմ էր	մընըմ ին

Երկրորդ ձև

զընէի	զընէինք	մընէի	մընէինք
զընէիր	զընէիք	մընէիր	մընէիք
զընէր	զընէին	մընէր	մընէին

Վ աղ ա կ ա տ ա ր

զընացէլ ել	էմ(եմ)	զընացէլ ել	էնք(ենք)
զընացէլ	էս(ես)	զընացէլ	էք(եք)
զընացէլ	ա	զընացէլ	էն(են)

մնացել ել էմ(եմ)	մընացել ել էնք(ենք)
մընացել էս(ես)	մընացել էք(եք)
մընացել ա	մընացել էն(են)

Ա ն ց յ ա լ ի վ ա դ ա կ ա տ ա ռ

գընացել ել ի գընացել ել ինք մընացել ել ի մընացել ինք
գընացել իր գընացել իք մընացել իր մընացել իք
գընացել էր գընացել ին մընացել էր մընացել ին

Հ ա ռ ա կ ա տ ա ռ

գընացած էմ(եմ)	գընացած էնք(ենք)
գընացած էս(ես)	գընացած էք(եք)
գընացած ա	գընացած էն(են)

մընացած էմ(եմ)	մընացած էնք(ենք)
մընացած էս(ես)	մընացած էք(եք)
մընացած ա	մընացած էն(են)

Ա ն ց յ ա լ ի հ ա ռ ա կ ա տ ա ռ

գընացած ի գընացած ինք մընացած ի մընացած ինք
» իր » իք » իր » իք
» էր » ին » էր » ին

Ա ն ց յ ա լ կ ա տ ա ռ յ ա լ

գընացի գընացինք մընացի մընացինք
գընացիր գընացիք մընացիր մընացիք
գընաց գընացին մընաց մընացին

Ը Ղ Զ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ա պ ա ռ ճ ի

գընամ գընանք մընամ մընանք
գընաս գընաք մընաս մընաք
գընա գընան մընա մընան

Անցյալի ապառնիի ձևերը, ինչպես նշել ենք, արտահայտում են անկատարի իմաստ:

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ա պ ա ռ ճ ի

կըգընամ կըգընանք կըմընամ կըմընանք

կըզընաս	կըզընաք	կըմընաս	կըմընաք
կըզընա	կըզընան	կըմընա	կըմընան

Ա ն ց յ ա լ ի ա պ ա ն ն ի

կըզընէի	կըզընէինք	կըմընէի	կըմընէինք
կըզընէիր	կըզընէիք	կըմընէիր	կըմընէիք
կըզընէր	կըզընէին	կըմընէր	կըմընէին

ՀԱՐԿԱԳՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա պ ա ն ն ի

հնալ տէմ(եմ)	կամ	զընալ պըտէմ(եմ)	մընալ տէմ(եմ)	կամ	մընալ պըտեմ(եմ)
» տէս(ես)	»	» պըտէս(ես)	մընալ տէս(ես)	կամ	մընալ պըտես(ես)
» տի	»	» պըտի	» տի	կամ	մընալ պըտի

Ա ն ց յ ա լ ի ա պ ա ն ն ի

զընալ տէի կամ	զընալ պըտէի	մընալ տէի կամ	մընալ պըտէի
զընալ տէիր »	զընալ պըտէիր	մընալ տէիր »	մընալ պըտէիր
զընալ տէր »	զընալ պըտէր	մընալ տէր »	մընալ պըտէր

Հ ր ա մ ա յ ա կ ա ն

զը'նա,	զընա'ցէք	մը'նա,	մընա'ցէք:
--------	----------	--------	-----------

5. ԵՐՐՈՂ ԽՈՆԱՐԿՈՒՄ

§ 284. Այս խոնարհման բայերի անորոշ դերբայը խոսվածք-
ների առաջին խմբում ունենում է նիլ, չիլ (թողնիլ, գըղնիլ, հաք-
նիլ, հասնիլ, մըտնիլ, պըրծնիլ, թըռչիլ, հանգչիլ, ուռչիլ, փախ-
չիլ, կոռչիլ), իսկ երկրորդ խմբում՝ նուլ, չիլ (թողնուլ, գըղնուլ,
հաքնուլ, հասնուլ, հատնուլ, մըտնուլ, պըրծնուլ, թըռչիլ, հանգչիլ,
ուռչիլ, փախչիլ, կոռչիլ) ձևերը: Երկրորդ խմբի խոսվածքները
խոնարհման ժամանակ որոշ բայաձևերում պահպանում են ու, ի
լծորդությունները: Դրանից խոնարհման մեջ որոշակի տարբերու-

թյուններ են առաջանում, բայց առկա են նաև զգալի ընդհանրություններ, այն է՝ խոսվածքների և՛ առաջին խմբի նիլ, չիլ, և՛ երկրորդ խմբի նուլ, չիլ վերջավորվող բայերը անցյալ կատարյալում և նրա հիմքից կազմվող ձևերում (վաղակատար և հարակատար դերբայներ, հրամայական եղանակ) կորցնում են ն, չ, ածանցները: Անցյալ կատարյալը կազմվում է ոչ ցոյական, արմատական հիմքով և կրավորաձև վերջավորություններով՝ ա, աբ, ավ, անբ, աբ, ան:

Այստեղ բերում ենք հաբնիլ||հաբնուլ և փախչիլ բայերի խոնարհումը: Դերբայները երկու խոսվածքներում էլ, բացի անորոշից, նույն ձևերն ունեն:

Դ Ե Բ Ե Ե Ե Ե Ե

1 Անորշ	Հաբնիլ Հաբնուլ	փախչիլ
2 Անկատար	Հաբնում	փախչում
3 Վաղակատար	Հաբէլ ել	փախէլ ել
4 Հարակատար	Հաբած	փախած
5 Ենթակայական	Հաբնօղ	փախչօղ
6 Ժամանակի	Հաբնէլուս իս	փախչէլուս իս
7 Չեի	Հաբնէլէն	փախչէլէն

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Սահմանական եղանակի ժամանակները խոսվածքների երկու խմբում էլ նույն կազմությունն ունեն:

Ն Ե Բ Կ Կ Կ

հաբնում էմ(եմ)	հաբնում էնք(ենք)
» էս(ես)	» էք(եք)
» ա	» էն(են)
փախչում էմ(եմ)	փախչում էնք(եք)
» էս(ես)	» էք(եք)
» ա	» էն(են)

Ա Ն Գ Ե Ե Ե Ե Ե Ե

հաբնում ի	հաբնում ինք	փախչում ի	փախչում ինք
» իր	» իք	» իր	» իք
» էր	» ին	» էր	» ին

Վ ա դ ա կ ա տ ա ր

հաքէլ(ել)	էմ(եմ)	հաքէլ(ել)	էնք(ենք)	փախէլ(ել)	էմ(եմ)
»	էս(ես)	»	էք(եք)	»	էս(ես)
»	ա	»	էն(են)	»	ա

փախէլ(ել)	էնք(ենք)
փախէլ	էք(եք)
փախէլ	էն(են)

Ա ն ց յ ա լ ի վ ա դ ա կ ա տ ա ր

հաքէլ(ել)	ի	հաքէլ(ել)	ինք	փախէլ(ել)	ի	փախէլ(ել)	ինք
»	իր	»	իք	»	իր	»	իք
»	էր	»	ին	»	էր	»	ին

Ա ն ց յ ա լ կ ա տ ա ր յ ա լ

հաքա	հաքանք	փախա	փախանք
հաքար	հաքաք	փախար	փախաք
հաքավ	հաքան	փախավ	փախան

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ըղձական եղանակը խոսվածքների առաջին խմբում խոնարհ-
վում է էլէ, քսկ երկրորդ խմբում՝ ու և ի լծորդություններով.

Ա պ ա ռ ն ի

1-ին խ ու մ բ

հաքնէմ(եմ)	հաքնէնք(ենք)	փախէմ(եմ)	փախէնք(ենք)
հաքնէս(ես)	հաքնէք(եք)	փախէս(ես)	փախէք(եք)
հաքնի	հաքնէն(են)	փախչի	փախչէն(են)

2-րդ խ ու մ բ

հաքնում	հաքնունք	փախչիմ	փախչինք
հաքնուս	հաքնուք	փախչիս	փախչիք
հաքնու	հաքնուն	փախչի	փախչին

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա պ ա ո ն ի

1-ին խ ու մ բ

ըհաքնէմ(եմ) կըհաքնէնք(ենք) կըփախչէմ(եմ) կըփախչէնք(ենք)
 'կըհաքնէս(ես) կըհաքնէք(եք) կըփախչէս(ես) կըփախչէք(եք)
 կըհաքնի կըհաքնեն(են) կըփախչի կըփախչեն(են)

2-րդ խ ու մ բ

կըհաքնում կըհաքնունք կըփախչիմ կըփախչինք
 կըհաքնուս կըհաքնուք կըփախչիս կըփախչիք
 կըհաքնու կըհաքնուն կըփախչի կըփախչին

Ա ն ց յ ա լ ի ա պ ա ո ն ի

1-ին և 2-րդ խմբեր

կըհաքնէի կըհաքնէինք կըփախչէի կըփախչէինք
 կըհաքնէիր կըհաքնէիրք կըփախչէիր կըփախչէիրք
 կըհաքնէր կըհաքնէին կըփախչէր կըփախչէին

ՀԱՐԿԱԳՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա պ ա ո ն ի

1-ին խ ու մ բ

հաքնիլ տէմ(եմ) կամ պըտէմ(եմ) հաքնիլ տէնք(տենք) կամ
 պըտէնք(ենք)
 հաքնիլ տէս(ես) » պըտէս(ես) հաքնիլ տէք(տեք) կամ պըտէք
 (եք)
 հաքնիլ տի » պըտի հաքնիլ տէն(տեն) կամ պըտէն
 (են)
 փախչիլ տէմ(տեմ) կամ պըտէմ(եմ) փախչիլ տէնք(ենք) կամ
 պըտէնք(ենք)
 » տէս(ես) » պըտէս(ես) » տէք(եք) կամ
 պըտէք(եք)
 » տի » պըտի » տէն(են) կամ
 պըտէն(են)

Քանի որ խոսվածքներն երկրորդ խմբում ևս հարկադրականի ապառնին կազմվում է անորոշ դերբայով, փախչիլ բայի համար

ունենում ենք փախչիլ տեմ կամ պըտեմ, փախչիլ տես կամ պըտես
և այլն, իսկ հաճեալ բայի համար հաճեալ տեմ կամ պըտեմ, հաճ-
եալ տես կամ պըտես և այլ ձևերը:

Ա ն ց յ ա լ ի ա պ ա ռ ն ի

1- ին խ ու մ բ

հաքնիլ տէի կամ պըտէի	հաքնիլ տէինք կամ պըտէինք
հաքնիլ տէիր կամ պըտէիր	հաքնիլ տէիք կամ պըտէիք
հաքնիլ տէր կամ պըտէր	հաքնիլ տէին կամ պըտէին
փախչիլ տէի կամ պըտէի	փախչիլ տէինք կամ պըտէինք
փախչիլ տէիր կամ պըտէիր	փախչիլ տէիք կամ պըտէիք
փախչիլ տէր կամ պըտէր	փախչիլ տէին կամ պըտէին

2-րդ խ ու մ բ

հաքնուլ տէի կամ պըտէի	հաքնուլ տէիր կամ պըտէիր
փախչիլ տէի կամ պըտէի	փախչիլ տէիր կամ պըտէիր

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

հա՛քլի, հա՛քլեք, փա՛խի, փա՛խէք

6. Չորրորդ խոնարհում

§ 285. Այս խոնարհումը ներկայացնում է խոսվածքիս ա խո-
նարհման ան միջամասնիկ ունեցող ձևը: Անորոշ դերբայը վեր-
ջավորվում է անալ ածանցով, օրինակ՝ բըցրանալ, գողանալ, թէ-
թէվանալ, ծընդրանալ, մենծանալ, հըսկանալ, հըստանալ, հէշտա-
նալ, նէղանալ, շըտանալ, սեվանալ և այլն: Սրանց խոնարհումը ա
խոնարհման պարզ բայերից տարբերվում է նրանով, որ անցյալ կա-
տարյալում և նրա հիմքից կազմվող ձևերում ածանցի ն-ն փոխ-
վում է ց-ի, օրինակ՝ բըցրաւալ-բըցրացա-բըցրացել-բըցրացած-
բըցրացի, սեվանալ-սեվացա-սեվացել-սեվացած-սեվացի և այլն:
Անալ վերջավորվող բայերի անցյալ կատարյալը կազմվում է կրա-
վորածն՝ ա, առ, ալ, անբ, աբ, ան վերջավորություններով:

Հրամայական եղանակը կազմվում է անցյալ կատարյալի հիմ-
քից՝ ի և էբ վերջավորություններով:

7. Ժխտական խոնարհում

§ 286. Օժանդակ բայի ժխտականը կազմվում է չ մասնիկի միջոցով: Օժանդակ բայի ժխտական ձևերն են.

ներկա

անցյալ

չէմ || չեմ

չէ՞նք || չենք

չի || չէի

չինք

չես || չես

չեք || չեք

չիր

չիք

չի

չէն || չեն

չեր

չին

§ 287. Սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակների ժխտականի կազմության ժամանակ ժխտական է դառնում միայն օժանդակ բայը՝ զրվելով դերբայից հետո, օրինակ՝ նրստւմ էմ-նրստւմ չէմ, ֆրնրմ էմ-ֆրնրմ չէմ, նրստել էմ-նրստել չէմ, ֆրնել էմ-ֆրնել չէմ, նրստած էմ-նրստած չէմ, ֆրնած էմ-ֆրնած չէմ:

§ 288. Անցյալ կատարյալի և ըղծական եղանակի ապառնու ժխտականը կազմվում է վոչ մասնիկի միջոցով, որը զրվում է խոնարհված բայաձևերի վերջում, օրինակ՝ նրստեցի-նրստեցի վոչ, ֆրնեցի-ֆրնեցի վոչ, նրստեմ-նրստեմ վոչ, ֆրնեմ-ֆրնեմ վոչ և այլն:

§ 289. Պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտականը կազմվում է անորոշ դերբայի ու օժանդակ բայի ներկայի կամ անցյալի ժխտական ձևերի միջոցով, որոնք կրկին հտադաս դիրք ունեն, ինչպես՝ կընըստէմ-նըստիլ չէմ, կըմենձանամ-մենձանալ չէմ, կընստէի-նըստիլ չէի, կըմենձանէի-մենձանալ չէի և այլն:

§ 290. Հարկադրական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտականը կազմվում է անորոշ դերբայի և տ||պրտ եղանակիչների ժխտական ձևերի միջոցով, որոնք ևս հտադաս դիրք ունեն: Այս եղանակիչների ժխտական ձևերն են.

ներկա

անցյալ

չըտէմ(եմ)

չըտէնք(ենք)

չըտէի

չըտէինք

չըտէս(ես)

չըտէք(եք)

չըտէիր

չըտէիք

չըտի

չըտէն(են)

չըտեր

չըտէին

հարկադրականի դրական ձևեր

հարկադրականի ժխտական ձևեր

զըրիլ տէմ զըրիլ տէնք

զըրիլ չըտէմ զըրիլ չըտէնք

զըրիլ տէս զըրիլ տէք

զըրիլ չըտէս զըրիլ չըտէք

զըրիլ տի զըրիլ տէն

զըրիլ չըտի զըրիլ չըտէն

Խոսվածքների երկրորդ խմբում ունենում ենք գրել տեմ—զըրիլ չըտեմ, գըրիլ տես—զըրիլ չըտես և այլ ձևերը:

§ 291. Արգելական հրամայականը կազմվում է անորոշ դիւ-
բայի և մի, մէջ մասնիկների միջոցով, որոնք հտադաս դիրք ունեն,
օրինակ՝ քընի՛-քընի՛լ մի, րընէ՛ցէք-քընի՛լ մէք, գըրի՛-գըրի՛լ մի,
գըրէ՛ցէք-գըրի՛լ մէք, սեվա՛ցի-սեվա՛նալ մի, սեվա՛ցեք-սեվա՛նալ
մէք և այլն:

§ 292. Ամփոփելով կարող ենք ասել, որ լոռու խոսվածքում,
ի տարբերություն գրական հայերենի, ժխտական մասնիկները
դրվում են դերբայական ձևերից և խոնարհվող բայաձևերից հե-
տո: Սա լոռու խոսվածքի ամենացայտուն դրսևորված հատկանիշ-
ներից մեկն է և անմիջապէս իր վրա է գրավում ուսումնասիրողի
ուշադրությունը¹:

§ 293. Ուրպես օրինակ բերում ենք շրջաբիլ և մընալ բայերի
ժխտական խոնարհումը:

ՍՍԶՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն Ե Ի Կ Ա

շըրջարւմ չէմ(չեմ)	շըրջարւմ չէնք(չենք)
շըրջարւմ չես(չես)	շըրջարւմ չեք(չեք)
շըրջարւմ չի	շըրջարւմ չեն(չեն)
մընւմ չէմ(չեմ)	մընւմ չէնք(չենք)
մընւմ չես(չես)	մընւմ չեք(չեք)
մընւմ չի	մընւմ չեն(չեն)

Ա Ն Գ Յ Ա Լ Ա Ն Կ Ա Մ Ա Ր

շըրջարւմ չի չէի	շըրջարւմ չինք	մընւմ չի չէի	մընւմ չինք
շըրջարւմ չիր	շըրջարւմ չիք	մընւմ չիր	մընւմ չիք
շըրջարւմ չէր	շըրջարւմ չին	մընւմ չէր	մընւմ չին

Վ Ա Ղ Ա Կ Ա Մ Ա Ր

շըրջարէլ(ել) չէմ(չեմ)	շըրջարել չէնք(չենք)
շըրջարէլ չես(չես)	շըրջարել չեք(չեք)
շըրջարէլ չի	շըրջարել չեն(չեն)

¹ Լոռու խոսվածքի ժխտականի այսպիսի կազմության վերաբերյալ կա մի հետաքրքրաշարժ պատմություն: Լոռեցի հրամանատարը կարգադրություն է ստա-
նում գնդակահարել հանցագործին: Եվ ահա զինվորները հրացանները բռնած՝
պատրաստ են կրակելու: Վերջին պահին ստացվում է ներման հրամանը: Լոռեցի
հրամանատարը, ի կատարումն դրա, հրամայում է՝ կըրակէք... վո՛չ, բայց մինչև
վոչ աւտոստանելը զինվորները կրակում են, և ներված մեղադրյալը սպանվում է:
Հրամանատարը զարմացած բացականչում է. «Ա՛յտա, էտ վոնց էլա՛վ»:

մընացել չէմ(չեմ)	մընացել չէնք(չենք)
մընացել չես(չես)	մընացել չեք(չեք)
մընացել չի	մընացել չեն(չեն)

Ա ն ց յ ա լ ի վ ա դ ա կ ա տ ա ր

չորհարել չի չէի	չորհարել չինք	մընացել չի չէի	մընացել չինք
» չիր	» չիք	» չիր	» չիք
» չէր	» չին	» չէր	» չին

Ա ն ց յ ա լ կ ա տ ա ր յ ա լ

չորհարեցի վոչ չորհարեցինք վոչ մընացի վոչ մընացինք վոչ
 չորհարեցիր վոչ չորհարեցիք վոչ մընացիր վոչ մընացիք վոչ
 չորհարեց վոչ չորհարեցին վոչ մընաց վոչ մընացին վոչ

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա պ ա ո ճ ի

չորհարեմ վոչ	չորհարենք վոչ	մընամ վոչ	մընանք վոչ
չորհարես վոչ	չորհարեք վոչ	մընաս վոչ	մընաք վոչ
չորհարի վոչ	չորհարեն վոչ	մընա վոչ	մընան վոչ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա պ ա ո ճ ի

չորհարիլ չեմ(չեմ)	չորհարիլ չենք(չենք)
չորհարիլ չես(չես)	չորհարիլ չեք(չեք)
չորհարիլ չի	չորհարիլ չեն(չեն)
մընալ չեմ(չեմ)	մընալ չենք(չենք)
մընալ չես(չես)	մընալ չեք(չեք)
մընալ չի	մընալ չեն(չեն)

Խոսովածքների երկրորդ խմբում շրջարել բայի պայմանականի ապառնու ձևերն են՝ շրջարիլ չեմ, շրջարիլ չես և այլն:

Ա ն ց յ ա լ ի ա պ ա ո ճ ի

չորհարիլ չի (չի)	չորհարիլ չինք	մընալ չի(չի)	մընալ չինք
չորհարիլ չիր	չորհարիլ չիք	մընալ չիր	մընալ չիք
չորհարիլ չէր	չորհարիլ չին	մընալ չէր	մընալ չին

Ա. պ ա ռ ճ ի

չըրչարիւ չըտէ՛մ չըրչարիւ չըտէ՛նք մընաւ չըտէ՛մ մընաւ չըտէ՛նք
չըրչարիւ չըտէ՛ս չըրչարիւ չըտէ՛ք մընաւ չըտէ՛ս մընաւ չըտէ՛ք
չըրչարիւ չըտի՛ չըրչարիւ չըտէ՛ն մընաւ չըտի՛ մընաւ չըտէ՛ն

Ա. ց յ ա լ ի ա պ ա ռ ճ ի

չըրչարիւ չըտէի չըրչարիւ չըտէինք մընաւ չըտէի մընաւ չըտէինք
չըրչարիւ չըտէիր չըրչարիւ չըտէիք մընաւ չըտէիր մընաւ չըտէիք
չըրչարիւ չըտէր չըրչարիւ չըտէին մընաւ չըտէր մընաւ չըտէին
Խոսվածքների երկրորդ խմբում չարչարել բայի հարկադրա-
կանի ժխտական ձևերն են՝ չըրչարել չըտեմ, չըրչարել չըտես...
չըրչարել չըտէի, չըրչարել չըտէիր և այլն:

Ա. ր գ ե լ ա կ ա ն հ ր ա մ ա յ ա կ ա ն

չըրչա՛րիւ մի. չըրչա՛րիւ մէք մընա՛լ մի, մընա՛լ մէք
Խոսվածքների երկրորդ խմբում՝ չըրչա՛րել մի, մէք:

Տ. Պատնառական բայեր

§ 294. Լոռու խոսվածքում պատճառական բայերը կազմվում են ացն, ցրն ածանցներով. ացն ածանցն են ստանում իլ, ել, ալ, ալալ կազմության բայերը, իսկ ցրն ածանցը՝ նիլ, նուլ, չիլ կազմության բայերը, ըստ որում, բոլոր բայերի պատճառականի անորոշը խոսվածքների առաջին խմբում վերջավորվում է իլ-ով, իսկ երկրորդ խմբում՝ ել-ով, ինչպես.

ա) 1. ըմանչիլ—1-ին խումբ՝ ըմանչացնիլ, 2-րդ խումբ՝ ըմանչացնել, ըրածիլ—ըրածացնիլ¹ ել¹, բըրակիլ—բըրակացնիլ, լըսիլ—լըսացնիլ, խըմիլ—խըմացնիլ, խըռտնիլ—խըռտնացնիլ, կապըտիլ—կապըտացնիլ, կըտաղիլ—կըտաղացնիլ, համօզիլ—համօզացնիլ, մաշիլ—մաշացնիլ, նըռտիլ—նըռտացնիլ, ուտիլ—ուտացնիլ, պակսիլ—պակսացնիլ, պըռավիլ—պըռավացնիլ, պըխտորիլ—պըխտորացնիլ և այլն.

2. գողալ—գողացնիլ¹ ել, դողալ—դողացնիլ¹ ել, գըղգողալ—գըղգողացնիլ¹ ել², յէռալ—յէռացնիլ, հաղալ—հաղացնիլ, կառթալ—կառ-

¹ Զերկնելու համար խոսվածքների 2-րդ խմբի ել-ով ձևերը չենք նշում:

² Զերկնելու համար մյուս բայերի ել-ով ձևերը չենք նշում:

թացնիլ, հըվատալ-հըվատացնիլ, մըխկըտալ-մըխկըտացնիլ, գըռ-
դըռալ-գըռգըռացնիլ, խըշխըշալ-խըշխըշացնիլ.

3. բըցրանալ-բըցրացնիլ, թանգանալ-թանգացնիլ, թիլանալ-
թիլացնիլ, լըղանալ-լըղացնիլ, լիսանալ-լիսացնիլ, կըշտանալ-
կըշտացնիլ, հըսկանալ-հըսկացնիլ, մենձանալ-մենձացնիլ, նեղա-
նալ-նեղացնիլ, շըտանալ-շըտացնիլ, ուրախանալ-ուրախացնիլ,
չըրանալ-չըրացնիլ, չորանալ-չորացնիլ, սեվանալ-սեվացնիլ.

բ) հաքնիլ||ուլ-հաքքընիլ||եւ, հասնիլ||ուլ-հասցընիլ||եւ, մըտ-
նիլ||ուլ-մըտցընիլ||եւ, թըռչիլ-թըռցընիլ||եւ, հանգչիլ-հանգցընիլ||եւ,
ուռչիլ-ուռցընիլ||եւ, փախչիլ-փախցընիլ||եւ, կոռչիլ||կոռցընիլ||եւ:

Այն ածանցը արտասանվում է առանց ը-ի, իսկ ցըն ածանցը՝
ը-ով:

Պատճառական բայերի խոնարհման առանձնահատկություն-
ները հետևյալներն են.

ա) Անցյալ կատարյալում և նրա հիմքից կազմվող ձևերում
(վաղակատար, հարակատար դերբայներ և բուն հրամայական)
պատճառականի և ածանցը փոխվում է ր-ի, օրինակ՝ բըցրացնիլ||եւ
-բըցրացրի-բըցրացրել||եւ-բըցրացրած-բըցրացրու, և սեվացնիլ||եւ-
սեվացրի-սեվացրել||սեվացրած-սեվացրու, հաքցընիլ||եւ-հաքցը-
րի-հաքցըրել||եւ-հաքցըրած-հաքցըրու և այլն:

բ) Անցյալ կատարյալը կազմվում է ի, իր, ուց, ինձ, իք, ին
վերջավորություններով, օրինակ՝ բըցրացրի, բըցրացրիր, բըցրաց-
րուց, բըցրացրինձ, բըցրացրիք, բըցրացրին, հաքցըրի, հաքցըրիր,
հաքցըրուց, հաքցըրինձ, հաքցըրիք, հաքցըրին:

գ) Հրամայական եղանակի եզակին կազմվում է ու, իսկ հոգ-
նակին՝ էվ վերջավորությամբ, օրինակ՝ բըցրացրու, բըցրացրե՛ք,
հաքցըրու, հաքցըրե՛ք:

9. Կրավորական բայեր

§ 295. Բայերի կրավորական սեռը կազմվում է վ ածանցով,
որ դրվում է բոլոր բայերի ներկայի հիմքի վրա, ըստ որում, իլ, եւ
վերջավորվող բայերը համապատասխանաբար վերածվում են վիլ,
վել ձևի, իսկ ալ վերջավորվողները՝ վալ ձևի, ինչպես. ա) խոս-
վածքների 1-ին խումբ՝ էրիլ-էրվիլ. խոսվածքների 2-րդ խումբ՝
էրել-էրվել. այս նույն ձևով նաև՝ անըծիլ||եւ-անըծվիլ||վել, ասիլ||
եւ-ասվիլ||վել, ավէրիլ||եւ-ավէրվիլ||վել¹, բըժանիլ-բըժանվիլ, բէրիլ-

¹ Կրկնությունից խուսափելու նպատակով հաջորդ բայերի եւ, վել ձևերը
չենք նշում:

բէրվիլ, բըռնիլ-բըռնըվիլ, գըրիլ-գըրվիլ, դըռդակիլ-դըռդակվիլ, զըռթարիլ-զըռթարվիլ, թըթախիլ-թըթախվիլ, թափիլ-թափվիլ, լը-
ծիլ-լըծվիլ, լըսիլ-լըսվիլ, խափիլ-խափվիլ, խառնիլ-խառնըվիլ, իաշիլ-խաշվիլ, խէխտիլ-խէխտվիլ, խըմիլ-խըմվիլ, խըրատիլ-
խըրատվիլ, ծալիլ-ծալվիլ, ծախիլ-ծախվիլ և այլն:

բ) Աղալ-աղվալ կառթալ-կառթվալ, լըվանալ-լըվանվալ, հըս-
կանալ-հըսկանվալ: Կրավորական կազմութիւններ ունենք նաև
ալ (անալ) վերջավորվող շեղոքներից, օրինակ՝ գընալ-գընվալ,
բըցրանալ-բըցրանվալ: Այս ձևերը գործածվում են կարելիական
իմաստով, օրինակ՝ էս ճամբէն ցէխոտ ա, դէսը գընվալ չի. դէդը
բըցրանվալ չի, դէսը գընացէի:

Պատճառական բայերից կրավորական ձևեր սովորաբար չեն
կազմվում: Վալ ձևով կազմված (ալ/անալ վերջավորվող բայերից
կազմված) կրավորականները, ինչպես օրինակներն են ցույց տա-
լիս, շատ քիչ են և գործածվում են սովորաբար միայն եզակի եր-
րորդ դեմքով, որպես կարելիութիւն կամ անկարելիութիւն ցույց
տվող բայաձևեր:

Վիլվել ձևով կազմված (իլլել վերջավորվող բայերից կազմ-
ված) կրավորականները, ինչպես օրինակներն են ցույց տալիս,
շատ-շատ են, ունեն բային հատուկ խոնարհման բոլոր ձևերը և
գործածվում են.

ա) Կրավորական սեռի իմաստով. օրինակ՝ Խընձորը Ռէվանըմ
էժան ա ծախվըմ. Առուտըրըմ խափվեցի:

Պետք է նկատի ունենալ, որ կրավորական բայերի կրավորա-
կան սեռի իմաստով գործածութիւնը խոսվածքում լայն տարածում
չունի:

բ) Չեզոք իմաստով, օրինակ՝ Ամանը ծալվել ա. Նա խառը
ջրըմ ա խէխտվել. Շամփուրը ծըռվել ա. Մեր ջուրը գընըմ ա
խառնըրըմ 'իէքէդի. Լիսը բացվէց. Շոքէրըս ճըխտոտվել էն: Կրա-
վորական բայերի շեղոք գործածութիւնը խոսվածքում շատ սովո-
րական է և ավելի տարածված, քան կրավորական սեռի իմաստով
գործածութիւնը:

գ) Անդրադարձ իմաստով, օրինակ՝ Հայլու առաչիւ սանդըր-
վըմ, գըռթարվըմ ա:

դ) Փոխադարձ իմաստով, օրինակ՝ Սաղ օրը պըշպըշորվըմ էն:

ե) Կարելիական իմաստով, օրինակ՝ Ձէր ջըրըմը ձուկ չի բըռ-
նըրվիլ. Հացը խըմոք ա, ռուսվըմ չի. Լսօք անձեղ ա, ցոռէնը հընձվիլ
չի:

Կրավորական բայերի այս գործածությունը բարբառում շատ սովորական է:

Վիլլվել վերջավորվող կրավորական բայերը խոնարհման առանձին տիպ չեն կազմում, նրանք խոնարհվում են ինչպես իլ կամ ել կազմության պարզ բայերը:

10. Բազմապատկական բայեր

§ 296. Լոռու խոսվածքում բազմապատկական բայերի կազմվում են ուտ, ատ, ու ածանցյեռով, օրինակ՝ ավիլ-ավլոտիլ, թափիլ-թափոտիլ, կըրկատիլ-կըրկըտորիլ, կոտրիլ-կոտրատիլ, կըտրիլ-կըտրատիլ, մոռթիլ-մոռթոտիլ, նըստիլ-նըստոտիլ, ջառթիլ-ջառթոտիլ: Ավելի հաճախ ու ածանցն ավելանում է կրկնված բաժարմատի վրա, ինչպես՝ խսփիլ-խափլըփորիլ, ծալիլ-ծալմըլորիլ, ծախիլ-ծախծըլորիլ, ծակիլ-ծակծըլորիլ, ծամիլ-ծամլըմորիլ, կապիլ-կըպկըպարիլ, կըծիլ-կըծմըծորիլ, չափիլ-չափչըփորիլ, պատռիլ-պապըրտորիլ, դաղիլ-դաղըղորիլ, տաշիլ-տաշտըշորիլ: Ատ ածանցով կրկնավոր բայարմատից ունենք ծըռիլ-ծըռմըռառիլ:

Խառնիլ, քանդիլ, ձևիլ բայերի բազմապատկականներն են՝ խըռնըշտորիլ, փանդըռտորիլ, ձըվըռտորիլ:

Պետք է նշել, որ քիչ բայեր են ածանցման միջոցով վերածվում բազմապատկականի:

Բազմապատկական բայեր կարող են կազմվել նաև բայարմատի կրկնությանը, ինչպես՝ գոռգոռալ, դըղդղալ, բըզբըզալ, դըզգըզալ, սըվսըվալ, գըոգըոալ, դըոդըոալ, գըոզըոալ, ծըվծըվալ և այլն:

Այս ձևով կազմված բազմապատկական բայերի բացարձակ մեծամասնությունը բնաձայնությունն է արտահայտում:

Բազմապատկական բայերը խոնարհման առանձին տիպ չեն կազմում: Նրանք խոնարհվում են կամ առաջին (իլ) կամ երկրորդ (ալ) խոնարհման բայերի նման:

11. Անկառն բայեր

§ 297. Առնել>անիլ||անել

Անկ. անըմ, վաղ. արել||ել, հարակ. արած, ենթ. անօղ, ժամ. անէլուս, ձևի՝ անէլէն:

Անց. կտր. արի, արիւ, արալ, արիւմ, արիւմ, արիւմ:

Հրմ. արա, արէմ:

§ 298. Առնուլ>առնիլ||առնուլ

Անկ. առնըմ, վաղ. առել, հարակ. առած, ենթ. առնող, ժամ. առնելուս, ձևի՝ առնելեն:

Անց. կտր. առա, առար, առավ, առանք, առաք, առան:

Հրմ. առ, առէք:

§ 299. Դառնալ>դառնալ

Անկ. դառնըմ, վաղ. դառել, հարակ. դառած, ենթ. դառնող, ժամ. դառնալուս, ձևի՝ դառնալեն:

Անց. կտր. դառա, դառար, դառավ, դառանք, դառաք, դառան:

Հրմ. դառ, դառէք:

§ 300. Բերել>բերիլ||բերել

Անկ. բերըմ, վաղ. բերել||ել, հարակ. բերած, ենթ. բերող, ժամ. բերելուս, ձևի՝ բերելեն:

Անց. կտր. բերի, բերիւ, բերուց, բերինք, բերիք, բերին:

Որոշ տեղերում եղակի 3-րդ դեմքի համար կա նաև երէր ձևը:

Հրմ. բիր (բի), բերէք:

§ 301. Գալ>գալ

Անկ. գալիս, վաղ. էլլել, հարակ. էկած, ենթ. էկող, ժամ. գալուս, ձևի՝ գալեն:

Անց. կտր. էկա, էկար, էկավ, էկանք, էկաք, էկան:

Հրմ. արի, էկէք:

§ 302. Լինել>լիլ||լիլ

Անկ. լըմ, վաղ. էլել, հարակ. էլած, ենթ. լիող, ժամ. լիլուս, ձևի՝ լիլեն:

Անց. կտր. էլա, էլար, էլավ, էլանք, էլաք, էլան:

Հրմ. իլ||էլ, էլէք:

§ 303. Դնել>դրնիլ||ել

Անկ. դրնըմ, վաղ. դրնել||ել, հարակ. դրնած, ենթ. դրնող, ժամ. դրնելուս, ձևի՝ դրնելեն:

Անց. կտր. դրի, դրիւ, դրուց, դրինք, դրիք, դրին:

Հրմ. դիր, դրէք:

§ 304. Տալ>տալ

Անկ. տալիս, վաղ. տրվել||ել, հարակ. տրված, ենթ. տրվող, ժամ. տալուս, ձևի՝ տալեն:

Անց. կտր. տրվի, տրվիւ, տրվուց, տրվինք, տրվիք, տրվին:

Որոշ տեղերում եղակի 3-րդ դեմքի համար կա նաև երէտ ձևը:

Հրմ. տուր, տրվէք:

§ 305. Տեսանել>տէնալ

Անկ. տէնըմ, վաղ. տէնէլ, հարակ. տէհած, ենթ. տէնօղ, ժամ. տէնալուս, ձևի՝ տէնալէն:

Անց. կտր. տէհա, տէհար, տէհավ, տէհանք, տէհաք, տէհան:

Հրմ. տէս, տէնէք.

§ 306. Կարել>կարալ

Անկ. կարըմ, վաղ. կարացել, հարակ. կարացած, ենթ. կարացօղ, ժամ. չիք, ձևի՝ չիք:

Անց. կտր. կարացի, կարացիր, կարաց, կարացինք, կարացիք, կարացին:

Հրմ. չիք:

§ 307. Կարենալ>կարէնալ

Անկ. կարէնըմ, վաղ. կարէցել, հարակ. կարէցած, ենթ. կարէնօղ, ժամ. կարէնալուս, ձևի՝ չիք:

Անց. կտր. կարէցա, կարէցար, կարէցավ, կարէցանք, կարէցաք, կարէցան:

Հրմ. չիք (կարօղացի, կարօղացէք ձևերը գործածվում են գրականի ազդեցությամբ):

§ 308. Կլենալ>կլէնալ

Անկ. կլէնըմ, վաղ. կացել, հարակ. կացած, ենթ. կլէնօղ, ժամ. կլէնալուս, ձևի՝ չիք:

Անց. կտր. կացա, կացար, կացավ, կացանք, կացաք, կացան:

Հրմ. կաց, կացէք:

§ 309. Տանիլ>տանիլ

Անկ. տանըմ, վաղ. տարել||ել, հարակ. տարած, ենթ. տանօղ, ժամ. տանելուս, ձևի՝ տանելէն:

Անց. կտր. տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան:

Հրմ. տար, տարէք:

§ 310. Ուտել>ուտիլ||ուտել

Անկ. ուտըմ, վաղ. կլէրել||ել, հարակ. կլէրած, ենթ. ուտօղ, ժամ. ուտելուս, ձևի՝ ուտելէն:

Անց. կտր. կլէրա, կլէրար, կլէրավ, կլէրանք, կլէրաք, կլէրան:

Հրմ. կլիր(կլի), կլէրէք.

§ 311. Ունել>ունիլ

Վէր ունիլ «վերցնել»

Անկ. (վէր էմ) ունըմ, վաղ. (վէր էմ) կալել. հարակ. (վէր)

կալած, Լնթ. (վէր) ունող, ժամ. (վէր) ունելու, ձեհ՝ (վէր) ունել-
լէն:

Սնց. կտր. վէ(ր) կալա, վէ(ր) կալաւ, վէ(ր) կալավ, վէ(ր) կա-
լանք, վէ(ր) կալաք, վէ(ր) կալանք:

Հրմ. վէ(ր) կալ, վէ(ր) կալէք:

Որոշ տեղերում ունենք նաև վի կալ, վի կալեք ձեերը:

Մանոթ.— Բաղաձայններից առաջ վէր բառի ր հնչյունը սովո-
րաբար ընկնում է, ինչպես՝ վէ կալա, իսկ ձայնավորներից առաջ
պահպանվում, ինչպես՝ վէր էմ ունրմ:

12. Երկրորդական բաղադրյալ ժամանակներ

§ 312. Երկրորդական բաղադրյալ ժամանակները խոսվածքում
կազմվում են ժամանակային ու հարակատար դերբայներով և լի-
նիլ>լիլ բաշի խոնարհման ձեերով. ինչպես՝ գրնալու եմ ըլրմ,
գրնալու եմ էլկ, գրնալու էլա, գրնացած եմ ըլրմ, գրնացած եմ
էլէլ, գրնացած էլա և այլն:

Երկրորդական բաղադրյալ ժամանակները լոռու խոսվածքում
բավականին տարածված են:

VI. ՄԱԿԱՅԻՆՆԵՐ

§ 313. Լոռու խոսվածքում կան բնիկ հայերեն և թուրքերենից
կամ թուրքերենի միջոցով պարսկերենից ու արաբերենից փոխառ-
յալ մակբայներ:

անջաղ «հաղիվ» (փոխառ.)

աշկյարա «բացահայտորեն» (փոխառ.)

առաշ «առաջ»

բալքիւմ՝ բալքա «թերևս, դուցե» (փոխառ.)

բացաշկյարա «ակնհայտորեն, բացահայտորեն»

բիրդան «հանկարծ» (փոխառ.)

դէսը «դեպի այս կողմը»

դէդը «դեպի այդ կողմը»

դէնը «դեպի այն կողմը»

դըվորը «որ կողմով»

դըհա «ավելի» (փոխառ.)

վօռօվ «բռնի» (փոխառ.)

զուր «իզուր»

էլ «այլևս»

էլ յէդ «նորից, կրկին»
 էրէզ «երեկ»
 էքուց «վաղը»
 ըսկյի «բնավ, ամենևին»
 ըստիան «այստեղից»
 ըտիան «այդտեղից»
 ընդիան «այնտեղից»
 ըսօր «այսօր»
 թաքլա՝ թաքլի, «միայն թե» (փոխառ.)
 թաքուն «թաքուն»
 թէզ «շուտ» (փոխառ.)
 իլլաքյի՝ իլլաքյիմ «մանավանդ» (փոխառ.)
 հա «այո»
 հա «միշտ» (փոխառ.)
 հէնց «հենց»
 հէտ «անգամ»
 հէրու «անցյալ տարի»
 հըլա «դեռ» (փոխառ.)
 հըլբաթ «գուցե» (փոխառ.)
 հըրէ «աստ»
 հըրէս «աստվասիկ»
 հըրէդ «աստվադիկ»
 հըրէն «աստվանիկ»
 ղորթ «ճիշտ, ուղիղ»
 մըխէլի «մի քիչ»
 յարաբ «արդյոք» (փոխառ.)
 յէննա՝ յէդօվ՝ յէդէվ «հետո»
 նըհախ «անտեղի, իզուր» (փոխառ.)
 շատ «շատ»
 չէ «չէ»
 շիլիզ՝ զիլիս «ավելի» (փոխառ.)
 (ը)ռավոդը «առավոտը, առավոտյան»
 վաղվանի «վաղուցվանից»
 վէր «վեր և վայր»
 վոշ՝ վոնշ «ոչ»
 րիգունը «իրիկունը»
 քիշ «քիչ»

§ 314. Պետք է նկատի ունենալ նաև այն, որ դերանունների մեջ հիշատակված մի շարք բառեր կարող են համարվել մակբայ-

ներ, ինչպես՝ ըսենց՝ սէնց՝ ըսէ՛սէ՛ «այսպես», ըթենց՝ թէնց՝ ըթէ՛
՝թէ՛ «այդպես», հնէնց՝ հընէ՛ «այնպես», ըստէղ՝ ըստի՛ «այստեղ»,
ըտէղ՝ ըտի՛ «այդտեղ», ընդեղ՝ ընդի՛ «այնտեղ»:

§ 315. Մակբայներ կարող են համարվել նաև մի շարք ժամանակ ցույց տվող բառերի բացառական հոլովածները, ինչպես՝ ոսկովականի, բիզովանի, էրէզովանի, էփուզովանի, ըսօրվանի, հէրվանի և այլն:

VII. ԿԱՊԵՐ ԵՎ ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ

§ 316. Կոռու խոսվածքում գործածվող կապերն ու կապական բառերն են. Աղափին՝ առաշին, «առաջ», օրինակ՝ Տան աղափին (առաշին) ծառէր կան «Տան առաջ ծառեր կան»:

Առանց «առանց», օրինակ՝ Առանց հաց ապրվիլ չի «Առանց հացի չի ապրվի»:

Դրբա «դեպի», օրինակ՝ Դրբա սարն ա գընըմ «Դեպի սարն է գնում»:

Դէսը, դէնը «դեպի այս կողմ, դեպի այն կողմ», օրինակ՝ Մէրուցը դէսը ցօրէն ա ցանած, մէրուցը դէնը՝ գարի «Անտառից այս կողմ ցորեն է ցանած, անտառից այն կողմ՝ գարի»:

Կըշաին «կողքին, մոտ», օրինակ՝ Իմ կըշաին ա նըստած «Ինձ մոտ է նստած»:

Կուշար «մոտ», օրինակ՝ Իմ կուշարն ա էկէլ «Ինձ մոտ է եկել»:

Հէա «հետ», օրինակ՝ Քեզ հէա ա գընացել «Քեզ հետ է գնացել»:

Հըմա՛մա «համար», օրինակ՝ Ընչի հըմա(մա) էս ասել «Ինչի համար ես ասել»:

Մընչի՛ չըվէլ՝ ընչկէլ «մինչև», օրինակ՝ Մընչի (չըվէլ, ընչկէլ) քու գալը յէս գոռը պըռծա «Մինչև քո գալը ես գործը վերջացրի»:

Միշի՛ն «մեջ», օրինակ՝ Թուխտը գըրի միշին ա «Թուղթը գրքի մեջ է»:

Յէղը՛յէղօ «հետո», օրինակ՝ Ինձանի յէղն էկավ (ինձանի յէղօ էկավ) «Ինձանից հետո եկավ»:

Յէննա «հետևից», օրինակ՝ Քու յէննա դարգեցի «Քո հետևից ուղարկեցի»:

Պէս «պես», օրինակ՝ Դըրա պէս սիրուն ախշիկ չըկա «Դրա պես սիրուն աղջիկ չկա»:

Սավայի «բացի», օրինակ՝ Սավայի հացը ուրիշ բան չունենք «Հացից բացի ուրիշ բան չունենք»:

վրա||վրին «վրա», օրինակ՝ Գիրքը թախտի վրէն (վրին)
ա «Դիրքը թախտի վրա է»:

Տակին «տակ», օրինակ՝ Կատուն ըմբարի տակին ա «Կատուն
ամբարի տակն է»:

§ 317. Ինչպես օրինակներն են ցույց տալիս, Լոռու խոսված-
քում տեղի անունները սովորաբար կապի պաշտոնն են կատարում
տրական հոլովածեով և կարող են ունենալ նաև բացառական ու
գործիական հոլովածեներ, ինչպես՝ աղաքին||առաշին-աղաքիցը||ա-
ռաշիցը-աղաքովը||առաջովը, կըշտին-կըշտիցը-կըշտովը, միշին-մի-
շիցը-միշովը, վըրին-վըրիցը-վըրովը, տակին-տակիցը-տակովը:
Օրինակներ. Իմ աղաքիցը փախավ «Իմ առաջից փախավ». Ջըրի
միշիցը հանեցի «Ջրի միջից հանեցի». Հանդի միշովը ըմբա էր
գընըմ «Դաշտի միջով սալ էր գնում». Տօպրակի վըրիցը վէր էս
կալէլ, պակսէլ ա «Տօպրակի վրայից վերցրել էս, պակասել է» և
այլն:

VIII. ՇԱՂԿԱՊԵՆՐ

§ 318. Լոռու խոսվածքում գործածվում են հետևյալ շաղկապ-
ները.

Էլ «էլ»—Դու էլ տես գալ «Դու էլ պիտի գաս»:

Թէ «թէ»—Թէ ասիլ տես, ասա «Թե ասե՛լու ես, ասա»: Այս
շաղկապը կապակցում է երկրորդական նախադասույթյունները գըլ-
խավորի հետ և համադասական դերով հանդես գալ չի կարող:

Վոր «որ»—Գրեացի, վոր օփտէմ «Գնացի, որ օգնեմ»:

Յա «կամ»—Յա մըհէտի արի, յա ասա՛ չէ «Կամ միանգամից
արի, կամ ասա՛ ոչ»:

Համ... համ (և... և)—Համ ասըմ էս, համ չէս գալի «Եվ ասում
ես, և չես գալիս»:

Համա «բայց»—Էկար. համա մի բան էլ ա արիւր վոչ «Եկար,
բայց ոչ մի բան էլ չարեցիր»:

Մընչի||չըվէլ||ընչիէլ «մինչև»—Մընչի դուն էկար, յէս գոռձըս
պըռծէլ ի «Մինչև դու եկար, ես գործս վերջացրել էի»:

Յէփ «երբ»—Յէփ ուզէլ էս, տըվէլ էմ:

Չունեյի «որովհետև, քանի որ»—Մի բան էլ ա առավ վոչ,
չունեյի փոզ չունէր «Ոչ մի բան էլ չառավ, քանի որ փող չունեիր»:

Վոչ...վոչ (ու...ու)—Վոչ դու էկար, վոչ էլ նրան բողիւր գա:

Ու «ու»—Գրեաց ու տէնավ մառթ չըկա:

IX. ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 319. Այտա—դիմողական կոչական—Այտա՛, մի լավ է՝ «Ա՛յ մարդ, մի լավ է»:

Աման «աման»—Ամա՛ն, տունըս ֆանդվեց:

Ափսուս «ափսոս»—Ափսո՛ւս, նրա պէս մառթը մէտէլ ա:

Դէ «դե»—Դէ ասա ու պրոծի:

Պահօ «պահո»—Պահօ՛, տունն առթէն պրոծէլ էն:

Վայ «վայ»—Վա՛յ, էտ ինչ էս արէլ:

Վույ «վույ»—Վո՛ւյ, քրվանը սաղ շառթվէլ էն «Վո՛ւյ, բոլոր ձվերը շարդվիլ են»:

Վա «վա»—Վա՛, էտ ինչդար շատ բան ա բէրէլ «Վա՛հ, այս ինչքան շատ բան է բերել»:

Տօ «տո»—Տօ էտ ինչ էս անըմ է՛:

Օհօ «օհօ»—Օհօ՛, դու էլ էս էկէլ:

X. ՇԵՇՏ

§ 320. Լոռու խոսվածքի շեշտը գրականից քիչ ուժեղ է և, որպէս կանոն, ընկնում է բառի նախավերջին վանկի ձայնավորի վրա, ինչպես՝

երկվանկ բառեր

հռավանկ բառեր

ալիւր>ա՛լիւր

ականջ>ա՛նգաճ

ակօս>ա՛կոս

աման>ա՛ման

անէծք>ա՛նիծկ

բաժին>բա՛ժին

բամբակ>բա՛մբակ

գարի>գա՛րի

երազ>է՛րազ

ալեոր>հըլի՛վոր

ականատ>ըկա՛նաթ

աշխատանք>ըշխա՛տանք

առաւոտ>ըռա՛վոդ

բաժանել>բըժա՛նիլ

բամբասանք>բըմբա՛սանք

բանալի>բըլա՛նիք

գերեզման>գըրէ՛զման

դադարիլ>դըթա՛րիլ

քառավանկ բառեր

արինաթաթախ>առնաթա՛թախ

բարեկենդան>բարիկէ՛նթան

եօթանասուն>օխտանա՛սուն

թեթեանալ>թէթէվա՛նալ

խանձրահամել>խընձրահա՛միլ

խոստովանիլ>խօստօվա՛նիլ

հակառակիլ>հըկառա՛կիլ

նաւակատիկ>նըվակա՛տիկ

Բառի աճման դեպքում շեշտը տեղաշարժ է կատարում՝ նորից
 բնկնելով նախավերջին վանկի ձայնավորի վրա, ինչպես՝ ականջ>
 ա՛նգաճ-ընգա՛ճի, ալևոր>հըլի՛վոր-հըլիվո՛րի, ակօս>ա՛կոս-ակո՛-
 տի, բամբասանք>բըմբա՛սանք-բըմբասա՛նքի, աման>ա՛ման-
 ըմա՛նիք, թաղաւոր>թըբա՛վոր-թըբավո՛րի, խաղող>հա՛ղող-հա-
 ղո՛ղի, հարևան>հըրէ՛վան-հըրէվա՛նի և այլն:

§ 319. Երբ բառի նախավերջին վանկում գտնվում է ը ձայնա-
 վորը, այդ դեպքում շեշտն ընկնում է վերջին վանկի ձայնավորի
 վրա, ինչպես՝

այստեղ>ըստէ՛ղ ըստի՛	գլուխ>գըլո՛ւխ
այսօր>ըսօ՛ր	համար>հըմա՛ր
անիծել>անըծի՛լ	ընկեր>հընգյէ՛ր
անկանիլ>ընգնի՛լ	կապտել>կապըտի՛լ
գրել>գըրի՛լ	

§ 322. Շեշտը վերջին վանկի ձայնավորի վրա է՝ ընկնում նաև
 այն դեպքում, երբ բառն ստանում է նի հոգնակերտ մասնիկը. ըստ
 այդմ, նի հոգնակերտը միշտ շեշտակիր է, ինչպես՝

ալևոր>հըլիվո՛ր-հըլիվորնի՛
 ականջ>ա՛նգաճ-անգաճնի՛
 ակօս>ա՛կոս-ակոսնի՛
 բանալի>բըլա՛նիք-բըլանըքնի՛
 բերան>բէ՛րտն-բէրաննի՛
 թագաւոր>թըբա՛վոր-թըբավորնի՛
 ուխտար>վո՛խշար-վոխշարնի՛

Ստել ենք, որ թեք հոլովներում նի հոգնակերտը որոշ տեղե-
 րում փոխարինվում է նկւ-ով, ինչպես հըլիվորնի-հըլիվորնէրի, բը-
 լանընի-բըլանըրնէրի և այլն: Թեք հոլովական ձևերում շեշտը սո-
 վորական է, այսինքն՝ ընկնում է նախավերջին վանկի ձայնավորի
 վրա, ինչպես հըլիվորնի՛, բայց՝ հըլիվորնէ՛րի, բըլանըրնի՛, բայց՝
 բըլանըրնէ՛րի, վոխշարնի՛, բայց՝ վոխշարնէ՛րի, պառավնի՛, բայց՝
 պառավնէ՛րի, բէրաննի՛, բայց՝ բէրաննէ՛րի, թըբավորնի՛, բայց՝ թը-
 բավորնէ՛րի և այլն:

§ 323. Շեշտը վերջին վանկի ձայնավորի վրա է ընկնում նաև
 ութին (<ութին) վերջավորվող բառերում, ըստ այդմ ութին ածան-
 ցի ի-ն միշտ շեշտակիր է, ինչպես՝ լաւութիւն>լավութի՛ն, մեծու-
 թիւն>մենծութի՛ն, բարութիւն>բարութի՛ն, բարեկամութիւն>բարէ-
 կամութի՛ն, շարութիւն>շարութի՛ն և այլն: Թեք հոլովական ձևերում
 ևս շեշտվում է ութին ածանցի ի-ն, օրինակ՝ լավութի՛նի, մենծութի՛-

նի, բարութի՛նի, բարեգամութի՛նի, լավութի՛նիցը, մենձութի՛նիցը և
այլն:

§ 324. Հարցական հնչերանդի դեպքում բառի վերջին վանկի
ձայնավորը խիստ երկարացվում է, օրինակ՝ «Զէս գալի՛», «Մեր
տունն էն բէրլ՛մ», «Բա էլ քեզ տէնալ չըտէ՛մ» և այլն: Այդպիսի ար-
տասանությունը մի առանձին երաժշտականություն է հաղորդում
չոռու խոսվածքին:

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

§ 325. Ինչպես հայերենի ամեն մի բարբառ, այնպես էլ Լոռու բարբառն ունի գրաբարի հետ ընդհանուր բառերի մի զգալի քանակ: Դրանք ընդհանուր հայերեն բառերն են, որոնց մեծ մասը կա նաև հայերենի մյուս բարբառներում: Այս բառերը, որպես ընդհանուր կանոն, գալիս են հայոց լեզվի պատմության նախագրավոր շրջանից և հանդիսանում են մարդու համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող առարկաների ու երևույթների, գործողությունների ու հատկանիշների անվանումներ:

Գրաբարի և Լոռու բարբառի համար ընդհանուր հայերեն բառերից են. ալիւր>ալիր, ականջ>անգաձ, աղբիւր>ախպուր, աղշիկ>ախշիկ, այծ>էծ, աշուն>աշունք, արիւն>արին, բարի>բարի, բեռն>բեռը, բերել>բէրիլ, գառն>գառը, գող>գող, դարբին>դարփին, դու>դու||դուն, դուռն>դուռը, ես>յէս, էշ>էշ, թեւ>թեւ, թոռն>թոռը, լույս>լիս, խոս>խոտ, խորթ>խոռթ, ծանր>ծանդրը, կաթըն>կաթը, կատու>կատու, կով>կով, կրակ>կըրակ, հարսն>>հառսը, ձուկն>ձուգը, ճիւղ>ճուխկը, մայր>մէր, միս>միս, նուռն>նուռը, ոտն>վոտը, սեաւ>սեւ, սիրտ>սիւտ, տեղ>տեղ, փախշիլ>փախշիլ, փորել>փորիլ, քամի>քամի, քոյր>քյիր, օձ>օց և այլն, և այլն:

Գրաբարի և Լոռու խոսվածքի համար ընդհանուր բառերի քիչ թիւ շատ ամբողջական ցուցակը տրվում է գրքի վերջում:

Բացի գրաբարի հետ ընդհանուր բառերից, Լոռու խոսվածքն ունի դրաբարին անծանոթ բառերի մի զգալի քանակ: Այդ բառերը ստացվել են տարբեր աղբյուրներից:

§ 326. Խոսվածքի բառային կազմի հարստացման աղբյուրներից հիմնականը ընդհանուր հայերեն բառերի հիմքի վրա կազմը-

ված նոր բարդություններն ու ածանցումներն են: Բարբառային հիմքի վրա կազմված բարդություններից կարելի է հիշել՝ լիսածակ «երդիկ», մեղրատանձի «քաղցր տանձենի», ծեֆելահան «առավոտ ծեֆին», ֆեթկալ «գլխաշոր», գիլահաշ, կոնատակ, ջրատար, տնաշեն, տնաֆանդ, մթնագիշեր, կաթնակեր և այլն:

Ածանցավոր բառերից կարելի է հիշել՝ սարվոր, կալվոր, վախլուրին «վախ», մատնունֆ «1. մատանի, 2. մատնոց», նշանած «հարսնացու» և այլն:

§ 327. Հայերեն բարբառների վրա չափազանց ուժեղ է եղել թուրքերենի ազդեցությունը, որն արտահայտվում է գլխավորապես այդ լեզվից կատարված բազմաթիվ բառային փոխառությունների մեջ: Լոռու խոսվածքում ևս չափազանց շատ են թուրքերենից կամ թուրքերենի միջնորդությամբ պարսկերենից ու արաբերենից փոխառյալ բառերը, որոնք առկա են նաև հայերենի բազմաթիվ այլ բարբառներում: Այդ բառերից են. ադաթ «սովորություն», ալամ «աշխարհ», ալիբ «արատ», անջադ «հազիվ», աշալ «կյանքի վերջ, մահ», ասլան «առյուծ», բալա «որդի, ձագ», բարութ «վառող», բեջարեկ «մշակել», բորան «փոթորիկ», դօստ «ընկեր, բարեկամ», թամբալ «ծուլ», թօխլի «1 տարեկան գառ», թօփալ «կաղ», մալ «կենդանի, անասուն», մըհանա «պատրվակ» և այլն:

Մենք նպատակահարմար չենք գտնում տալու թուրքերեն կամ թուրքերենի միջոցով փոխառյալ բառերի քիչ թե շատ ամբողջական ցանկը, որովհետև այդ բառերը հատուկ են ոչ միայն Լոռու խոսվածքին, այլև հայերենի բարբառներին ընդհանրապես:

§ 328. Խոսվածքիս վրա զգալի է եղել նաև ռուսերենի ազդեցությունը, որը, մի կողմ թողած այլ հանգամանքները, բացատրվում է նաև նրանով, որ Լոռու շրջանում բնակեցվել են ռուսներ: Ռուսերենից փոխառյալ բառերից են.

ըստուլ «սեղան»

ըստրապիլ «տանիք՝

աղյուսից»

պատալոկ «առաստաղ»

վեդրո «դուլ»

պոռվուկա «երկաթալար»

տալերկա «ափսե»

ակոշկա «լուսամուտ»

ըստաքան «բաժակ»

տրուբա «խոզովակ»

սմավար «ինքնահո»

կաստրուկա «կաթսա»

պեչկ «վառարան»

ըստուլբա «հեռագրասյուն»

պոլ «հատակ»

Հեղափոխությունից հետո մեր ազգային գրական լեզվի մեջ մտան բազմաթիվ ռուսերեն (կամ ռուսերենի միջնորդությամբ եվ-

րոպական լեզուներից փոխառյալ) բառեր, որոնք կապված էին նոր հասարակարգի, մշակույթի, տեխնիկայի հետ: Այս բառերի մի մասը գրական լեզվից անցել է բարբառներին: Այս ճանապարհով կոռու խոսվածքի մեջ են մտել մի շարք ուսաներեն բառեր, ինչպես՝ կոլխոզ, սովխոզ, բրիգադ, կինո, ֆերմա, պիոներ և այլն:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

1. Բարդություն

§ 329. Բարդությունները բաժանվում են երկու խմբի՝ անիսկական և իսկական:

Անիսկական բարդությունները լինում են երեք տեսակ:

Կրկնավորներ, օրինակ՝ սեվ-սեվ, մենձ-մենձ, քյիշ-քյիշ, շատ-շատ և այլն:

Հարադրական բարդություններ, օրինակ՝ վեր ունիլ «վերցնել», վեր քաղիլ «հավաքել, մաքրել», մտիկ տալ «նայել», վեռնուցի ա-նիլ «սարսափեցնել», ըղու անիլ «ճանապարհել», ծիկա տալ «ճշտել» կոիվսը տալ «չարշարվելով կովել», թոփ անիլ «հավաքել» և այլն:

Կցական բարդություններ, օրինակ՝ առուտուր, ըսօր, ըսքամ, հրօխպեր, մօքյիր և այլն:

Իսկական բարդությունները կազմվում են հետևյալ կերպ.

ա. Բարդության բաղադրիչ մասերի միջև սովորաբար մտնում է ա հոդակապը, օրինակ՝ լիսաթաթախ, տնաշեն, փորացավ, ջրատար, լիսադեմ, կոնատակ և այլն:

բ. Եթե բարդության երկրորդ եզրը սկսվում է ձայնավորով, ապա հոդակապ չի դրվում, օրինակ՝ աղաման, պարզերես և այլն:

Հոդակապ չ'են ստանում նաև մի շարք ուրիշ իսկական բարդ բառեր, որոնց երկրորդ եզրը, սակայն, սկսվում է բաղաձայնով, օրինակ՝ քնթկալ, ձնհալ, ճրագթաթ, էրէսծէծանք և այլն:

2. Ածանցում

§ 330. Կոռու խոսվածքում կենդանի և գործուն են հետևյալ ածանցները:

ի. -ական. — կազմում է՝ ա) հարաբերական ածականներ, օրինակ՝ հօրական, մօրական, պապական. բ) գոյականներ, օրինակ՝ ազգական, գախտական, առուտրական. գ) —ական ձևով ունի ող կամ ած ածանցների նշանակությունը, օրինակ՝ խոսվական, լծկան, կարկան «խրտնած»:

2. -անի.—«Մի բան ունեցող», բացառապես գործածվում է ածական կամ թվական որոշիչների հետ, օրինակ՝ էրկու-դոնանի, հինգ-աշխանի, մենձ-ֆթանի, իրեֆ-գլխանի և այլն:

3. -անց.—Կազմում է մի քանի մակբայների, ինչպես՝ էրէսանց, սրտանց, շապկանց:

4. -անք, -օնք,—Գոյականներից և դերանուններից կազմում են անեղական բառեր, օրինակ՝ Սհականք, Նալբանդանք, Ալէֆանք, խնամօնք, տատօնք, մեռօնք, ձեռօնք և այլն:

5. -էղէն.—Կազմում է գոյականների՝ ցույց տալով մի բանից շինված որոշ տեսակի առարկաներ հավաքական նշանակությամբ, օրինակ՝ վոսիյէղէն, էրծաթէղէն, էրկաթէղէն և այլն:

6. -էվ.—Կազմում է տեղ ցույց տվող մի քանի մակբայների, ինչպես՝ ճէֆսէվ, վիրէվ, դրսէվ:

7. —էրէն.—հայէրէն, թուրէրէն, վրացէրէն, ընդսէրէն և այլն:

8. -բի, ֆի—Համապատասխանում է արդի հայերենի ի, ենի ածանցներին. կազմում է ծառանունների, օրինակ՝ խնձորբի, տան-ձրբի, կաղնբի, անաբրբի, բարդբի, դամբլբի և այլն:

9. -իկ, լիկ.—Դրվելով մի քանի ածականների վրա նրանց տալիս է փոքրացուցիչ-փաղաքշական նշանակություն, օրինակ՝ մոդիկ, սուտիկ, ձախիկ, կառնիկ, կոկիկ. կա նաև հաստոյի բառը, որ նշանակում է անդուր հաստ:

10. -իչ.—Կազմում է գործողի կամ գործիքի անուն, օրինակ՝ փրկիչ, մատնիչ, ֆերիչ, սրբիչ:

11. -իք.—Դրվելով անորոշ դերբայների վրա կազմում է գոյականներ, օրինակ՝ վառելիք, հաֆնելիք, ասելիք, խմելիք և այլն:

12. -յան.—Կազմում է ազգանուններ, օրինակ՝ Արամյան, Սարգսյան, Սահակյան և այլն:

13. -անօց, -նօց, -օց.

Անօց ածանցը ա) գոյականներից կազմում է գոյականներ, որոնք ցույց են տալիս առարկայի տեղը, օրինակ՝ գծանօց, խոտանօց, անգլալանօց.

բ) թվականներից և արժեք ու չափ ցույց տվող բառերից կազմում է չափական թվականներ և արժեք ու չափ ցույց տվող բառեր, օրինակ՝ իրեֆանօց, հնգանօց, կօպէկանօց, փթանօց, տասսանօց, լոբանօց և այլն:

Նոց ածանցը կազմում է հազուստեղեն, անոթ ցույց տվող բառեր, օրինակ՝ զօգնօց, մատնօց, ակնօց:

Օց ածանցը ա) բայարմատներից կազմում է գործիք, անոթ և այլն ցույց տվող բառեր, օրինակ՝ խաբաց, սոց, ֆեռց, ջնջօց, ֆքօց. բ) բնաձայնական բայարմատներից կազմում է գործողության անուն ցույց տվող բառեր, օրինակ՝ խշոց, փսփսօց, վշվշօց, սրվսրվօց, շվշվօց և այլն:

14. -ոտ.— Կազմում է ածականներ՝ ցույց տալով մի բան ունենալը, վրան կրելը, օրինակ՝ կեխտոտ, յէղոտ, մրոտ, մազոտ և այլն:

15. -չէլ.— Գործածվում է մի քանի բառերի մեջ, օրինակ՝ կարօղչէլ, բէրօղչէլ:

16. -ստան.— Ցույց է տալիս երկիր, օրինակ՝ Հայաստան, Վրաստան, Հնդկաստան, Ռուսաստան և այլն:

17. -վարի.— Նշանակում է ձևով, օրինակ՝ գլեղավարի, մառքավարի, իշավարի և այլն:

18. -վոր, ավոր.— Ցույց է տալիս մի բան ունենալը, վրան կրելը, այլև գործողի անուն, մի բանով պարապող, օրինակ՝ պոշավոր, թեվավոր, զօրավոր, ձիավոր, նֆնավոր, սփվոր, կեղծավոր, մեղավոր, աշխատեվոր և այլն:

19. -ավուն.— Կազմում է նվազական աստիճանի ածականներ, օրինակ՝ յէրգարավուն, դեղնավուն, սեվավուն:

20. -ցի, -ացի, -էցի.— Ցույց է տալիս ա) մի տեղի բնակիչ լինելը, օրինակ՝ լօնէցի, ֆախլըցի, թիֆլիզէցի, կուրքանէցի, ուռուտէցի, կիւօվականցի, աբարանցի և այլն. բ) մի ազգի պատկանելը, օրինակ՝ վրացի, գլխմանացի, անգլյացի և այլն:

21. -ացու.— Ցույց է տալիս մի բանի համար պիտանի, սահմանված լինելը, օրինակ՝ մսացու, շապկացու, շավարացու, սերմացու և այլն:

22. -ութիւն.— Կազմում է վերացական գոյականներ, օրինակ՝ լավութիւն, մեծութիւն, բարեգամութիւն, ախպէրութիւն և այլն:

23. -ուտ.— Ցույց է տալիս տեղը, ուր մի բանից շատ կա, օրինակ՝ մօշուտ, անաբուտ, դամշկուտ (եղեգնուտ):

24. -ուց.— Կազմում է մի քանի ժամանակի մակբայներ՝ վաղուց, մօրուց, պոնուրուց:

25. -օվի.— Բայերից կազմում է ածականներ, օրինակ՝ բէրօվի, չրօվի, շիճօվի, ծալօվի, ֆցօվի, կծօվի և այլն:

Ժխտական նախածանցներից գործածական են միայն ան և շ մասնիկները: Ան նախածանցով կազմվում են բազմաթիվ բառեր, օրինակ՝ անլիզու, անխելք, անֆոտ, անքուն, անմէր, անհէր, անմեղ և այլն: Չ նախածանցով կան մի քանի բառեր, ինչպես՝ շտէս, չբէր, չկամ և այլն:

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Ն Մ Ո Ւ Շ Ն Ե Ր

ԳՅԻՔԱՐ ԲԻՉԷՆ

(Ստեփանավանի շրջանի Գյառգյառ գյուղ)

Մեր գլէղըմը մի մենձ մառթ կար՝ անըմը Գյիքոր: Էտ Գյիքոր բիձէն սաղ օրը քընած էր ըլըմ: Վոր հառցընըմ ին թէ՛ ա՛յ Գյիքոր բիձա, ըդքամ քընիլ կըլի, վոր դու էս քընըմ, բա կըշտա՞նըմ չէս քընիցըդ: Գյիքոր բիձէն ասըմ էր.

— Ա՛յ բալէք, ջահէլ վախտըս մի քըշէր գութան էմ գնացէլ, անբուն էմ մընացէլ: Էն օրվանի դէսը ինչդար քընըմ էմ՝ քունըս կարըմ չէմ առնէմ:

ԽՐՈՒԴԱՆԸ

Մեր գլէղացի Համբօն շատ խոօժկան մառթ էր: Մի օր էլ դա տանըցոնց հէտ կըռիվ ա անըմ, խըռօժքմ, յէննա իրա հըրօխպօր տըղի հէտ գընըմ ա մէրին փէտի: Աշունքվա մոշի լավ վախտըն ա ըլըմ: Դըրա հըրօխպօր տըղէն ինքը հա մոշ ա քաղըմ ուտըմ: Մըն էլ տէնըմ ա, էտ Համբօս մոշին հէշ մըտիկ էլ չի անըմ, գըլուխը կախ իրա բանին ա, զարմանըմ ա:

— Ա՛դա Համբօ, էտ խի՞ չէս մոշ ուտըմ:

Համբօս թէ՛

— Յէս տանըցոնց հէտ խըռօժ էմ:

— Ա՛րա, հօ տանըցիք ըստի չէն. տանըցոնց հէտ խըռօժէլ էս, հանդըմը մոշ չէ՞ս ուտըմ:

Իլլաջ չի քլըմ, Համբօս մոշին մոդ չի գալի:

ՇԸՏԱԿՅԷՐԸ

Սուքօյի պէս շըտակյէր մառթ սաղ խօրմը վայթէ ըլէր վոչ:

Մի հացի նեղ տարի էս Սուքօն ըաքօժ գընըմ ա Զալալօղլի հա-

ցի: Մի մէջօկ հաց ա առնում, գրնում ըաբէն, նըստում յէդ գալի: Ճամփին հա ձեռը յէդ ա տանում, մէջօկի միջիցը հանում ուտում: Վոր հասնում ա տուն, ըաբիցը վէր ա գալի, կընգանը ասում.

— Ա՛յ կընիկ, ըաբում մի մէջօկ հաց կա, գրնա վէ բի:

Նաշար կընիկը գրնում ա տէնում ըաբի միջին մի դառդագ մէջօկ:

էտ տընաբանդը մի մէջօկ հացը կյէրէլ էր:

ՇՕՂՈՆ

Գուր աշխօվ տալուն հըվատում չէք, հըմա յէս հըվատում էմ, աշխօվըս շատ բան էմ տէհէլ:

Ձահէլ վախտըս մի օր ըիկնադէմին բալկօնումը նստած ինք: Մին էլ մեր թաղը դամադալ ընգավ: Իմացանք, վոր Սուքօյանց շունը մեր հըրէվանի վոտը փիս կըծէլ ա: Մի քյիշ յէդը գըրա գանգաւ Շօղօն գուրս էկավ, իրանց բալկօնիցը ըսկըսէց աստոճ կանչիլն ու անըծիլը: Վեռըմն էլ թէ՛

— Ասսանի խընթըրէլ էմ՝ տունըտ բըրիշակ ըլի գըլխիտ:

Ա՛յտա, հըլա Շօղօս տուն չէր մըտէլ, մըն էլ Սուքօյանց տունը գըռալէն փուլ էկավ:

Մի օր էլ հօրըս հէտ հազըրված մէրին ինք գընում: Էկանք հասանք գյէղամէշ, մըն էլ տէհանք Շօղօն առաշնէրուս դուս էկավ, մի թառս մըտիկ արավ ու գնաց:

Շէրըս թէ՛

— Ադա, յէզանոնց գըլուխը շո՛ւտ տու, տուն էնք գընում, գոռօնէրուս աշօղալ չի, Շօղօն թառս մըտիկ արավ:

— Ա՛յ հէր, անիւ մի, ըլիլ մի, հազըրվէլ էնք, ըսօր էլ լավ օր ա, գոռօնց էլ թեթէվ էնք, գընանք էտ մի ցավիցն էլ պըռծնէնք:

— Ձէ՛, յէս գըրա աշկը փոռցէլ էմ, մեր գլխին մի փոռցանք կըգա:

Վեռը հօրըս մի հընարօվ համօզէցի գընացիներ: Փէտը կըտրէցինք, բառցէցինք ըաբին, յէզնիքը լըճէցինք, հէնց ուզէցինք դու ըլէնք, անդէր քարը ակի տակիցը դուս էկավ, ըաբէն թօլ էլավ դըբա ձորը. յէզնիքն էլ փշացան, ըաբէն էլ:

Ըթէ բանէր, ախպէ՛րըս: Դէ արի աշկին հըվատաւ մի:

ՊՅՅԷԶԸ

Հըրօխպօրըս սըռտին դառդ էր էլէլ, վոր ջահէլ վախտը իրան խաշտառակէլ էն գյէղօվը մին՝ մըթամ ինքը սուտիկ մառթ ա:

Ամէն հէտ պօյէդ տենալու յա թէ չէ պօյէդ նստելու միտն էր ընգնում էտ պատմութիւնը:

Հըրօխաօրրս զըրգըմ էն Թիֆլիզ խոզ ծախելու: Ծախըմ ա պըռծընըմ, մի լավ էլ քախկըմը ման գալի, էլ յէտ սարէրօվը գալի գյէղը: Վոր տեղ ա հասնըմ, գյէղի մենծէրը կանչըմ էն օղէն, թէ արի քախկիցը պատմի, ի՞նչ տէհար, ի՞նչ շըտէհար:

Սա վոր ինքն էլ շատ էր ըրմացէլ պօյէզի վըրա, հէնց մըննըմ ա օղէն թէ չէ, պօյէզիցն ա ըսկըսըմ, թէ սէ-սը բան. տընէրը իրար յէննա կապած գընէին:

— Ադա, բա գօմէշ, յէզը լըծած շըկա՞ր, — հառցընըմ էն հը-լիվորնին:

Հըրօխալէրըս թէ՛

— Մի բան էլա կար վոչ լըծած, տընէրը իրանց-իրանց գըն-էին:

— Ա՛դա բէդասըլ, մանչըմ չէ՞ս մեզ պէս մառթկյէրանցը ձեռ էս առնըմ: Դէ դո՛ւս իլ ըստիան, շըվաքըտ ըրէվա վոչ:

Դա օրթըմ կըրական ա ընգընըմ, հըվատըմ չէն:

Օղիցը դուս էն անըմ, սաղ գյէղըմն էլ խայտառակըմ:

ԺԱՍՏԸ

Մուրադանց նիկօլը շատ ըսկուպօյ մառթ էր: Մըհէտ մի օխ-տըն-ութ ֆոքօվ դըրա առտը հընծըմ ինք: Օրն էկավ ճաշ դառավ, դըրանց տանիցը հաց բերօղ չէլավ: Ինքն էլ ըռավոդվանի հա հըն-լըմ ա ու հընծըմ, վոնչ հացի անըմ ա տալի, վոնչ էլ դինջանալու:

Գյէթդանգյէթ դըրա կընիկն ըէվաց: Բէրուց բաց արավ, հաց չիւնէց, մենք էլ թըռթինգնէրուս կըտըված նըստէցինք հացի: Բէ-րածն էլ ինչ ա՛ մի կատօլ սըպաս, մի քանի հատ էլ հաց: Է՛, մի շընչըմը կյէրանք պըռծանք, հըմա օխտն-ութ ըծդահա սօված տը-դամառթ, վո՞րդիան կըշտանանք:

Նիկօլը քըթալը լիզէց, վէ կացավ թէ՛

— Ա՛յտա, ընքամ կյէրանք՝ յէզը դառանք:

Մեզանի միներ թէ՛

— Ա՛րա, դու էդ վո՞նց յէզը դառար. մենք հըլա մոզի էլ չէնք դառէլ:

Դի՛ի առավ ժ. Ճշմարիտյանը՝ Երևանի պետ. համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դասախոս:

ԲԱՐԻԿԱԶԵՆԹԱՆԸ¹

(Ստեփանավանի շրջանի Գյուլագարակ գյուղ)

Ժամանակով մի մառթ ու մի կրնիկ էն ըլըմ: Էս մառթ ու կրնիկ իրար հըվանէլուս չէն ըլըմ: Մառթը կրնգանն ա ասըմ շաշ, կրնիկը մառթին, ու սաղ օրը կըռվէլուս էն ըլըմ:

Մի օր էլ մառթը մի քանի փութ յէլ ու բրինձ ա առնըմ, տալի մըշակի շալակը, տանըմ տուն:

Կրնիկը ջըգըրվըմ ա:

— Ա՛յ, վոր ասըմ էմ շաշ էս, հըվատըմ չէս. ըսքամ յէղն ու բըրինձը միանքամից ընչի՞ մա էս առէլ բէրէլ. հօրըտ քյէլէխն էս տալի, թէ տըղիտ հըռսանիքն էս անըմ:

— Ի՞նչ քյէլէխ, ի՞նչ հըռսանիք, ա՛յ կրնիկ, ի՞նչ էս խօսըմ, տար պըհի, բարիկյէնթանի հըմա յա:

Կրնիկը հանգըստանըմ ա, տանըմ ա պըհըմ: Մի վախտ անց ա կյէնըմ, էս կրնիկը ճամփա ա պըհըմ, ճամփա ա պըհըմ, բարիկյէնթանը գալիս չի: Մի օր էլ շէմքըմը նըստած ա ըլըմ, տէնըմ ա մի մառթ վըռազ-վըռազ ճամփօվն անց ա կյէնըմ: Ձեռը դընըմ ա ճըկատին ու ձէն տալի:

— Ա՛խպէր, ա՛խպէր, հըլա մի կաղնի:

Տըղէն կաղնըմ ա:

— Ա՛խպէր, բարիկյէնթանը հօ դու չէ՞ս:

Անցվորականը տէնըմ ա, վոր էս կընգա ծալը պակաս ա, ասըմ ա՛ հա ասէմ, տէնամ ինչ ա դուս գալի:

— Հա՛, յէս էմ բարիկյէնթանը, քյիրա ջան, ի՞նչ էս ասըմ:

— Էն էմ ասըմ, վոր մէնք հօ քու ծառէն չէնք, վոր քու յէղն ու բրինձը պըհէնք: Ինչ վոր պըհէցինք, հէրիք չէ՞ր... մանչըմ չէ՞ս... ընչի չէս գալի քու ապրանքը տանըմ...

— Դէ էլ ի՞նչ էս նեղանըմ, քյիրա ջան, յէս էլ հէնց դըրա հըմա էմ էկյէլ, ձէր տանն ի ման գալի, քըթնըմ չի:

— Դէ արի տար:

Էս մառթը նի ա մըտնըմ, սըրանց յէղն ու բըրինձը շըլակըմ ու Լըրունգը դէս ա անըմ, էրէսը դըբա իրանց գյէղը:

Մառթը գալիս ա տուն, կրնիկը ասըմ ա.

— Հա՛, էն բարիկյէնթանն էկավ, իրա բանէրն իրան սեվցըրի տարավ:

— Ի՞նչ բարիկյէնթան... Ի՞նչ բանէր...

¹ Թարգմանություն Հովհ. Թումանյանից:

— Ա՛յ էն յէղն ու բըրինձը... Մըն էլ տէնամ՝ վիրէվիցը գալիս ա. մեր տանն էր ման դալի. կանչէցի, մի լավ էլ խայտառակ արի, շալակը տըվի տարավ:

— Վայ քու անխելք տունը քանդվի, վոր ասըմ էմ շաշ էս— շաշ էս էլի... Վո՞ր կըռան վըրա գընաց:

— Այ էն կըռան վրա:

էս մառթը ձի ա նըստըմ, ընգընըմ բարիկյէնթանի քըմակիցը: Ճամփին բարիկյէնթանը յէդ ա մըտիկ անըմ, տէնըմ ա՝ մի ձիավոր քըշած գալիս ա: Գըլիսի ա ընգնըմ, վոր սա էն կընգա մառթը պըտի ըլի:

Գալիս ա հասնըմ իրան:

— Բարի օր, ախպէրացու:

— Աստու բարին:

— Հօ էս ճամփովը մառթ չի անցկա՞ցավ:

— Անց կացավ:

— Շըլակին ի՞նչ կար:

— Յէղ ու բըրինձ:

— Հա, հէնց էտ էմ ասըմ: Ինչդա՞ր վախտ կըլի:

— Ահագին վախտ կըլի:

— Վոր ձին քըշէմ, կհա՞սնէմ:

— Վո՞րդիան հասնէս, դու ձիով, նա վոտով: Մինչէվ քու ձին չոռս վոտը փոխի—մի՛ն, է՛րկու, ի՛րէք, չո՛ռս—նա էրկու վոտով մի՛ն-է՛րկու, մի՛ն-է՛րկու, մի՛ն-է՛րկու, թէզ-թէզ կլէթա, անց կըկլէնա:

— Բա վո՞նց անէմ:

— Վո՞նց տես անիլ, ուզըմ էս ձիտ թօղ իմ կըշտին, դու էլ նըրա պէս վոտով վազդի, բալթյի հասնէս:

— Հա՛, էտ լավ էս ասըմ:

• Վէր ա գալի, ձին թօղըմ սըրա կըշտին ու վոտով ճամփա ընգընըմ:

Սա հէռանըմ ա թէ չէ, բարիկյէնթանը շալակը բառցըմ ա ձիուն, ճամփէն ծըռըմ, քըշըմ:

էս մառթը վոտով գընըմ ա, գընըմ, տէնըմ ա հասնըմ չի, յէդ ա դառնըմ: Յէդ ա դառնըմ, տէնըմ՝ ձին էլ չի կա: Տուն ա գալի: Թագա ըսկըսըմ էն կըռվիլը, մառթը յէդ ու բըրընձի մա, կընիկը ձիու:

Մընչի ըսօր էլ մառթ ու կնիկ դեռ կըռվըմ էն: Սա նըրան ա ասըմ շաշ, նա սըրան, իսկ բարիկյէնթանը լըսըմ ա ու ծիծաղըմ:

Տեֆտը բարբառայինի վերածեց Վ. Սուփասյանը՝ Ստեփա-

ճափանի շրջանի Գյուլագարակ գյուղի միջնակարգ դպրոցի հայոց
լեզվի և գրականության ուսուցիչ:

ՎԱՍԿԱՏ ՀԱՆԷՍԸ
(Գուլագրի Դեբեդ գյուղ)

էտ օրը Թաթոս բիձէն իմացել էր, վոր նազուխանանց Սէդ-
րակի տըղէն գլէլ ա սըպանէլ: Դուզ ա, Թաթոս բիձէն ջահէլ վախ-
տը մէն-մէնակ գլիլի բօլուկ ա քշէլ, շատ անքամ էլ գլիլանոնց հէտ
կոխ ա բռնէլ, հրմա ուզըմ էր դուզն իմանա, թե բանը վոնց ա ըլէ:

Գլէղամիջըմը մի քանի ջահէլնի ին հըվաքվէլ: Թաթոս բիձէն
դնաց նրանց կուշտը: Մինը տեղիցը վէ կըցավ ու Թաթոս բիձուն
նըստըցրուց ընդի: Բիձէն գըլխի փըփաղօվ ըրէսի քըռդինքը սըր-
փէց ու կոխկի ջահէլին հըրցըրուց.

— Ասըմ էս նազուխանանց Սէդրակի տըղէն գլիլի վոտիցը
բռնել ա ու վոխշարն ըզատէլ նրա ճան՝ գիցը, մե՛ր տղա:

— Հա՛, Թաթոս բիձա, մըն էլ էն տէհանք գլէրմաղը գլիլի գըլ-
խին վէ բէրուց: Հըմի գլէլը վոնց ա օռնըմ, վոնց ա օռնըմ... նրա
ձէնից ոաղ ձորէրը դըմդըմբոցն ընգան: Հըմա դէ խու Սուքօն գլիժ
չէր, վսր գլիլին թօղ անէր, մի լավ տվուց, ախցան շինէց...

— Բա էտ անասունը չօբանին վընաս չըտըվո՞ւց...

— Չէ՛, ըսկի կ՞արաց վոր ժաժ գա...

— Հա՛, էփէջա տըղա յա ըլել... Բա ըտիան դէնը ի՞նչ արավ,
ախպօր բալա:

— Ըտիան դէնը յըրալու վոխշարը մենք վէ կըլանք, ինքն էլ
սատկած գլիլի վոտիցը քաշ տըվուց, էկանք բինէնին: Հըմի խալ-
խը հըվաքվէլ ա ու թըմաշ ա անըմ: Դէ, շատը գլիլի մէնակ անըմն
ա իմացէլ: էկան թօփ ըլան, յէքա ժողովուրթ հըվաքվէց: Մինը տա-
րավ էտ յըրալու վոխշարի դըմակին բանըման քսէց, մինն էլ ըս-
կըսէց գլիլին մաշկիլը: Մի քանիսն էլ նստեցին ու ըսկսէցին պատ-
մութիւննի անիլը: Ամէնքն իրանց քաջութիւնն ին պատմըմ: Մըն էլ
վորդիան վորդի էն վախկոտ Հանէսը, բիձա ճընանըմ էս չէ՞ Հա-
նէսին:

— Հա՛, ճընանըմ էմ: Հըմա վախկո՞տ ա վոր...

— Հըմ, գլիղէս վոշ: էս ա ասէմ: Հա՛, էտ Հանէսն էկավ նըս-
տէց ու անգաճ ա դընըմ: Մըն էլ մտիկ անէմ տէնամ դա մի-մին
գլուխն ըրօրըմ ա... էտ հըզըրըմը (ժամանակ) կշտիս նստած Պէտ-
րոս բիձու կոխկը բոթէցի ու ասի. «Պէտրոս դայի, հըլա Հանէսին»:
Պէտրոս դային մըն էլ ձէնով ասավ.

— Հանէս, հըլա պատմի, թէ վոնց ալապօստուցը վախէցիր ու մընչև «խրոստի թալէն» մին ճղէցիր:

Մըն էլ Հանէսը վէ կըցալ, ընգաճի քամակը քորէց ու թէ՛

— Տղէ՛ք, կնիկա խնոցին հարըմ ա, գնամ քօմագ անէմ:

Ընդիան ըժդահա Վանօն վէ կըցալ, ձեռները դրուց գրա ու սին ու տէղը նըստըցրուց: Զիմ վրա թափէցին, թէ պատմի, հա պատմի: Պէտրոս դալին էլ ձեռի չօմբախը շըհանց տվուց, թէ հըլա փոռց կաց ու պատմիլ մի, կոխկերըտ սալ-ջարդ կանէմ:

Դէ՛, Հանէսն էլ քանի գլխանի ա, վոր չօմբախի կօպալը տէնալուց յէղը սիռտ անի գնա խնոցի հարի: Հանէսը բօղաղը մաքրէց ու ըսկսէց.

— Տղէ՛ք ջան, դէ, դուզ ա, էդ լըպըստրակիցը դէնը ինձ վախկոտ էն ասըմ, համա դէ յէս ըտքան էլ վախկոտ չէմ:

— Տօ դէ ապալօստուցը խօսա է՛, ի՞նչ էս նաղըլըն անըմ, տէնըմ չէս ըսքան խալիսը քեզ էն ճամփա պըհըմ,—էն կոնիցը չօմբախի կօպալը թաղա շհանց տվուց Պէտրոս Դալին:

— Պէտրոս դալի, քչի մատաղ, աստոծ համփէրութինը մառթի հըմա յա ըստեղծէլ, էդ վո՞նց ա դու համփէրըմ չէս...

— Նալլաթ քեզ չար սըտանա... ըր՛, յէս քու... բէրանըս ընչէր ա գալի...

— Ասըմ էմ, ասըմ, հէր օրշնած, էլ ընչի էս չըրանըմ...

Ու Հանէսն ըսկըսէց իրա պատմութիւնը:

— Բանը թհէնց ըլալ:

Զոռս թէ հինգ տարի աղաք էր: Աշունքվա մի լավ օր ծըղիկը վէ կալա, մի հատ խուրջին ուսըս գծէցի, մի կտոր էլ թօգ, ասի գընամ հանդէրը պտըտեմ թէ տանձ կըլի՝ տանձ կըէրէմ, թէ չէ՝ ծըղիկը մոշօվ կըքցնէմ, մի շալակ էլ խոտ կանէմ: Արևի թալի կըշտի էն վէրի մամխուտըմը մի լավ մեղրատանձըքի կա: Դուզ ա, տանձըքու քօթը կոկիկ ա, վէրըլիը դըժար, հըմա գչիդեք թէ Հանէսը վախօղ ա: Տանձըքուն մի ճուխկն ունի, ըտուր ծէրը հասնըմ ա մինչև վ նրա կոխիկ խնձորըքուն: Խնձորըքուն վէր ըլիլն էլ հու հաղ ու պար: Գնացի էտ ճըղնովը վէր ըլա, մի բօլ տանձ թափ տվի, տակը թեզ արի ու վէր էկա: Խուրջնի էրկու աճկը լըցրի: Խուրջինն ուսըս գծէցի: Էն յառի գլխիցը դըվէրէլիս աճկըս ընգալ ճամփու տակի մօշուտին: Մըն էլ ինչ տէնամ, աճկըտ էն բարին տէնա, մոշը սնվին ա տալի, ամէն մինը մի կկալի չափ: Տէհա վոր ընարատ մոշուտ ա: Ասի՛ էս հու լավ ըլալ, էնա ծըղիկըս էլ մի լավ կըքցնէմ էտ մոշիցը ու բեռըս թամամ տուն կգնամ: Խուրջինըս ջըղըրըմը (նեղ արհեստ) վէ դրի ու մտա էտ մոշուտը:

Հըլա ծըղըկի տակը բլօլել չէր, մըն էլ տէնամ մոշի թուփը ժաժ ա գալի: էտ մոշի թփի գլխիցը մի բան էլա ըրէվըմ չի: Բանի տեղ չըղրի, ասի հըլբաթ մոշահալ էր՝ թփիցը թռավ, թուփն էլ ժաժ էկավ: Ձեռքս մէգնէցի խօժօռ մոշէրին. էտ հըղըրըմը սաղ թուփը ժաժ ընգավ: Մի կասկած ընգավ սիռտըս. ա՛յտա, յարար էս խի՞ ա թուփը ժաժ գալի: Մի բան գլիդէմ, վոր տանձի ու մոշի վախտը էս կրոնէրին առչ ա ըրեւըմ: Հըմա դէ ինձ ու ինձ փընթփընթըմ էմ, թէ օվ ա գլիդըմ ինչ էր, դնաց պըռծավ: Ձեռքս թագա մէգնէցի էն խօժօռ մոշէրին՝ էլլէտ սաղ թուփը ժաժ էկավ: Ըստի վախէցի: Ախր դուշը կարալ չի ըթէնց ժաժ տա, վոնց վոր մինը բըռնի թփի քօքիցն ու շըղըհարի: Էդ կըռնեքին մառթ էլ չէմ տէհէլ, թէ ասէմ նա էլ թփի տակիցն ա մոշ քաղըմ: Ի՞նչ անէմ: Ձեռքս մի զադ էլա կա ոչ, վոնչ թվանք, վոնչ էլ գօնյա մի քյօռ տապօռ: Մի պուճուր գանակ կա՝ էն էլ զօռօվ ճիպոտ կըտրի: Ինձ ու ինձ միտկն եմ աննըմ՝ մըն էլ վոնց վոր մինը կացնի քփօվ մոշըբու քոքին վէ բէրի, թուփը շըխշըխկոցն ընգավ: Ասի, Հա՛նէս ջան, էլ ինչ էս էշացէլ, առչ ա վոր կա, գլուխըտ պոժացըրու:

Մըղիկն ըտի թօղ արի ու էտ դօշի խոտերիցը բռնէլօվ, չոքին-պոճոկին անէլօվ դուս էկա ջըղրին ու փախա: Փափաղըս էլ մի անդէր մասրքի բռնէց, հըմա դէ փափաղի հըմա մտածօղն օ՛վ ա: Էտ էլ դրա ձեռին թօղ արի ու վո՞նց էմ փախչըմ, աճկիս աղաքին բան չի ըէվըմ: Խըռատի թալըմը քըռղընքամխած գընըմ ի, մըն էլ տէնամ վոխշարի սուրու: Նոր ըստի ըռանգըս տեղն էկավ: Էս մեյ Մամկոնն էլ յափնջին ուսէրին, գլէրմաղին թինգը տված կաղնած էր թմբի գլխին վոնց վոր Ընդրանիկ փաշէն: Էն ասլան շնէրն էլ կոխկին, վորը թեվ ըլած, վորն էլ պոչն ա պըտըտըմ: Ձէն տվի. «Ո՛րա Մամկոն»: Շնեքն իմացան ու դըբա ինձ էկան: Մամկոնն ա՛ շուն, ա՛ շուն անէլօվ հէտ ածավ շընէրին: Տէհավ, վոր առանց փրփաղի էմ ու բաբաթ (մի քիչ) էլ դողացընըմ էմ, ասավ:

— Արա, Հա՛նէս, ի՞նչ ա պըտահէլ:

— Էլ ինչ տի պըտահիլ, հրէն մեղրատանձըբու կըշտի մոշու-ւըմը մի հէ՛վարա (մեծ) առչ կա: Ձատ չէր մնացել ինձ ուտի:

— Վուա՛հ, արա դո՛ւզ էս ասըմ:

— Յէս էլ թէ՛

— Տօ գուռնալի (ախըլ նա գուռնա փշօղ էլ ա), բա յէս ըրէ՛խա էմ, վոր սուտ խոսամ:

Նա թե՛

— Դէ արի գնանք:

— Մամկոն ջան, ո՛ւր գնանք:

— Գնանք տէնանք էտ ինչ առչ ա, վոր քեզ սոտապատառ ա արիլ:

— Վիի՛, քյի մատաղ, գոռձ չունէս, դնաս ոչ, քոթկաթաղ կանի:

— Մըն էլ սա չըրացավ,— թյո՛ւ քու մառթ ասողին,— ու էն քլահլան շնեքին կանչելով դըբին-դիբ ըլավ (բարձրացավ): Յէս էլ հեռու-հեռվանց նրանց քըմակիցը գընըմ եմ: Հըմա ահը սըռ-տըմս ա:

Վոր հասանք մոշուտի կուշտը, Մամկոնը շնէրին հիս տվուց մոշուտի վրա: Ալաբաշն ու Ղայթարը ձորը դըմբացնելէն վրա ընգտն էդ թփերին, մըն էլ էն թփի տակիցը, վորդի վոր առը պըտի ըլէր, էրկու հատ ալապօստի դուս պոծան ու դբա դըյէր (դեպի վեր) փախան, շներն ընգան քըմակիցը: Յէս էլ մնացի դըրմացած, վեռնուցի ըլած: Մամկոնին խեղճ-խեղճ մտիկ արի ու ասի.

— Ադա, զուռնաչի, իմ տէհած առը դրանք էն ըլէլ:

էս զուռնաչին փորը բռնել ա ու ծիծաղըմ ա:

— Հըրէ՛ն հա, քու առչէրը ասլան շնէրիս բեռնըմն էն:

Մտիկ տակ տէնամ շներն ամենքը մի ալապօստի ըոխած գալիս են... Բա՛... ըսէնց ըլավ բանը...

Պատմեց Մարտին Պետրոսյանը՝ Երևանի պետ. համալսարանի ժուռնալիստիկայի բաժնի ուսանող:

ՓԵՇԱԿԸ ՈՍԿԻ Ա

(Ալավերդու շրջանի Շնող գյուղ)

Ըլում ա չի ըլում, մի շատ հարուստ թգավոր ա ըլում: Վախս-վախս սա իր նաղիր վեղիրնուցը թաքուն ըղբատի շորեր ա հագնելիս ըլում ու քաղբ քաղաք, գեղե գեղ մանգալիս ըլում, թե տենու խալիսը իր վրա ի՞նչ ա խոսում:

Մի դոնում էլ մանգալիս մի գեղում տենում ա մի սիրուն ախչիկ, էն դայդի սիրուն, որ մարդ տեներ, կոսեր ոնչ ուտեմ, ոնչ խմեմ շիմշատ բոյուն մտիկ անեմ:

Եթոր թագավորը տուն ա հասնում, էգսի օրը իր նաղիր վեղիրնուն ասում ա. կերթաք էն փլան ու փլան տեղը մի գեղըցու ախչիկ կա, էս նրան հվանել եմ, ասեք, որ թգավորն ուղում ա:

Նաղիր վեղիրնին գնում են, գդնում թգավորի ասած գեղը, տենում են ախչկանը, խելընէրուն գնում ա, մնում են մայիլ էլած: Ախչկա հորն ու մորն ասում են, որ թգավորը նրանց ախչկանը հըվանել ա, իրան կնիկ ա ուղում:

Գեղըցիին ինքն աղքատ մարդ, խելքը կտրում չէ, որ թգավորը լայնիդ անե իրանց ախշիկն ուզե. հմա վերջը, եր նրան բզդորում են (նեղում, ստիպում են), ասում ա.

— Մենք թգավորի ղուլն ենք, երոր թգավորը հրամայում ա, մենք ինչ պտինք ասել. թող ուզե:

Վերջն էս մարդը հարցնում ա իր աղջկանը. «Այ որդի, նազիր վեղըրնին եկել են, ասում են, որ թգավորը քե ուզում ա, ի՞նչ ջուղար ես տալիս, ի՞նչ անենք:

— Թգավորն ի՞նչ փեշակ ունի,—հարցնում ա ախշիկը:

— Վոա՛, ա՛խշի, ի՞նչ ես ասում, գժվել խո՛ չես. ի՞նչ փեշակ պտի ունենա թգավորը, նա ըշխարիս տերն ա, ինչ ուզէ՛ կոնե, ինչ ուզե՛ կոսե, ոնցոր ուզե՛ կապրի, մենք չիմս էլ նրա ղուլն ենք:

— Զէ՛,—ասում ա ախշիկը,— իմ մարդը պետք ա մի փեշակ էլա գիղենա, ես անփեշակ մարդին կնիկ չեմ գնալ:

Թգավորը մնում ա վերքաշված: Հմա ինչ անե: Ախշկա ծերա դնում ա մի հեշտ փեշակ սըվորում—թղքադրութին: Երոր սըվորում պրծնում ա, մի լավ աննաման թաղիք էլ իր նշանածի հմա ա գժում ու դրկում նրա կուշտը: Ախշիկը շատ հիմարում ա, իրան հորն ու մորը մնաք բարով ասում ու նազիր վեղընու հետ վեկենում գնում թգավորի կուշտը:

Թգավորն օխտն օր օխտը գշեր հրսանիք ա անում, պսակվում են նրանք, փառքով ու պատվով ապրում: Մի տարի ա անց կենում, թե էրկու տարի, թգավորն էլ եդ ռաջվա պես ըղքատի շորեր ա հագնում ու քաղեք քաղաք, գեղե գեղ մանգալիս, թե տենու խալխն իր վրա ինչ են խոսում:

Մի դոնում էլ էտենց մանգալիս ընգնում ա էն ղայդի մարդ-կերանց ճանգը, որ նրան ծախում են մի վենձավորի վրա, եր իմանում են, որ նա լավ թաղքադրութին գիղե:

Վենձավորը սրան մի մութն օթախ ա տանում, բուրդ, անեղ, թափ տալի, որ բուրդ գղե, թաղիք հարե: Թգավորն էն ղայդի թաղիքնի ա գժում, որ սաղ աշխարհը ման իր եկել, հատն ու կտորը գղնուլ չիր: Մի դոնում վենձավորի կնիկն ասում ա. «Ա՛յ մարդ, բի մեր թղքադրին մի լավ թաղիք հարել տու, տար թգավորին փէշ-բաշ, բալքա մեզ մի բան բաշխե»:

Վենձավորը լսում ա կնգա խոսքին, գնում ա թղքադրի կուշտորն ու ասում. «Ուզում եմ թգավորին մի բան փեշքաշ անեմ, մի լավ թաղիք հարե, հմա լավ տես, էն ղայդի թաղիք պտիս հարել, որ հատն ու կտորը ըշխարումն էլած չի ըլի. որ տանիմ թգավորի

օթախումը փոհմ, մի մագի դգար ոնչ ալիլ գա, ոնչ պակաս. թե էս ղալղի թաղիք չես կարացել հարել, գլուխդ տալ կտամ:

Թգավորը որ էս լսում ա, սիրտը փորումն ուլխաղ ա ըլում: Դե՛ թգավորն ինքն ա էլի՛, իր օթախի լենքն էլ դիդե, երկենքն էլ: Թգավորը դրուստ վենձավորի ըսածի պես մի թաղիք ա հարում, եդի կռանն էլ գրում իր կնգանը, որ իրան տեղը շատ տարգուն (նեղ, դժվար) ա, գա ըզատե: Հմա էն ղալղի ա գրում, որ մենակ թգավորի կնիկը կարեր կարդալ:

Վենձավորը շատ ուրախանում ա. վեր ա կալնում էս թաղիքը, թգավորի ամարաթնին մին ա ասում ու գնում:

Նագիր վեզրնին թգավորի կնգանը իմաց են տալիս, որ իրան մի թաղիք են փեշքաշ բերել: Թգավորի կնիկը թաղիքը տուն ա բերել տալիս, փռում օթախումը, տենում, որ ոնչ մի մագը ալիլ ա, ոնչ մի մաղը պակաս: Էն սահաթը նա խելլամիշ ա ըլում (հասկանում), թաղքի շորսի կուռը լավ ա կն ա ածում, լավ մտիկ տալի, մե պենջղումը (անկյունում) տենում ա գրած բան. կարդում ա, իմանում, որ թգավորի տեղը տարգուն ա, կարդալնու բաշտան նա սըփրթնում ա: Հեշվել էդ վախտը թգավորը շատ էր ըզքատի շորեր հագած ու ման եկած, շաբաթներով, ամիսներով ու տարով եղացած, հմա որ ասես գլխովն անցկացած չէր, որ թգավորի զըլուխը էդ օջինը կըգէր:

Էն սհաթն եէտ հրամաում ա, որ էն թղքադրին սաղ-սալամաթ իր կուշտը բերեն:

Նագիր վեզրնուն էս վենձավորի հետը դրկում ա, գնում են նրա տունը, մտնում են մութն օթախը, թգավորն էն ղալղի փոխլած ա ըլում, որ նրան էլ ճընանչում չեն: Նրան բաղնիս են տանում, լեղացնում, թաղա շորեր տալիս, որ հագնու, տանում են թգավորի ամարաթնին: Վենձավորը նրան խրատ ա տալիս. ըսենց կանգնի, ընենց կանգնի, ընենց գլուխ տուր, էս ասա, էն շասես. մի խոսք նրան ամեն բան սվորցնում ա, թե թգավորի կշտին ի՛նչ պտի ա-սել, ի՛նչ չէ:

Թգավորը որ մտնում է իր օթախը, կնիկը նրան էն սհաթին ճընանչում ա. ընկնում ա նրա խտիտը, փթաթվում, պաշպչորում... շատ ուրախանում:

Դրուստ ես ասել, այ կնիկ,— ասում ա թգավորը,— դրուստ որ դարդակ թղքադրութիւնն էլ թգավորութենիցը բարձր ա:

Խերն էստի, շառն ու շահմաթը լեզգու գլխին:

Տիգրան Նավասարդյան, Հայ ժողովրդական հեփիաթներ, հին-գերոդ գիրք, Տփլիս, 1889, էջ 74—78:

Սույն հատորի 32--78-րդ էջերում տեղ են գտել Լոռու բարբառով գրի առնված 7 հեքիաթ: Տ. Նավասարդյանը գրում է, որ դրանք Հմայակ Մաթինյանցի ուղարկած հեքիաթներն են, որ «սարունը ժողովել է Շնող գյուղում (Լոռու նահանգում) և գրել բուն տեղական բարբառով» (ընդգծումն իմն է—Մ. Ա.): Սակայն պետք է նկատի ունենալ, որ Հ. Մաթինյանցը հեքիաթները գրի է առել ոչ թե գիտական, այլ հայերենի սովորական ուղղագրության մեջ, որի պատճառով էլ այդ տեքստերը լրիվ ճիշտ գաղափար չեն կարող տալ բարբառի հնչյունական օրինաչափությունների մասին: Այսպես, այդ տեքստերից ելնելով հնարավոր չէ իմանալ, թե բառամիջում երբ ենք ունենում ե(իէ) և ո(ուօ) և երբ՝ է ու օ հնչյունները, որովհետև և՛ ե-ն, և՛ է-ն սովորաբար տառադարձված են ե տառով, իսկ ո-ն ու օ-ն՝ ո տառով: Կամ՝ հեղինակը ելնելով գրական հայերենի ուղղագրությունից գրում է քգավոր, մարդ, վերջ, բուրդ և այլն (փոխանակ՝ թքավոր, մառթ, վեռչ, բուրթ):

Հ. Մաթինյանցի տեքստերը բավականին ճիշտ գաղափար են տալիս Լոռու խոսվածքի ձևաբանական համակարգի մասին:

Մենք մեզ իրավունք չենք վերապահել որևէ փոփոխություն կատարելու և լիովին հավատարիմ ենք մնացել հեղինակային տեքստին:

ՏԱՏԻՍ ՊԱՏՄԱԾՆԵՐԻՑ

(Ալավերդու շրջանի Այգեհատ գյուղ)

— Տատի՛, ինչի՞ց է, որ մեր պապը շատ հարուստ է եղել, իսկ նրա եղբայրները՝ աղքատ:

— Ձեր լիս դառած պապը գլխից էին ըշխատելու մառթ էր, սաղ օրը ֆողի ու քօլի հէտ կըռիվը տէր, քըշէրան կխսին զըզիցը տուն գլէր, ուսը զըռանը դէմ տէր, մի ըստաքան ըրաժան զըվէր ամէր, ըժու թոռներին հըվաքէր իրա կուշտը, բըցրանէր էն մենձ ըմբարի վըրա նըստէր ու առակ պատմէր կամ մի զըրից ասէր:

Հըմա լավ գլխդէնաք, վոր մի շատ զըռչի (ժլատ) մառթ էր. զըրա հըմար էլ ըսքամ ապրուստը կլիտէլ էր: Վայն էն ա, վոր շըշկըլվէի մի ըէխի հըմա մի ջուխտ վոտնաման ի առէլ, պըռծա՞վ, սաղ գլէղը զըլխիս թըմաշա կըբէրէր:

— Բա տան կընիկը երկու թումանը կըտա ու ըրէխի վոտի տակը կըգծի՞, տօ քյէփօղլու շո՛ւն, բա քյի սըրկացնէլու չի՞, քանի հէտ

էմ ասել՝ ղադր արէք, ամակըս ջուրը չի ածէք, սաղ շներոց արիք. թօղում չէք, վոր մի կօպէկը էրկուսը շինէմ, յէս մի կըռնէն տուն էմ ածըմ, դուք՝ դուս:

— Էն քու մենձ բիձէն մի մատը քրէխա էր, էնինչ գընէր պապի կուշտը, վոր էն գյօռքէգյօռը բան ուտէլիս ըլէր՝ քրէխին հէտ կածէր:

— Հըրէն գընա էն ծիտը բըռնի ու բի ըստի,— քրէխին խափէր վըղացնէր, մինչէվ ինքը խընձորը կուտէր կըպըռօնէր, քօու (հետս) նըլէպը կըտէր խէխձ քօրփին:

— Շատ էլ շըտակէր էր է՛, էն ընդիտն էլ դէնը գընացածը: Թէ սըպաս կամ ապուր էփած կըլէինք, կասէր.

